

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԸ  
(1918-1920 Թ-Թ.)**

**Նվիրում և ծնողներին Մելսիկին և Մեղային**

Երևանի համալսարանի հրատարակչություն  
Երևան - 2005

Վաղարշյան Ա.Գ.

Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը (1918-1920 թթ.): Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005 թ., 000 էջ:

Ներկայցվող մենագրությունը հեղինակի թեկնածուական ատենախոսությունն է, որի պաշտպանությունը կայացել է 1996 թ.: Այն համապարփակ, համակարգված, ընդհանրացնող և անկողմնակալ պատմաիրավական հետազոտություն է՝ նվիրված Առաջին հանրապետության դատական համակարգի ստեղծմանը, դրա դատարանակազմական ու գործառությանը առանձնահատկություններին, նաև գործունեությանը:

Հետազոտությունը իրականացված է պատմական պետականագիտության և իրավագիտության հիմնախնդիրների լուծման արդի մոտեցումների ու սկզբունքների օգտագործմամբ, որը հնարավորություն է տվել վեր հանել Առաջին հանրապետության դատական համակարգի ամբողջական նկարագիրը, հետևել դատական համակարգի գործունեությանը, զարգացման միտումներին: Նման մոտեցումը և լայն սոցիալական հայացքը դատական համակարգի կառուցման ու գործունեության նկատմամբ հնարավորություն է տվել խուսափել զուտ ձևական-իրավական վերլուծությունից, և իհարկե, Առաջին հանրապետության դատական համակարգի պատմությունը վեր հանել իր բոլոր պայմանների, գործուների հանրագումարով ու արդյունքում տալ այդ համակարգի գործունեության արդյունավետության գնահատականը նորաստեղծ ազգային պետության կայացման գործընթացում:

Մենագրությունը նախատեսված է իրավաբանական ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, ինչպես նաև Հայաստանի պետության ու իրավունքի պատմության հիմնախնդիրներով հետաքրքրողների համար:

© Վաղարշյան Ա.Գ., 2005 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ԱՊԱԶՈՐԱ</b> .....	<b>11</b>
<b>ԳԼՈՒԽ ԱՊԱԶՈՐ</b>	
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԶՈՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ</b>	<b>18</b>
<b>§ 1. Առաջին հանրապետուրյան օրենսդիր մարմինները և պետական կառավարման ձեր</b> .....	<b>18</b>
Հայաստանի խորհրդարան: Օրենսդրական լիազորություններով օժնված կառավարությունը: Առաջին հանրապետուրյան կառավարման ձևը:	
<b>§ 2. Դատարանները Հայաստանում մինչև Առաջին հանրապետուրյան դատական համակարգի կառուցումը</b> .....	<b>23</b>
Դատարանները Հայաստանում Ռուսական Կայսրության օրոք: Դատարանները Հայաստանում մինչև Առաջին հանրապետուրյան հոչակումը: Հանրապետուրյան առաջին կառավարության «Հայտարարագիրը» և դատական քաղաքականության հիմնահարցերը:	
<b>§ 3. Հայաստանի առաջին հանրապետուրյան դատական համակարգի կառուցման հայեցակարգի մշակումը և դրա օրենսդրական կենսագործումը</b> .....	<b>37</b>
Դատական շինարարության հմարավոր ուղիները: Դատական համակարգի կառուցման հայեցակարգը: Դատական համակարգի կառուցման հայեցակարգին հիմնախնդիրների քննարկումները: «Հայաստանի Հանրապետուրյունում դատարանի կազմակերպման մասին» օրինագծերի օգոստոսյան փարերը: 1918 թ. դեկտեմբերի 6-ի դատարանական և դատավարական օրենքները:	
<b>§ 4. Արդարադարուրյան սկզբունքները և դատավարուրյան ընդհանուր բնուրագիրը</b> .....	<b>53</b>
Արդարադարուրյան սկզբունքները և դատավարուրյան ընդհանուր բնուրագիրը ըստ 1918 թ. դեկտեմբերյան օրենքների: Դատավարական կարգերի հետաքանակ օրենսդրական փոփոխությունները և լրացումները:	
<b>ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ</b>	
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԶՈՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ</b>	<b>70</b>
<b>§ 1. Հաշտարար դատարանները Առաջին հանրապետուրյունում կազմակերպական կառույցը, ընդդարձույթումը, գործունեությունը</b>	<b>70</b>
Հաշտարար դատարանների ենթահամակարգի կազմակերպական կառույցը: Հաշտարար դատարանի ընդդարձուրյունը: Նոտարական գործունեության իրավական կարգավորումը: Հաշտարար դատարանների գործունեության հիմնախնդիրները: Հաշտարար դատական ենթահամակարգի բարեփոխման նախագիծը:	

## § 2. Ընդհանուր իրավասուրյան դատարանների համակարգը Առաջին հանրապետուրյունում ..... 88

Երշանային դատարանները Առաջին հանրապետուրյունում: Ընդհանուր իրավասուրյան վերաքննիչ ատյանը՝ Հայաստանի Հանրապետուրյան Դատական պալատը: Միասնական վճռաբեկ դատարանը՝ Հայաստանի Սենատը:

## § 3. Երդվյալ ավենականների դատարանը Առաջին հանրապետուրյունում ..... 100

Երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարուրյան ընդհանուր բնուրագիրը: Երդվյալ ատենակալների դատարանի հիմնադրման կողմ և դեռ տեսակենները: Երդվյալ ատենակալների դատարանի օրենսդրական հիմնադրումը: «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստան՝ Հանրապետուրյան տարածքի վրա» օրենքի թերությունները և դրանց հաղթարարման փորձերը: Երդվյալ ատենակալների դատարանի նաևաշրջանների գործառումը: Երդվյալ ատենակալների դատարանի հիմնախնդիրները և այդ դատարանի գործունեության կասեցման առաջարկությունը:

## § 4. Դատարանը Զանգեզուրում ..... 118

Զանգեզուրի կառավարման առանձնահատկությունները: Զանգեզուրի դատական համակարգը: Զանգեզուրի «զինվորական ժամանակավոր դատարանը»:

## § 5. Նախանական քննության և դատախազական հսկողուրյան մարմինների կազմակերպական կառույցը և գործունեությունը ..... 122

«Ետաքննության» միջիցիայի և «դատական իշխանության» մարմինների փոխհարաբերությունները Առաջին հանրապետուրյունում: Նախարանների մարմինները Առաջին հանրապետուրյունում: «Դատախազական հսկողությունը» Առաջին հանրապետուրյունում: «Դատական քննիչների և դատախազության գործունեության անարդյունավետությունը:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ԱՐՏԱՎԱՐԳ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴԱՐԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ..... 147

## § 1. Արդարադար դատարանները Հայաստանի առաջին հանրապետուրյունում ..... 147

Պաշտոնական հանցագործուրյուններով արտակարգ քննիչ հանձնաժողովը և արտակարգ դատարանը: 1920 թ. Մայիսյան ապստամբուրյան կազմակցությամբ ստեղծված արտակարգ դատարանները:

## § 2. Արդարադարուրյան սկզբունքների վերանայումը ..... 173

Դատավորների անկախության նյութական երաշխիքների սահմանափակումը: Դատավորների անփոփոխելիության սկզբունքի վերացումը: Դատական քննության անմիջականության սկզբունքի օրենսդրական վերացման փորձերը: Դատարանների և դատավարության «ազգայնացումը»: Արդարադարուրյան իրականացումը միայն դատարանի կողմից սկզբունքի խախտումները:

## ԵԶՐԱՎԱՅՑՈՒԹՅՈՒՆ ..... 200

А.Г. ВАГАРШЯН

**СУДЕБНАЯ СИСТЕМА  
ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
(1918-1920 гг.)**

Издательство ереванского университета  
Ереван 2005

**Анотация**

Представленная монография является катидратской диссертацией автора, защита которого состоялась в 1996 г. Оно представляет собой целостное, систематизированное, обобщающее и непредвзятое историко-правовое исследование, посвященное созданию судебной системы Первой республики, его судоустройственным и функциональным особенностям, а также деятельности.

Исследование осуществлено с применением современных подходов и принципов решения проблем исторического государстваоведения и правоведения, что позволило выявлять целостную характеристику судебной системы Первой республики, проследить его деятельность, тенденции развития. Такой подход и широкий социальный взгляд на проблемы построения и деятельности судебной системы дало возможность избегать только формально-юридического анализа, и конечно, историю судебной системы Первой республики представить со всеми его условиями и факторами, а в итоге дать оценку эффективности деятельности этой подсистемы государственного механизма в процессе становления новопровозглашенного национального государства.

Монография предназначена для студентов, аспирантов и преподавателей юридических факультетов, а так же для всех тех, кто интересуется проблемами истории государства и права Армении.

**Об авторе**

Артур Вагаршян родился в 1963 г. в селе Лчашен Севанского района. 1981 г. окончил Лчашенскую среднюю школу с золатим медалью. 1981-83 гг. служил в советской армии. В 1984 г. поступил в юридический факультет Ереванского государственного института. Затем продолжил обучение в целевой аспирантуре ЕГУ по специальности "Теория и история государства и права". 1996 г. защитил кандидатскую диссертацию и получил степень кандидата юридических наук.

С 1993 г. работает в юридическом факультете ЕГУ как преподователь. В течении 1997-2004 гг. был секретарем совета юридического факультета. В настоящее время доцент А. Вагаршян возглавляет кафедру Теория и история государства и права ЕГУ. Одновременно является научным секретарем совета 001 по присуждению юридических научных степеней. А. Вагаршян является автором более двух десятков научных статей и исследований посвященных историческим и теоретическим проблемам армянской государственности и права, а так же юридическому образованию.

Проходил переподготовку в университете г. Пассау (ГФР), в Будапештском центрально-европейском университете, в США, а также участвовал в научных семинарах посвященных проблемам правовых реформ – в Гааге, Москве, Санкт-Петербурге и т.д.

## **СОДЕРЖАНИЕ**

### **ГЛАВА 1.**

#### **РАЗРАБОТКА ОСНОВ СУДЕБНОЙ СИСТЕМЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

##### **§ 1. Законодательные органы Первой республики и форма государственного правления**

Совет Армении. Парламент Армении. Правительство наделений законодательными полномочиями. Форма правления Первой республики.

##### **§ 2. Суды в Армении до построения судебной системы Первой республики**

Суды в Армении при Российской империи. Суды в Армении до провозглашения Первой республики. Декларация первого правительства республики и проблемы судебной политики.

##### **§ 3. Разработка концепции построения судебной системы первой Республики Армения и ее законодательная реализация**

Возможные пути судебного строительства. Концепция построения судебной системы. Обсуждение концептуальных проблем построения судебной системы. Августовский пакет законопроектов "Об организаций суда в Республике Армения". Судоустройственные и судопроизводственные законы 6-ого декабря 1918 г.

##### **§ 4. Принципы правосудия и общая характеристика судопроизводства**

Принципы правосудия и общая характеристика судопроизводства по декабрским законам 1918 г.

Последующие законодательные изменения и дополнения процессуальных порядков. Резюме.

### **ГЛАВА 2.**

#### **СТРУКТУРА И ДЕЯТЕЛЬНОСТЬ СУДЕБНОЙ СИСТЕМЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

##### **§ 1. Мировые суды Первой республики: организационная структура, подсудность, деятельность**

Организационная структура системы мировых судов.

Подсудность мировых судов. Правовое регулирование нотариальной деятельности. Проблемы деятельности мировых судов. Проект реформы мировой судебной подсистемы.

##### **§ 2. Система судов общей подсудности в Первой республике**

Окружные суды в Первой республике. Апелляционная инстанция общей подсудности: Судебная палата Республики Армения. Единий кассационный суд: Сенат Армении.

##### **§ 3. Суд присяжных заседателей в Первой республике**

Общая характеристика судопроизводства с участием присяжных заседателей. За и против точки зрения в вопросе учреждения суда присяжных заседателей. Законодательное учреждение суда присяжных заседателей. Недостатки закона "О введении суда присяжных заседателей на территории Республики Армения" и попытки их преодоления. Созыв заседаний суда присяжных заседателей. Проблемы суда присяжных заседателей и предложение приостановления деятельности этого суда.

##### **§ 4. Суды в Зангезуре**

Особенности правления Зангезура. Судебная система Зангезура. Временный военный суд Зангезура.

##### **§ 5. Организационная структура и деятельность органов предварительного расследования и прокурорского надзора**

Взаимоотношения органов дознания – милиции и судебной власти в Первой республике. Органы предварительного следствия. Прокурорский надзор в Первой республике. Неэффективность деятельности судебных следователей и прокуратуры.

**Резюме.**

### **ГЛАВА 3.**

#### **ЧРЕЗВИЧАЙНЫЕ СУДЫ И ПЕРЕОСМОТР ПРИНЦИПОВ ПРАВОСУДИЯ**

##### **§ 1. Чрезвичайные суды в первой Республике Армения**

Чрезвичайный суд и чрезвичайная следственная комиссия по должностным преступлениям. Чрезвичайные суды созданы по поводу Майского восстания 1920 г.

##### **§ 2. Переосмотр принципов правосудия**

Ограничение материальных гарантий независимости судей. Упразднение принципа несменяемости судей. Попытки законодательного упразднения принципа непосредственности судебного разбирательства. "Национализация" суда и судопроизводства. Нарушения принципа осуществления правосудия только судом.  
Резюме.

### **ЗАКЛЮЧЕНИЕ**

## Anoteischn

Ներկայցվող մենագրությունը հեղինակի թեկնածուական ատենախոսությունն է, որի պաշտպանությունը կայացել է 1996 թ.: Այն համսպարփակ, համակարգված, ընդհանրացնող և անկորմնակալ պատմաիրավական հետազոտություն է՝ նվիրված Առաջին հանրապետության դատական համակարգի տաեղծմանը, դրա դատարանակազմական ու գործառությանը:

Հետազոտությունը իրականացված է պատմական պետականագիտության և իրավագիտության հիմնախնդիրների լուծման արդի մոտեցումների ու սկզբունքների օգտագործմամբ, որը հնարավորություն է տվել վեր հանել Առաջին հանրապետության դատական համակարգի ամբողջական նկարագիրը, հետևել դատական համակարգի գործունեությանը, գարզացման միտումներին: Նման մոտեցումը և լայն սոցիալական հայացքը դատական համակարգի կառուցման ու գործունեության նկատմամբ հնարավորությունն է տվել խոսափել գույու ձևական-իրավական վերլուծությունից, և իհարկե, Առաջին հանրապետության դատական համակարգի պատմությունը վեր հանել իր բոլոր պայմանների, գործուների հանրագումարով ու արդյունքում տալ այդ համակարգի գործունեության արդյունավետության գնահատականը նորաստեղծ ազգային պետության կայացման գործընթացում:

Մենագրությունը նախատեսված է իրավաբանական ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, ինչպես նաև Հայաստանի պետության ու իրավունքի պատմության հիմնախնդիրներով հետաքրքրողների համար:

---

## About the author

Արքուր Վաղարշյանը ծնվել է 1963թ. Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղում: 1981 թ. ուսկե մեղարկ ավարտել է Լճաշենի միջնակարգ դպրոցը: 1981-83թթ. ծառայել է խորհրդային գինական ուժերում: 1984թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որը ավարտելուց հետո, կրությունը շարունակել է ԵՊՀ նպատակային ասպիրանտուրայում՝ «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն» մասնագիտացմանը: 1996թ. պաշտպանել է «Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը և ստացել իրավաբանական գիտությունների թեկնածողի գիտական աստիճան:

1993 թ-ից աշխատում է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում, որպես դասախոս: 1997-2004 թթ. եղել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի խորհրդի քարտուղարը: Ներկայումս դրցենու Ա. Վաղարշյանը ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պետության և իրավունքի պատմության ու տեսության ամբիոնի վարիչն է: Միաժամանակ ԵՊՀ իրավաբանական գիտական աստիճաններ շնորհող 001 մասնագիտական խորհրդի գիտական բարտուղարն է: ՀՀ իրավաբանների միության «Պետություն և իրավունք» գիտական հանդիսավոր կողեգիայի անդամ է: Հրապարակել է երկու տասնյակից ավել գիտական հոդվածներ և ուսումնասիրություններ:

Վերապատրաստում է անցել Փաստուի համալսարանում (Գերմանիա), Բուդապեշտի Կենտրոնական եվրոպական համալսարանում, Ամերիկայի Սիայցյալ Նահանգներում, ինչպես նաև մասնակցել է իրավական բարեփոխումների հիմնախնդիրներին նվիրված մի շարք գիտաժողովների (Հաագա, Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ և այլն):

## ԱՌԱՋԱԲԱՆ

1918 թ. մայիսին Հայոց Ազգային խորհրդով, իրեն հայտարարելով «հայկական զավառների գերագույն միակ իշխանություն», դրեց ազգային անկախ պետականության շինարարության հիմքը: Հայաստանի Հանրապետության նորաստեղծ օրենսդիր և գործադիր պետական մարմիններն իրենց առաջնահերթ խնդիրներից մեկը համարեցին հանրապետական-ժողովրդավարական պետության ձևի հաստատումը:

Ցավոք, Առաջին հանրապետության դերն ու նշանակությունն անտեսվել էր խորհրդահայ պատմագիտության և իրավագիտության կողմից որոշակի գաղափարական ու քաղաքական պատճառներով, որի հետևանքով հանրապետության պետական և իրավական ինստիտուտներին անբավարար են ուսումնասիրված, իսկ առանձին հիմնախնդիրներ ընդհանրապես չեն դարձել քննարկման առարկա: Առաջին հանրապետության պետական կառուցակարգի, նրա քաղաքական և իրավական ինստիտուտների պատմությունը դեռևս մանրակրկիտ չեն ուսումնասիրված: Մինչև հիմա չկա ոչ մի համակարգված պատմահիրավական հետազոտություն՝ նվիրված Առաջին հանրապետության պետության և իրավունքի ամբողջական պատմությանը, նրա հիմնական քաղաքական-իրավական ինստիտուտների, այդ թվում նաև դատական համակարգի վերլուծությանը:

Ազգի գոյատևման հիմնական գրավականը, պատմության հորձանուտներում փրկության միակ ելքը անկախ, ինքնիշխան, «ուժեղ» պետականություն ունենալն է: Պետականություն հոչակելու իսկ պահից այն կարիք ունի ոչ միայն տեսազարդագրական հիմնավորումներով «փայփայանքի», այլև՝ արյան գնով պաշտպանության: Իր հերթին նորաստեղծ պետությունն ինքը պետք է գործնական քաղաքականության և քայլերի միջոցով «արդարացնի» իրեն՝ հաջողությամբ լուծելով իր առջև դրված խնդիրները:

Անկախ պետականության շինարարության և կայացման գործընթացում, որպես նախապայման, կարևորվում էր իրավակարգի և օրինականության հաստատումը: Ըստը վեց հարյուր տարի անկախությունը կորցրած հայ ժողովուրդը վերստեղծում էր իր պետականությունը: Պետական մտածողությունը և կամքը, պետականություն ստեղծելու կարողությունը, և որպես դրանց հետևանք օրինականության և իրավակարգի հաստատումը պետք է կայացնեին հայոց անկախ պետությունը:

Նորահոչակ հայոց պետության առջև այդ պահին կանգնած խնդիրներից առաջնայինը ազգային պետականության պաշտպանության գոր-

ծառույթն էր: Սակայն այդ խնդրի հաջող լուծումն անկախությունը նորնոր ձեռք բերած պետության համար պայմանավորված էր նաև ներքին գործառույթների հաջող իրականացմանը: Հենց ներքին խնդիրների հաջող լուծումն էր, որ հնարավորություն կտար ստեղծելու ազգային պետականության համար այդքան անհրաժեշտ սոցիալական հիմքը, լուծելու երկրի պաշտպանունակության ամրապնդման խնդիրները, իսկ մյուս կողմից՝ պահովել բարենպաստ արտաքին և ներքին պայմանների խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի համար: Այդ հիմքը ստեղծելու ճանապարհներից մեկն սոցիալական պետության սկզբունքի հոչակումը և կենսագործումն էր: Բայց քանի որ համաստցիալական լորջ միջոցառումների իրականացումն անհնարին էր տնտեսական հնարավորությունների սահմանափակ լինելու, պատերազմների, շրջափակման պատճառվ, ապա առաջ էր ընկնում, հատկապես, իրավակարգի պահպանության և արդարադատության գործառույթը, որպես նորահոչակ պետության պատմական արդարացման եղանակ, միջոց, որն հնարավոր էր իրականացնել կարճ պատմական ժամանակահատվածում ապացուցելով ազգային պետականության արժանիքները, բարիքները նախորդ՝ հատկապես օտար իշխանությունների հետ համեմատած:

Այդպիսով, ազգային պետականության ամրապնդման, նրա անվտանգության, պատշաճ պաշտպանության պայմաններից մեկը իրավակարգի և օրինականության հաստատումն էր: Հայաստանի առաջին հանրապետության ազգաբնակչությունը միայն այն ժամանակ կարող էր անվերապահորեն նվիրվել անկախության գաղափարին, եթե նյութապես ապահովված կլիներ, ծայրահեղ դեպարտ գոնեն նրա տարրական քննական իրավունքներն ու ազատություններն ապահովված լինեին իրականում, ընդ որում ոչ պակաս, քան նախկին իշխանությունների օրոք: Այդախի արդյունավետ, արդարացի պետական իշխանության հաստատումը և դրա նկատմամբ ազգաբնակչության դրական վերաբերմունքն այն հիմնական գործոնն էր, որ կօգներ մարդկանց գիտակցելու նոր քաղաքական համակարգի օգտակարությունն ու արդյունավետությունն և, հետևաբար, հոգեբանորեն մղելու ընդունվող օրենքների ու որոշումների կատարմանը:

Նորանկախ ազգային պետականությունը կարիք ուներ բանական իրավական կազմակերպման<sup>1</sup> և որպես դրա արդյունք՝ պատմական ար-

<sup>1</sup> Իրավագիտությունը պետական իշխանության բանական-իրավական կազմակերպման դիտարկում է անցման շրջանի պետականության լավագումացման, ինչպես նաև նրա արդյունավետության ապահովման երեք եղանակներից մեկը (տես *Теория права и государства. Под ред. проф. Монова Р.Н., М., 1995, т.2 254):*

դարացման: Այլ խոսքերով ասած, կարևորվում էր Առաջին հանրապետությունում կայուն իրավակարգի կայացումը ու արդարադատության խնդիրների կենսագործումը, ընդհանրապես հանցավորության և, հատկապես՝ պաշտոնեական հանցավորության ճգմումը, բնակչության ունեցվածքի ու գույքի, անվտանգության ապահովումը, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը, խորականության (կուսակցական, ազգային և այլն), անիշխանության, կամայականության վերացումը: Եթե պետական իշխանությունը կարողացավ նվաճել այդ խնդիրները, հասնել դրանց կենսագործմանը, կայունացնել ու վերահսկել դրությունը, հաստատուն հիմքերի վրա դնել իրավապահպան գործունեությունը, արդարադատությունը, ու դրանով իսկ ազգին ու բնակչությանը պետականորեն ու գործնականում ապացուցել իր արդյունավետությունը, «արդարացնել» իրեն, որեմն ամրոց ժողովորդը կփարի անկախ պետականության գաղափարին, կյանքի գնով կպաշտպանի այն: Չկարողացավ՝ որեմն առաջ կրերի խորը դժգոհություն ժողովորդի բոլոր խավերի մեջ ընդրեմ տիրող կարգերի և, որքան աճի այդ դժգոհությունն, այնքան կվտանգվեն անկախ պետականության հիմքերը, կնեղանա նրա սոցիալական հենքը: Այդպիսի սոցիալական խմբումների բնական արդյունքը հասարակության մի ստվար մասի վերածումն է քաղաքական ընդիմության: Ահա այս առումով էլ Առաջին հանրապետության համար կարևորվում, կենսական նշանակություն էր ձեռք բերում իրավապահպան համակարգի, այդ թվում նաև դատական համակարգի հաջող կազմակերպումը, իրավապահպան գործունեության, ինչպես և արդարադատության խնդիրների կենսագործումը՝ «անհատի (նրա իրավունքների և ազատությունների), հասարակության (նրա նյութական և հոգևոր արժեքների), պետության (նրա ինքնիշխանության և տարածքային ամբողջականության) պաշտպանությունը»: Գործունեություն, որը ցանկացած պետության մեջ իրականացվում է հատուկ իրավապահպան մարմինների՝ դատարանի, դատախազության, ոստիկանության (միլիցիայի) և այլ մարմինների կողմից:

Իրավապահպան գործունեությունն իր բովանդակությամբ բազմարույց է և ընդգրկում է մի շարք սոցիալական գործառույթներ: Արդարադատությունը լայն առումով, որպես պետական գործունեության տեսակ, «իրավապահպան գործունեության սիրտն է», որովհետև նրա խնդիրներին են ենթարկված մնացյալ բոլոր իրավապահպան գործառույթների կատարումը: Հետևաբար՝ իրավապահպան մարմինների համակարգում կենտրոնական տեղը պատկանում է դատական մարմիններին:

Հայաստանի առաջին հանրապետության պետական իշխանության կառուցակարգում ևս հատուկ տեղ էին գրադեցնում դատական մարմին-

ները: Այդ տեղը պայմանավորված էր նախ նրանց առջև դրված արդարադատության խնդիրներով: Բայց այդ խնդիրների ուժով դատարանները ձեռք էին բերում մեկ այլ պատմական նշանակություն՝ կարևոր դեր խաղալ նորաստեղծ ազգային պետականության բանական-իրավական կազմակերպման ու կայացման գործընթացում:

Ահա այս տեսանկյունից մեզ համար կարևոր է Առաջին հանրապետության պետականության, պետական շինարարության, արդարադատության համակարգի կազմակերպման ու գործունեության փորձը, որովհետև այսօր էլ մենք կանգնած ենք նույն խնդիրների լուծնան ճանապարհին: «Անցյալը, ներկան և ապագան հաղորդակցվող երակներ են և ինչքան շատ ենք դիմում պատմությանը, այնքան ավելի շատ ենք հասկանում, թե ինչ պետք է արվի և այսօր, և՝ վաղը»<sup>1</sup>: Արդի իրականությունը չի սահմանազատված անցյալից և ապագայից: Ներկան անցյալի՝ պատմության շարունակությունն է, բայց նաև ապագայի նախադրյալը: Պատմության մեջ այսօրը հենց դրանով է կարևոր: Այդպիսով՝ Հայաստանի առաջին հանրապետության պետական մարմինների, իրավական ինստիտուտների պատմության հետազոտումը, նրա պետական շինարարության փորձի ստեղծագործական, անկողմնակալ վերահսկանապետությունը ունի ոչ միայն գիտական, պատմաճանաչողական, այլև՝ կրթիչ-դաստիարակչական ու կիրառական նշանակություն: Հետևաբար, Հայաստանի առաջին հանրապետության դատական շինարարության փորձը, դատական համակարգի գործունեության փաստական տվյալները արդի պայմաններում ձեռք են բերում նաև մեծ գործնական նշանակություն այն իմաստով, որ այդ փորձը կարելի է օգտագործել արդի պետականության կատարելագործման ճանապարհները որոշելիս, Երրորդ հանրապետության դատակագմության, դատավարության իմբնախնդիրները նշանակելիս, որովհետև «Ենթարկվելով սոցիալական զարգացման օրենքներին, արդիականությունը վերածվում է անցյալի, իսկ անցյալն իշխանաքար ներխուժում է արդիականության սահմանները: Ահա թե ինչու պետական և քաղաքական գործիչների համար պատմության իմացությունը կազմում է պետական իմաստության և քաղաքական խորաթափանցության անփոխարինելի տարրը»<sup>2</sup>:

Հետազոտության առարկան Առաջին հանրապետության դատական համակարգն է: Դատական համակարգը պետության բոլոր դատարան-

<sup>1</sup> Տե՛ս Истина ... И только Истина! Пять бесед о судебно-правовой реформе. М., 1990. էջ 21:

<sup>2</sup> Տե՛ս Ракитов А.И., Историческое познание. М., 1982. էջ 3:

ների համակցությունն է, որոնք ունեն ընդհանուր խնդիրներ, կազմակերպում ու գործում են միասնական սկզբունքներով և կապված են միմյանց հետ արդարադատության իրականացման հարաբերություններով։ Նման մոտեցումն էլ հենց պայմանավորել է սույն պատմահրավական հետազոտության խնդիրները և մենագորության բովանդակությունը, որն ընդորվում է դատական շինարարությունը Առաջին հանրապետությունում, հանրապետության համարադրացիական դատական համակարգի ստեղծման, կազմակերպության (Կառուցվածքի, իրավասության, հաստիքների), գործառության սկզբունքների, ինչպես նաև փաստական գործունեության պատմությունը։

Առաջարկվող ուսումնափրությունը հետաքրքիր է և յուրօրինակ, պայմանավորված է դրա մի շարք առանձնահատկություններով։

**Առաջին՝** հետազոտությունն ունի ակնհայտ գիտական նորույթ։ Առաջին անգամ ամբողջական, համակարգված, պատմահրավական հետազոտության են ենթարկված Առաջին հանրապետության դատական համակարգի ակունքները, դատական համակարգի կառուցումը և հետագա փոփոխությունները, փաստական գործունեությունը։ Ընդ որում ուսումնափրությունը կատարված է չհամակարգված, տարբեր արխիվների գանացանա արխիվային ֆոնդերում ցրված սկզբնադրյութներից։

**Երկրորդ՝** աշխատանքն առանձնահատուկ նաև իր աղբյուրագիտական ապարատով։ Հետազոտության հիմքում ընկած են հիմնականում Հայաստանի Հանրապետության Պատմության պետական կենտրոնական արխիվի (ՀՀ ՊԿԱ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գրականության և արվեստի պետական կենտրոնական արխիվի (ՀՀ ԳԱՊԿԱ), Հայաստանի Հանրապետության հասարակական քաղաքական կազմակերպությունների փաստարդերի պատմության կենտրոնական արխիվի (ՀՀ ՀՔԳՓՊԿԱ) Հայաստանի առաջին հանրապետությանը վերաբերող արխիվային ֆոնդերում եղած Առաջին հանրապետության օրենսդրական-նորմատիվ նյութերը, պաշտոնական գործավարության և վիճակագրական նյութերը, ժամանակի մամուլը։ Որպես աղբյուրներ օգտագործվել են նաև ժամանակի գործիքների աշխատությունները և հիշողությունները՝ նվիրված Առաջին հանրապետության քաղաքական պատմությանը։ Արխիվներում երկարատև և ուշիմ փնտրությունների ու հետազոտությունների շնորհիվ հաջողվել է ի մի հավաքել Առաջին հանրապետության օրենսդիր մարմինների ընդունած և հետազոտման առարկային վերաբերող հանարյա բոլոր օրենսդրական և այլ փաստաթղթերը, որոնք մեծամասամբ առաջին ան-

գամ են մտցվում գիտական շրջանառության մեջ։ Արխիվային տեղեկատվության ընտրությունը կատարվել է դրա ապահովության և հանողականության չափանիշներով<sup>1</sup>։

**Երրորդ՝** հետազոտությունը կատարված է պատմահրավական, տրամաբանական, սոցիոլոգիական սկզբունքների փոխլրացնող օգտագործմամբ։ Նյութի շարադրման պատմահրավական բնութագիրը գուգորդված է պետահրավական երևույթների ուսումնափրության ինստիտուցիոնալ մեթոդով՝ գուգորդված սոցիոլոգիական մոտեցմամբ։ Դատահրավական ամեն մի ինստիտուտի պատմությունը շարադրելիս լուսաբանված են ոչ միայն տվյալ ինստիտուտի հիմնադրման հիմքը կազմող օրենքները, այլև լայն հասարակական ընդհանուր և հատուկ գործուները, գուերե օրինաչափության աստիճանի հասնող զարգացման միտումները։ Աշխատանքում փորձ է արվել անդրադառնալ նաև Առաջին հանրապետության դատական համակարգի արդյունավետ գործունեության, ընդհանրապես իրավախախտումների կանխման և նախազգուշացման համար անհրաժեշտ նյութական, քաղաքական, սոցիալական, բարոյահոգեբանական նախադրյաներին։ Լայն սոցիալական հայացքը դատական հանրապետի կառուցման ու գործունեության նկատմամբ, հնարավորություն է տվել խոսափել գուտ ծևական-իրավական վերլուծությունից, տարբերել անհաջողությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները և, իհարկե, Առաջին հանրապետության դատական համակարգի պատմությունը վեր հանել իր բոլոր պայմանների ու գործուների հանրագումարով։ Նման մոտեցման կենսագործման համար միջոց է ծառայել այն, որ ի մի են հավաքվել ոչ միայն գուտ իրավական օրենսդրական աղբյուրները, այլ նաև պետական պաշտոնական գրագրության նյութերը, օրենսդիր և գործադիր մարմինների նիստերի արձանագրությունները, ժամանակի վիճակագրությունը, հանրապետության գործիքների հուշերը։

**Չորրորդ՝** Հետազոտության էական առանձնահատկությունն այն է, որ այն կառուցված է գուտ Առաջին հանրապետության նորմատիվ-օրենսդրական և փաստագրական նյութերի վրա, այլ ոչ թե Կայսերական Ռուսաստանի՝ Հանրապետությունում գործադրված, իսկ երփեմն էլ ընդհանրապես իրավական փոփոխությունների ու լրացումների շնորհարկված իրավական ինստիտուտների ծևական-իրավաբանական վերլուծության։ Հին՝ կայսերական օրենսդրությանն անդրադառներ արվել են այնքանով, որքանով, որ դա անհրաժեշտ է հանրապետական օ-

<sup>1</sup> Հեղինակն իր վրա է վերցնում աշխատանքում օգտագործված փաստերի, վիճակագրության, բերված մեջբերումների հավաստիությունը։

րենսդրությունը լրիվ և ճիշտ հասկանալու համար: Հին օրենսդրության, նոր՝ հանրապետական օրենքների բովանդակության համեմատական, ժամանակագրական ու քննադատական վերլուծությունը հարուստ Այուր և հնարավորություններ են տվել կառուցելու Առաջին հանրապետության դատական շինարարության, դատարանակազմության, դատավարության ամբողջական պատկերը, հետևելու հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինների կողմից արդարադատության ոլորտում տարփող քաղաքականությանը, դրա ընթացքին ու տրամադրանությանը, վեր հանելու հաջողությունները, թերություններն ու սխալները:

**Հինգերորդ՝** Այուրի շարադրանք իրականացված է պատմական պետականագիտության և իրավագիտության հիմնախնդիրների լուծման արդի մոտեցումների հիման վրա, որը ենթադրում է գնահատման բազմակարծություն, հրաժարում զաղափարականացված հայեցակարգերից, որոնք հասուն էին հայրենական իրավագիտությանը մարքսիստական գաղափարախոսության գերիշխանության տարիներին և իրենց զգացնել են տալիս նաև այսօր: **Պետության** և իրավունքի պատմությունը գիտություն է և ունի մեկ չափանիշ, որը և կողմնորոշչի է ծառայել ուսումնասիրությունը կատարելիս՝ մնալ հավատարիմ պատմական իրադարձություններին և փաստերին: Մասնատման և նկարագրման, համեմատական մեթոդների օգնությամբ տալ դատական համակարգի օրյեկտիվ, անկողմնակալ բնութագիրը, այնուհետև կայացնել եզրակացություններ՝ առանց միտումնավոր խեղաքարությունների: Ընդ որում հեղինակը ծգտել է խուսափել պատմությունը լուսաբանելիս ծայրահեղություններից: Անցյալի պետականագիտությունը լուսաբանելիս խուսափել ենք, ինչպես անհիմն և զուտ վատարանությունից, այնպես էլ անցյալի հիացական-դրական գնահատականներից:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

#### § 1. Առաջին հանրապետության օրենսդիր մարմինները և պետական կառավարման չեղը

Առաջին հանրապետության արդարադատության նախարարության, դատական համակարգի կազմակերպումը և գործունեությունը սերտորեն կապված է հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների կազմագործման հետ: Նախքան բուն շարադրանքին անցնելը, անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսքով նշել, թե ինչպիսի պատկեր ունենք օրինաստեղծ գործունեությունը Հայաստանի առաջին հանրապետությունում: Դա մեզ բույլ կտա ամբողջական պատկերացում կազմելու հանրապետության պետական կառավարման ծեփ, օրինաստեղծ մարմինների, արդարադատության ոլորտի կազմակերպական և վարույթային հասարակական հարաբերությունների իրավական կարգավորմանը վերաբերող օրինագծերի մշակման, քննարկման ու հաստատման կառուցակարգի մասին<sup>1</sup>:

**1.1. Հայաստանի խորհուրդ:** Հայաստանի առաջին հանրապետությունում օրենսդիր գործառույթը 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919 թ. ապրիլի 27-ը իրականացնում էր Հայաստանի խորհուրդը:

1918 թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը հոչակեց Հայաստանի անկախությունը՝ հրապարակելով անկախության հոչակագիրը, որում ասված էր «Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների, գերագույն և միակ իշխանություն ... Ազգային

<sup>1</sup> Վերակառուցման, հրապարակայնության, իսկ այնուհետև Հայաստանի երրորդ հանրապետության հոչականը սկսեցին լույս տեսնել բազմաթիվ հոդվածներ, աշխատություններ՝ նվիրված Առաջին հանրապետության պատմությանը: Մի կողմ բողնով այս փաստը, որ դրանց մի մասը միակողմանի է, ասենք, որ դրանցում կան նաև այնպիսները, որոնցում առկա են զանազան բնույթի փաստագրական սխալներ, թերություններ, մոլորություններ: Դրանք Առաջին հանրապետության պետական մարմինների կազմագործման և գործունեության կառուցակարգի, իրավական համակարգի չիմացության, անմիջապես սկզբնապերյուններից չօգտվելու, կամ էլ վերջիններս, ըստ էության, չհասկանալով օգտագործելու հետևանք են: Մեր կողմից նկատված այդպիսի թերությունների մի մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանության կազմակերպմանը և գործունեությանը:

խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»<sup>1</sup>:

Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը՝ որպես մարմին ձևավորվել էր 1917 թ.: 1917 թ. սեպտեմբերի 29-ին Թիֆլիսում գումարվեց Հայկական ազգային համախորհրդակցությունը, որը հրավիրել էին հայ իրականության մեջ գործող բոլոր ազդեցիկ կուսակցություններն ու կազմակերպությունները: Միայն հայ բոլշևիկները բոյկոտեցին համախորհրդակցությունը: Այդ համախորհրդակցությունը ընտրեց Ազգային ժողով՝ կազմված ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ սփյուռքի տարրեր քաղաքական կուսակցությունների, խոշոր քաղաքների ազգաբնակչության, արևմտահայերի և այլ հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, և Ազգային խորհուրդ՝ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից<sup>2</sup>: Ազգային ժողովն ուներ քարձրագույն, «օրենսդրական» մարմնի կարգավիճակ, իսկ Ազգային խորհրդի գործառույթը գործադրի էր: Այրուհաներձ, դեաքրելի բերունվար հետագայում ամբողջ իշխանությունն իր ձեռքում կննտրուացրեց Թիֆլիսի Ազգային խորհուրդը, որն էլ հենց հոչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը:

Այնուհետև, երբ Թիֆլիսի Ազգային խորհրդի կազմը և այնտեղ ձևավորված կառավարությունը տեղափոխվեցին Երևան, ապա Թիֆլիսի Ազգային խորհուրդը և Երևանի Ազգային խորհուրդը մի քանի համատեղ ժողովներից հետո որոշեցին կազմել Հայաստանի խորհուրդ՝ որպես երկրի օրենսդրի և գերագույն մարմին: Հայաստանի խորհուրդը կազմավորվեց Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի տասներկու կուսակցական անդամների թիվը համեմատաբար եռապատկելով, դրան ավելացնելով երկու չեղոր հայ պատգամավորներ, վեց մուսուլման, մեկական ոռու և եղոյի պատգամավորներ (ընդամենը քառասունվեց)<sup>3</sup>:

Հենց այս Հայաստանի խորհուրդը՝ որպես խորհրդարան (պառլամենտ), իրականացնում էր օրենսդիր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, մինչև 1919 թ. ապրիլի 27-ը, երբ նոյն օրն այս մարմինն իր իսկ ընդունած օրենքով դադարեցրեց «Հայաստանի խորհրդի պարապմունքները» մեկ ամսով, իսկ այդ դադարի միջոցին Հայաստանի

խորհրդի բոլոր իրավունքները հանձննեց կառավարությանը<sup>4</sup>: Մինչ այդ Հայաստանի խորհուրդն ընդունել էր «Հայաստանի խորհրդարանի ընտրության մասին» օրենքը և հանրապետության քաղաքական ղեկավարությունը մտադրված էր անցկացնել խորհրդարանական ընտրություններ: Հայաստանի խորհուրդն իր վերջին նիստը գումարել է 1919 թ. հունիսի 5-ին, երբ ընդունվեց օրենքը, համաձայն որի դադարեցվեց այդ մարմինի գործունեությունը մինչև Հայաստանի խորհրդարանի գումարման օրը, իսկ խորհրդի իրավասությունները նորից վերապահվեցին կառավարությանը<sup>5</sup>:

**1.2. Հայաստանի խորհրդարան:** 1919 թ. օգոստոսի 1-ից մինչև 1920 թ. մայիսի 5-ը օրենսդրական գործառույթն իրականացրել է ժողովրդի կողմից անմիջականորեն համամասնական ընտրակարգով ընտրված Հայաստանի խորհրդարանը՝ պառականությունը: Հայաստանի խորհրդարանը ևս իր իրավունքները, այդ թվում և՛ օրենքները ընդունելու իրավունքը, 1920 թ. մայիսի 5-ից սկսած մինչև հանրապետության անկումը, հատուկ օրենքներով հանձնում էր կառավարությանը՝ «Հայաստանի խորհրդարանի դադարի միջոցին խորհրդարանի բոլոր իրավունքները հանձնել կառավարությանը» կամ «դադարի միջոցին ընթացիկ օրինագծերը հաստատելու կամ մերժելու իր իրավունքը Հայաստանի խորհրդարանը փոխանցում է կառավարությանը» ձևակերպումներով:

Այն ժամանակահատվածներում, երբ օրենսդիր գործառույթը իրականացնում էր բուն օրենսդիր մարմնը՝ խորհրդարանը, նախարարությունների, այդ թվում արդարադատության նախարարության մասնակցությունը օրինաստեղծ գործունեությանը հանգում էր նրան, որ նա մշակում էր օրինագծերը, իսկ այնուհետև դրանը նախարարի կողմից դրվում էին Նախարարների խորհրդի նիստերի բննարկմանը, որտեղ դրանը հավանություն ստանալու դեպքում ուղարկվում էին Հայաստանի խորհրդի, իսկ 1919 թ. օգոստոսի 1-ից Հայաստանի խորհրդարանի դիվաններին, իսկ այնտեղից էլ օրենսդիր մարմնի համապատասխան հանձնաժողովներ: Ըստ սահմանված կարգի բոլոր օրինագծերը, որ մշակվել էին օրենսդիր մարմիններից դուրս պետք է անցնեն Նախարարների խորհրդով և «ոչ մի նախարար առանձին, չի կարող օրինագիծ բերել խորհրդարան առանց Նախարարների խորհրդի, որը հավաքարար պատասխանատու է»<sup>6</sup>: Քանի որ իրականության մեջ որոշ նախարարություններ երթեմն

<sup>1</sup> Տե՛ս **Գրացյան Ա.**, Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 131-132:

<sup>2</sup> Հայկական ազգային համախորհրդակցության աշխատանքների մասին մանրամասն տե՛ս «Բանրեր Հայաստանի արխիվների», Երևան, 1992, թիվ 1-2:

<sup>3</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, 1918, թիվ 42:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1919, հոդվ. 115, էջ 61:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1919, հոդվ. 116, էջ 61:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 58, թ. 116:

շրջանցում էին կառավարությանը, ապա 1919 թ. նոյեմբերի 28-ի օրենքով պահանջվում էր, որ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից օրենսդիր նարմին մտնող յուրաքանչյուր օրինագիծ պետք է ունենար «վարչապետի և համապատասխան նախարարի ստորագրությունները, իսկ ֆինանսական բնույթ ունեցող օրինագծերը նաև ֆինանսների նախարարի ստորագրությունը»<sup>1</sup>:

**1.3. Օրենսդրական լիազորություններով օժտված կառավարությունը:** Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը վարչապետի գլխավորությամբ 1919 թ. ապրիլի 27-ից մինչև օգոստոսի 1-ը, իսկ այնուհետև 1920 թ. մայիսի 5-ից մինչև հանրապետության անկումը՝ դեկտեմբերի 2-ը, վերածվում էր օրենսդրական լիազորություններով օժտված գործադիր մարմնի: Հետևաբար՝ այս ժամանակահատվածներում նախարարների կողմից նախարարների խորհրդի մտցված օրինագծերը հաստատվելուց հետո ստանում էին օրենքի ուժ<sup>2</sup>: Համաձայն Նախարարների խորհրդի կողմից ընդունված կարգի յուրաքանչյուր նախարար իր առաջարկությունը պետք է ներկայացներ նախօրոք, գրավոր կերպով, իսկ այն առաջարկությունները, որոնք պահանջում էին օրենսդրական լուծում, անպայման պետք է ունենային համապատասխան օրինագիծ և բացատրագիր:

Կառավարությանն օրենսդրական լիազորություններով օժտելն իր հերթին հանգեցնում էր կառավարության ծանրաբեռնվածությանը: Օրինակ՝ 1920 թ. մայիսից այն գումարում էր օրական երկու նիստ՝ առավոտյան և երեկոյան, ու դրանց ընթացքում քննարկվում էին և օրենսդրական, և՝ գործադիր-կարգադրիչ բնույթի հարցեր, որոնց ընդհանուր քանակը մեկ նիստի օրակարգում հաճախ անցնում էր քսանից: Այս իրավիճակից կառավարությունը ելքը գտավ Նախարարների փոքր խորհրդի հիմնադրումով՝ 1920 թ. մայիսի 5-ին<sup>3</sup>: Այդ մարմինը կազմված էր նախարարների օգնականներից, Նախարարների խորհրդի գործերի կառավարչից: Փոքր խորհրդի նախագահ էր նշանակված արդարադատության նախարարի օգնական Ա. Չիլինգարյանը:

Բոլոր օրինագծերն ու գեկուցումները, բացի քաղաքական մեծ նշանակություն ունեցող և արտակարգ խնդիրներից, նախ և առաջ մտնում

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, իրատ. Պատշաճնետի, 1919, թիվ 6, հոդվ. 70, էջ 48:

<sup>2</sup> Այդ ժամանակամիջոցներում կառավարության կողմից ընդունված օրենքները բազմարիվ են և իրենց քանակական առումով չեն զիջում, եթե չեն գերազանցում խորհրդարանական օրենքներին:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 77:

էին Նախարարների փոքր խորհրդի, որտեղ հարցերի ընտրություն էր արկում և բաժանվում բուն Նախարարների խորհրդի և փոքր խորհրդի միջև: Փոքր խորհրդում դրական լուծում ստացող այն օրինագծերը, որոնք անցնում էին առաջ առարկության և փոքր խորհրդի որևէ անդամի կողմից պահանջ չեր դրական կառավարության և ստորագրության որպես օրենք<sup>1</sup>: Հակառակ դեպքում օրինագիծն ուղարկվում էր Նախարարների խորհրդի քննարկմանը:

Հանրապետության քաղաքական դեկարտության այդպիսի քայլերն, ուղղված օրենսդրական լիազորությունների փոխանցմանը, պայմանավորված էին երկու հիմնական հանգամանքներով: Սի կողմից՝ օրենսդիր մարմնում, հատկապես Հայաստանի խորհրդում, կառավարող կուսակցությունը մյուս կուսակցությունների ընդդիմադիրի դիրքորշշան պատճառով հանդիպելով որոշակի դժվարությունների՝ անարգել իրագործելու իր քաղաքականությունը, իր պատգամավորական մեծամասնության միջոցով կարողանում էր հասնել օրենսդրական լիազորությունների այդպիսի փոխանցման և դրանով իսկ ազատվում ավելորդ գլխացավանքից: Մյուս կողմից՝ կառավարող ուժերի կամքից անկախ ճգնաժամը հասարակության կյանքի բոլոր ոլորտներում, պատերազմները, հակապետական խոռվությունները և անցման շրջանը հրանայարար պահանջում էին իշխանության կենտրոնացում, օպերատիվություն, և ակնհայտ էր դառնում, որ այդպիսի արտակարգ իրադրությունում պետական կառավարման ձևը՝ «պատշաճնետական դանադաշտարժ ձևով» չեր կարող ձեռնարկել կտրուկ միջոցներ, ունենալ արագաշարժ պետական իշխանություն: Հանրապետության իրականության առաջադրած իրատապ խնդիրները պահանջում էին շուտափույր և առանձնահատուկ լուծումներ, որոնք հնարավոր էր տալ միայն արագ ու օպերատիվ կառավարական որոշումներով, կարգադրություններով ու ձեռնարկներով: Այսպիսի իրավճակում քաղաքական ուժերի մի մասը գտնում էր, որ խորհրդարանը որոշ ժամանակ պետք է ձեռնապահ մնար օրինաստեղծ գործունեությունից, մինչև որ իրականությունը հնարավորություն կդադարձներ խորհրդարանական աշխատանքը, խորհրդարանական օրինաստեղծությունը: Հայաստանի Հանրապետության գոյության ողջ ժամանակահատվածում ժողովրդավարական կառավարման ձևերի ու հաստատությունների ձգուման և ճգնաժամային իրավիճակից բխող արտակարգ, վարչական, ունարեսիվ միջոցառումների անհրաժեշտության միջև հակասությունը եր-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 231, թ. 29:

բեր լուծում չգտավ, ինչն ապացուցվում է նաև օրենսդիր ու գործադիր մարմինների, «պատշաճ» ու արտակարգ դատարանների գործառության մեջ մրցակցությամբ:

**1.4. Առաջին հանրապետության կառավարման ձևը:** Առաջին հանրապետությունում կառավարությունը ընդհանուր իրավասության կողեզրի մարմին էր, որն իրականացնում էր գործադիր իշխանությունը: Նրա կազմի մեջ մտնում էին վարչապետը (նախարար-նախագահը), որպես կառավարության ու պետության գլուխ, և «պորտֆելով» նախարարները: Կառավարության պաշտոնական անվանումն էր՝ Նախարարների խորհուրդ: Կառավարությունը կազմվում էր օրենսդիր մարմնի ձևավորման (կամ ընտրությունների) արդյունքում, երբ վերջինս ընտրում էր վարչապետ: Ստանալով վարչապետի մանդատը նախարար-նախագահը կազմում էր կառավարությունը և իր գործողությունների ծրագրի («Հայտարարագրի», «Դեկլարացիայի») հետ միասին ներկայացնում էր խորհրդարանի հաստատմանը: Հանրապետություն գործում էր պատասխանատու կառավարության սկզբունքը: Այսպիսով, Հայաստանի առաջին հանրապետությունում օրենսդիր մարմինների, կառավարության կազմավորման կարգի, նրանց փոխհարաբերությունների բնույթի նշված և մի շարք այլ առանձնահատկություններ հաստատում են, որ Հայաստանի առաջին հանրապետության պետական կառավարման ձևը խորհրդարանական հանրապետություն էր, որի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը նշանակովի էր, իսկ երկրորդը՝ Հայաստանի խորհրդարանը՝ ընտրովի: Կառավարությունը՝ Նախարարների խորհուրդը՝ հաշվետու և պատասխանատու էր օրենսդիր մարմնի առջև: Վերջինս կարող էր նաև անվտանգության քվե հայտնել կառավարությանը, որն այդ դեպքում պետք է հրաժարական տար:

## **§ 2. Դատարանները Հայաստանում մինչև Առաջին հանրապետության դատական համակարգի կառուցումը**

Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգի կազմակերպումը և գործունեության ծավալումը սերտորեն կապված են մինչհանրապետական դատարանների հետ, ինչպես նաև՝ նորահոչակ հանրապետության առաջին կառավարության ու արդարադատության նախարարության կազմավորման հետ: Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսքով ներկայացնել, թե ինչ տեսք ուներ դատական համակարգը

Հայաստանի Հանրապետությանը անցած տարածքում Ուսուական Կայսրության օրոք և դրանից հետո՝ մինչև Հայաստանի Հանրապետության հոչակումը: Մինչհանրապետական դատարանի և դատավարության իմացությունը մեզ հնարավորություն կտան ավելի լավ հասկանալու հանրապետության դատական համակարգի պատմությունը, որովհետև նոր դատական համակարգը իր արմատներով գնում էր նախորդ ժամանակաշրջան, հնի և նորի միջև կար որոշակի ձևակազմական, համակարգային նմանություն: Այս տեսանկյունից ելնելով անհրաժեշտ է նաև պարզաբնել հանրապետության առաջին կառավարության, արդարադատության նախարարության կազմակերպման և գործունեության սկզբնական ընթացքը, որովհետև դատական քաղաքականության հիմնահարցերը կազմում էին կառավարության գործունեության ծրագրի՝ «Հայտարարագրի» բաղկացուցիչ մասը, իսկ դատական շինարարության բոլոր հարցերը կենտրոնացված էին արդարադատությունում:

**2.1. Դատարանները Հայաստանում Ուսուական Կայարարության օրոք:** Ուսուական կայսրության 19-րդ դարի 2-րդ կեսի դատական բարեփոխումները կրկնայան փոխարքայության տարածքում անցկացվել եր 1866 թ.: Հանաձայն կայսերական հաստոկ օրենքների հետագայում հանրապետությանը անցած հայկական տարածքների մի մասում ստեղծվում էր շրջանային դատարան<sup>1</sup> Երևանի նահանգի և Կարսի մարզի համար, որը մտնում էր Թիֆլիսի Դատական պալատի դատական շրջանի մեջ<sup>2</sup>:

Դատական բարեփոխումը Կովկասյան փոխարքայությունում կիրառվեց էական փոփոխություններով, որոնք հետևանք էին ցարիզմի գաղութատիրական քաղաքականության: Կովկասյան երկրամասում դա-

<sup>1</sup> Գրականության մեջ և նորմատիվ ակտերում օգտագործվող «դատական օկրուգ» և «օկրուգային դատարան» հակացությունները Առաջին հանրապետության որոշ իրավական ակտերում թարգմանված են «դատական շրջան» և «շրջանային դատարան» ձևերով: Այդ հանգամանքից ելնելով հետագա շարադրանքում օգտագործելու ենք հայեցի այդ ձերը:

<sup>2</sup> Ուսուական Կայսրությունում դատարանակազմության ու դատավարության հարթերությունները բացի «ընդհանուր դատական կանոնադրություններից» կարգավորվում էին նաև հասուն օրենքներով, որոնք կրնկրենացնում էին այդ հարթերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները կայսրության ծայրամասերի համար, սահմանում էին վերապահումներ ու բացառություններ ընդհանուր կարգից: Անդրկովկասի համար այդպիսի հաստոկ օրենք էր «Սահմանադրության մասին օրենք» (այսպիսական օրենքը կազմակերպում էր Հայաստանի անհրաժեշտ դատական համակարգը 1904 թվականի մարտի 23-ի օրոք): Այսօր Հայաստանում դատական համակարգը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության օրոք:

տաիրավական բարեփոխումները կարգավորող հասուկ օրենքները սահմանում էին, որ այդ երկրամասում, այդ թվում և Անդրկովկասում, շրջանային դատարաններին ընդդատյա քրեական գործերի դատական քննությունը կատարվելու էր առանց երդվյալ ատենակալների: Տեղամասային հաշտարար դատավորների պաշտոնները այստեղ ոչ թե ընտրովի էին, այլ նշանակովի՝ կայսրության արդարադատության նախարարի կողմից՝ Կովկասի քաղաքացիական մասի պետի հետ համաձայնեցնելով: Կովկասի և Անդրկովկասի յուրաքանչյուր հաշտարար դատարանում մտցվում էր օգնականի պաշտոն, որն իրականացնում էր դատական գործառություններ առանձին տեղամասերում, եթե հաշտարար օկրուգը (շրջանը) բաժանվում էր տեղամասերի: Օգնականները փոխարինում էին հաշտարար դատավորներին՝ նրանց հիվանդության կամ արձակուրդի դեպում:

Անդրկովկասում չէր ներմուծվում դատական քննիչների ինստիտուտը: Դատական քննիչների պարտականություններն այստեղ դրված էին հաշտարար դատավորների կամ նրանց օգնականների վրա: Միայն 20-րդ դարի սկզբին դատական քննիչների ինստիտուտը ներմուծվեց Անդրկովկաս: Մինչ այդ կարևորագույն գործերով նախաքննություն վարելու համար երկու դատական քննիչների հաստիք ուներ միայն Երևանի շրջանային (օկրուգային) դատարանը:

Հաշտարար դատավորների վրա անմիջական դատական վերահսկողություն վերաքննության կարգով իրականացնում էր Երևանի շրջանային դատարանը: Փաստորեն Անդրկովկասում, այդ թվում և Երևանի շրջանային դատարանի օկրուգում չկային հաշտարար դատարանի մյուս օդակները, ինչ-որ կայսրության կենտրոնական նահանգներում: Հաշտարար ենթակայության գործերի նկատմամբ վճռաբեկ ատյան էր ծառայում Թիֆլիսի Դատական պալատը: Ընդհանուր ընդդատության գործերով վերաքննիչ ատյան էր Թիֆլիսի Դատական պալատը, իսկ վճռաբեկ՝ Կառավարիչ սենատը:

Այսպիսով, դատական բարենորոգման կարևորագույն ժողովրդագրական ինստիտուտները՝ երդվյալների դատարանը, հաշտարար դատավորների ընտրովիությունը, երկու դատական ենթահամակարգերի՝ հաշտարար և ընդհանուր, առանձնացվածությունը վերացվեցին դատական բարենորոգումը Կովկասում ներմուծելիս:

Համաձայն վերը նշված կայսերական հասուկ օրենքների կայսրության արդարադատության նախարարությունը Երևանի դատական շրջանը 1912 թ. դրությամբ բաժանել էր իննը հաշտարար բաժինների (Կարսի

հաշտարար բաժնի կազմում կար նաև մեկ՝ Արդահան-Օլրիի հաշտարար տեղամասը), տասնիննը քննչական մասերի և վեց քննչական-հաշտարար տեղամասերի<sup>1</sup>: Երևանի դատական շրջանի այս բաժանումը գործել է մինչև կայսրության անկումը:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում պահպանվեց տեղական դատարանների նախկինում եղած համակարգը՝ դատական պալատներ, շրջանային դատարաններ, հաշտարար դատավորներ և դրանց համագումարներ: Սակայն հեղափոխությունից հետո Ժամանակավոր Կառավարությունն իրականացրեց որոշ միջոցառումներ դատարանի ժողովրդագրականացման ուղղությամբ, որոնց հիմնական նպատակը 1864 թ. դատարանակազմական և դատավարական օրենքների խեղաքյուրված կամ վերացված առաջադիմական դրույթների վերականգնումն էր:

Ժամանակավոր կառավարության 1917 թ. մայիսի 30-ի օրենքով հիմնադրվեցին վարչական գործերով դատարաններ<sup>2</sup>: Այդ օրենքով յուրաքանչյուր գավառում նշանակվում էին վարչական դատավորներ: Շրջանային դատարաններին կից ստեղծվեցին հատուկ վարչական բաժանմունքներ՝ որպես երկրորդ ատյան, իսկ Կառավարիչ սենատում վարչական դատարանների համար վճռաբեկ ատյանը դարձավ առաջին դեպարտամենտը<sup>3</sup>: 1917 թ. հուլիսի 9-ին շրջանային դատարաններին կից ստեղծվեցին ցուցակագրական բաժանմունքները, որոնք գրանցում էին նոր հասարակական, քաղաքական միությունները, ընկերությունները: Ժամանակավոր կառավարության այս բարենորոգումները կենացործվել են նաև Հայաստանում: Երևանի շրջանային դատարանում մինչ Անդրկովկասի անկախության հոչակումը ստեղծվել էին ցուցակագրական և վարչական բաժանմունքներ:

**2.2. Դատարանները Հայաստանում մինչև Առաջին հանրապետության հռչակումը:** 1918 թ. առաջին կեսին դատական համակարգը Հայաստանի Հանրապետության տարածքում մատնաված էր անգրծության պատերազմի և քառսային իրավիճակի պատճառով, և հատկապես, Երևանի շրջանային դատարանում ու նրա դատական շրջանում՝ դատական, դատախազական, քննչական պաշտոնների բափուր մնալու հետևանքով: 1918 թ. ամռանը բափուր էին մնում շրջանային դատարանի մի քանի ան-

<sup>1</sup> ՀՀ ՊԿ Փ. 206, գ. 1, գ. 8, թթ. 252-253:

<sup>2</sup> Տե՛ս Երօսկին Հ. Իстория государственных учреждений дореволюционной России. М., 1983. էջ 330:

<sup>3</sup> Տե՛ս Երօսկին Հ. Իстория государственных учреждений..., էջ 331:

դամների հաստիքները, հաշտարար դատավորների ու քննիչների տեղերը, բացի այդ նրանց մի մասը չէր ներկայացել պաշտոնավարության արձակուրդից հետո, կամ չէին ներկայացել նշանակվելուց հետո<sup>1</sup>: Բարումիի հաշտության պայմանագրով Թուրքիային անցած հայկական տարածքներում եղած դատարանները վերացվել էին Երևանի Ազգային խորհրդի կողմից 1918 թ. հունիսի 15-ի որոշմամբ<sup>2</sup>: Միաժամանակ Երևանի շրջանային դատարանի անձնակազմի քանիներեք հոգուց հինգն էին ազգությամբ հայ, մնացածը՝ ոռուներ էին<sup>3</sup>:

1918 թ. գարնանը ամբողջ Անդրկովկասում իշխում էր անարխիան, թալանը, անկարգությունները, աճում էր հանցավորությունը: Այդպիսի բացառիկ ծանր պայմաններում դատարանները մատնված էին լրիվ անգործության, որովհետև դրանք հարմարեցված չէին նման արտակարգ պայմաններում գործելուն: Պահի հրամայականը կյանքի կոչեց հեղափոխական տրիբունալներին, որոնց հիմնական խնդիրն էր արագությամբ իրականացնել արդարադատությունը երկրամատում, հաստատել կարգուկանոն և վերացնել անիշխանությունը: Դրանցից առաջինը Թիֆլիսի հեղափոխական տրիբունալն էր, որը հիմնադրվել էր Անդրկովկասայան կոմիսարիատի կողմից 1918 թ. փետրվարի 3-ին և ուներ իր կանոնադրությունը՝ հաստատված նույն մարմնի կողմից<sup>4</sup>: Համաձայն այդ կանոնադրության տրիբունալի գործունեությանը որոշ շափով մասնակցում էին քննչական և դատախազական հսկողության մարմինները, որով տրիբունալը ձեռք էր բերում «դատախազական ինստիտուտի նշանակություն և ստեղծում էր հայտնի երաշխիքներ այդ բացառիկ դատարանում արդարադատությունն իրականացնելիս»: Նշված կանոնադրությունը Թիֆլիսի Դատական պալատի դատախազը 1918 թ. մարտի 5-ին ուղարկել էր Երևանի շրջանային դատարանի դատախազին, խորհրդ տալով տեղում հեղափոխական տրիբունալներ հիմնադրելիս դեկավարվել դրանով: Տրիբունալները օրինական էին միայն այն դեպքում, երբ դրանց հիմնադրումը վավերացված էր անմիջապես Անդրկովկասայան կոմիսարիատի կողմից կամ տեղական՝ նահանգային իշխանության մարմնի կողմից, եթե այդ իրավունքը կոմիսարիատը նրան տվել էր:

Ինչպես ցույց են տալիս արխիվային փաստաթղթերը, Հայաստանի Հնարապետության տարածքում ստեղծվել են երեք այդպիսի ուսումնա-

դափոխական դատարաններ կամ տրիբունալներ: Երևանում և Էջմիածնում արդեն 1918 թ. մարտին գործում էին այդպիսի տրիբունալներ: Երևանի տրիբունալը ստեղծվել էր 1918 թ. փետրվարի 21-ին: Որոշումն այդ մասին ընդունել էր Նահանգգային գործադիր կոմիտեի անդամների, Բանվորների և գինվորների պատգամավորների խորհրդի, Ազգամիջյան խորհրդի և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համատեղ ժողովում, որին մասնակցում էին նաև նահանգգային գործերի հրամանատար՝ գնդապետ Փիրումյանը, նահանգգային կոմիսար Ս. Թորոսյանը, Դրոն որպես հայկական գորամասերի նահանգգային գինվորական կոմիսար<sup>1</sup>: Դատարանի հիմնադրման համար առիթ ծառայեց նախօրյակին տեղի ունեցած ազգամիջյան բախումը և փոխհրագությունը Երևանում: Այդ ժողովում որոշվեց Երևանում հայտարարել «ուսումնական դրույթում՝ ստեղծելով լայն լիազորություններով օժտված ուսումնահեղափոխական տրիբունալ՝ կազմված հայերից, մուսուլմաններից և Ռուսական ազգային խորհրդի ներկայացուցիչներից»:

Էջմիածնի տրիբունալը ստեղծվել էր Երևանի նահանգգային կոմիսարիատի առաջարկությամբ, Էջմիածնի հայկական ազգային խորհրդի որոշման հիման վրա: Երրորդ՝ Դիլիջանի ջոկատի պետ գնդապետ Բաղդասարովի 1918 թ. հունիսի 4-ի հրամանով ստեղծված «ուսումնաշրջանային տրիբունալ» էր:

Այս ուսումնահեղափոխական տրիբունալներից առաջին երկուսը վերացվել են Հայաստանի Հանրապետության Կառավարության Թիֆլիսից Երևան տեղափոխվելուց հետո: Արխիվային տվյալները սրանց կազմակերպման և գործունեության մասին կցկոտուր են: Դրանք շատ սակագ են եղել նաև Առաջին հանրապետության օրոք, երբ 1918 թ. փերփերին արդարադատության նախարարությունը զբաղվում էր այդ տրիբունալների քննած գործերի վերանայման հարցերով:

Դիլիջան-Ջարվանսարայի ուսումնաշրջանային տրիբունալն իր գործունեությունը սկսել է 1918 թ. հունիսի 16-ին<sup>2</sup>: Դատելով ժամանակի մամուլի հրապարակումներից այս ուսումնաշրջանային տրիբունալը տարածաշրջանում անիշխանությունը «ճնշելու համար մեծ գործոն» է դարձել<sup>3</sup>: Տրիբունալն իր գործունեությունը շարունակել է մինչև օգոստոսի 1-ը, երբ արդարադատության նախարարն ընդառաջելով Դիլիջան-Ջարվանսա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 8, թ. 251:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, գ. 1, գ. 120, թ. 12:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, գ. 1, գ. 120, թ. 205:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 4, թ. 6:

րայի ինքնավարության վարչությանը կարգադրեց լուծարել այն<sup>1</sup>: Լուծարման համար իիմք էր ծառայել կոնֆիլկտը ինքնավարության վարչության և զնդապետ Քաղդասարովի միջև, որի ըմբացքում Քաղդասարովը, ըստ Երևանից ուղղարկված քննիչ հանձնաժողովի գեկուցագրի, բույլ էր տվել մի շարք ապօրինություններ և պաշտոնեական ինքնիրավություն<sup>2</sup>:

Զարմանալին և անհասկանալին այն է, որ այդ տրիբունալը լինելով լուծարված՝ վերսկսել է իր գործունեությունը մինչև սեպտեմբերի 1-ը, եթե այս անգամ արդեն Նախարարների խորհրդի օգոստոսի 22-ի որոշմանը այն համարվեց լուծարված 1918 թ. սեպտեմբերի 1-ից<sup>3</sup>:

Դիլիջան-Զարվանսարայի տրիբունալի ստեղծմանը դրդել են հետևյալ հանգամանքները: 1918 թ. հունիսին բորբական գորքերը զավթել էին Ղարաբիլսային հարող տարածքները: Դիլիջանի ջոկատը զնդապետ Քաղդասարովի հրամանատարությամբ սահմանապահ ծառայություն էր կատարում այդ տարածաշրջանում: Ինչպես երևում է Նազարեկյանի գեկուցագրից, զնդապետ Քաղդասարովը «Կովկասյան ջոկատի շտաբի պետի 1918 թ. մարտի 12-ի հեռագրի հիման վրա իրավունք ուներ հիմնելու հատուկ ուսումնական տրիբունալ Թիֆլիսի հեղափոխական տրիբունալի օրինակով»<sup>4</sup>:

Տրիբունալի կանոնադրությունը հայտարարագրում էր, որ մինչև Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կձևավորվեին պետական իշխանության և կառավարման մարմինները, Զարվանսարայի և Դիլիջանի ռազմական շրջանին ենթակա տարածքում ժամանակավորապես ստեղծվում է «ռազմական տրիբունալ կարգուկանոնի հաստատման և հնարավոր հանցագործությունների կանխման համար»: Տրիբունալի կազմը համալրվում էր ռազմական շրջանի հրամանատարի և ինքնավարության վարչության նախագահի ներկայացված ցուցակներով, տրիբունալի նախագահի կողմից: Վերջինին նշանակում էր հրամանատարը, պայմանով, որ նա լիներ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձ<sup>5</sup>: Վերը նշված ցուցակների հիման վրա նախագահը կազմում էր տրիբունալի դատական կազմը՝ բաղկացած երեք վճռական ծայն ունեցեղ անդամից (մեկն ինքնավարության վարչությունից, մեկը ռազմական

<sup>1</sup> Տես «Կառավարության լրաբեր», թերթ, 1918, թիվ 1:

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 6, թթ. 34-36:

<sup>3</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 2, թ. 19:

<sup>4</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 4, թթ. 25-26:

<sup>5</sup> Տրիբունալի նախագահ նշանակվել էր Աստոմ Արտեմի Քալանթարովը:

իշխանության ներկայացուցիչն էր, երրորդը այնպիսի անձ, որն անպայման ուներ բարձրագույն իրավաբանական կրթություն) և խորհրդակցական ծայն ունեցող տեղական բնակչության երկու ներկայացուցիչներից: Տրիբունալի նախագահը կարող էր կազմել նաև եռանդամ դատական կազմ և ուղարկել նրան ուսումնական շրջանի տարրեր վայրերում գործելու: Այս դեպքում անդամներից մեկը համարվում էր նախագահող: Նշված ցուցակներից տրիբունալի նախագահը նշանակում էր «մեղադրյալին մեղադրող և պաշտպան հանդիսացող անձանց»: Տրիբունալին ընդդատյա գործերով հետաքննությունը և նախաքննությունը կատարում էին տեղամասային հատուկ նշանակված քննիչները, իսկ այն վայրերում, որտեղ դրանք չկային, տեղանասային կոմիսարները: Տրիբունալի նախագահը կարող էր նախաքննության կատարումը հանձնարարել տրիբունալի անդամներից մեկին, որը հետագայում չէր կարող մասնակցել գործի դատական քննությանը, որպես տրիբունալի անդամ:

Տրիբունալի քննությանն ընդդատյա էին բոլոր հանցագործություններն անկախ նրանց կատարման ժամանակից, սուբյեկտուային կազմից: Թիֆլիսի հեղափոխական տրիբունալի կանոնադրությունը միայն օրենքով ամրագրված որոշ հանցագործություններ էր հանձնում տրիբունալի ենթակայությանը և ընդդատությանը: Տրիբունալն իր գործունեության ընթացքում պետք է դեկավարվեր գործող ընդհանուր քրեակատավարական և ռազմադատավարական կանոններով, ինչպես նաև՝ քաղաքացիական և ռազմաքրեական նյութական օրենսդրությամբ:

Հետաքրքի է տրիբունալի կանոնադրության 4-րդ հոդվ., համաձայն որի այն դեպքերում, եթե նշված օրենսդրական իրավական աղբյուրներում չին նախատեսված հանրորեն վտանգավոր այս կամ այն արարքի հանցակազմի հատկանշները, և որոնք կրում էին տեղական կամ ժամանակավոր բնույթ (նանրադրամ քացցնելը). Անդրկովկասյան Հանրապետության բոները ընդունելուց հրաժարվելը. Առևտրի մեջ խոշոր բղադրամներով առևտուր անելուց հրաժարվելը, եթե պարզվի, որ մանրադրամ կար. առաջին անիրաժեշտության և այլ ապրանքների գները արհեստականորեն բարձրացնելը), ապա տրիբունալը ինքը «իր խղճով և հայեցնությամբ որոշում» էր դրանց պատժելությունը:

Դիլիջան-Զարվանսարայի ռազմաշրջանային տրիբունալի կանոնադրությունը ի տարրերություն միֆլիսի ռազմահեղափոխական տրիբունալի օրինակելի կանոնադրության շեղվելով օրենքից, փոխում էր նաև պատժատեսակների համակարգը, խստացնում դրան: Այսպես բոլոր տեսակի սպանությունները, սպանության փորձերը, դիտավոր հրկի-

գումները, թալանը, աղջկա բռնաբարությունը, ամուսնացած կանանց աներեսաբար կաշել-հետապնդելը, հայրենիքին դպավաճանելը, ուզմական գույքի կողովութը, պատժվում էին մահապատժով: Ըստ կանոնադրության 9-րդ հոդվ. մահապատժի էր նախատեսվում նաև այն բոլոր հանգագործությունների համար, որոնք ստվորական ժամանակներում համաձայն օրենքի պատժվում էին երկարաժամկետ տաժանակիր աշխատանքներով: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ իրականում, այդ պահին ժամանակավոր կառավարության կողմից ընդունված օրենքով մահապատիժը, որպես պատժատեսակ, վերացված էր:

Ուզմաշրջանային տրիբունալը յուրաքանչյուր գործի քննությունը պետք է ավարտեր յոթ օրվա ընթացքում: Տրիբունալի դատավճիռներն ի կատար էին ածվում տեղական միջիցիայի, ազգային գվարդիայի կամ զորամասերի կողմից՝ քանչչորս ժամվա ընթացքում: Տրիբունալի դատավճիռը վերջնական էր և բողոքարկման ու գանգատարկման ենթակա չէր:

Համեմատելով Թիֆլիսի ուզմահեղափոխական տրիբունալի և Դիլիջանի ուզմական շրջանի տրիբունալի կանոնադրությունները՝ կարող ենք նշել, որ վերջինս կազմված էր օրենքից էական շեղումներով: **Առաջին շեղումը՝ մահապատժի սահմանումն** էր, պատժատեսակ, որ վերացվել էր դեռ ժամանակավոր կառավարության օրոք, իսկ երեմն նաև դրա շիմնավորված կիրառումը: Օրինակ՝ «Քարվանսարայի ուզմահեղափոխական տրիբունալը 1918 թ. հունիսի 28-ին Զարիսէ գյուղի բնակիչ Սովուս Օսիպովի Սողոմոնվին, մեղադրելով ոչ մեծ քանակով ալյուրի և շաքարի գործություն մեջ, դատապարտել է նրան մահապատժի գնդակահարության միջոցով և դատավճիռն ի կատար է ածվել անմիջապես: Այդ գործությունը կատարվել է դատապարտյալի ընտանիքի ծայրահեղ սովի հետևանքով: Նրա մահից հետո ընտանիքի մյուս անդամները՝ կինը, չորս երեխաները և ծեր ծնողները մնացել են առանց կերակրողի: Դա թիշ է: Տրիբունալը դատավճորի հիմնավորման մեջ դատապարտյալի բախտը ծանրացները համար մտցրել է կեղծ հանգամանք, իբր թե, գործությունը կատարված է զորքերի կարիքները սպասարկող պահեստից, իրականում պահեստը բարեգործական ընկերությանն էր և սպասարկում էր բացառապես որքանոցներին»<sup>1</sup>: **Երկրորդ շեղումը՝ օրենքից,** դա այլ քրեական պատիժների խստացումն էր և նոր պատժաշափերի սահմանումը: **Երրորդ,** շատ էական, շեղումը նոր հանցատեսակների նախատեսումն էր:

Այս ամենը ակնհայտորեն ապացուցում է, որ տրիբունալները իրենց հիմնադրի փաստաթերով լինելով ի սկզբանե հսկարինական, ընթա-

ցիկ գործունեություն իրականացնելիս ևս հաշվի չին առնելու գործող օրենքները: Եթե սրանց ավելացնենք այն հանգամանքը, որ տրիբունալում բացակայում էին արդարադատության համար անհրաժեշտ դատավարական երաշխիքները, որոնք իրական նախադրյալներ էին ստեղծում նաև դատական սխալների համար, ապա կատացվի, որ տրիբունալների իրավասությունը և իշխանությունը դատավճիռներ կայացնելիս կամայական էին և անսահմանափակ: Այսպես՝ Հայաստանի խորհրդը 1919 թ. մարտի 4-ին քննելով Լյուդվիգ Հովհաննիսյանի ներման խնդրանքը՝ որոշել է «Դիլիջանի բնակիչ Լ. Հովհաննիսյանին, որը Դիլիջանի գավառի ուզմաշրջանային տրիբունալի 1918 թ. օգոստոսի 27-ի վճռով դատապարտված է ուր տարվա տաժանակիր աշխատանքների, Սխիրզամանական կողոպտելու գործում մեղադրվելու համար, տալ լիակատար ներումն և ազատել նրան բանտարկությունից»<sup>2</sup>: Ինչպես երևում է արդարադատության նախարարության Հայաստանի խորհրդին ներկայացրած ներման միջնորդագրից գործով ի հայտ են եկել նոր հանգամանքներ այն մասին, «որ այդ հանցագործությունը կատարել են Դոնմարգեց գյուղի բնակիչներ Մ. Քոչարյանը և Դ. Թամրազյանը, ... իսկ Հովհաննիսյանը պատիժ է կրում բանտում...»<sup>2</sup>:

Տրիբունալները կայացրել էին նաև շատ տարօրինակ դատավճիռներ, որոնք հետապնդում հիմք են տալիս արդարադատության նախարարությանը եզրակացնելու: «քանի որ չկար ցուցում տրիբունալների անձնական կազմի մասին, տրիբունալ էին մտնում մեծամասմբ մարդկի, որոնք ոչ միայն իրավաբանական պատրաստվածություն չունեին, այլև ընդհանրապես չին համապատասխանում դատավորի բարձր կոչմանը, իսկ երեմն էլ կասկածելի համրավ ունեին»: Այսպես, Էջմիածնի ուզմահեղափոխական տրիբունալը «տան վրա կողոպուտի նպատակով զինված հարձակնան գործով ... դատապարտել է բոլոր մեղադրյալներին, իսկ պարագուիներից մեկին լրիվ միատեսակ պայմաններում, առանց որևէ հիմքի արդարացրել է»<sup>3</sup>: Ավելի տարօրինակ էր Երևանի ուզմահեղափոխական տրիբունալի հետ կապված հետևյալ միջադեպը, որ պարզել է արդարադատության նախարարության դիվանի աշխատակիցը: «Վերանայելով Երևանի ուզմահեղափոխական դատարանի գործերը ես հանդիպեցի բուրքահպատակ Մ. Մալխասյանցի գործին ... Երևանի ուզմահեղափոխական դատարանի պահանջագրի ուժով այդ գործը, որ ծա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 71, թ. 1:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 69, թ. 3:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 69, թ. 3:

գել էր դեռ 1914 թ., Երևանի շրջանային դատարանը ուղարկել է ռազմահեղափոխական դատարանին: Գործը պահանջելու իմք է ծառայել ռազմահեղափոխական դատարանի կանոնադրության պատճենը կցված պահանջագրին:

Ծանրանալով վերը նշված կանոնադրության շարադրանքին՝ ես մտահոգեցի կանոնադրության 20-րդ հոդվ. ձևակերպմամբ, շարադրված այսպես. «Հեղափոխական դատարանին ընդդատյա են գործերը, որ ծագել են 1918 թ. փետրվարի 1-ից հետո և ավելի վաղ»: Զարմանալի է «և ավելի վաղ» հավելագրումը, որ կատարելապես վերացնում է «1918 թվականի փետրվարի 1» ամսաթիվ նշանակությունը, որով սահմանվում էր ռազմահեղափոխական դատարանի ընդդատությունը:

Իմ տարակուսանքը ավելի խորացավ, երբ ես տրիբունալի փաստարդերում հայտնաբերեցի Երևանի տրիբունալի կանոնադրության օրինակ, որում 20-րդ հոդվ. շարադրված էր առանց «և ավելի վաղ բառերի»<sup>1</sup>: Ավելացնեմք, որ պահանջված գործով վերոհիշյալ տաճկահայր մեղադրվում էր ուսկու մաքսանենգության համար: Կարծում ենք պահանջագրը կազմողների հետին նախադաշտությունը:

Հայ ժողովրդական կուսակցությունից նախարար նշանակված Ս. Հարությունյանի օրոք արդարադատության նախարարությունը շարունակելով գրադիւն մինչհանրապետական ժամանակաշրջանի արտակարգ դատարանների խնդրով՝ ռազմահեղափոխական տրիբունալների դատավճիռներով դատապարտված անձանցից ստացել էր բազմաթիվ խնդրագրեր ներման կամ իրենց գործերը վերաբերնելու մասին: Այս կապակցությամբ հնարավորին չափ ի մի հավաքեցին տրիբունալների քննած քրեական գործերի նյութերը և ընդհանրապես տրիբունալների գործունեության մասին տվյալները: Ս. Հարությունյանը վճռական էր ռազմահեղափոխական տրիբունալների հարցում և Երևանի շրջանային դատարանի նախագահին 1918 թ. նոյեմբերի 22-ին ուղարկել է հետևյալ գրությունը. «Ինձ հանձնարարված արդարադատության նախարարությունում նախկին ռազմահեղափոխական տրիբունալների գործերի հետ ծանրանալիս ... ես չկարողացա գտնել տվյալներ, որոնցից երևար, թե որ իրավասու մարմնի կողմից են տրիբունալները ստեղծվել, ինչպիսին են եղել նրանց իրավագործությունները և պատշաճ իշխանության կողմից հաստատված ինչպիսի օրենքներով, կանոնադրություններով կամ կանոններով են նրանք դեկավարվել: Ծիշտ է գործերում հանդիպում է 20 հոդվածից բաղկացած, այսպես կոչված, կանոնադրություն, սակայն ում

կողմից է այն կազմվել և հաստատվել, հավաստիորեն անհայտ է: Ավելին, գործերում կան տվյալներ, որոնցից կարելի է եզրակացնել, որ այդ կանոնադրությունները չեն հաստատվել Անդրկովկայան բարձրագույն իշխանությունների կողմից ... Հաղորդելով այդ մասին, խնդրում եմ Ձեզ պարուն նախագահ, Շրջանային դատարանի անդամների ժողովում դատախազի մասնակցությամբ դնել հետևյալ հարցերը՝

1. Համարե՞լ հեղափոխական տրիբունալները օրինական դատարաններ, թե՞ ոչ:

2. Համարե՞լ գործերում եղած կանոնադրությունները ակտեր, որ ունեցել են օրենքի ուժ, թե՞ ոչ և ինչո՞ւ:

3. Հնարավո՞ր է այդ երկրորդ դեպքում տրիբունալի անդամներին ենթարկել քրեական պատասխանատվության...»<sup>1</sup>:

Չնայած Հայ ժողովրդական կուսակցության նախարարի արմատական դիրքորոշմանը, ամենայն հավանականությամբ, որոշակի քաղաքական պատճառների հետևանքով, նա չկարողացավ վերը բերված գործյամբ նախարարությամբ ուղղությամբ տանել դեպքերի զարգացումը: Բայց նախարարը ձեռնարկեց մեկ այլ արմատական քայլ ընդդեմ տրիբունալների ապօրինի գործունեության: Արդարադատության նախարարությունում կազմվեց օրինագիծ, որով ռազմահեղափոխական տրիբունալների դատավճիռներով դատապարտված բոլոր անձանց իրավունք էր տրվում դիմել արդարադատության նախարարությանը իրենց գործը վերաբերնելու խնդրանքով: Այդ գործերը դատապարտյալների հետ միասին պետք է ուղարկվեն ըստ ընդդատության՝ պատշաճ դատարաններին, որոնք որպես առաջին ատյան պետք է նորից քննեին դրանք:

Նախարարների խորհրդողը քննարկելով այդ օրինագիծը 1918 թ. դեկտեմբերի 23-ին ընդունել է որոշում այն ներկայացնելու Հայաստանի խորհրդին «ի հաստատումն»: Հայաստանի խորհրդը քննարկել է այդ օրինագիծը, սակայն վերջնական երրորդ ընթերցմանը չի ընդունել: Ինչպես երևում է Հայաստանի խորհրդի, իսկ հետագայում նաև Հայաստանի խորհրդարանի օրենքների և որոշումների ժողովածուներից, այդ մարմինների օրակարգերի ուսումնասիրությունից օրենսդիր մարմինը գնացել է այդ տեսակի գործերը, ըստ արդարադատության նախարարության ներկայացրած գեկուցագրերի՝ անհատական կարգով քննարկման և արդյունքում ներման կամ պատժի մեղմացման որոշումների ընդունման ճանապարհով:

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 6, թ. 257:

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ ֆ. 206, գ. 1, գ. 6, թ. 361:

**2.3. Հանրապետության առաջին կառավարության «Հայտարարագիրը» և դատական քաղաքականության հիմնահարցերը:** Վերը նկարագրեցինք այն իրավիճակը, որում իր գործումենությունը սկսեցին Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և արդարադատության նախարարությունը, որոնց ջանքերի շնորհիվ հանրապետությունում պետք է հիմնադրվեր արդարադատության մարմինների գործում, արդյունավետ համակարգ: Դատական համակարգ, որը մի կողմից պետք է պաշտպաներ անձին, հասարակությանը, պետությանը ահազնացող հանցավորությունից և մյուս կողմից՝ պաշտպան կանգներ յուրաքանչյուր քաղաքացու բնական իրավունքներին ու ազատություններին, գույքին, պատվին ու արժանապատկությանը:

Թիֆլիսում կազմված Հ. Քաջազնունու առաջին կառավարությունում արդարադատության նախարար չկար, չեր նշանակված<sup>1</sup>: Հայաստանի Հանրապետության առաջին օրենսդիր մարմնի՝ Հայաստանի խորհրդի կողմից հուլիսի 24-ին վերատին վարչապետ ընտրված Հ. Քաջազնունին կազմեց Հայաստանի Հանրապետության նոր կառավարություն, որի կառուցվածքում տեղ էր գտել նաև արդարադատության նախարարությունը<sup>2</sup>, բայց նախարարի պաշտոնը մնացել էր քափոր: Վարչապետի հանձնարարությամբ արդարադատության նախարարի պարտականությունները ժամանակավորապես վարելու էր ֆինանսների նախարար Խ. Կարճիկյանը: Բայց արդեն հուլիսի 28-ին նախարար-նախազարի (վարչապետի) կարգադրությամբ արդարադատության նախարարի ժամանակավոր պաշտոնակատարն արձակվեց այդ պարտականությունը իրականացնելուց և արդարադատության նախարար նշանակվեց երդվյալ հավատարմատար Գ. Տեր-Պետրոսյանը<sup>3</sup>, որը «տեղական անկուսակցական գործիչներից էր»<sup>4</sup>:

1918 թ. օգոստոսի 3-ին Հայաստանի խորհրդի երկրորդ նիստում Հ. Քաջազնունին իրավարակեց կառավարության «Հայտարարագիրը»: Արտակարգ ծանր քաղաքական, տնտեսական և սոցիալական իրադրությունում էին գործի անցնում Հայաստանի Հանրապետության առաջին օրենսդիր մարմնը և կառավարությունը: Իրավիճակը ծանրանում էր նաև նրանվ, որ այդ մարմինները կոչված էին իրականացնելու պետական կառավարում նորանկախ մի պետությունում, որը չուներ իրեն նա-

խորդող պատրաստի պետական ապարատ: Այդ ամենի հետևանքն անիշխանությունն էր ու հանցավորության բարձր մակարդակը: Այս բացառիկ պայմաններն եւ կամխորոշում էին կառավարության գլխավոր խնդիրը: «Կասեցնել քայլայման գործներացը, հանել երկիրը անիշխանության վիճակից ու ստեղծել պետական շինարարության համար պայմաններ»: «Անձև քառի և ավերակների կույտից» կառավարությունը պետք է ստեղծեր «կենսունակ և աշխատող մի մարմին»<sup>1</sup>:

Հ. Քաջազնունու կառավարության «Հայտարարագիրը», որ հավանություն ստացավ Հայաստանի խորհրդում, արդարադատության ոլորտում իշխանությունների առջև խնդիր էր դնում «Հարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրավահասկացման և իրավական սովորությունների պայմաններին՝ միաժամանակ մասնակից անելով քրեական դատավարությանը ժողովրդի ներկայացնելուն»:

Ինչքանո՞վ էին հիմնավորված և խորապես մտածված կառավարության «Հայտարարագիր» արդարադատության ոլորտին վերաբերող դրույթները: Իհարկե, կառավարությունը խուսափել էր ծայրահետ, անպազրգող ծրագրային հայտարարություններից և Հ. Քաջազնունու խոսքերով ասած ելակետ էր ունեցել հետևյալ դիրքորոշումը. «Նախ խաղաղություն, նոր բարենորդումներ, մեր կառավարությունը իրոք ծգոտում է ստեղծել ժողովրդի համար տարրական իրավակարգ, որովհետև նախարար նաև ազատ քաղաքացիական ազատություններն ապահովելը, պետք է ապահովել կյանքը, նախքան սահմանադրի ժողովը իրավիրելը, պետք է ապահովել ազատ խոսքը և այլն»<sup>2</sup>: Իրատեսական այդպիսի քաղաքական կուրսի ընտրություննը, ըստ կառավարող կուսակցության պաշտոնաթերթի, պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ «ներկա կառավարությունը իրեն համարում է ժամանակավոր, մինչև որ Սահմանադրի ժողովը կընտրի ինչպես իր մնայուն խորհրդարանը, ննանապես և իր իրավատեր կառավարությունը. այլև երկիրը դուրս կգա այն անորոշ կացությունից, որի մեջ այսօր դեգերտում է իր ժողովրդով»:

Բայց և այնպես արդարադատության վերաբերյալ կառավարության «Հայտարարագիր» դրույթների մի քանի ընդհանուր, վերացական ձևակերպումներն, անշուշտ, անբավարար էին: Կառավարությունը չէր նշում, թե ի՞նչ միջոցներով ու ձեռնարկներով պետք է օրինականություն և իրավակարգ հաստատվեր Հայաստանի Հանրապետությունում, ինչպես պետք է արդարադատությունը հաստատուի հիմքերի վրա դրվեր, ինչպի-

<sup>1</sup> Տե՛ս **Գրացյան Ա.**, Հայաստանի Հանրապետություն ..., էջ 156:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ ֆ. 199, գ. 1, գ. 10, թ. 2:

<sup>3</sup> Տե՛ս «Կառավարության լրաբեր» պաշտոնաթերթ, 1918, թիվ 1:

<sup>4</sup> Տե՛ս **Գրացյան Ա.**, Հայաստանի Հանրապետություն ..., էջ 160:

<sup>1</sup> Տե՛ս «Չանգ», թերթ, 1918, թիվ 43:

<sup>2</sup> Տե՛ս «Չանգ», թերթ, 1918, թիվ 45-46:

սի՝ դատական համակարգ, իրավապահպան մարմիններ պետք է կյանքի կոչվեին այդ խնդիրները կենսագործելու համար, դրանց համապատասխան իմշալիսի՝ օրինագծեր պետք է մշակվեին և ներկայացվեին օրենսդիր մարմնին: «Հայտարարագրում» նույնիսկ նշված չէր, թե որ օրենքներով պետք է դեկավարվեր սեփական օրենսդրություն և իրավական համակարգ չունեցող նորանկախ հանրապետությունը: Մատնանշված խնդիրները եւկան նշանակություն ունեին պատերազմի, քառսի, անօրինականությունների, տարրական իրավակարգի բացակայության հորձանուտում խրված Հայաստանի Հանրապետության համար և ելնելով հանրապետության կյանքի այդպիսի դժգույն պայմաններից, կյանքի իրական պահանջմունքներից, պետք է ստանային իրենց անհապաղ լուծումը:

Հայաստանի Հանրապետության առաջին արդարադատության նախարարի՝ Գ. Տեր-Պետրոսյանի նշանակումով Ակսվեց արդարադատության նախարարության կազմակերպումը և գործունեությունը, որը սկզբանական շրջանում կատարեց մեծ կազմակերպական աշխատանք, ինչպես բուն արդարադատության նախարարության կենտրոնական ապարատը կազմավորելու և կանոնակարգելու ուղղությամբ, այնպես էլ դատական համակարգի հիմունքների նշակման, կազմակերպման ու գործունեության ծավալման ուղղությամբ: Իսկ որ հասարակական հարաբերությունների կառավարման այս ոլորտում բարձիրողի վիճակ էր, հատուկ ապացուցման կարիք չունի: Այդ են վկայում Ժամանակի մամուլը, Ժամանակակիցների հուշերը, եղած արխիվային նյութերը, նաև ուսումնական տրիբունալների վերը նկարագրված գործունեությունը:

### **§ 3. Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգի կառուցման հայեցակարգի մշակումը և դրա օրենսդրական կենսագործումը**

**3.1. Դատական շինարարության հնարավոր ուղիները:** Հայաստանի Հանրապետության հոչակմանը, օրենսդիր մարմնի ու կառավարության ծնավլրմանը ու դրանց գործունեության ծավալումով հանրապետության նորաստեղծ արդարադատության նախարարության առջև ծառացած խնդիրներից մեկն էլ նորահոչակ հանրապետության դատական համակարգի կառուցման դատարանակազմական և դատավարական հիմունքների մշակումն ու օրենսդրական իրազործումն էր, այսինքն՝ դատական շինարարությունը: Արդեն նշել ենք, որ Հ. Քաջազնունու կառավարության

1918 թ. օգոստոսի 3-ի «Հայտարարագրում» արդարադատության վերաբերյալ դրույթները շատ ընդհանուր էին, իսկ դատական համակարգի հիմունքների մասին նրանում ոչ մի խոսք չկար ընդհանրապես:

Հասարակական հարաբերությունների կառավարման այս ոլորտում իրավիճակի ուսումնասիրությունը և վերլուծությունը ենթադրում էր երկու ճանապարհ: **Առաջին**՝ կառուցել լրիվ նոր դատական համակարգ՝ հասարակական կյանքի փոփոխված պայմաններից ելնելով, **երկրորդ**՝ հարմարեցնել ուսական դատական համակարգը հանրապետության իրական պահանջնունքներին, կյանքի պայմաններին, վերացնել բոլոր արտակարգ դատարանները (ռազմահեղափոխական տրիբունալները)՝ դարձնելով դատական համակարգը ամբողջական ու ներդաշնակ:

Մատնանշված հիմնախնդրի լուծումը հետագայում բախտորոշ էր դառնալու հանրապետության համար և կարևոր դեր էր իսաղալու օրինականության և իրավակարգի հաստատման գործում, որովհետև ստեղծագործ, շինարար աշխատանքն անհնարին էր առանց կանոնավոր, նպատակամղված պետական կառավարման, այդ թվում արդարադատության պատշաճ և արագ կենսագործման: Ազգային պետության կայացման գործընթացում դատարանը և արդարադատությունը խաղալու էին կարևոր դեր՝ որպես հանրապետության իշխանությունների հեղինակության փորձաքար:

Զգալով հարցի լրջությունը և կարևորությունը արդարադատության նախարարը միանգամց շանցավ այդ խնդրի լուծմանը, և կառավարության առաջին «Հայտարարագրի» դրույթների ընդհանուր, վերացական բնույթը պայմանավորված էր երևի հենց այդ հանգամանքով:

Սուածին ճանապարհով, այն է՝ մշակել նոր դատական համակարգի հիմունքներ և ստեղծել նոր դատարաններ ելնելով իրականության պահանջնունքներից (պատերազմ, անարխիա, բնակչության անընդհատ տեղաշարժեր, ահեղի հանցավորություն և այլն), շարժվելու մասին հիմնականում խոսք չի գնացել: Եվ՝ Հայաստանի խորհրդի իրավաբան պատգամավորները, և՝ արդարադատության նախարարությունը, և՝ դատական ու դատախազական, ինչպես և փաստաբան գործիչների մեծագույն մասը անվերապահորեն կողմնակից էին միայն ուսական դատական համակարգը հանրապետության իրական պայմաններին հարամարեցնելուն: Այսինքն՝ բոլորն անվերապահորեն ընդունում էին, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է ընկալի և իրազործի Ալեքսանդր Երկրորդի դատական բարեփոխման դրույթները՝ մաքրելով այն հետագա խեղարյուրումներից ու հակաբարեփոխումներից:

**3.2. Գատական համակարգի կառուցման հայեցակարգը:** Արդարադատության նախարարությունում առաջին նախարարի գլխավորությամբ անմիջապես անցան գործի, խորհեղակ Հայաստանի Հանրապետությունում դատական համակարգի կազմակերպման մասին: Արդեն 1918 թ. օգոստոսի 13-ին արդարադատության նախարարն ուներ պատրաստի Զեկուցագիր-քացատրագիր նվիրված այդ խնդիրներին<sup>1</sup>: Այդ փաստաթղթի հիմնական դրույթները հետևյալներն են: «Դատական հիմնարկությունների ընդհանուր համակարգում կազմավորվել են դատարկ տեղեր, որոնք անհրաժեշտ է լրացնել, քանի որ կապը բոլոր դատական հիմնարկությունների միջև ոչ միայն նեխանիկական է, այլ նաև օրգանական և իրացնել երկրում արդարադատություն՝ օգտվելով միայն առկա դատական հիմնարկություններից<sup>2</sup>, պատկերացվում է անհնարին»:

Ինչպես տեսնում ենք, խոսքը գնում է միայն դատական համակարգը ամրողացնելու մասին, որ ենրադրում էր նախ Հայաստանի Հանրապետության իրականությանը հարմարեցնել նախկին ոռուական դատարանը և Երկրորդ «լրացնել դատարկ տեղերը»: Երկրորդ դեաքրում նախարարը նկատի ուներ այն, որ Ռուսաստանից Անդրկովկասի Հանրապետության անկախության հռչակումով, իսկ այնուհետև դեաքրեի բերումով Անդրկովկասում երեք անկախ հանրապետությունների հռչակումով, Հայաստանի Հանրապետության տարածքում մնացած դատարանները կորցրեցին վերաբննիչ ատյանը ընդհանուր ընդդատության գործերով և վճռաբեկ ատյանը հաշտարար ընդդատության գործերով, ի դեմ՝ Թիֆլիսի Դատական պալատի, իսկ ի դեմ ոռուական Կառավարիչ սենատի՝ վճռաբեկ ատյանը ընդհանուր ընդդատության գործերով:

Արդարադատության նախարարի գեկուցագրում հիմնավորվում էին հետևյալ հիմնական առաջարկությունները: «Նախ պետք է պարզել, թե որ դատարանները պետք է պահպանվեն և որոնք ներմուծվեն, որպեսզի չխախտվի դատական հիմնարկությունների գոյություն ունեցող կառուցվածքը: Դրա համար անհրաժեշտ է ամենից առաջ կազմակերպել վերաբննիչ դատարան (դատական պալատ) շրջանային դատարանի քաղաքացիական և քրեական բաժանմունքների վճիռների և դատավիճունների վերանայման իրավունքը»:

Այնուհետև առաջարկվում էր սահմանափակ ընդդատությամբ հաշտարար դատարանների հետ միասին պահպանել շրջանային դատա-

րանները, որոնց նախկին հիմունքներով ընդդատյա էին լինելու հաշտարար դատարանների ընդդատությունից դուրս գտնվող քրեական և քաղաքացիական գործերը և վերջապես հիմնել վճռաբեկ դատարան՝ քրեական և քաղաքացիական բաժանմունքներով:

Վերը նկարագրված դատական մարմինների ընդհանուր կառուցվածքում նախարարությունն առաջարկում էր կատարել որոշ վերապահումներ այն հմատով, որ բոլոր այդ դատական մարմինները հանրապետությունում հիմնադրելն աննպատակահարմար էր ծախսերի ու հանրապետության իրավաբանական շրջանառության իրական պահանջնունքների տեսակետից: Մասնավորապես՝ խոսքը գնում է քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնող դատական համակարգի մասին, որ Կենտրոնական Ռուսաստանում կառուցված էր այսպես կոչված «Երկակիության սկզբունքով»՝ սահմանափակ ընդդատությամբ հաշտարար դատարաններ և սրանց ընդդատությունից դուրս մնացող քաղաքացիական գործեր ըննող շրջանային դատարանները: Առաջինների համար վերաբննիչ ատյան էին հաշտարար համագումարները, երկրորդների համար՝ դատական պալատները: Երկուսն էլ ունեին միասնական վճռաբեկ ատյան՝ սենատի:

Նպատակ ունենալով հիմնել ժողովրդին մոտ կանգնած և պետական բյուջեի վրա էժան նստող դատարաններ, նախարարությունը առաջարկում էր քաղաքացիական գործերով դատարանների հետևյալ կառուցվածքը: **Առաջին ատյան՝** միասնական հաշտարար դատավորներ՝ առանց նրաց ընդդատության սահմանափակման: **Վերաբննիչ ատյան՝** հաշտարար դատավորների համագումար. **Վճռաբեկ դատարան՝** դատական համակարգի ավարտական օղակը՝ մեկ ընդհանուր, այսինքն՝ բոլոր տեսակի գործերի համար միասնական բաժանմունքով<sup>2</sup>: Այսպիսով, վերոհիշյալ ընդհանուր դատական համակարգից դուրս էր մնում դրա երկրորդ ենթակառուցվածքը՝ շրջանային դատարան՝ առաջին ատյան, դատական պալատը՝ վերաբննիչ ատյան, սենատի՝ վճռաբեկ դատարանի քաղաքացիական բաժանմունքը:

Նախարարն այս առաջարկությունը հիմնավորում էր նրանով, որ 1918 թ. հունվարի 1-ից միշնչու օգոստոսի 1-ը շրջանային դատարանի քաղաքացիական բաժանմունք էր «մուտքագրվել մոտավորապես 30 գործ, և պետք է ենթադրել, որ այդպիսի մուտքը բացատրվում է ոչ միայն բացա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 68, թթ. 28-30:

<sup>2</sup> Այսուղեղ Զեկուցագիր-քացատրագիր հեղինակները նկատի ունեն Երևանի շրջանային դատարանը և գործող մի քանի հաշտարար դատարանները:

<sup>1</sup> Տե՛ս **Виленский Б.В.** Судебная реформа и контрреформа в России. М., 1969, էջ 164:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 30:

ռապես անցման ժամանակի պատճառներով այլև պայմանավորված է երկրի մշտական տնտեսական ու մասամբ էլ մշակույթային-աշխարհագործական պայմաններով»<sup>1</sup>:

Այդպիսի գործերի քանակը Երևանի շրջանային դատարանում շատ չէր նաև մինչպատերազմական տարիներին: Դրանց միջին քանակը 1908-17 թ.թ. ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար հասնում էր հարյուր հիսունից երկու հարյուրի: Դա էլ հիմք էր տալիս Գ. Տեր-Պետրոսյանին առաջարկելու վերացնել Երևանի շրջանային դատարանի քաղաքացիական բաժանմունքը: Եթե ընդհանուր ընդդատության քաղաքացիական գործերով որպես առաջին ատյան պահպանվեր շրջանային դատարանը, ապա անխուսափելիորեն պետք է ստեղծվեր նաև վերաբննիչ ատյան՝ դատական պալատ իր քաղաքացիական բաժանմունքով, որը վերջնականապես դատապարտված կլիներ անզործության: «Հանուն քան, հիսուն, կամ էլ նույնիսկ հարյուր գործի, որոնք կարող են ծագել տարվա ընթացքում, աննպատակահարմար կլինի, իսկ նկատի ունենալով, երկրի առջատիկ դրությունը նաև հանցավոր ծախսել հսկայական միջջներ կողեզիալ քաղաքացիական դատարանների պահպանման համար»:

Վճռաբեկ դատարանը ենթադրում էր ստեղծել «համեստ հիմքերով»՝ մեկ ընդհանուր բաժանմունքով, և՝ քաղաքացիական, և՝ քրեական գործերի համար: Այն կատարելու էր նաև Գլխավոր ռազմական<sup>2</sup> դատարանի գործառությը՝ համարվելով վճռաբեկ ատյան նաև ռազմական դատարանների համար:

Քրեական գործերով դատարանների կազմակերպման հարցում արդարադատության նախարարության մշակած հայեցակարգը՝ Զեկուցագիր-քացատրագիրը առաջարկում էր հաշտարար դատարանների իրավասությունից դուրս մնացող և շրջանային դատարանին ընդդատյա բոլոր քրեական գործերով մտցնել երդվյալ ատենակալների դատարան և դրանով իսկ ինքնարերարար վերացնել դատական պալատի, այսինքն՝ վերաբննիչ ատյանի անհրաժեշտությունը նաև քրեական գործերով: Այդ-

պիսով, քրեական գործերով դատական համակարգը պահպանելու էր իր երկակիությունը:

**Առաջին ենթահամակարգ՝ հաշտարար դատավորներ (առաջին ատյան), հաշտարար դատավորների համագումար (վերաբննիչ ատյան), վճռաբեկ դատարան:**

**Երկրորդ ենթահամակարգ՝ շրջանային դատարան երդվյալ ատենակալներով (առաջին ատյան), վճռաբեկ դատարան:**

Երևանի գործող շրջանային դատարանի վարչական և ցուցակագրական բաժանմունքները պետք է վերացվեին, իսկ դրանց ընդդատյա գործերը՝ վերապահվեին հաշտարար դատավորների համագումարների իրավասությանը:

Այսպիսին էր Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական և քրեական դատարանների ենթադրվող դատարանակազմական համակարգը, որի դրույթները մշակելիս արդարադատության նախարարը հաշվի էր նատել երեք հիմնական հանգամանքների հետ՝ ֆինանսական խնայողության, դատական համակարգի ներքին կառուցվածքի գործառության ամբողջականությունն. դատարանի մոտիկությունը բնակչությանը՝ որպես արդարադատության մատչելիության քաղադրատարը:

**3.3. Դատական համակարգի կառուցման հայեցակարգային հիմնախնդիրների քննարկումները:** Դատական շինարարության հիմնահարցերի քննարկման և դրանց արդյունավետ լուծումներ տալու համար արդարադատության նախարարի նախաձեռնությամբ գումարվեցին մի շարք խորհրդակցություններ և համաժողովներ, որոնց արդյունքում ընդունվեցին համապատասխան որոշումներ ու մշակվեցին անհրաժեշտ օրինագծեր:

Առաջին խորհրդակցությունը՝ արդարադատության նախարարի հրավերով՝ Հայաստանի խորհրդի իրավաբան պատգամավորների մասնակցությամբ, կայացել է 1918 թ. օգոստոսի 13-ին<sup>1</sup>: Խորհրդակցությանը քննարկման էր դրվել արդարադատության նախարար Գ. Տեր-Պետրոսյանի վերոհիշյալ Զեկուցագիր-քացատրագիրը՝ Հայաստանի Հանրապետությունում դատական համակարգի կառուցման մասին: Խորհրդակցությունում քուն վիճարանությունների ընթացքում առաջ եկան տարածայնություններ գեկուցագրի դրույթների շուրջ, մասնավորապես, քաղաքացիական գործերով դատարանի կազմակերպման և երդվյալ ատենակալների դատարանի ստեղծման հարցերում: Արտահայտված կարծիքները կարելի է բաժանել երկու հիմնական տարրերվոր տեսակետների:

<sup>1</sup> Տե՛ս «Չանգ», թերթ, 1918, թիվ 45:

<sup>2</sup> Առաջին հանրապետության պաշտոնական փաստարդերում արդի եզրութանությամբ «զինվորական դատարանը», «պաշտպանության նախարարությունը» մատնանշելու համար օգտագործել են հիմնակալնում «ռազմական դատարան», «ռազմական նախարարություն», «ռազմական նախարար» եզրույթները: Այդ իսկ պատճառով շարադրանքում պահպանվել է արխիվային փաստարդերի եզրութանությունը:

Օգոստոսի 13-ի խորհրդակցության մասնակիցների մի խումբը, համաձայնվելով նախարարի գեկույցի երակետային դրույքների հետ, հնարավոր էր համարում միանձնյա հաշտարար դատավորների, որպես քաղաքացիական գործերով առաջին ատյանի, առանց ընդդատության սահմանափակման, հիմնադրմանը՝ դա հիմնավորելով «դատարանը ժողովրդին մերձեցնելու» փաստարկով։ Այս տեսակետի կողմնակիցների մեծ մասը, սակայն, դեմ էր քաղաքացիական գործերով վերաքննիչ ատյանի՝ հաշտարար դատավորների համագումարի հնատիտուտի ստեղծմանը՝ հիմնավորելով դա հետևյալ դատողություններով։ «հաշտարար դատավորների համագումարի կազմակերպումը սերտորեն կապված է հաշտարար դատավորների ընտրովության հետ, այդ վերջինը կարելի է կենսագործել միայն տեղական ինքնավարություններ ներմուծելու դեպքում... Բացի ձևական բնույթի դատողություններից այդ հնատիտուտը առաջ է բերում նաև լուրջ առարկություններ ըստ էության։ Ինչքան էլ բարձր կանգնած լինեն հաշտարար դատավորները, ծանրաբեռնված լինելով գործերով, որոնք, դրանց իրավասության ենթարկվող ընդլայնման դեպքում, անկասկած կշտանան, նրանք նժամար թե կհանդիսանան այն անհրաժեշտ բարձրագույն ատյանը, որի կոչումն է վերանայել և ուղղել ստորին աստիճանի դատարանի բոլոյ տվյալ սիսակները... Անհրաժեշտ է նաև ի նկատի ունենալ երկրի աշխարհագրական և կլիմայական պայմանները, որոնք փաստորեն անհնարին են դարձնում համագումարները ձմռան ամիսներին որոշ վայրերում»<sup>1</sup>։ Այս տեսակետից պետական ծախսերի խնայողություն ևս չեր սպասվում, քանի որ հաշտարար համագումարների ինստիտուտի հիմնադրումը կիանգեցներ դրանց նախագահների հաստիքի, մշտական անդամների, գրասենյակի հիմնադրման, որը ծախսերի տեսակետից չեր զիջում շրջանային դատարանի՝ որպես տվյալ դեպքում հաշտարար արդարադատության վերաքննիչ ատյանի, պահպաննան ծախսերին։ Այս ամենի ուժով առաջին տեսակետը հիմնավորությունը, կողմնակից լինելով քաղաքացիական գործերով միանձնյա հաշտարար դատարանի ինստիտուտին, դեմ էին որպես երկրորդ առյան հաշտարար դատավորների համագումարին և առաջարկում էին որպես վերաքննիչ ատյան ճանաչել շրջանային դատարանի քաղաքացիական բաժանմունքը։ Իսկ որպեսզի այդ բաժանմունքը ունենար պատշաճ ծանրաբեռնվածություն, առաջարկում էր նրա վրա դնել նաև վարչական և ցուցակագրական բաժանմունքների պարտականությունները։

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 31:

Խորհրդակցության մասնակիցների երկրորդ մասը բռնել էր պահպանողական դիրքորոշում, չկիսելով նախարարի գեկուցազրի դրույքները, գտնելով, որ «դրու նետելով, կամ ուղղելով ինչ-որ բան արդեն իսկ գոյություն ունեցող համակարգի կնշանակի լավից գնալ դեպի վատը, առանց դրա համար բավարար հիմքերի»։ Այլ կերպ ասած, այս տեսակետի կողմնակիցները դեմ էին և՝ հաշտարար դատավորների հրավասության ընդլայնմանը, և՝ հաշտարար դատավորների համագումարի հիմնադրմանը, և՝ շրջանային դատարանի քաղաքացիական բաժանմունքի վերացմանը։ Հետևաբար, ըստ նրանց, իհմք ընդունելով ուսական դատական համակարգի հիմնադրույքները, արդարադատության նախարարությանը մնում էր միայն ստեղծել այն դատական ատյանները, որոնցից Ռուսական Կայսրության մասնատման հետևանքով գրկել էր Հայաստանի Հանրապետությունը, այսինքն՝ կիմնել դատական պալատ, որպես վերաբնիչ ատյան և Հայաստանի Սենատ, որպես վճռաբեկ ատյան, առանց դատական համակարգում, դատարանակազմության օրենսդրության մեջ որևէ էական փոփոխության, որովհետև «ոչ ժամանակի պայմանները, ոչ պատրաստի իրավաբանական ուժերի առկայությունը հնարավորություն չեն տալիս կատարել թեկուզ մասնակի փոփոխություններ ընդունված դատական հիմնարկությունների համակարգում»։

Երկրորդ խորհրդակցությունը արդարադատության նախարարի նախաձեռնությամբ գումարվեց 1918 թ. օգոստոսի 15-ին Երևանի շրջանային դատարանի դատական, դատա-խազական պաշտոնյաների, հաշտարար դատավորների և ուզամաշրջանային դատարանի ներկայացուցիչների մասնակցությամբ<sup>1</sup>։ Այստեղ ևս բազմակողմանիորեն քննարկելով արդարադատության նախարարի ներկայացրած դատական բարեփոխումների նախագիծը խորհրդակցության մասնակիցները այդ բարեփոխումների անհրաժեշտության և իրականացման եղանակների վերաբերյալ հանգեցին տարբեր տեսակետների։ Այս քննարկումներում ևս կարելի է առանձնացնել երկու հիմնական հոսանքներ, որոնք իրենց հիմնական գծերով, չհաշված որոշ մասնակի տարբերություններ, նման էին նախորդ խորհրդակցությունում արտահայտված տեսակետներին, բացառությամբ որոշ ելույթների, որոնք առանձնանում էին երկու հիմնական դիրքորոշումներից իրենց յուրահատկությամբ։ Օրինակ՝ Երևանի շրջանային դատարանի անդամ Վերիգինը կողմնակից էր հաշտարար դատավորներին բոլոր քաղաքացիական գործերով առաջին ատյան ճանաչելուն, բայց միայն ժամանակաբրապես «մինչև կյանքի նորմալ պայման-

<sup>1</sup> Տես «Զանգ», թերթ, 1918, թիվ 45։ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 68, թ. 33-34։

ների հաստատումը» Հայաստանի Հանրապետության տարածքում, որը, ինչպես կտևնենք հետագայում, շատ ճիշտ առաջարկ էր. ամենալավը լուր ելնում էր հասարակության կյանքի իրական պահանջմունքներից, այլ ոչ թե տեսական ու պահպանղական ինչ-ինչ դրույթներից:

1920 թ. օգոստոսի 20-ին արդարադատության նախարարի նախաձեռնությամբ իրավիրքեց միացյալ խորհրդակցություն, որին իրավիրքած էին ինչպես դատական, դատախազական, քննչական «գործիչները», այնպես էլ երդվյալ հավատարմատարները՝ փաստաբանները: Միացյալ խորհրդակցությունում ևս քննարկվեցին արդարադատության նախարարի Զեկույց-բացատրագիրը, ինչպես նաև նախորդ խորհրդակցություններում արված առաջարկները՝ խնդրին վերջնական լուծում տալու համար<sup>1</sup>: Այս անգամ արդեն արդարադատության նախարարի առաջարկությունները դատական բարեփոխումների հիմունքների մասին խորհրդակցությունում պաշտպանություն չգտան, բացառությամբ նախարարից և մեկ փաստաբանից, որն արել է հետաքրքիր, շատ տեղին դիտողություններ. «Ներկայում արմատական փոփոխություններ մտցնել դատական գործի մեջ իրականում չի կարելի, սակայն ներկա քաղաքացիականության տեսակետից հաշտվել իին դատական կարգերի հետ անհնարին է: Նախկին «գերտերության» մասշտաբը մանրացնել մինչև Հայաստանի Հանրապետության գյուղական համայնք, անընդունելի է: Գիտությունը՝ գիտություն, սակայն կյանքը կյանք է: Կարևոր են նաև ֆինանսական արգելվները, սակայն ֆինանսական պատճառով չի կարելի հրաժարվել արդարադատությունից: Հաշտարար դատարանը մոտիկ է կանգնած ժողովրդին, այդ մոտիկությամբ ներդնում է կուլտուրա բնակչության մեջ: Պետք է ավելացնել հաշտարար դատավորների քանակն այնքան, որպեսզի նրանք կարողանան նորմալ լուծել բոլոր քաղաքացիական գործերը... վերաբննիշ ատյան հաշտարար դատավորների համար պիտի լինեն հաշտարար համագումարները»:

Այսիսով, սկզբնաարյուրների ուսումնասիրությունից երևում է, որ ուսական դատարանի և դատավարության էական վերակազմավորման անհրաժշտությունը ընդունում էին միայն արդարադատության նախարարը ու ևս մի քանի իրավաբաններ, որոնք սակայն փոքրամասնություն էլ մնացին: Միացյալ խորհրդակցության արդյունքում արձանագրվեց, որ «անհնարին է ներկայում իրականացնել դատարանի արմատական ջարդ»:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 35-38, 39-42:

**3.4. «Հայաստանի Հանրապետությունում դատարանի կազմակերպման մասին» օրինագծերի օգոստոսյան փաթեթը:** Դատական համակարգի կառուցման հիմունքներին, դատական բարեփոխումների խնդիրներին նվիրված խորհրդակցությունների և արդարադատության նախարարության անմիջական աշխատանքի արդյունքը «Հայաստանի Հանրապետությունում դատարանի կազմակերպման մասին» օրինագծերի փաթեթն էր, որը 1918 թ. սեպտեմբերի 5-ին գեկուցվեց Նախարարների խորհրդին և հավանության արժանանալով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ուղարկվեց Հայաստանի խորհուրդից: Հայաստանի Հանրապետությունում դատարանի կազմակերպման մասին օրինագծերի փաթեթը բաղկացած էր «Քաղաքացիական դատավարության կանոնադրությունում մի քանի փոփոխությունների մասին», «Քրեական դատավարության կանոնադրությունում մի քանի փոփոխությունների մասին», «Դատական հաստատությունում մասին» և «Վճռաբեկ դատարանի կանոնադրություն» օրինագծերից<sup>1</sup>: Նախարարների խորհրդում դրանք քննարկելու ընթացքում փաթեթին ավելացվեցին նաև որոշ լրացումներ՝ առանձին օրինագծի տեսքով<sup>2</sup>:

Արդարադատության նախարարությունը նախարար Գ. Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ մշակելով այս օրինագծերը փոխել էր իր սկզբնական դիրքորոշումը նախարարության հերթական խնդիր համարելով «ոչ թե գյուղայուն ունեցող դատարանների տիպերի բարեկալումը կամ վերափոխումը, այլ պայմանների ստեղծումը, որոնցում դատարանները կկարողանային անցնել արդարադատության իրականացման»<sup>3</sup>: Սակայն նախարարությունը որոշ վերափոխումներ և փոփոխություններ նախատեսում էր իրականացնել, ինչքան էլ անքարենպաստ լինելին օրյեկտիվ պայմանները դրա համար: Համաձայն այդ օրինագծերի «դատական իշխանությունը» Հայաստանի Հանրապետությունում պատկանելու էր հաշտարար դատավորներին, շրջանային դատարանին, որի կազմում գործելու էր երդվյալ ատենակալների դատարանը, դատական պալատին, վճռաբեկ դատարանին:

Օգոստոսյան օրինագծերի համաձայն հաշտարար դատավորների ինստիտուտը ներմուծվում էր էական փոփոխություններով՝ առանց հաշտարար դատավորների համագումարի, վերացվում էր հաշտարար դատավորների օգնականների ինստիտուտը, նախատեսվում էր դատական

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 15-16, 17-18:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 19:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 12:

քննիչների ինստիտուտը, ավելացվում էր հաշտարար դատավորների և քննչական տեղամասերի քանակը ի համեմատ նախահեղափոխական ժամանակաշրջանի:

Երևանի շրջանային դատարանը մնալու էր առանց որևէ էական փոփոխության, բացառությամբ նրա, որ վարչական և ցուցակագրական բաժանմունքները վերացվելու էին, իսկ դրանց գործառույթների կատարումը դրվելու էր նույն դատարանի քաղաքացիական բաժանմունքի վրա: Շրջանային դատարանի կազմում գործելու էր երդվյալ ատենակալների դատարանը այն տարրերությամբ, որ ընդհանուր ընդդատության բոլոր քրեական գործերը առանց բացառության բնճիկելու էին երդվյալների մասնակցությամբ, ինչի հետևանքով ավելորդ էր դառնում դատական պալատի քրեական բաժանմունքը, որպես վերաբննիշ ատյան: Դատական պալատը ունենալու էր միայն մեկ վերաբննիշ բաժանմունք՝ քաղաքացիական գործերի:

Օգոստոսյան օրինագծերի նորամուծությունն էր նաև այն, որ Հայաստանի Հանրապետությունում կիմնադրվելու էր վճռաբեկ դատարան, որի կառուցվածքը, իրավասությունները կանոնակարգվում էին հատուկ մշակված կանոնադրությամբ: Վճռաբեկ դատարանը պետք է ունենար մեկ ընդհանուր բաժանմունք՝ քաղկացած նախագահից և երեք անդամից, որոնց նշանակելու էր Նախարարների խորհուրդը՝ արդարադատության նախարարի առաջարկությամբ: Նրանք օգտվելու էին անփոփոխելիության իրավունքից: Վճռաբեկ դատարանում դատախազի պարտականությունները կատարելու էր շրջանային դատարանի դատախազը իր օգնականների հետ: Վճռաբեկ դատարանի կանոնադրության նախագիծը նախատեսում էր, որ ուազմաշրջանային դատարանի վերջնական դատավճրուները վճռաբեկության կարգով ընդդատյա էին միասնական վճռաբեկ դատարանի քննությանը: Այսինքն՝ կարիք չկար կիմնելու գլխավոր ուազմական դատարան: Հարկ է նշել, որ վերջին առաջարկությունը 1918 թ. ընդունվեց օրենսդրի կողմից: Միայն 1920 թ. աշնանը այն կեսագործվեց:

Քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրության մեջ առաջարկվող փոփոխությունները բխում էին վերոհիշյալ դատարանակազմական առանձնահատկություններից:

Այս օրինագծերն ու դրանցից բխող դատական համակարգն ու դատավարական առանձնահատկություններն այն տեսքով, ինչպես նախատեսված էր օրինագծերով, վերջնական օրենսդրական հաստատում Հայաստանի խորհրդում շտացան: Ինչո՞վ էր դա պայմանավորված:

Դատարանակազմության վերաբերյալ օրինագծերը օրենսդրականորեն հաստատվեցին դեկտեմբերի սկզբին: Այդ ընթացքում տեղի էր ունեցել արդարադատության նախարարի փոփոխություն: Գ. Տեր-Պետրոսյանին փոխարինել էր Ս. Հարությունյանը, ինչն էլ իր ազդեցությունն էր քողել օրինագծերի բովանդակության փոփոխության վրա: Ս. Հարությունյանը Հայ ժողովրդական կուսակցական գործիչներից էր, մասնագիտությամբ իրավաբան-փաստաբան: Հրավիրվել էր Թիֆլիսից կուլիցիոն կառավարությունում վարելու արդարադատության նախարարի պաշտոնը: Լինելով ազատական, ժողովրդավարական քաղաքական հայացների տեր, ուսական դատական կանոնադրությունների ոգով դաստիարակված իրավաբան, և հատկապես, դրսից հրավիրված անձ, ամենայն հավանականությամբ նա ենթարկվեց տեղական դատադատախազական պաշտոնյաների պահպանողական մեծամասնության դիրքորոշմանը: Մյուս կողմից անվավեր էր հայտարարվել Բարումիի հաշտության պայմանագիրը, իսկ դա իր հերթին հանգեցրել էր Հայաստանի Հանրապետության տարածքների ընդլայնմանը: Տարածքի ընդարձակումը և դրա հետագա աճի ակնկալումը բնականաբար պետք է հանգեցներ սկզբնական դիրքորոշման փոփոխության:

Օգոստոսյան օրինագծերի և դեկտեմբերյան օրենքների ձևական ու բովանդակային համեմատական վերլուծությունից բխում է, որ ամենայն հավանականությամբ Հայաստանի խորհրդում քննարկումների ընթացքում օգոստոսյան նախագծերից ընդորինակվել է միայն համարդարացիական դատական համակարգի կազմակերպման ընդհանուր հայեցակարգը, իսկ բուն օրինագծերը չեն վերցվել որպես հիմք<sup>1</sup>: Օգոստոսյան նախագծերը արդեն պատրաստի, համակարգված մոտեցմանը շարադրված և դատական համակարգում որոշակի հիմնավորված փոփոխություններ նախատեսող իրավական փաստարդեր էին: Այդ փոփոխությունները և առաջարկությունները բացակայում են դեկտեմբերի 6-ի դատարանակազմական օրենքներում, սակայն դրանց մի մասին արդարադատության նախարարությունը վերադառնալու էր հետագայում, արդեն 1919-1920 թվականների ընթացքում դրանցից մի քանիսը կենսագործելով կյանքում: Այլ էր վիճակը դեկտեմբերի 6-ի դատարանակազմական օրենքներում չկար համակարգված մոտեցում գոնե շարադրանքի տեսանկյունից, առկա էին որոշ տեխնիկական-օրենսդրական թերություն-

<sup>1</sup> Զանի որ Հայաստանի խորհրդի նիստերի արձանագրությունները չեն պահպանվել, ապա այս տարօրինակության իրական պատճառը հնարավոր չեղավ բացահայտել:

ներ, հակասություններ, անհասկանավի ձևակերպումներ, որոնք ի հայտ էին գալու հետազայում օրենքները կենսագործելիս<sup>1</sup>:

**3.5. 1918 թ. դեկտեմբերի 6-ի դատարանակազմական և դատավարական օրենքները:** Հայաստանի խորհուրդը 1918 թ. դեկտեմբերի 6-ին ընդունել է անմիջապես դատարանակազմությանը և դատավարությանը վերաբերող հինգ օրենք<sup>2</sup>: Այդ օրենքներն էին «Վարչական գործերին վերաբերող դատարանների մասին», «Սենատի և դատաստանական առյանք՝ ներմուծման մասին Հայաստանի տերիտորիայի սահմաններում», «Հայաստանի Հանրապետության մեջ հաշտարար բաժանմունքների և քննչական մասերի վերակազմության և նորերի բացման մասին», «Մի քանի փոփոխությունների մասին դատաստանական կանոնադրության մեջ»<sup>3</sup>, «Երդվալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա»:

Նոյն օրը՝ 1918 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի խորհուրդը Օրենսդրական հանձնաժողովի առաջարկությամբ ընդունել է մեկ այլ օրենք, որն առնչվում էր քննարկվող հարցի հետ: Դա «Նախկին Ռուսական Կայսրության օրենքների գործադրման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» օրենքն էր, համաձայն որի Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավորապես գործադրվելու էին նախկին Ռուսական Կայսրության օրենքները ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Սեյմի ու Հայաստանի խորհրդի փոփոխումներով ու լրացումներով<sup>4</sup>: Այս օրենքի ուժով Հայա-

<sup>1</sup> Օրինակ՝ «Երդվալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» օրենքը, «Դատա-դատախազական պաշտոնյաների նշանակման մասին» օրենքը և այլն:

<sup>2</sup> Տես՝ Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1918, հոդվածներ 48, 49, 50, 51, 52, 53, էջ 27-31:

<sup>3</sup> Հրատարակված օրենքների տեքստի տերմինարանությունը պահպանված է: Խոսքը այստեղ գնում է դատական պալատի, որպես ընդիհանուր իրավասության դատական ներահանակարգի վերաբերներ ատյանի մասին:

<sup>4</sup> Խոսքը գնում է «Դատական հաստատությունների կանոնադրության» մասին: Այս օրենքը սահմանում էր նաև դատական գերատեսչության պաշտոնատար անձանց նշանակման և արձակման կարգը:

<sup>5</sup> Տես՝ Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1918, հոդվ. 48, էջ 27: Հարկ է նշել, որ կայսերական օրենքները գործադրվում էին Հայաստանում նաև մինչև դեկտեմբերը, առանց գործադրման հիմքերի իրավական վավերացման: Հայաստանի տարածքում նշված օրենքների գործադրման փաստը, որը հետազայտ խորհրդահայ իրավագիտությունը որակում էր հետադիմական, ստիպողական և ժամանակավոր միջոցառում էր, որպիսին իրավական համակարգը միանալու ստեղծել հնարավոր չէր: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ՝ ուսական օրենսդրությունը Փետրվարյան հեղափոխությունից հետո կրած փոփոխությունների շնորհիվ, գրեթե, կորցրել էր իր հակառակողական բնույթը:

տանի Հանրապետությունում գործելու էին նաև ուսական դատարանակազմական, քրեական և քաղաքացիական նյութական ու դատավարական օրենքները: Օրենսդրական տեխնիկայի առումով ստացվում էր, որ Հայաստանի Հանրապետությունում նախ գործողության մեջ էին դրվում դատական համակարգի կազմակերպական և գործառութային հարաբերությունները կարգավորող կայսերական նորմատիվ իրավական ակտերը՝ Ալեքսանդր Երկրորդի դատական բարեփոխումների փաթեթը, իսկ այնուհետև հանրապետության օրենսդիր մարմնի ընդունած վերոնշյալ հինգ օրենքներով դրանցում կատարվում էին փոփոխություններ ու լրացնմներ:

Ալեքսանդր Երկրորդի դատական բարեփոխման նորմատիվային հիմքը կազմում էին չորս օրենքներ:<sup>1</sup> Դրանցից առաջինը՝ «Դատական հաստատությունների կանոնադրությունը»<sup>2</sup> ("Учреждение судебных установлений") կարգավորում էր դատարանակազմության հարաբերությունները, ներառյալ հաշտարար դատարանների ենթահամակարգի, ընդիհանուր դատարանների ենթահամակարգի, Երդվալ ատենակալների դատարանի, դատախազական հակողության, դատական կատարածուների (պրիստավների), Երդվալ հավատարմատարության (փաստաբանության), նոտարիատի, ինչպես կազմակերպման, այնպես էլ կադրային հարաբերությունները<sup>3</sup>: Իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից այս համապարփակ և կատարյալ իրավական ակտ էր: Չորս օրենքներից երկուը ունեին վարույթային-դատավարական բնույթ: Դրանցից մեկը՝ «Քրեական դատավարության կանոնադրություն» էր ("Устав уголовного судопроизводства"), իսկ մյուսը՝ «Քաղաքացիական դատավա-

<sup>1</sup> Այդ օրենքները իրատարակված են «Российское законодательство X-XX веков» իննիստորյակի 8-րդ հատորում (Սոսկվա, 1991, 495 էջ):

<sup>2</sup> «Учреждение судебных установлений»-ի որպես օրենքի ուսերեն անվանումը բարգմանել և շարունակում են բարգմանել տարբեր կերպ: Ըստի որ Առաջին հանրապետության օրենսդիր մարմնները պաշտոնապես օգտագործել են այդ ակտի «Դատական հաստատությունների կանոնադրություն» գերտարությունը, որոշ բացառություններով, ասպա մենք ևս որոշեցինք պահպանել այդ վերտառությունը, չնայած որ բառացիորեն այն չի համապատասխանում ուսերեն բնագրին:

<sup>3</sup> Բացի «Դատական հաստատությունների կանոնադրությունից» կայսրությունում ընդունվել և գործել են երկու հաստու դատարանակազմական օրենքներ՝ «Особенности учреждения судебных установлений» և «Учреждение судебных установлений в Кавказском крае»: Վերջիններս կոնկրետացման էին ընդիհանուր դատարանակազմական ու դատավարական նորմերը, սահմանում էին շեղումներ և բացառություններ կայսրության ծայրամասերի, այդ բայում Անդրկովկասի համար:

роприяжан կանոնադրությունը» ("Устав гражданского судопроизводства"): «Քրեական դատավարության կանոնադրությունը» կառուցված էր երեք գործերից և 60 գլուխմերից: Ամեն զիրք իր հերթին բաժանված էր բաժինների: Կանոնադրության կառուցվածքը բույլ էր տալիս արագ և առանց դժվարության գտնել անհրաժեշտ հողվածը: Հողվածների ծևակերպումները հստակ են և համառոտ: «Քրեական դատավարության կանոնադրությունը» կարգավորում էր վարույթի կարգը հաշտարար դատարանների համապատասխան ատյաններում, նախարարնության վարման կարգը, դատի տալու կարգը, վարույթի կարգը ընդիմանուր իրավասության առաջին, վերաբննիչ, վճռաբեկ դատարաններում, դատավճիռների կատարման կարգը, ինչպես նաև որոշ տեսակի գործերի քննության հատուկ կարգը: Բարեփոխումների փաթեթի չորրորդ օրենքը «Հաշտարար դատավորների կիրառած պատիճների կանոնադրությունն էր» ("Устав о наказаниях, налагаемых мировыми судьями"): Վերջինս իր բնույթով նյութական իրավունքի աղբյուր էր՝ ամրագրում էր ոչ ծանր քրեական և վարչական իրավախախումների վերաբերյալ նորմները:

Դեկտեմբերյան օրենքների և 1864 թ. դատական կանոնադրությունների բովանդակային համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը ընկալում էր ոուսական դատական համակարգը իր սկզբնական, այսպես կոչված «մաքուր» տեսքով, գերծ հետագա «հակաբարեփոխումներից»<sup>1</sup>: Վերացվում էին նաև բուն Ալեքսանդր Երկրորդի դատական կանոնադրություններով ծառայողական, դասային, հավատի, գույքային հատկանիշներով սահմանված արտոնություններն ու սահմանափակումները դատական պաշտոնի ու երդվալ ատենակալների թեկնածուների համար, ինչպես նաև գույքային և այլ հակամածովրդավարական ցենզերը: Վերացվում էին Անդրկովկասի համար հատուկ սահմանված դատավարական սահմանափակումները և բացառությունները՝ տարածելով ընդիմանուր դատավարական և դատա-

<sup>1</sup> «Հակաբարեփոխումներ» հասկացությունը մատնանշում է 19-րդ դ. 70-90-ական թթ. ցարական կառավարության հետադիմական միջոցառումները ուղղված 60-ական թթ. ազատական օրենսդրության վերանայմանը: Հակաբարեփոխումները շոշափել են նաև դատարաններակազմությունը և դատավարությունը: Հակաբարեփոխումների արդյունքում հիմնադրվել են արտոնուկ գինը դատավարական և արտավարական դատարաններ, վերապահումներ արվեցին ընդիմանուր դատավարական կարգերից: Հակաբարեփոխումների վերջաբանը 1889 թ. «Հողային տեղամասային պետերի կանոնադրությունն» էր, որով փաստորեն վերացվեց հաշտարար դատարանների համակարգը (այդ մասին մանրամասն տես՝ Всемирная история государства и права. Энциклопедический словарь. М., 2001; Российское законодательство X-XX веков. Том 8. Судебная реформа. М., 1991 և այլն):

րանակազմական նորմերի գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքի վրա:

Ի տարրերություն «Դատական հաստատությունների կանոնադրության» Հայաստանի Հանրապետությունում հիմնադրվում էր նաև վարչական արդարադատության համակարգ. առաջին ատյան՝ հաշտարար դատավոր, երկրորդ ատյան՝ շրջանային դատարանի վարչական բաժնությունը, վճռաբեկ ատյան՝ Հայաստանի Սենատ: Հայաստանի Հանրապետությունում չէր գործելու դասային ներկայացուցիչների դատարան՝ քաղաքական, պաշտոնեական հանցագործությունների քննության և լուծման համար: Այդ բնույթի գործերը Հայաստանի Հանրապետությունում ընդդատյա էին միայն շրջանային դատարանիմ<sup>1</sup>:

Դեկտեմբերի 6-ի օրենքներին համապատասխան Հայաստանի Հանրապետության դատական համակարգն իր աստիճանակարգությամբ ու օղակներով ստանում էր յորորինակ տեսք և նման չէր «Դատական հաստատությունների կանոնադրության» 1864 թ., այսինքն՝ սկզբնական խմբագրությամբ նախատեսված ընդիմանուր կառուցվածքին<sup>2</sup>: Հանրապետության դատական համակարգն իր սկզբնական վիճակում ներառում էր հետևյալ դատարանները:

**Ոռաջին ենթահամակարգ՝** միանձնյա հաշտարար դատարաններ՝ օրենքով սահմանված քրեական, քաղաքացիական և վարչական գործերի ընդդատությամբ:

**Երկրորդ ենթահամակարգ՝** ընդիմանուր ընդդատության դատարաններ, որոնք ստեղծվեցին հաշտարար դատարանների իրավասությունից դուրս մնացող քրեական և քաղաքացիական գործերի քննության համար: Այդ դատարանների համակարգը բաղկացած էր երկու ատյանից՝ շրջանային դատարան և դատական պալատ: Երևանի շրջանային դատարանը ընդիմանուր ընդդատության գործերով առաջին և միակ ատյանն էր, որի կազմում գործելու էր նաև երդվալ ատենակալների դատարանը: Շրջանային դատարանը միաժամանակ հաշտարար դատարանների երկրորդ՝ վերաբննիչ ատյանն էր: Դատական պալատը վերաբննիչ ատյան էր լուծման և ընդդատության գործերով: Եվ հաշտարար, և՝ ընդիմա-

<sup>1</sup> Ըստ «Քրեական դատավարության կանոնադրության» 1050 և 1051 հոդվածների այդ գործերը ընդդատյա էին շրջանային դատարաններին, դատական պալատներին, սենատին՝ դասային ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, առանց երդվալ ատենակալների:

<sup>2</sup> Համեմատության համար տես՝ դատական համակարգի սխեմաները ըստ դատական կանոնադրությունների և Հայաստանի Հանրապետության դատարանակազմական օրենքների էջ 37-38:

նուր դատարանների համար հիմնադրվում էր միասնական վճռաբեկ դատարան Հայաստանի Սենատ՝ երկու վճռաբեկ դեպարտամենտներով՝ քրեական և քաղաքացիական:

Ընդհանուր ընդդատուրյան քրեական գործերի նախաքննությունը կատարելու էին շրջանային դատարանի դատական քննիչները, իսկ դրանց գործունեության օրինականության վրա հսկողությունը և դատարանում պետական մեղադրանքի պաշտպանությունն իրականացնելու էր դատատարածքային սկզբունքով ստեղծված դատախազությունը:

#### § 4. Արդարադատության սկզբունքները և դատավարության ընդհանուր դատավարության ընդհանուր բնուրագիրը

**4.1. Արդարադատության սկզբունքները և դատավարության ընդհանուր բնուրագիրը ըստ 1918 թ. դեկտեմբերյան օրենքների:** Դատական համակարգը պետության բոլոր դատարանների համակցությունն է, որոնք ունեն ընդհանուր խնդիրներ, կազմակերպվում և գործում են միասնական սկզբունքներով և կապված են միմյանց հետ ադարադատության իրականացման հարաբերություններով<sup>1</sup>: Այլ կերպ ասած, դատական համակարգը ընդգրկում է ոչ միայն դատարանների մերենայական ամբողջությունը (դատարանների կառուցվածքը և աստիճանակարգը), այլ նաև արդարադատության սկզբունքները, որոնք իրենց կարգավորման առարկայով դասակարգվում են երկու մեծ խմբի՝ արդարադատության կազմակերպման (դատարանակազմության) սկզբունքների և դատարանի ու դատավարության նաև սկզբունքների<sup>2</sup>:

Առաջին հանրապետության դատական համակարգի մասին ամբողջական պատկերացում կարող ենք կազմել ուսումնասիրելով նաև արդարադատության սկզբունքները և դատավարության առանձնահատկությունները: Արդարադատության սկզբունքների և դատավարության բնութագրի հմացությունը մեզ հնարավորություն կտա նաև ընթանալ արդարադատության ոլորտում իրականացվող իրավական քաղաքանության որոշ կողմերն ու միտուները, որոնք բնութագրում են օրենսդիր և գործադիր իշխանությունների սկզբնական ու հետագա վեաբերմունքը դատարանների նկատմամբ, նրանց գործելակերպը արդարադատության ոլորտում: Արդարադատության սկզբունքների և դատավարության բնութագրի ընդ-

հանուր իմացությունը նաև միջոց է աշխատանքի հետագա շարադրանքը հեշտ ընկալելու, ըստ Էուրյան հասկանալու համար:

Սակայն դատական համակարգի դատավարական տարրերի բնութագիրը հնարավորություն չի տալիս ամբողջովին բնորոշել դատական համակարգի առանձնահատկությունները, որ «գործում է ազգային օրենսդրության և դատական պրակտիկայի շրջանակներում: Իսկ այդ հանգամանքը շատ կարևոր է, քանի որ դատական համակարգի գործունեության համար կարևոր է նրա պատկանելիությունը իրավունքի համակարգերից որևէ մեկին՝ անզլուսաբունական կամ մայրցամաքային, որն էապես ազդում է արդարադատության պատմական զարգացման, նրա աղբյուրների և գործունեության միջոցների վրա: Արդարադատությունն այդ հատկանիշով կարելի է դիտարկել որպես իրավական ընդհանուր համակարգի այս կամ այս ենթահամակարգ»<sup>1</sup>:

Այդ իսկ պատճառով մինչև արդարադատության սկզբունքներին անցնելն անհրաժեշտ ենք համարում և կարծում ենք, որ արդեն ուսումնամիջված նյութը մեզ տալիս է այդ հնարավորությունը, պարզաբանել Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգի պատկանելիությունը իրավունքի այս կամ այն համակարգին, ելնելով «իրավունքի աղբյուրների տեսության և իրավաբանների աշխատանքի մեթոդների տարրերություններից»<sup>2</sup>:

Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը Ռուսական կայսրության 1864 թ. դատական բարենորոգման ընկալումն էր, իսկ վերջինս իր արմատներով ելնում էր Ֆրանսիական բոլորության իրավունքի և դատական համակարգի դրվագնաներից: Հետևաբար, Առաջին հանրապետության դատական համակարգը պատկանում էր իրավունքի մայրցամաքային (ռոմանակերմանական) համակարգին, որտեղ «իրավագիտությունը ձևափորվել էր հոռմեական իրավունքի հիման վրա և որտեղ համապատասխանաբար առաջին պլան է նդվում իրավական նորմը որպես հասարարական հարաբերությունների կարգավորիչ»<sup>3</sup>: Առաջին հանրապետության դատական համակարգն ուներ նորմատիվի իրավական հիմք, որ կարգավորում էր նրա կառուցվածքը, գործունեությունը, նրա առանձին օրակաների իրավասությունը, սահմանում նաև նյութա-

<sup>1</sup> Տե՛ս **Мельников Э.Б.** Буржуазная юстиция и права человека: Критический анализ механизма судебной охраны. М., 1987. էջ 86:

<sup>2</sup> Տե՛ս **Давид Р.** Основные правовые системы современности. М., 1967. էջ 37-38:

<sup>3</sup> Տե՛ս **Давид Р.** Основные правовые системы ..., էջ 39:

<sup>1</sup> Տե՛ս Юридический энциклопедический словарь. М., 1987. էջ 462:

<sup>2</sup> Տե՛ս Гражданский процесс, М., 1993. էջ 35:

կան իրավունքի նորմերը<sup>1</sup>: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ ենք համարում քննարկել գլխավոր օրենսդրական ակտերը, որոնք կանոնակարգում էին դատական համակարգի կազմակերպումը և գործունեությունը, և որոնցում ամրագրված էին նաև արդարադատության սկզբունքները: Դա նախ և առաջ «Դատական հաստատությունների կանոնադրությունն» էր, Առաջին հանրապետության օրենսդիր մարմինների կատարած փոփոխություններով ու լրացումներով հանդերձ: Կանոնադրությունը սահմանում էր դատարանակազմության սկզբունքները, դատական միասնական համակարգի օղակները, դրանցից յուրաքանչյուրի իրավասությունը, ներքին կառուցվածքը, դատախազական հսկողության, փաստաբանության իրավակազմակերպական դրույթները և այլն:

«Դատական հաստատությունների կանոնադրությունում» օրենսդրութեան հոչակված էին այնպիսի սկզբունքներ, ինչպես՝ «դատական իշխանության և գործադիր իշխանության բաժանումը»<sup>2</sup>. դատական համակարգի կառուցումը երկակիության սկզբունքով՝ հաշտարար դատարաններ և ընդիանուր իրավասության դատարաններ՝ իրենց առանձնացված ընդդատությամբ և համապատասխան երկօղակ կառուցվածքով, որն ընդգրկում էր երկու առյաններ՝ առաջին և վերաբննիչ<sup>3</sup>: Սակայն ի տարբերություն «կանոնադրության», Առաջին հանրապետության դատարանակազմական օրենսդրությամբ հաշտարար և ընդիանուր արդարադատությունը առանձնացված չէին և ընդիանուր ընդդատության առաջին առյանի շրջանային դատարանները հանդիսանում էին նաև երկրորդ՝ վերաբննիչ առյան հաշտարար դատարանների համար: Դատարանակազմության կարևորագույն ժողովրդավարական ինստիտուտներն էին երդվյալ առենակալների դատարանը, դատական քննիչների ինստիտու-

<sup>1</sup> Ի տարբերություն մայրամաքային ստատուտային իրավունքի, անզուսաքսնական համակարգը կամ ընդիանուր իրավունքի «ընտանիքը» պատմականորեն հիմնվել է դատական (նախադապային) իրավունքի վրա (տե՛ս **Мельников Э.Б.** Ենրկյանայ յուտիւր և պրավ շեղուեկա ... էջ 90-114): Այդ իմաստով անզուսաքսնական իրավունքի երկրներում դատական իշխանությունը, որ նաև սահմանադրական վերահսկություն իրավունք ունի, հասարակության բաղաքական կյանքում մեծ ներուժ ունեցող գործոն է, ինչը, որպես կանոն, չես ասի մայրամաքային դատական համակարգերի մասին (տե՛ս ԱՄՆ դատական մարմինները, Երևան, 1995):

<sup>2</sup> Այս սկզբունքը պետք է հասկանալ ոչ թե իշխանությունների տարանջատման և հակալիքնամատ տեսանկյունից, այլ որպես արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից սկզբունքի արտահայտություն:

<sup>3</sup> Տե՛ս **Российское законодательство X-XX веков. Том 8. Судебная реформа. М., 1991.** էջ 30:

տը, վարչական արդարադատության ինստիտուտը, վճռաքնեկության ինստիտուտը և այլն:

Դատարանակազմության ժողովրդավարական սկզբունքներին համապատասխանում էին դատավարության ժողովրդավարական սկզբունքները, ամրագրված քրեական և քաղաքացիական դատավարությունների կանոնադրություններով, հանրապետության օրենսդիր մարմինների կատարած փոփոխություններով ու լրացումներով հանդեմ: Այդ սկզբունքներն իրենց բնույթով բնական-իրավական, ժողովրդավարական սկզբունքներ էին և նույնիսկ խորհրդային իրավագիտությունը իր դասակարգային մոտեցմանք գտնում էր, որ 1864 թ. դատական կանոնադրությունները հոչակում էին բոլոժուական պետություններին հատուկ կարևորագույն, ժողովրդավարական դատավարական ինստիտուտներ, համարում էր դրանք առաջադիմական երևույթը<sup>4</sup>: Այդ օրենքները ամրագրում էին այնպիսի հիմնարար դատավարական սկզբունքներ, ինչպես դատավարության իրավարակայնությունը, բանավորությունը, մրցակցությունը, անմեղության կանխավարկածը, մեղադրյալի պաշտպանության իրավունքը, անմիջականությունը և անընդիանությունը, օրինականությունը, կողմերի իրահավասարությունը և մրցակցությունը, դիսպոզիտիվությունը (իրավունքների ազատ տնօրինումը) և այլն<sup>5</sup>:

«Քրեական դատավարության կանոնադրությունը» սահմանում էր դատավարական կարգերը հաշտարար դատարաններում, կանոնակարգում էր նախնական քննությունը և դատական քննությունը ընդիանուր դատարաններում:

Հաշտարար դատարանների ընդդատությանը վերապահված քրեական գործերով դատավարությունը սկսվում էր երեք հիմքերով՝

1. Տուժած, վնաս կրած մասնավոր անձանց գանգատներով.
2. Սիլիցիայի կամ այլ վարչական իշխանությունների հաղորդումներով.

<sup>1</sup> Տե՛ս **Виленский Б.В.** Судебная реформа и контрреформа ..., էջ 181-182:

<sup>2</sup> Դատավարական սկզբունքները ավելի մանրանամատ քննարկելու անհրաժեշտությունը չենք տեսնում, չկրնելու պատճառով, որովհետև 19-րդ դարի 2-րդ կեսի ուսական դատական բարեփոխումներին նվիրված բավականին գրականություն կա: Այստեղ դատավարության սկզբունքներին և ընդիանուր քննության անդամանությունը այնքանով, որքանով ուս անհրաժեշտ է աշխատանքի հետագա շարադրանքը ընկալելու և հանրապետության օրենսդիր մարմինների կողմից դատավարական օրենսդրության մեջ կատարված փոփոխություններն ընդգծելու համար:

3. Հաշտարար դատարանի անմիջական հայեցողությամբ, եթե կատարվել էր արարք, որն ենթակա էր հետապնդման անկախ մասնավոր անձի գանգատի առկայությունից<sup>1</sup>:

«Քրեական դատավարության կանոնադրությունը» պարտավորեցնում էր հաշտարար դատավորին մասնավոր գանգատների հիման վրա սկսված գործերով, որոնք կարող էին դադարեցվել կողմերի հաշտեցմամբ, չանալ հաշտեցնելու տուժողին մեղադրյալի հետ: Եթե դատավորը չէր կարողանում հաշտեցնել կողմերին, ապա նև պարտավոր էր կայացնել դատավճռ՝ հիմնվելով կողմերի ներկայացրած ապացույցների վրա: Դատավարությունը հաշտարար դատարաններում տարվում էր բանավոր և հրապարակային (Քր. դատ. կանոն., հոդվ. 88): Փակ նիստում պետք է քննվեին միայն ընտանեկան, կանանց արժանապատվությունը վիրավորող հանցագործությունների վերաբերյալ գործերը, ինչպես նաև մասնավոր անձանց գանգատների հիման վրա հարուցված գործերը, եթե երկու կողմերն էլ խնդրում էին գումարել փակ նիստ (Քր. դատ. կանոն., հոդվ. 89):

Այսպիսով, հաշտարար քրեական դատավարությունը չուներ նախնական քննության փուլ: Ի հակառակ դրան քրեական դատավարությունն ընդհանուր քննդատության գործերով բաժանվում էր մի քանի փուլերի, որոնցից առաջինը նախնական քննությունն էր՝ բաղկացած հետաքննությունից և նախաքննությունից (Քր. դատ. կանոն., հոդվ.հոդվ. 249-309): Հետաքննության վարումը դրված էր միլիցիայի վրա, որ պարտավոր էր մեկ օրվա ընթացքում դատական քննիչին և դատախազին գեկուցել հանցագործության հատկանիշներ պարունակող ամեն մի դեպքի մասին: Հաշտարար դատարաններին ընդդատյա հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունները միլիցիան պարտավոր էր հանձնել պատշաճ հաշտարար դատարան:

Հաշտարար դատարանների ընդդատությունից դուրս մնացող բոլոր հանցագործությունների վերաբերյալ գործերը ընդդատյա էին շրջանային դատարանին և դրանցով տարվում էր նախաքննություն: Նախաքննության գործառույթը կատարում էին դատական քննիչները: Քննիչները, սկսելով, քննությունը պարտավոր էին այդ մասին հաղորդել դատախազին: Երևանի շրջանային դատարանի դատախազն իր օգնականներով հանդերձ իրականացնում էր հսկողություն քննության ընթացքի վրա: Նախնական քննության փուլում պաշտպանի մասնակցություն օրենքով

չէր նախատեսված: Ավարտելով նախաքննությունը քննիչը դրա արդյունքները ներկայացնում էր դատախազին, որը ստուգելով քննության նյութերը կազմում էր մեղադրական ակտ: Դատախազի կազմած մեղադրական ակտը կամ գործի դադարեցման մասին եղակացությունը հանձնվում էին շրջանային դատարանի քրեական բաժանմունքին:

Շրջանային դատարանում դատավարությունը տարվում էր երկու ձևով՝ առանց երդվյալ ատենակալների մասնակցության և երդվյալ ատենակալների մասնակցությամբ: Երդվյալների դատարանին ընդդատյա էին այն գործերը, որոնցով օրենքը որպես պատժատեսակ նախատեսում էր կացության իրավունքներից գրկում կամ դրանց սահմանափակում (Քր. դատ. կանոն., հոդվ. 201): Շրջանային դատարանը առանց երդվյալ ատենակալների գործերը քննում և լուծում էր երեք դատավորների կազմով, դատախազի կամ նրա օգնականի մասնակցությամբ: Դատական նիստը չէր կարող սկսվել առանց պաշտպանի մասնակցության: Օրենքը նախատեսում էր դատավորներին բացարկելու մեղադրյալի իրավունքը և դրա հիմքերը (Քր. դատ. կանոն., հոդվ. 600):

Քրեադատավարական նորմերը հատուկ կանոնակարգում էին դատական քննության իրավարակային, բանավոր և մրցակցային քննույթը (Քր. դատ. կանոն., հոդվ. 620-630): Մրցակցության սկզբունքը քրեական դատավարությունում արտահայտված էր բավականին լայն հիմքերով, այն իմաստով, որ քրեական հետապնդման, պաշտպանության և գործի լուծման գործառույթները առանձնացված էին և իրականացվում էին տարբեր մարմինների ու անձանց կողմից: Դատարանը չէր հանդիսանում քրեական հետապնդման մարմին և քրեական դատավարությունը կառուցված էր դատարանի անկողմնակալությունը ապահովող երաշխիքների հիման վրա:

Դատաքննությունն սկսվում էր մեղադրական ակտի ընթեցմամբ, որից հետո դատարանը անցնում էր նախաքննության նյութերի ստուգմանը, այսինքն՝ ըստ էության, քննարկում և հետազոտում էր ապացույցները (Քր. դատ. կանոն., հոդվ. 678): Դատաքննությունն ավարտվում էր կողմերի դատական վիճաբանությունով: Այնուհետև դատարանը անցնում էր դատավճռի կայացմանը: Դատավճռը կայացվում էր խորհրդակցական սենյակում, որում բացի դատական կազմի անդամներից իրավունք չունեին ներկա լինելու կողմնակի անձինք: Ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը պետք է լուծվեր դատավորների ներքին համոզմամբ՝ գործի բոլոր հանգամանքների հիման վրա (Քր. դատ. կանոն.,

<sup>1</sup> Ст. 1 Российское законодательство X-XX веков. Том 8. Судебная реформа. М., 1991, т. 42:

հոդվ. 766): Դատավճիռը հրապարակվում էր բաց դատական նիստում և նրա պատճենը հանձնվում էր մեղադրյալին:

Քրեական գործերի քննությունը երդվալ ատենակալների մասնակցությամբ ուներ իր առանձնահատկությունները, որոնք կրննարկենքը աշխատանքի երդվալ ատենակալների դատարանին նվիրված մասում:

Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 23-ին ընդունված «Դատաստանական վճիռների հայտարարման ձևի մասին»<sup>1</sup> օրենքով դատավարական բոլոր օրենքների՝ կանոնադրությունների համապատասխան հոդվածները ենթարկվում էին փոփոխության: Հին խմբագրությունների «Կայսերական մեծության անունից», «Ըստ հրամանի նորին կայսերական մեծության» արտահայտությունների փոխարեն սահմանվում էր, որ յուրաքանչյուր քաղաքացիական և քրեական գործի համապատասխանարար վճիռը և դատավճիռը գրվելու և հայտարարվելու էր «Հանուն Հայաստանի Հանրապետության»: Այդ օրենքով վերացվում էր նաև Ժամանակավոր կառավարության 1917 թ. մարտի 3-ի շրջաբերականը՝ Դատավճիռների և վճիռների հայտարարման ձևի մասին, համաձայն որի դրանք հայտարարվում էին «Հանուն Ժամանակավոր կառավարության»<sup>2</sup>:

Դատավճիռը ամբաստանյալին հանձնելու պահից հաշվում էր այն գանգատարկելու ժամկետը:

Քաղաքացիական դատավարական իրավունքի հարցերը կարգավորվում էին քաղաքացիական դատավարության կանոնադրությամբ: Այս օրենքը կանոնակարգում էր վարույթը ինչպես հաշտարար դատարաններում, այնպես էլ ընդիանուր դատարաններում: Քաղաքացիական դատավարությունը ևս կառուցված էր հրապարակայնության, բանավորության և մրցակցության, դիսպոզիտիվության սկզբունքների հիման վրա: Ըստ որում այդ «սկզբունքները քաղաքացիական դատավարության իրավունքում արտահայտված էին ավելի լրիվ, քան քրեական դատավարությունում»<sup>3</sup>, հատկապես դիսպոզիտիվության (իրավունքների ազատ տնօրինման) սկզբունքը, որը ժամանակակից ժողովրդավարական երկրների իրավական համակարգերի հիմնական սկզբունքներից է:

**4.2. Դատավարական կարգերի հետագա օրենսդրական փոփոխությունները և լրացումները:** Առաջին հանրապետության օրենսդիր մարմին-

ներն իրենց հետագա օրինաստեղծ գործունեության ընթացքում անդրադարձել են նաև քրեական և քաղաքացիական դատավարության կանոնադրություններին, անհրաժեշտ փոփոխություններ կամ լրացումներ կատարելով քրեական և քաղաքացիական դատավարական կարգերում: Այդ փոփոխությունների և լրացումների մասին ամրողական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ ենք համարում համեմատական իրավական վերլուծության ենթարկել դատական կանոնադրությունների սկզբնական նորմերը և դրանցում կատարված հետագա օրենսդրական փոփոխությունները:

Այդպիսի բնույթի առաջին օրենքը Հայաստանի խորհրդի 1918 թ. սեպտեմբերի 28-ի «Քրեական դատավարության կանոնադրության մի քանի հոդվածների փոփոխման մասին» օրենքն է<sup>1</sup>: «Քրեական դատավարության կանոնադրության» այս օրեքով փոփոխության ենթարկվող նորմերը հիմնականում վերաբերում էին վկաներին երդան երթարկելու կարգին: Համաձայն կանոնադրության վկաները դատական նիստում մինչև ցուցմունք տալլ պետք է երդում տային «ամենազոր աստծո» առջև, որ գործով կասեն միայն ծշմարտությունը, հակառակ դեպքում պատասխան կտան օրենքի և աստծո ահեղ դատաստանի առջև: Հայաստանի խորհրդի այս օրենքով վերացվում էին «Քրեական դատավարության կանոնադրության» 713-րդ և 714-րդ հոդվածները, որոնք բոլոր վկաներին բաժանում էին «ուղղափառ» և «ոչ ուղղափառ» հավատի ներկայացուցիչների և սահմանում էին միայն ուղղափառ հավատի վկաներին երդեցնելու կարգն ու երդան տերաստը: Սահմանվում էր ընդիանուր կանոն, որ «վկաները երդում են տային դատարանի նիստին յուրաքանչյուր՝ իր դավանության ծեսով և հոգնորականի միջոցով»:

Նոր օրենքով «Քրեական դատավարության կանոնադրության» 711-րդ, 712-րդ, 715-րդ, 793-րդ հոդվածները շարադրվում էին նոր խճագրությամբ: «Քրեական դատավարության կանոնադրության» 793-րդ հոդվ. սահմանում էր, որ «մանրամասն դատավճիռը պետք է կազմի դատարանի անդամներից մեկը» նախագահի համարապությամբ դատավճոնի հայտարարությունը հետո երկու շաբաթվա ընթացքում: Հայաստանի խորհրդի մտցրած փոփոխություններով այս ժամկետը կրճատվում էր մինչև հինգ օր:

Առաջին հայացքից օրենսդրական այս լրացումները այնքան էլ էական չեն և զարմանալի է թվում, որ Հայաստանի խորհրդուն իր այնքան

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1918, հոդվ. 16, էջ 16-17:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 49, թ. 38:

<sup>3</sup> Տե՛ս Բիլենսկի Բ.Վ. Հայաստանի դատավարական փոփոխությունները և լրացումները. Առաջին հանրապետության օրենսդիր մարմին-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1918, հոդվ. 27, էջ 16-17:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 49, թ. 38:

<sup>3</sup> Տե՛ս Բիլենսկի Բ.Վ. Հայաստանի դատավարական փոփոխությունները և լրացումները. Առաջին հանրապետության օրենսդիր մարմին-

թանկ ժամանակը վատնել է դրա վրա: Այս տարօրինակության լուծումը պարզեցինք Հայաստանի խորհրդի 1918 թ. սեպտեմբերի 18-ի նիստի համառոտ արձանագրության ուսումնասիրությունից<sup>1</sup>: Նախ ասենք, որ օրինագիծը նշակել էր արդարադատության նախարարությունը, իսկ Նախարարների խորհուրդը քննարկելով այն 1918 թ. օգոստոսի 22-ին հավանություն էր տվել և ուղարկել Հայաստանի խորհրդի<sup>2</sup>: Այս օրինագծի տեքստը արխիվային նյութերում չի պահպանվել: Հայաստանի խորհրդի վերոհիշյալ համառոտ արձանագրությունից երևում է, որ այն լրիշ բովանդակություն է ունեցել: Մասնավորապես՝ արդարադատության նախարարությունը առաջարկում էր էական փոփոխություններ կատարել «Քրեական դատավարության կանոնադրության» մեջ: Առաջարկվող փոփոխություններից առաջինը վերաբերում էր «Քրեական դատավարության կանոնադրության» 625-րդ հոդվ., որի սկզբնական, բնօրինակ խմբագրության համաձայն չէր «արգելվում դատական նիստում կարդալ այն վկաների գրավոր ցուցմունքները, որոնք չեն ներկայացել դատարան մահվան, հիվանդության, ծերության կամ հեռավոր վայրեր մեկնելու պատճառով»: Հոդվածի բովանդակությունից բխում է, որ մնացած վկաների, որպես անհարգելի պատճառով չներկայացածների, վերաբերմանը դա արգելվում էր և նրանց ներկայությունը դատական նիստին, որպես դատավարության անմիջականության սկզբունքի հրամայական պահանջ, պարտադիր էր: «Քրեական դատավարության կանոնադրության» 626-րդ հոդվ. համար առաջարկվող փոփոխություններով արդարադատության նախարարը նախատեսում էր դատարանին հնարավորություն տալ նաև անհարգելի պատճառով չներկայացած վկաների նախական քննության ընթացքում գրավոր տված ցուցմունքները համարել լիարժեք ապացուցման միջոց և դրանով իսկ չխշնդրուել դատավարության անկանու ընթացքին<sup>3</sup>:

Հայաստանի խորհրդի համառոտ արձանագրությունից երևում է, որ երկրորդ փոփոխությունը ուղղված էր «Քրեական դատավարության կանոնադրության» 498-րդ հոդվ., որի բնօրինակ խմբագրության համաձայն «առանց օրինական պատճառների վկայի դատարան չներկայանալու դեպքում դատական քննիչը նրան ներարկում էր մինչև 50 ոռորդ տուգանքի և ուղարկում էր երկրորդ ծանուցագիրը: Եթե այնուհետև վկան նորից օրինական պատճառներ չունենալով (կանոնադրության 388-րդ հոդվ. նշում էր այդ պատճառները) չի ներկայանում ժամանակին, ապա նա

բերման է ենթարկվում քննության»: 438-րդ հոդվ. համար առաջարկված փոփոխությամբ քննիչին իրավունք էր տրվում վկայի առաջին անգամ չներկայանալու հետո անմիջապես նրան բերման ենթարկել<sup>4</sup>:

Երկու դեպքում էլ նախարարությունը ելնում էր գործնական, այլ ոչ թե իրավական սկզբունքային շահերից, ձգտելով այդ արտակարգ օրենսդրական միջոցառումներով շտկել դրույթունը արդարադատության մարմինների գործունեության մեջ, իհարկե, անտեսելով դատավարական ձևի երաշխիքային նշանակությունը: Իրավիճակի վերլուծությունը ցույց էր տալիս, որ «վկաների հիմնահարցը» արդարադատության ամենացավոտ կողմերից մեկն էր հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջացքում: Արդարադատության նախարարը խոստովանում էր, որ «կառավարությունը օրենքների փոփոխությունը մտցրել է ոչ թե նրա համար, որ թերի են, այլ այն պատճառով, որ մեր երկրում գոյություն ունեն այնպիսի կարգեր, որոնք խոշընդոտ են հանդիսանում օրենքի կատարյալ կիրառմանը»: Պատերազմի հետևանքով բնակչության անընդհատ տեղաշարժերի, փոխադրամիջոցների բանկության կամ դրանց բացակայության պատճառով «քննությունը և դատարանը չեն կարողանում ժամանակին փնտրել կանչող անձանց, մյուսները խուսափում են ներկայանալուց, գերադասելով տուգանքները, քան թե կրել ծանր ու բանկ ճանապարհածախս և ուժով անցնել տասնյակ վերասեր այդ դեպքում կտրվելով իր աշխատանքից աշխատանքային օրվա այսպիսի բանկության օրոք»<sup>5</sup>: Դա հանգեցնում էր նրան, որ գործերի նախական քննությունը և դատական քննությունը ձգձգվում էր և քննիչների մոտ ու դատարաններում կուտակվում էին մեծ քանակությամբ գործեր:

Արդարադատության նախարարության և կառավարության այս առաջարկությունները հավանություն չտացան Հայաստանի խորհրդի օրենսդրական համձնաժողովում, իսկ այնուհետև Հայաստանի խորհրդում, որի բոլոր պատգամագորական խմբակցություններն էլ ժողովրդավարական հովերով տարված դեմ արտահայտվեցին օրինագծի վերը պատկերված տարբերակով ընդունմանը: Այդ կապակցությամբ դաշնակցական պատգամագոր Հ. Բուղալյանը բավականին արտահայտիչ ձևակերպել է խորհրդարանականների դիրքորոշումը. «Նոր կարգերը ոչ մի գրավական չեն տալիս արդարադատության համար», իսկ 438-րդ հոդվ. փոփոխությունը, ըստ որոշ պատգամագորների, խախտում էր անձի անձունմիշելության իրավունքը:

<sup>1</sup> Տե՛ս «Զանգ» թերթ, Երևան, 1918, թիվ 57:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 2, թ. 19:

<sup>3</sup> Տե՛ս «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, Երևան, 1918, թիվ 6, թ. 12:

<sup>1</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, Երևան, 1918, թիվ 57:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 107, թ. 354:

Անշուշտ, դատավարական ձևի որպես արդարադատության երաշխիքի պարզունականացումը կամ անտեսումը չի կարելի համարել «վկաների հիմնահարցի» լուծնան օպտիմալ տարրերակ: Սակայն, ինչքանո՞վ էր հիմնավորված օրենսդիր մարմնի այդպիսի մերժողական դիրքորոշումը կամ այդպիսի պայմաններում արժեք արդյո՞ք պահպանել վկաների կրոնական երդման կարգը և, օրինակ, կրոնականի չներկայանալու կամ գործի քննության պահին ու վայրում վկայի հավասի կրոնավոր չինելու պատճառներով նորից մի արգելք ստեղծել դատավարության արագ և անկանությունը ընթացքի համար ու որպես հետևանք դատարաններում ունենալ չքննված մեծ քանակությամբ գործերի կուտակում: Հատկապես դժվարին կացության մեջ էր հայտնվել Երևանի շրջանային դատարանը, որին ենթակա դատական շրջանը քննարկվող օրենքն ընդունելու պահին համարվում էր Բարումիի պայմանագրով Հայաստանի Հանրապետությանը անցած տարածքները, սակայն հետագայում տարածքների ընդլայնման հետևանքով որպես այդպիսին ճանաչվելու էր Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը և վիճակն ավելի էր վատքարանալու: Շրջանային դատարանը այդ կացությունից դուրս գալու համար կազմակերպում էր արտագնա նստաշրջաններ Ալեքսանդրապոլում, Նոր-Բայազետում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում: Սակայն նոյնիսկ այդ դեպքում չէր հաջողվիմ քննել և լուծել արտագնա նստաշրջանին դրված բոլոր գործերը: Այսպես 1919 թ. հոկտեմբերին Ալեքսանդրապոլում և Ղարաքիլիսայում նշանակված արտագնա նստաշրջանի ընթացքում Ալեքսանդրապոլում քննության նշանակված քանառք գործից հաջողվի էր ավարտել և դատավճիր կայացնել միայն տասնմեկ գործ, իսկ Ղարաքիլիսայում տասնյոթ գործից՝ տասնչորս գործ<sup>1</sup>: Մնացած գործերը չքննելու և հետաձգելու պատճառը վկաների և, նոյնիսկ, մեղադրյալների չներկայանալն էր, միլիցիայի կողմից «Եկակոչի ծանուցագրերը» հանձնելու և այդ անձանց ներկայությունը ապահովելու իր պարտականությունները չկատարելու հետևանքով:

Արդարադատության նախարարությունը այս հարցին անդրադարձել է նաև 1919 թ., սակայն այս անգամ արդեն խնդիրը հանգում էր հաշտարար դատարաններում վկաներին հարցաքննելու կարգը փոխելուն: Օրինագիծ այդ մաիս մշակվել էր արդարադատության նախարարությունում և ներկայացվել էր Նախարարների խորհրդին, որն այդ պահին համաձայն 1919 թ. հունիսի 5-ի Հայաստանի խորհրդի օրենքի օժոված էր օրենսդրական լիազորություններով: Նախարարների խորհուրդը 1919

թ. հունիսի 25-ին հաստատել է «Հաշտարար ատյաններում վկաների հարցաքննության կարգը փոխելու մասին» օրենքը<sup>2</sup>:

Հանաձայն քրեական և քաղաքացիական դատավարության կանոնադրությունների հաշտարար դատարաններում վկաները հարցաքննություն էին երդվելուց հետո, եթե միայն կողմերի (մեղադրյալ և տուժող, հայցվոր և պատասխանող) փոխադրձ համաձայնությամբ իրենք չին ազատվում երդումից, ինչպես նաև օրենքում նշված կոնկրետ դեպքերում՝ որպես ընդիհանուր կանոնից արված բացառությունները: Օրինակ՝ մեղադրյալի կինը կամ ամուսինը, կամ նրա եղբայրը և այլն (Քր. դատ. կանոն, հոդվ. 94-97): «Քրեական դատավարության կանոնադրության» 99-րդ հոդվ. ուժով երդումից ազատ էին համարվում նաև բոլոր դավանանքների հոգևոր և կուսակրոն անձինք, ինչպես նաև՝ երդում չընդունող դավանանքներին և աղանդներին պատկանող անձինք, որոնք երդման փոխարեն խոստում էին տալիս մաքուր խողով հայտնել ամբողջ ճշմարտությունը գործով:

«Հաշտարար ատյաններում վկաների հարցաքննության կարգը փոխելու մասին» օրենքը վկաների հարցաքննության վերը նկարագրված դատավարական կարգը բոլորում էր նոյնը, բացառությամբ նրա, որ օրինակ՝ «Քրեական դատավարության կանոնադրության» 97-րդ հոդվ. ավելացվում էր նոր կանոն. «յուրաքանչյուր վկա երդում է տալիս իր դավանանքի ծեսով և հոգևոր անձի միջոցով»: Իսկ 99-րդ հոդվածում որպես երդումից ազատ համարված անձինք ավելացվում էին նաև «իրենց համոզությունում երդում շճանաչող անձինք»<sup>2</sup>:

Էական էին «Քաղաքացիական դատավարության կանոնադրության» 95-րդ հոդվ. և «Քրեական դատավարության կանոնադրության» 98-րդ հոդվ. փոփոխությունները: Համաձայն մինչ այդ եղած քրեադատավարական նորմի հոգևորականի բացակայության դեպքում հաշտարար դատավորը վկաներին հարցաքննություն էր առանց երդման, նրանց հիշեցնելով միայն, որ իրենք պարտավոր են նաքուր խողով հայտնել իրենց հայտնի հանգամանքները դեպքի վերաբերյալ, վերցնելով նրանցից ստորագրություն այն մասին, որ նրանք իրենց ցուցմունքները պատրաստ են հաստատել երդմանը կողմերից մեկի պահանջով: Հաշտարար դատարանների համար վերաբնիշ ատյան էր համարվում Երևանի շրջանային դատարանը: Վերջինում համաձայն օրենքի դատավարությունը տարվում է ընդհանուր իրավաության դատական մարմինների համար սահմանված կարգով, այդ թվում 1918 թ. սեպտեմբերի 28-ի օրենքով սահմանված կար-

<sup>1</sup> Տե՛ս «Յառաջ», թերթ, 1919, թիվ 21:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 99, ց. 1, գ. 14, թ. 144:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 69, թ. 76:

գով, ըստ որի բոլոր վկաները պետք է ցուցմունք տային կրոնական երդում տալուց հետո: Հակասությունն ակնհայտ է: Մյուս կողմից, եթե նույնիսկ վերաքննիչ ատյանը իհմը վերցներ կրոնական երդում չտված վկայի ցուցմունքը, օրինակ, ասենք Կարսի հաշտարար դատարանի որևէ գործով, որ վերաքննության կարգով քննվում էր շրջանային դատարանում և հանկարծ կողմերից մեկը պահանջեր տվյալ գործով երդում չտված վկաներից մեկին հաստատել իր ցուցմունքները երդումով, ապա Շրջանային դատարանը ստիպված պետք է դադարեցներ գործի քննությունը, եթե վկան չէր կանչված դատարան, կանչեր վկային Կարսից, գտնել նրա դավանանքի հոգևորական նրան երդվեցնելու համար: «Քրեական դատավարության կանոնադրության» 879-րդ հոդվ. սահմանված կարգով վկաները վերաքննիչ ատյան էին կանչվում միայն նրանց ներկայությունը վերաքննիչ ատյանի կողմից անհրաժեշտ ճանաչվելու և կողմերից մեկի պահանջի առկայության դեպքում: Այդպիսի կարգի պահպանման դեպքում սկսվում էր գործերի դատական քննության ձգձգում, քաշրշուկ, քանի որ վկաներն այնքան էլ «հաճույքով» չէին ներկայանում դատարան՝ խուսափելով ճանապարհորդության դժվարություններից, ծախսերից, վտանգներից: Միաժամանակ ավելանում էին պետական ծախսերը վկաների վրա: Այս իրողությունն էլ հենց ստիպել էր արդարադատության նախարարությանը «Քաղաքացիական դատավարության կանոնադրության» 95-րդ հոդվ. և «Քրեական դատավարության կանոնադրության» 98-րդ հոդվ. շարադրել այսպես: «Եթե հաշտարար դատական ատյանում բացակայում է այն դավանանքի հոգևորականը, որին պատկանում է վկան, ապա նրան երդվեցնում էր հաշտարար դատավորը»: Դրանով իսկ պարզություն էր մցվում հաշտարար արդարադատության դատավարական կարգում և՝ հաշտարար դատարաններում, և՝ վերաքննիչ ատյանում՝ շրջանային դատարանում:

Այս խնդիրներին և «Քրեական դատավարության կանոնադրության» մատնանշված հոդվածներով կարգավորվող հասարակական հարաբերություններին օրենսդրության արդարադատության նախարարության նախաձեռնությամբ անդրադարձել է ևս մեկ անգամ, քայլ արդեն 1920 թ., ցուցաբերելով ի համեմատ նախորդ դեպքերի թիվ թե շատ համարգված և մտածված մոտեցում, եթե Հայաստանի խորհրդարանը ապրիլի 3-ին ընդունեց երկու օրենքներ՝ «Հաշտարար և ընդհանուր դատական հաստատությունների մեջ քրեական գործերի համար առնելիք գումարները բարձրացնելու մասին»<sup>1</sup> ու «Հաշտարար և ընդհանուր դատական հաս-

տատությունների մեջ քաղաքացիական գործերի համար առնելիք գումարները բարձրացնելու մասին»<sup>2</sup>:

Առաջին օրենքով ոչ միայն փոփոխվում էին «Քրեական դատավարության կանոնադրության» այն հոդվածները, որոնք վերաբերում էին դատական տուրքերին ու վկաների, հոգևորականների, փորձագետների, ընթերականների նկատմամբ կիրառվող տուգանքներին, դրանց վարձարությանը, վերջիններիս գումարները բարձրացնելու իմաստով (քանի և ավելի անզամ), այլ նաև կատարվում էին փոփոխություններ, որոնք էականորեն տարբերվում էին օրենքի հոդվածների հին խմբագրություններից և նպատակ ունեին վերջ տալու քաշրշուկին քրեական դատավարությունում, առաջին, այդ անձանց քննիչի և դատարանի կանչով չներկայանալու դեպքում՝ ենթարկելով խոշոր չափով տուգանքների, երկրորդ՝ բարձրացնելով նրանց վարձատորթյան (օրապահիկ և ճանապարհածախս) չափերը: Օրինակ, «Քրեական դատավարության կանոնադրության» 643-րդ հոդվ. նոր խմբագրությունը սահմանում էր, որ «Եթե վկան առանց օրինական պատճառների չներկայանա դատարաններին, նա կենթարկվի դրամական տույժի ոչ ավել քան 3000 ռ. (նախկին խմբագրությամբ մինչև 100 ռ.) և բացի դրանից, նա պիտի վճարի դատարան կանչված անձերի՝ նիստի հետաձգությունից առաջացած ծախսերը, եթե նրա դատարանին չներկայանալու պատճառով հետաձգված լինի նիստը»<sup>2</sup>:

«Քրեական դատավարության կանոնադրության» 438-րդ հոդվ., որ Հայաստանի խորհուրդը 1918 թ. թողեց անփոփոխ, ևս ենթարկվում էր փոփոխության: Նոր խմբագրությամբ սահմանվում էր, որ եթե վկան առանց հարգելի պատճառների քննիչի կանչով չներկայանա, ապա «դատական քննիչը նրա վրա դրամական տույժ է դնում ոչ ավել, քան 1000 ռ.» (նախկինում մինչև 50 ռ.), որից հետո նա պիտի բերման ենթարկվեր քննիչի մոտ:

Քրեական և քաղաքացիական դատավարական կարգերին վերաբերող, արդարադատության նախարարությունում մշակված և օրենսդիր մարմնների կողմից վավերացված օրինագծերի հասուկ խումբ էին կազմում դատական տուրքերին, տուգանքներին, վկաների և այլ անձանց վարձատորթյունների չափերին վերաբերող օրենքները:

Ընորիկի փողի՝ ոուրլու ծայրահեղ արմեքազրկման գործող քրեական և քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահման-

<sup>1</sup> Երկրորդ օրենքը իր կարգավորման առարկայով վերաբերվում էր քաղաքացիական դատավարական հարաբերություններին և նոյն քննիչի փոփոխություններ էր մտցնում «Քաղաքացիական դատավարության կանոնադրությունում»:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, իրատ. Պատլամենտի, Երևան, 1920, թիվ 7, հոդվ. 58, էջ 51:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, իրատ. Պատլամենտի, Երևան, 1920, թիվ 6, հոդվ. 57. էջ 45-48, 1920, թիվ 7, հոդվ. 58, էջ 49-52:

ված դատական բազմաթիվ տուրքերը, տուգանքները, վկաների և այլ անձանց վարձատրությունների շափերը չէին խթանում դատավարության շարժումնակությունը: Այդ համզամանքի հետևանքով տուժում էր ոչ միայն պետական բյուջեն (գանձարանը), այլ նաև արդարադատության գործը ընդիանարապես, որովհետև թե՛ քրեական գործերի նախաքննությունը, թե՛ դատական քննությունը դատարաններում ձգձգվում էին հաճախ այն պատճառով, որ յուրաքանչյուր գործով կանչված վկաները, փորձագետները, ընթերականները և դատավարությանը մասնակցող այլ անձինք չէին ներկայանում չնչին, նույնիսկ իրենց կատարած ծախսերը չհատուցող վարձատրության կամ էլ չնչին տուգանքի հետևանքով: Այդ տեսակետից կարևորվում էր արթեզրկման գործնարացին զուգընթաց տուրքերի, տուգանքների և վարձատրությունների գումարների շափերի բարձրացումը օրենսդրական կարգով, նաև՝ որպես դատավարության արագացմանը նպաստող գործոն, իսկ այնուհետև՝ պետական գանձարանը համալրող միջոցառում: Այդպիսի օրենքներից առաջինը Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 13-ի «Դատաստանական հարկերի արդար վճռաբեկման գրավականների և բողերի տուրքի ավելացման մասին» օրենքն է<sup>1</sup>, որն արդարադատության նախարարությունը նշակել էր և Նախարարների խորհրդի հավանությանը էր ներկայացրել դեռ 1918 թ.<sup>2</sup>:

Արդարադատության նախարարության մշակած նմանօրինակ օրինագծերից էր նաև «Դատական կատարածուների վարձատրությունների ժամանակավոր սակր փոխելու մասին» նախագիծը, որ ընդունվել է Հայաստանի խորհրդարանի կողմից 1920 թ. ապրիլի 9-ին<sup>3</sup>: Համաձայն «Դատական հաստատությունների կանոնադրության» 312-րդ հոդվ. դատական կատարածուները ստանում էին աշխատավարձ ըստ հաստիքային դրույքաչափերի: 312-րդ հոդվ. ուժով նրանք, բացի այդ, ստանում էին նաև դրամական վարձատրություն որոշակի դատավարական գործությունների կատարման (վկաներին, հայցվորներին, պարտապաններին, պարտատերերին և այլ անձանց ծանուցագրեր, «եկակոչեր» և այլ բնույթի հաղորդագրություններ հանձնելու) համար՝ օրենսդրական կարգով սահմանված հատուկ գործակիցներով, ենթելով հայցի գնից: Ապրիլի 9-ի օրենքով փոփոխության էր ենթարկվում այդ գործակիցը, հաշվի առնելով արթեզրկման շափերը:

Այս բնույթի հաջորդ օրենքը 1920 թ. մայիսի 20-ի Նախարարների խորհրդի «Դատական հաստատությունների կանոնագրի 461-րդ հոդվ.

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1919, հոդվ. 71, էջ 41:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ ֆ. 199, գ. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 120:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. Պառա-մենտի, Երևան, 1920, թիվ 8, հոդվ. 72, էջ 60-61:

մեջ նշված գումարն ավելացնելու մասին» օրենքն է<sup>1</sup>: Համաձայն Դատական հաստատությունների կանոնադրության 302-րդ և 303-րդ հոդվածների դատական կատարածուները մինչև իրենց պաշտոնական պարտականությունների կատարմանը անցնելը, իրենց դատական հիմնարկություն պետք է ներկայացնեն գրավ և երդում տային: Այդ գրավը երաշխիք էր այն վճարի համար, որ կարող էր առաջանալ նրանց ապօրինի գործություններից (վատնում, յուրացում, կորուս): Այդ գրավի չափը սահմանվում էր օրենսդրական կարգով: Գործող օրենսդրությամբ այդ գումարը սահմանված էր 20 ռ. չափով (461-րդ հոդվ.), որն արդեն 1920 թ. փողի ծայրահեղ արթեզրկման պայմաններում շատ քիչ էր: Նոր օրենքով այդ գումարի չափը սահմանվում էր 5000 ռ.:

\* \* \*

Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգի կառուցման հայեցակարգի մշակման և իրավական կենսագործման պատմության ուսումնասիրությունը և հանգամանալից վերլուծությունը հիմք են տալիս կառուցելու հետևյալ գլխավոր եզրակացությունները:

Հայաստանի առաջին հանրապետության քաղաքական ղեկավարությունը անցնելով իշխանության գլուխ դրսուրեց ձգտում հիմնադրել ժողովրդավարական դատական համակարգ: Դատական համակարգի կառուցման սկզբը դրվեց 1918 թ. որպես հիմք վերցնելով 19-րդ դարի երկրորդ կեսի ուսուական դատական բարեփոխումների հիմնադրությները, վերացնելով դրանցում առկա սկզբնական և հետագայում սահմանված հակաժողովրդավարական ինստիտուտները և նորմերը: Այդ կապակցությամբ վերացվեցին հանրապետությունում գործող արտակարգ դատարանները՝ տրիբունալները: Արդարադատության նախարարության և Հայաստանի խորհրդի օրինաստեղծ ջանքերի շնորհիվ հանրապետությունում հաստատվեց դատական համակարգ, որը և՛ իր կառուցվածքի, և՛ իր գործունեության սկզբունքների առումով առաջադիմական, ժողովրդավարական հաստատություն էր: Չնայած հանրապետության առաջին արդարադատության նախարարի ջանքերին՝ չհաջողվեց էական վերափոխումներ մտցնել ընկալված դատական համակարգի մեջ և արդարադատության նախարարության հերթական խնդիր համարվեց ոչ թե վերափոխումները, «այլ պայմանների ստեղծումը, որոնցում դատարանները կկարողանան անցնել արդարադատության իրականացնանք»: Սակայն վերակառուցման, դատարանը կյանքի նոր պայմաններին հարմարեցնելու անհրաժեշտությունը բխում էր հանրապետության քաղաքական, տնտե-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ ֆ. 199, գ. 1, գ. 162, 1-ին մաս, թ. 68:

սական, սոցիալական իրական վիճակից: Անկախ ոհսկի հետ կապված գործոնից՝ ժամանակը, իրադրությունը արտակարգ էին, հանցավորությունը ահուելի, հետևաբար, անիրաժշտ էին նաև իրավիճակին համապատասխանող նոր մոտեցումներ, այդ թվում նաև՝ մտածված և հիմնավորված արտակարգ միջոցառումներ: Միայն դրա միջոցով կարելի կլիներ ճնշել հանցավորությունը, օրինականություն և իրավակարգ, իրական ժողովրդավարություն հաստատել երկրում: Այդպիսի պայմաններում ժողովրդավարության և իրավականության լույսի տակ պահպանողական հովերով տարվելը չեր օգնի գործին: Ավելին, արդարադատության նախարարի վերոհիշյալ միջոցառումները ևս անբավարար էին: Անիրաժշտ էր դրսւորել էլ ավելի արմատական, սկզբունքորեն նոր մոտեցումներ, որովհետև փոխվել էին իրադրությունը, պայմանները, կյանքը: Պետական կառուցակարգը, այդ թվում դատական համակարգը, որ սովորական պայմաններում գործում էր արդյունավետ, հեղափոխական, պատերազմական, արտակարգ իրադրություններում ի վիճակի չեր լինելու ապահովել կարգ ու կանոնի, օրինականության տարրական պայմանները, արդարադատության իրականացումը, երաշխավորել ժողովրդին սոցիալական կոնֆլիկտների արագ և արդար դատավարական լուծում: Կյանքի իրական պահանջներից ու հասարակական հարաբերությունների իրական վիճակից պիտի ենթին բարեկիրդումների հետինակները, այլ ոչ թե պահպանողական դատողություններից՝ դիրքորոշում, որն հետագայում փաստի առաջ էր կանգնեցնելու հանրապետությանը հասարակական հարաբերությունների կառավարման այս ոլորտում՝ անդամալուծության և անգործության դատապարտելով դատարանները: Դատական համակարգի կազմակերպական առանձնահատկությունների վրա իր եական ազդեցությունը բոլեց նաև տնտեսական իրավիճակն ու պայմանները: Հանրապետության տնտեսական դրույթունը որպալի էր, իսկ հնարավորություններ՝ սահմանափակ, որովհետև երկիրը չուներ զարգացած տնտեսություն, ամայացել էր տնտեսապես ուր տարիների անընդհատ պատերազմների, հեղափոխությունների, խոռվությունների և ավերումների հետևանքով, տառապում էր սովոր ճրաներում և իսկապես վերածվել էր «անձև քառսի», որին «ձև» տալու համար անիրաժշտ էր անցնել անցման երկար, դժվարին ժամանակահատված: Նյութական, տնտեսական հիմքը նախ պայմանավորում էր հանրապետության ազգաքննակշուրյան և յուրաքանչյուր անհատի վարքագիծը, նպաստում քրեածին գործոնների ակտիվացմանը, իսկ մյուս կողմից հնարավորություն չեր տալիս պետական մարմիններին հաջորդությամբ կազմակերպել ու իրացնել իրավակարգի պահպանության և արդարադատության իրավակազմակերպական երաշխիքները:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՄԱՐԳԻ ԿԱՌ-ՌԵՑՎԱԾԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

#### § 1. Հաշտարար դատարանները Առաջին հանրապետությունում կազմակերպական կառույցը, ընդդադուրյունը, գործունեությունը

**1.1. Հաշտարար դատարանների ենթահամակարգի կազմակերպական կառույցը:** «Հայաստանի Հանրապետության մեջ հաշտարար բաժանմունքների և քննչական մասերի վերակազմության և նորերի բացման մասին» Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 6-ի օրենքի հիման վրա կազմակերպվեց հաշտարար դատական ենթահամակարգ<sup>1</sup>: Օրենքը հաշտարար բաժանմունքների տեղաշխատումը կատարում էր հաշվի առնելով Հայաստանի վարչատարածքային բաժանումը (ներառյալ Զանգեզուրը, Նախիջևանի նահանգը, բացառությամբ Կարսի նահանգի), ընդունում էապես ավելացնելով դրանց քանակը: Մինչև Փետրվարյան հեղափոխությունը նույն տարածքում գործում էին ընդամենը իննը հաշտարար բաժին և վեց հաշտարար-քննչական տեղամաս: Ինչպես արդարադատության նախարարությունն օրինագիծը մշակելիս, այնպես էլ Հայաստանի խորհուրդն այն ընդունելիս դեկավարվել էին երեք հիմնադրույթներով՝ դատարանը մոտեցնել բնակչությանը. պահանջվել հաշտարար դատավորների բավարար ծանրաբեռնվածությունը. մեկ հաշտարար բաժնի սահմաններում ընդգրկել «այնպիսի բնակավայրեր ու գյուղական հանայնքներ, որոնք աշխարհագրական և կիմայական պայմաններով ավել կամ պակաս միօրինակ են և կապված են դատավորի կամ քննիչի նստավայրի հետ առևտուական կամ այլ կապերով, կամ հարմար հաղորդակցության ուղիներով»<sup>2</sup>:

Դեռևս կայսրության օրոք գյուղական դատարանների վերացումը դատարանից օգտվելու իմաստով գյուղական բնակչությանը դրել էր բավականին ծանր պայմանների մեջ: Այդ դատարանների միակ առավելությունը մոտիկությունն էր բնակչությանը: Առաջին հանրապետության

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1918, հոդվ. 51, էջ 28-31:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, գ. 1, գ. 79, թ. 125:

պայմաններում արդարադատության նախարարությունը արձանագրում էր. «Ներկայումս զյուղացին, կամ լրիվ հրաժարվում է իր հաճախ ամենից արդար պահանջներից, կամ անցնում է հարյուրավոր վերստեր այնպիսի գործերով, որոնք աշխատանքային օրվա ներկա բանկության պայմաններում ընդհանրապես չեն ծածկում կատարված ծախսերը»: Արդարադատության նախարարության և օրենսդրի կողմից վերը նշված հայեցակարգային մոտեցումը հնարավորություն տվեց հրաժարվել հաշտարար դատավորի օգնականի և հաշտարար-քննչական տեղամասի վարիչի ինստիտուտներից, որպեսի և հաշտարար դատավորին, և՝ դատական քննիչի դարձնի ավելի ազատ, չանրաբեռնված այլ բնույթի գործերով, ինչպես նաև չկիրառել պատվավոր հաշտարար դատավորի ինստիտուտը<sup>1</sup>:

Բացառություն էր արված միայն Նոր-Բայազետի գավառի Բասարգեջարի տեղամասի համար, որտեղ չեղ վերացվում նախկինում եղած միասնական հաշտարար-քննչական բաժանմունքը: Միևնույն անձի կողմից և՝ հաշտարար ընդրատության գործերի քննության, և՝ դատական քննիչի պարտականությունների կատարումը հակասում էր 1918 թ. դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության մեջ հաշտարար բաժանմունքների և քննչական մասերի վերակազմության և նորերի բացման մասին» օրենքի հիմքում դրված սկզբունքներին, սակայն արդարադատության նախարարությունը տվյալ դեպքում հաշվի էր առել տարածքի քնակչության թիվը՝ ընդամենը 22.000 մարդ, ինչպես և «տեղանքի աշխարհագրական պայմանները, քնակչության աղքատությունը», որոնց հետևանքով նաև նախկին «քննիչ-հաշտարար տեղամասի վարիչին թիվ աշխատանք էր հասնում»<sup>2</sup>, իսկ բաժանելով աշխատանքը քննիչի և դա-

<sup>1</sup> Հաշտարար-քննչական տեղամասը՝ վարիչի գլխավորությամբ, ինչպես նաև պատվավոր հաշտարար դատավորը Ազքասնդր Երկրորդի «Դատական հաստատությունների կանոնադրությամբ» սահմանված իրավական ինստիտուտներ էին: Այն տեղանասերում, որտեղ հաշտարար դատավորի վրա բացի իր պարտականությունների կատարումից դրվում էր նաև դատական քննիչի գործառույթի կատարումը, կոչվում էր հաշտարար-քննիչ տեղամաս կամ բաժին: Պատվավոր հաշտարար դատավորների պաշտոնը նախատեսված էր հաշտարար դատավորների ծանրաբեռնվածությունը թերևացնելու համար: Որպես այդպիսին նշանակվում էին անձինք, ովքեր վայելում էին վստահություն և հարգանք, կարող էին իրենց ազդեցությամբ նպաստել «կարգ ու կանոնի» պահպանմանը: Գործեր քննելիս պատվավոր հաշտարար դատավորը ուներ նույն իրավունքները, ինչ որ հաշտարար դատավորը նրանք վարձատություն չին ստանում: Կարող էին գրադեմել պաշտոններ պետական մարմիններում և հասարակական իմնարկներում:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 29, թ. 15:

տավորի միջն՝ անպայման կխախտվեր դրանցից յուրաքանչյուրին պատշաճ և բավարար ծանրաբեռնվածությամբ ապահովելու սկզբունքը:

Հաշտարար բաժինների և քննչական տեղամասերի տեղաբաշխումը, ինչպես տեսնում ենք, կատարված էր նախապատերազմական և նախահեղափոխական, սովորական, խաղաղ պայմանների չափանիշներից ենելով և նախարարությունում նույնիսկ մտահոգված էին, որ նման քանակով հաշտարար դատավորները և դատական քննիչները չեն ունենալու բավարար ծանրաբեռնվածություն:

Օրենսդիր մարմնի կողմից հաշտարար դատավորի և դատական քննիչի գործառույթների առանձնացվածության սկզբունքը խախտվեց նաև հետագայում, եթե նաևնակի ընթացիկ օրենքներով ստեղծվում էին նոր հաշտարար բաժիններ ու քննչական տեղամասեր: Խոսքը գնում է Իջևանի գավառի նախին, որում, համաձայն 1918 թ. դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության մեջ հաշտարար բաժանմունքների և քննչական մասերի վերակազմության և նորերի բացման մասին» օրենքի, գործում էր մեկ հաշտարար բաժանմունք: Հայաստանի խորհրդարանի 1920 թ. մարտի 26-ի օրենքով նշված գավառը բաժանում էր երեք շրջանների և քննչական-հաշտարար բաժիններ հիմնադրվում էին Շամշադինի ու Կորիի դատական շրջաններում: Բայց քանի որ դրանով Իջևանի քննչական տեղամասի և հաշտարար բաժանմունքի ծանրաբեռնվածությունը, քնականաբար, կապակասեր, ապա նշված օրենքի 2-րդ հոդվ. համաձայն այդ երկու առանձին մարմինները վերացվում էին, և ստեղծվում էր միասնական քննչական-հաշտարար բաժանմունք՝ Իջևանի համար<sup>1</sup>: Օրենքի նախագիծը մշակել էր արդարադատության նախարարությունը, հիմք ընդունելով Դիլջան ուղարկված խորհրդարանական հանձնաժողովի շրջագայության արդյունքում կազմված գեկուցագիրը, որը նմանակարար էր համարում արդարադատության իրականացման գործընթացը Շամշադինի և Կորիի տեղամասերում, չքննված գործերի կուտակման, անիշխանության հետևանքով<sup>2</sup>:

Համանման առաջարկությամբ արդարադատության նախարարությանն էր դիմել նաև Իջևանի գավառային ինքնավարությունը, որն հօգուտ այդ մարմինների ստեղծման ընդունում էր նաև այն հանգամանքը, որ «Իջևանի շրջանը լեռնային է և նրա զանազան մասերի միջև եղած հա-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. Պառլամենտի, Երևան, 1920, թիվ 6, հոդվ. 56, էջ 44-45:

<sup>2</sup> Տե՛ս «Հառաջ», բերք, Երևան, 1920, թիվ 62:

դորդակցության միջոցները անբավարար են, իսկ ձմեռվա որոշ ամիսներին հաղորդակցությունը նույնիսկ խստ ընդհատվում է»<sup>1</sup>:

Խորհրդարանում օրինագծի քննարկման ընթացքում որոշ պատգամավորներ դեմ արտահայտվեցին օրինագծի ընդունմանը՝ գտնելով որ «չի կարելի միևնույն անձնավորության մեջ ամփոփել քննիչի և դատավորի կոչումը: Դա մի մեռած ծն է, որ մեր պատշաճնոր պիտի միանգամայն մերժի»<sup>2</sup>: Այս տեսանկյունից հետաքրքիր է արդարադատության նախարար Ա. Չիլինգարյանի պատասխանը այդ պատգամավորներին, որից երևում է որ նախարարությունը, կարծես թե, դիմել էր յուրօրինակ իրավական փորձարարության: «Օրինագծով Իշխանի գավառը բաժանվում է երեք դատական շրջանների, որ միանգամայն բավարար է տեղի կարիքներին այն ձևով, ինչ ձևով առաջարկվում է այստեղ նախարարության կողմից, ոչ մի միտք չունի առանձին-առանձին քննչական և հաշտարար բաժիններ հատատել, քանի որ չկա այդքան գործի պահանջ... Եթե հնար լիներ բոլոր դատական շրջանները վերածել այդ ձևին, ես, որպես արդարադատության նախարար, կամեի, բայց ցանկալի կլիներ մի փոքրիկ շրջանում կատարել այդ փորձը, որի հետևանքները և կդառնան ուղեւոյց ապագայի համար»<sup>3</sup>:

1918 դեկտեմբերյան դատարանակազմական օրենքները չեն նախատեսել հաշտարար բաժինների ստեղծում Կարսի նահանգում, քանի որ այն Բարումիի պայմանագիրը շեղալ հայտարելուց հետո գտնվում էր անզինական գործերի իրամանատարության կառավարման ներքո: Հետագայում, երբ Կարսի նահանգը հանձնվեց Հայաստանին, Հայաստանի խորհուրդը 1919 թ. փետրվարի 4-ին ընդունեց օրենք «Կարսի շրջանում երեք հաշտարար բաժիններ հիմնելու մասին»<sup>4</sup>: Ամբողջ նահանգի համար երեք հաշտարար բաժինների հիմնադրումը շատ քիչ էր, ինչի մասին 1919 թ. ընթացքում արդարադատության նախարարությանը անընդհատ ահազանգում էր Կարսի քաղաքացիական նահանգապետը, պահանջելով հիմնադրել նոր բաժիններ<sup>5</sup>: Միայն 1920 թ. ապրիլի 5-ին Հայաստանի խորհրդարանի ընդունած օրենքով Կարսի շրջանում հիմնադրվեցին նոր

հաշտարար բաժիններ՝ Սարիղամիշում և Կարայալում<sup>6</sup>: Այդպիսով նահանգում հաշտարար բաժինների ընդհանուր քանակը հասավ իինազի:

Դատական քննիչի և հաշտարար դատավորի պաշտոնների ամեամատենելիության սկզբունքը խախտվում էր նաև ոչ օրենսդրական ճանապարհով, երբ պաշտոնների թափուր մնալու պատճառով որևէ բաժնի հաշտարար դատավորի կամ դատական քննիչի պարտականությունների կատարումը դրվում էր հարևան վարչատարածքային միավորի հաշտարար դատավորի կամ քննիչի վրա: Այդպիսի ձևախեղումը ևս բողոք էր հարուցել Կարսի նահանգապետի մոտ: «Եթե նախկին խաղաղ, բարենպատ պայմաններում քննիչի կամ հաշտարար դատավորի վրա դնելով հարևան տեղամասի վարումը մենք միայն խուսափվում էինք՝ կատարելով ձևական գործողություն ու գերազանց հասկանալով, որ այդ տեղամասը իրականում մնում էր և առանց քննության, և առանց դատարանի, ապա մեր օրերում այդ մասին խուելն նույնիսկ ավելորդ է: Ներկայումս ոչ մի մարդ Արդահանից հարյուր վերաս չի անցնի ներկայանալու համար Կարսի հաշտարար դատավորին, և Կարսի հաշտարար դատավորը միայն բողի վրա կիամարվի նաև Արդահանի հաշտարար դատավոր»<sup>7</sup>:

Վերոբերյալ օրենքների հիմն վրա 1920 թ. երկրորդ կիսամյակի համար մշակված և հուլիսի 20-ին հաստատված արդարադատության նախարարության նախահաշիվներին և հաստիքացուցակներին համաձայն հանրապետությունում հիմնադրված էին քսանյոթ հաշտարար դատարաններ և չորս հաշտարար-քննչական բաժիններ<sup>8</sup>, որոնցից, չհաշված ապատաճ տարածների հաշտարար դատարանները, գործում էին քսաներեքը: Գործող քաներեք հաշտարար դատավորներից, ըստ Երևանի շրջանային դատարանի նախագահի գեկուցագրի, յորը դատավորներ չունեին իրավաբանական կրթություն<sup>9</sup>:

Հաշտարար դատարանի դատական շրջանի սահմանների որոշումն ու փոփոխումը վերապահված էր արդարադատության նախարարության իրավասությանը, իսկ դրանց նստավայրը սահմանվում էր օրենքով:

Առաջին հանրապետության դատարանակազմական օրենսդրությունը չեր նախատեսում՝ հաշտարար շրջանի ինստիտուտը: Հաշտարար շրջանը Կենտրոնական Ռուսաստանում կայսրության օրոք իրենում նե-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, ։ 20, թ. 11:

<sup>2</sup> Տե՛ս «Հառաջ», թերթ, Երևան, 1920, թիվ 62:

<sup>3</sup> Տե՛ս «Հառաջ», թերթ, Երևան, 1920, թիվ 64:

<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1919, հոդվ. 81, էջ 50:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 210, գ. 1, ։ 82, թ. 2:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. Պառլամենտի, Երևան, 1920, թիվ 7, հոդվ. 61, էջ 53:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 210, գ. 1, ։ 82, թ. 2:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, ։ 119, թ. 1-8:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, ։ 107, թ. 355:

րառում էր մի քանի հաշտարար տեղամասեր: Ամեն մի հաշտարար շրջանում գործում էր հաշտարար դատավորների համագումար, որը վերաբննիշ ատյան էր տեղամասային հաշտարար դատարանների համար: Հայաստանում հաշտարար դատարանների համար վերաբննիշ ատյան էր համարփում Երևանի շրջանային դատարանը, այնուհետև նաև Կարսի ու Ալեքսանդրապոլի շրջանային դատարանները՝ համապատասխանարար իրենց նահանգի հաշտարար դատարանների համար: Հաշտարար ընդդատության գործերով վճռաբեկ ատյանը Հայաստանի Սենատն էր:

Հայաստանի Հանրապետությունում հաշտարար դատավորը ոչ թե ընտրովի էր, այլ նշանակովի: Հաշտարար դատավորին արդարադատության նախարարի ներկայացմամբ նշանակում էր Նախարարների խորհուրդը: Հաշտարար դատավորը առանց սեփական ցանկության չէր կարող արձակվել պաշտոնից և ոչ էլ տեղափոխվել մեկ վայրից մյուսը առանց համաձայնության: Նրան կարող էին ժամանակավոր կերպով հեռացնել պաշտոնից դատի տրվելու դեպքում, իսկ ընդհանրապես արձակել միայն քրեական դատարանի դատավճռով:

Հաշտարար բաժինը գիսավորում էր հաշտարար դատավորը, իսկ քննչական-հաշտարար բաժինը՝ «բաժնի կառավարիչը»: Հաշտարար դատավորի ապարատը ըստ հաստիքացուցակի կազմված էր քարտուղարից, դատական կատարածուից, գրասենյակային ծառայողից, սուրհանդակից և պահակից<sup>1</sup>:

**1.2. Հաշտարար դատարանի ընդդատությունը:** Հաշտարար դատարանը միանձնյա դատական մարմնն էր, որի իրավասությունը սահմանված էր օրենսդրությամբ: Նա ըստ էության քննում և լուծում էր մանր քրեական և քաղաքացիական գործեր, ինչպես նաև վարչական գործերը: Հաշտարար դատարանների քննությանը ընդդատյա էին մինչև իննա հարյուր ոտրի հայցագին ունեցող քաղաքացիական գործերը, խախտված տիրույթների վերականգնման հայցերով գործերը: Բացի այդ հաշտարար դատավորը կարող էր իր վարույթ ընդունել և քննել ցանկացած քաղաքացիական գործ (անկախ հայցի գնից) այն դեպքում, եթե երկու կողմերը խնդրում էին դատարանին լուծել գործը «խողով», սակայն պայմանով, որ հաշտարար դատավորի վճռոր համարվելու էր վերջնական և գանգատարկման ենթակա չեր<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 69, թ. 55 և ֆ. 206, գ. 1, գ. 119, թթ. 1-8:

<sup>2</sup> Տե՛ս **Воробейкова Т.У.** Преобразование административного аппарата, суда и тюремной системы России во второй половине 19-го века. Киев, 1973. էջ 45:

Հաշտարար դատարաններին ընդդատյա քրեական գործերից ամենից կարենը էին էին՝

ա) կառավարման կարգի դեմ ուղղված հանցանքները՝ իշխանությունների կարգադրությունների, պահանջների, որոշումների չկատարումը. միջիցիոններին վիրավորելը և չենթարկվելը. իշխանությունների կարգադրությամբ ցուցադրված զինանշանների, հայտարարությունների փչացումը և ոչնչացումը.

բ) բարեպատշաճության, կարգուկանոնի, հասարակական հանգստության դեմ ուղղված հանցանքներ՝ եկեղեցում սահմանված կարգերի խախտում. կրիվը հասարակական վայրերում. մուրացկանությունը և այլն).

գ) հասարակական բարեկարգության դեմ ուղղված հանցագործություններ՝ գետերի, ջրանցքների, աղբյուրների, ջրհորների աղտոտում. առանց քոյլտվության ստորեկրյա աշխատանքների կատարում. առանց քոյլտվության կամ ուրիշի որսորդական վկայականով որսը. ձկնորսությունը արգելված ժամանակաշրջանում).

դ) անձնագրերի կանոնադրության խախտման վերաբերյալ գործերը.

ե) անձնական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործեր՝ գենք և պայրուցիկներ պահելը.

զ) որիշի սեփականության դեմ ուղղված հանցագործություններ՝ ուրիշի գույքը ինքնազլուխ օգտագործելը. որիշի անտառներին վնաս պատճառելը. հափշտակում.

Է) մինչև երեք հարյուր ուրիշի արժեք ունեցող առարկաների և գույքի գողության գործերը<sup>1</sup>:

1918 թ. դեկտեմբերի 6-ի «Վարչական գործերին վերաբերող դատարանների մասին» օրենքով հաշտարար դատարանների ընդդատությանն էին հանձնվում նաև այն գործերը, որոնք ընդդատյա էին միանյա վարչական դատավորներին<sup>2</sup>:

Վարչական արդարադատությունը մի կողմից քաղաքացու կամ կազմակերպության և մյուս կողմից պետական կառավարման մարմնների միջև ծագած վարչական վեճերի լուծման կարգ է: Այն որպես

<sup>1</sup> Տե՛ս Устав о наказаниях налагаемых мировыми судьями. В кн. Российской законодательство X-XX веков. Том 8, Судебная реформа. М., 1991. էջ 395-419:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1918, հոդ. 49, էջ 27:

հատուկ համակարգ պետական շինարարության պրակտիկայում ձևավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսին, որպես իրավական պետության անհրաժշտ ձևականական տարր, որի սկզբունքներից են պետական կառավարման ոլորտում քաղաքացիների սուբյեկտիվ իրավունքների երաշխափությունը և վարչական արդարադատության մարմինների անկախությունը մյուս իշխանությունների մարմիններից: Վարչական արդարադատությունը որպես վարույթային ծև Ռուսական Կայսրության օրոք չէր նախատեսված: Այն իմանադրվել էր միայն Փետրվարյան հեղափոխությունից հետո, Ժամանակավոր կառավարության կողմից<sup>1</sup>:

Հայաստանում վարչական գործերով առաջին ատյան էր ճանաչվում հաշտարար դատավորը: Երկրորդ՝ վերաբննիշ ատյանը Երևանի շրջանային դատարանի վարչական բաժանմունքն էր, իսկ վճռաբեկը՝ Հայաստանի Սենատը: Վարչական դատարանները քննում էին հետևյալ վեճերը՝ պետական մարմինների միջև. մի կողմից կառավարական կոմիսարների, մյուս կողմից տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների միջև. կառավարական մարմինների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ու քաղաքացիների միջև: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների, գործողությունների, կարգադրությունների և բացքողումների դեմ գանգատներով վարչական դատավորին կարող էին դիմել ինչպես պետական մարմինները և պաշտոնատար անձինք, այնպես էլ մասնավոր անձինք:

Հաշտարար դատավորները դատավճիռներ կայացնելիս կիրառում էին այնպիսի պատժամիջոցներ, ինչպես՝ տուգանքը, կալանքը մինչև երեք ամիս, բանտարկությունը մինչև մեկ տարի ժամկետով: Որոշ գործերով հաշտարար դատավորները կայացնում էին վերջնական դատավճիռներ և վճիռներ: Դրանք մինչև երեսուն ոուրիշ հայցագին ունեցող քաղաքացիական գործերն էին և քրեական գործերը, որոնցով կայացվում էր արդարացման դատավճիռ կամ դատավճիռներ՝ գուգորդված այնպիսի պատժամիջոցների կիրառմամբ, ինչպես նկատողությունը, պարասավանքը, դիմողությունը, մինչև տասնիննազ ոուրիշ տուգանքը կամ մինչև երեք օր կալանքը: Այդ վճիռները և դատավճիռները ենթակա էին միայն վճռաբեկ բողոքարկման: Հաշտարար դատարանների մնացած բոլոր վճիռները և դատավճիռները օրենսդրությամբ սահմանվում էին որպես «ոչ վեր-

նական»: Դա նշանակում էր, որ կողմերը կամ դատապարտյալը վերաքննիչ գանգատները բերելու իրավունք ունեն:

Օրենսդրությամբ սահմանված հաշտարար դատավորների վերը նկարագրված ընդդատությունը հետագայում ենթարկվեց փոփոխությունների մի քանի անգամ: **Առաջին** փոփոխությունը կատարվեց Նախարարների խորհրդի կողմից 1919 թ. մայիսի 9-ին ընդունված «Հաշտարար ենթակայության լրացման նախն ժամանակավոր օրենքով»<sup>1</sup>: Դրա օրինագիծը մշակել էր արդարադատության նախարարությունը: Նախարարների խորհրդը իր կազմով ձեռնահաս չինելով իրավաբանական հարցերում մանրակրկիտ չէր խորացել հարցի եռթյան և օրինագիծի բովանդակության մեջ, ընդունել էր այն ինքնարերարա: Արխիվային նյուուրերի մեջ պահպանվել է այս օրենքի հաստատված բնօրինակը Նախարարների խորհրդի գործերի կառավարչի ստորագրությամբ<sup>2</sup>: Բայց կա նաև ավելի ուշ՝ «Կառավարության լրաբեր» պաշտոնաթերթում հրատարակված տեսքստը: Այս երկու փաստաթերթի համեմատական ուսումնասիրությունից երևում է, որ դրանք էականորեն տարբերվում են իրարից: Լրաբերում հրատարակված օրենքը արդեն խմբագրված ու սրբագրված է, գերծ թերություններից: Ընդ որում դա արվել է օրենքն ընդունելուց հետո միայն և, հավանաբար, դատական պալատի դատախազի 1919 թ. հունիսի 7-ին թվագրված ու արդարադատության նախարարին ուղղված գեկուցագրի հիման վրա<sup>3</sup>: Ստանալով օրենքի տեքստը ի տեղեկություն և ի կատարում՝ դատախազը նրանում հայտնաբերել էր «մի շարք խեղաքանություններ, բացքողումներ, անհասկանալի մասեր, որոնք պահանջում են իմանավորացես վերանայել և վերափոխել այդ օրենքի խմբագրությունը»<sup>4</sup>: Ինչը և արվել է պաշտոնական հրատարակության ժամանակ, բայց ոչ օրենսդրական, այլ «կուլիային» ընթացակարգով: Ասկածը պատկերավոր դարձնելու համար թերենք մի օրինակ քոյլ տրված սխալներից: Այսպես, օրենքի բնօրինակի 171-րդ հոդվ. 3-րդ կետում ամրագրված է «եթե գողացվածի արժեքը չի գերազանցում 5 ռ»<sup>5</sup>: Ըստ դատախազի դիտողությունների պետք է լիներ ոչ թե «գողացվածի» այլ «հափշտակվածի»: Տարբերությունն ակնհայտ է: Միաժամանակ դատախազը հաշվի առնելով ոուրլու արժեզրկման շափերը առաջարկում էր հափշտակված իրի արժե-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 93:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 33, թ. 64-66:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 29, թ. 74-75:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 29, թ. 74:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 33, թ. 64:

<sup>1</sup> Տե՛ս **Երօսկին Հ.Պ.** Իстория государства и правоведение..., էջ 331:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 6, թ. 151:

քը բարձրացնել մինչև հիսուն ոռոբիլ: Պաշտոնական հրատարակությունում հաշվի է առնված այդ կետի վերաբերյալ դատախազի առաջին դիտողությունը, սակայն ամրագրված է լրիվ ուրիշ դրամական չափ («եթե հափշտակվածի արժեքը 30 ռ. ավելի չէ»), որ չի համապատասխանում ոչ բնօրինակի, ոչ էլ դատախազի առաջարկի հետ<sup>1</sup>:

Ինչպէս էր պայմանագրոված հաշտարար դատարանների ընդդատության օրենսդրական վերանայումը: Օրենսդրությունը ընդհանուր և հաշտարար դատական մարմինների միջև քրեական և քաղաքացիական գործերով ընդդատության սահմանազատնան հիմքում դրել էր նաև հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի չափը, կամ քաղաքացիական գործերով հայցի գինը: Այդպիսի օրենսդրական սահմանազատման շարժադրիք այն դատողությունն էր, որ հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի ոչ նշանակալի լինելը կամ հարուցված հայցի փոքր արժեքը չին արդարացնելու տուժողի կամ հայցվորի կրած դժվարությունները և ծախսերը՝ կապված դեպքի վայրից բավականին հեռու գտնվող շրջանային դատարան ներկայանալու հետ: Միաժամանակ այդպիսի սահմանազատումը հնարավորություն էր տախս դատարանը՝ ի դեմս հաշտարար դատավորի, մոտեցնել բնակչությանը:

Սակայն Հայաստանի առաջին հանրապետության տնտեսական կյանքի ճգնաժամի, պետական բյուջեի բավականին մեծ պակասորդի և որպես հետևանք ոռոբլո խիստ արժեզրկման ու զների անընդհատ աճի պայմաններում անհրաժեշտություն էր առաջանում վերանայել օրենսդրությամբ սահմանված այդ կայուն գումարների չափերը, որ բխում էր ինչպես գործին մասնակցող անձանց շահերից, այնպես էլ հանրապետությունում արդարադատությունը անարգել և արագ իրականացնելու պահանջից: Հակառակ դեպքում ծագում էին էական դժվարություններ գործերի արագ ընթացքի համար: Արժեզրկման պայմաններում քննիչների մոտ սկսվում էին կուտակվել մեծ քանակությամբ գործեր, որոնք նախկինում ենթակա էին հաշտարար դատարանի ընդդատությամբ: Սուագում էր, որ այդ բնույթի գործերը ինքնարերաբար, առանց օրենսդրի միջամտության, փոխում էին իրենց ենթակայությունը և ընդդատությունը: Այդպիսի գործերի կուտակումը քննիչներին հնարավորություն չէր տախս

գրադակել ավելի կարևոր և էական քրեական գործերի նախաքննությամբ: Գործերի ընդդատության նմանօրինակ փոփոխություն և կուտակում, որ չէր բխում հատկապես շահազրգոված կողմի շահերից, տեղի էր ունենում նաև շրջանային դատարանի և քրեական, և՝ քաղաքացիական բաժանմունքներում:

Այսպիսի պայմաններում արադարադատության նախարարությունը դեռևս 1919 թ. սկզբին մշակել էր համապատասխան օրինագիծ և ներկայացրել էր Նախարարների խորհուրդ, որտեղ այն հավանության արժանանալով, օրենսդրական նախաձեռնության կարգով ուղարկվել էր Հայաստանի խորհուրդ: Օրենսդրական աշխատանքի տապալումը Հայաստանի խորհրդում քաղաքական կուտակցությունների ոչ կառուցողական դիրքորոշման պատճառով ձգձգեց օրենքի ընդունումը: Այդ հանգամանքն էլ դարձավ քննչական տեղամասերում ու շրջանային դատարանում գործերի կուտակման պատճառներից մեկը: Օրենքը հետագայում ընդունվել է օրենսդրական լիազորություններով օժտված կառավարության կողմից: Այն սահմանում էր, որ գործի ընդդատությունը որոշելիս քրեական գործերով պատճառված վնասի չափը հասցվում է 3.000 ռ., քաղաքացիական գործերով հայցագին սահմանը հասցվում էր մինչև 4.000 ռ.: Միաժամանակ մինչև 500 ռ. հայցագին ունեցող վճռված քաղաքացիական գործով արգելվում էր վերաբննիչ գանգատարկումը (նախկինում մինչև 30 ռ. հայցագին)<sup>1</sup>:

Արժեզրկման տեմպերն այնքան արագ էին և մեծ, որ հաշտարար դատարանի քրեական և քաղաքացիական ընդդատությունը որոշող այդ գումարներն ավելացվեցին երկրորդ անգամ՝ խորհրդարանի 1920 թ. մարտի 22-ի օրենքով՝ տաս անգամ<sup>2</sup>, ապա՝ երրորդ անգամ՝ Նախարարների խորհրդի 1920 թ. օգոստոսի 9-ի օրենքով՝ ևս իններ անգամ<sup>3</sup>: Եթե հաշտարար դատարանին ընդդատյա քաղաքացիական գործի հայցագինը սկզբնական մինչև 500 ռ. էր, հետագայում սահմանվեց մինչև 4.000 ռ., այնուհետև դարձվեց 40.000 ռ., վերջում այն հասցվեց մինչև 200.000 ռ.:

**1.3. Նոտարական գործունեության իրավական կարգավորումը:** Նոտարական գործունեության կառավարման և այդ առթիվ ծագող հասարակական հարաբերությունների կարգավորման հիմնական իրավական

<sup>1</sup> Հանրապետության օրենսդրի մարմինների գործունեության մեջ նմանատիպ օրինագծեր և օրենքներ հանդիպում են բավականին շատ: Դրանց առկայությունը մեծապես պայմանավորված էր հայերեն իրավաբանական հասկացությունների, եզրույթների համակարգի բացակայությամբ և օրենսդրի մարմինների անդամների ու իրավաբանների անձեռնահասարական կամ հայերենի վատ իմացությամբ:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 33, թ. 65:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. Պառլամենտի, Երևան, 1920, թիվ 5, հոդվ. 46, էջ 37:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 58, թ. 81 և թ. 199, գ. 1, գ. 118, 2-րդ մաս, թ. 182:

աղյուրը «Նոտարական մասի կանոնադրությունն» էր<sup>1</sup>, որն առանց փոփոխությունների և լրացումների գործել է Հայաստանում և, նույնիսկ, թարգմանվել է հայերեն: «Նոտարական մասի կանոնադրությունը» սահմանում էր, որ նոտարական գործառույթն իրականացվում է հաստիքային նոտարների և շրջանային դատարանների նոտարական արխիվներին կից գործող ավագ նոտարների միջոցով, դատարանների հսկողության տակ (հոդվ. 1): Միևնույն ժամանակ «Նոտարական մասի կանոնադրությունը» արդարադատության նախարարին՝ շրջանային դատարանի ներկայացմանը, հնարավորություն էր տալիս նոտարի պարտականությունների կատարումը դնելու տեղական հաշտարար դատավորների վրա այն վայրերում, որտեղ նոտար նշանակվելու ցանկություն ունեցող անձինք քիչ էին (հոդվ. 7): Հաստիքային նոտարների ինստիտուտը Հայաստանում կիրառություն չգտավ: Նոտարների պարտականությունները այստեղ կատարում էին տեղական հաշտարար դատավորները: Համաձայն օրենքի նոտարները ենթակա էին այն շրջանային դատարանին, որի դատական շրջանում գտնվում էր նրանց նատավայրը, այսինքն՝ գործում էին նրանց հսկողության ներքո: Իրենց պաշտոնեական պարտականությունները նոտարները պետք է կատարեին միայն այդ դատական շրջանի տարածքում, հակառակ դեպքում նրանց ակտերն իրավաբանական ուժ չունեին:

1920 թ. ապրիլին Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանային դատարանների հիմնադրմամբ այս դատարանների կազմում ևս սահմանվեց ավագ նոտարների պաշտոն, որպես նոտարական արխիվների վարիչներ, որոնց պարտականությունն էր նաև պահպանել և վարել նոտարական գանձանական գրքերը, ռեստորնները, ակտերը, փաստարդերը, կնիքները և այլն<sup>2</sup>: Համաձայն «Դատական մասի պաշտոնատար անձանց նշանակման մասին» օրենքի (1919 թ. հուլիսի 25) ավագ նոտարները համարվում էին պետական ծառայող և իրենց կարգավիճակով հավասար էին շրջանային դատարանի անդամներին, հետևաբար, նրանց նշանակում էր Նախարարների խորհուրդը, արդարադատության նախարարի ներկայացմամբ:

Նոտարների (տվյալ դեպքում հաշտարար դատավորների), ավագ նոտարների իրենց պարտականությունները կատարելու ընթացքում ոչ ճիշտ գործողությունների դեմ գանձատները, ինչպես նաև իրենց պար-

տականությունները կատարելուց հրաժարվելու դեմ գանձատները տրվում էին այն շրջանային դատարանին, որի շրջանում գործում էր այդ նոտարը: Շրջանային դատարանի այս առթիվ կայացրած վճռումները կարող էին գանձատարկվել դատական պալատ<sup>1</sup>:

#### 1.4. Հաշտարար դատարանների գործունեության հիմնախնդիրները:

Օրենսդրականակերպական առումով, կարծես թե, ամեն ինչ արվել է հաշտարար դատարանների գործունեությունն արդյունավետ դարձնելու, այն պատշաճ և բնակչությանը մոտ կանգնած դատական ատյանի վերածելու համար: Սակայն իրականության մեջ այդ քայլերն անբավարար էին, որովհետև ինչպես ցույց են տալիս արխիվային փաստաթղթերը, հատկապես, արդարադատության նախարարության կողմից հաշտարար բաժինների աշխատանքի ստուգումները, խորհրդարանական գանձանականական գանձանակավոր հանձնաժողովների գեկուցագրերը, հաշտարար արդարադատությունը ևս հեռու էր բավարար գնահատվելուց<sup>2</sup>: Այսպես օրինակ՝ Էջմիածնի և Սուրմալուի գավառներ ուղարկված խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովը 1919 թ. դեկտեմբերի 29-ին խորհրդարանին ներկայացրած գեկուցագրում արձանագրում էր, որ «Նորդուղությի հաշտարար դատարանում «գործերը ձգձգվում են, բանավոր գանձատներ չեն լվացմ և դատարանի դիմանք դարձել է խնդիր գրելու բյուրը: Խզիդիր հաշտարար դատարանը շնորհիվ օրյեկտիվ պայմանների անկանոն է գործում<sup>3</sup>... Այստեղ դատարանը ենթակա է արտաքին ազդեցուր-

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, հոդվ. 60 և 63:

<sup>2</sup> Ուստասատնում ևս հաշտարար դատարանների ենթահամակարգի և՝ հիմնադրումը, և՝ գործունեությունը հիմնախնդիրային էր: Այդ դատարանների ստեղծման ճանապարհին կային բազմաթիվ խոչընդոտներ: Ոչ բոլոր վայրերում էր, որ կարելի էր գտնել հաշտարար դատավորների թեկնածուներ: Հաճախ տեղական իշխանությունները սարուտածի էին ենթարկում հաշտարար դատարանների ծևափորումը, քանի որ դրանցում տեսնում էին վտանգ իրենց արտոնությունների համար: Կայսրության որոշ մասերում հաշտարար դատարանները, բացի Սոնկայի և Սանկտ-Պետերբուրգի նախանգներից, վերացվեցին և նրանց լիազորությունները հանձնվեցին զանազան գործադրի մարմնների: Դա, ըստ Էության, հետադիմական քայլ էր, որովհետու խախտում էր գործադրի և դատական իշխանությունների առանձնացվածության սկզբունքը: 1912 թ. հաշտարար դատարանների համարզը մասսամբ վերականգնվեց: 1917 թ. դրույթային կայսրության իննառունյոր նահանգներից հաշտարար դատարանները գործում էին միայն քանի ուսանումը (տե՛ս Վсемирная история государства и права. Энциклопедический словарь. М., 2001. էջ 215-216):

<sup>3</sup> Որպես օրյեկտիվ պայմաններ նկատի է ունեցվել ազգամիջյան բախումները և դրա հետ կապված պետական կառավարման բարդությունները:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ գԱՊԿԱ, Պոլոցություն օ հոտարական մասի կանոնադրությունն» էր 1, հոդվ. 1: В своде «Полный свод законов Российской империи», профессора Савича, 1904.

Часть 1. էջ 5:

<sup>2</sup> Տե՛ս նոյն տեղը, հոդվ. 42, ինչպես նաև ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 113, թթ. 1-8:

յան, ի վիճակի չէ վերահասու լինել բոլոր գործերին, օրինակ քննիչը ոչ մի փաստաբուր չունի Դրա գյուղի դեպքերի մասին: Հունիսի 17-ին Իգդիրում զինվորական դատարանը մահվան է դատապարտել Շայիր Թայի Օղլուն: Այդ ժամանակ Հայաստանում մահվան պատժի իրավունք չի եղել: «Դատավճիռը գործադրված է օգոստոսին»<sup>1</sup>:

Արդարադատության նախարարության դիմանի տեսուչը, նախարարի հանձնարարությամբ իրականացնելով Երևանի առաջին քաղաքամասի հաշտարար բաժնի վերասուգում, նախարարին ուղղված գեկուցագործ արձանագրում է. «Սույն տարվա մարտի 17-ից մինչև հունիսի 22-ը, երբ հաշտարար դատավորն իրեն տրված արձակուրդը վերջանալուց հետո սկսել է իր պարտականությունները կատարել, ունկնդրության համար նշանակված են եղել երկու հարյուր տասնիննը քրեական գործ: Եթե նկատի առնենք սույն մարտի 17-ից մինչև հունիսի 22-ը հաշտարար դատավորի վարույթում գտնվող չորս համար քրեական գործերի ընդհանուր թիվը և այդ ժամանակաշրջանում նշանակված երեսունին նիստերի թիվը, ուրեմն պետք է եղանակացնել, որ միջին թվով նշանակված է եղել յուրաքանչյուր նիստի համար վեց գործ: Նշանակված երկու հարյուր տասնիննը գործերի ընդհանուր թիվը անհնարին եղավ հաստատ իմանալ վճռված գործերի թիվը, որովհետև նիստերի մատյանի մեջ սիստեմատիկ կերպով գրառումներ չեն արված այս կամ այն գործերի վերջացած լինելու մասին: Ես կարողաց միայն տասնվեց գործի վերջացած լինելը հաստատ իմանալ: Թե հունիսի 2-ի, 4-ի և 18-ի նիստերին գործերն ինչպես են վճռված, այդ մասին տեղեկություններ չկային հաշտարար բաժնում:

Հաշտարար դատավորի մոտ ավելի լավ վիճակում չէ և քաղաքացիական դատաքննությունը ... Դատարանի նիստերը նշանակվում են շաբաթը երեք անգամ: Հաշտարար դատավորը կողմերին կանչում է առավոտյան ժ. 10-ին, իսկ ինքը դատարան է գալիս ժ. 11-12-ի արանքում: Եղել են դեպքեր, երբ եկել է ժ. 1-ին և 2-ին: Այն օրերը, երբ նիստեր չկան, դատավորը բնավ չի գալիս բաժնի:

Դիմանը քառային վիճակի մեջ է: Այբբենական գիրք չի պահպան: Այս կամ այն տեղեկանքները ստանալու համար խնդրողներն ամբողջ ժամերով կանգնած են մնում դիմանատանը: Հաշտարար դատավորը, քարտուղարի ասելով, ոչ մի հսկողություն չի իրականացնում դիմանի վրա: Հաշտարար դատավորի որոշումը վկաներին տուգանելու մասին դիմանը երեք ի կատար չի ածում: Քարտուղարն ինքն է իր հայեցողութ-

յամբ նշանակում գործերի ունկնդրությունը: Մի խոսքով, գործերի դրությունը հաշտարար բաժնի մեջ չափազանց անբավարար է»:

Հաշտարար դատարանների այդպիսի անգործությունը նեծայիս պայմանավորված էր նաև օրյեկտիվ կարգի հանգանաքներով՝ բնակչության գինվածությամբ. բնակավայրերի առկայությամբ, որտեղ մուտք չէին գործում ուժային պետական կառույցները. միլիցիան, էլ որ մնաց հաշտարար դատավորը կամ դատական քննիչը: Հաշտարար դատարանների գործունեության վրա բացասական իմաստով էին ազդրում նաև զանազան արտակարգ լիազորություններով օժտված պետական մարմինները, դրանց միջամտությունը արդարադատության իրականացման գործնքացին: Մինչդեռ միայն դատավորի անկախության հիմնարար սկզբունքի պահպանման դեպքում էր հնարավոր հաշտարար և մյուս դատարանների արդյունավետ գործունեությունը: «Քաղաքացին և տեղական ինքնավարությունների ներկայացուցիչները, քաղաքական կուսակցությունների, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներն իրենց իրավունք են վերապահում գնահատելու անձանց և միջամտելու դատական իշխանության գործունեությանը, ունենում են հսկողություն նրանց վրա, պահանջում հանել դատավորներին պաշտոնից կամ փոխադրել և այլն»: Սա քաղաքածք է Երևանի շրջանային դատարանի նախագահի գեկուցագրից՝ ուղղված արդարադատության նախարարին: Նույն գեկուցագրում մատնանշվում են դատական մարմինների գործունեությանը միջամտելու պվեխ կոնկրետ օրինակներ. «Դաշնակցություն կուսակցության Ախտայի կոմիտեի ներկայացուցիչը միջամտել է Ախտայի հաշտարար դատավոր Հարությունյանի՝ կալանավորներին այլ շինություն տեղափոխելու կարգադրությանը և վերջինիս հայտարարել է դատավորի պաշտոնում իր հետագա պաշտոնավարության անընդունելիության մասին»:

Չատ դեպքերում հաշտարար դատավորները չէին կարողանում ի կատար ածել նաև իրենց ընդունած դատավճիռները և վճիռները, որովհետև միլիցիան և զինվորական իշխանությունները պատշաճ օգնություն ցույց չէին տալիս դատարանին, նոյնիսկ այնպիսի հասարակ գործով, ինչպես օրինակ՝ բնակարանից վտարելը: Կարելի է շատ օրինակներ բերել, բայց կարծում ենք այսքան էլ բավական է այն մթնոլորտը և պայմանները ներկայացնելու համար, որոնցում գործում էին հաշտարար դատավորները, տեղամասային դատական քննիչները:

**1.5. Հաշտարար դատական ենթահամակարգի բարեփոխման նախագիծը:** 1919 թ. օգոստոսին Հայաստանի նորընտիր խորհրդարանի

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 51, թ. 4:

կողմից վարչապետ ընտրված Ա. Խատիսյանի կառավարությունն իր «Հայտարարագրում» պարտավորվում էր արդարադատության ոլորտում իրականացնել մի շարք միջոցառումներ, այդ թվում նաև «արդարադատության գործը ամուր հիմքերի վրա դնելու համար կառավարությունը մտցնելու է դատարանում ընտրական սկզբունք...»<sup>1</sup>: Խոսքը, իհարկե, հաշտարար դատավորների մասին է:

Հաշտարար դատավորներին ընտրովի դարձնելու հարցը փոքր ինչ ավելի ուշ՝ 1919 թ. օգոստոսի վերջերին բարձրացվել է նաև Հայաստանի խորհրդարանի Օրենսդրական հանձնաժողովի կազմակերպած խորհրդակցությունում, որը նվիրված էր Հայաստանի Հանրապետությունում դատական մարմինների կազմակերպման ու գործունեության խնդիրների քննարկմանը<sup>2</sup>: Խորհրդակցությանը հրավիրված էին նաև արդարադատության նախարարի օգնականը, դատավորներ: Ինչպես երևում է այդ խորհրդակցության համառոտ արձանագրությունից, քննարկելով հաշտարար դատարանների կազմակերպման և գործունեության խնդիրները, խորհրդակցության նախակիցների մեծամասնությունը նպատակահարմար գտավ «ներմուծել ընտրովի հաշտարար դատավորների ինստիտուտ», ինչպես նաև հիմնել և գործողության մեջ դնել հաշտարար դատավորների համագումարները, որպես հաշտարար արդարադատության երկրորդ՝ վերաբնիշ ատյան<sup>3</sup>: Խորհրդակցության ընդունած այս և այլ որոշումները կենսագործելու համար Արդարատության նախարարությանը կից պետք է հիմնադրվեր հանձնաժողով:

Ընտրովի հաշտարար դատավորների ինստիտուտի ներմուծման խնդիրը քննարկեց նաև արդարադատության նախարարության կողմից 1919 թ. օգոստոսի 30-ին դատական գործիչների, Նախարարների խորհրդի աշխատակիցների, Երևանի քաղաքային ինքնավարության ներկայացուցիչների մասնակցությամբ գումարված խորհրդակցությունում, որը ևս նպատակահարմար գտավ հաշտարար դատավորների ինստիտուտը դարձնել ընտրովի: Հենց այդ խորհրդակցությունում ընտրվեց եինք հոգուց կազմված հանձնաժողով, որի առջև խնդիր դրվեց հարցի վերաբերյալ անհրաժեշտ նյութեր հավաքելու ու կենսագործման համար անհրաժեշտ սկզբունքներ ու դրույթներ մշակել: Հանձնաժողովի եռամսյա աշխատանքի արդյունքը «Ընտրովի հաշտարար դատավորների ինստիտուտի մասին» օրինագիծն էր, որ 1919 թ. նոյեմբերի 28-ին արդարադատուր-

յան նախարարը գեկուցել է Նախարարների խորհրդին օրենսդրական նախաձեռնության կարգով: Նախարարների խորհրդը քննարկելով և որոշ փոփոխություններ մտցնելով օրինագծում, հավամություն է տվել դրան և ուղարկել խորհրդարան: Ի տարբերություն Հայաստանի խորհրդարանի Օրենսդրական հանձնաժողովի, վերոհիշյալ հանձնաժողովը նպատակահարմար գտավ ընտրովի հաշտարար դատավորների համագումարը, որպես հաշտարար արդարադատության երկրորդ ատյան, չստեղծել, այդպիսին բողնելով շրջանային դատարանները: Հանձնաժողովի եզրակացությունը միանշանակ էր. Հայաստանում հաշտարար արդարադատությունը բարելավելու և այն արդյունավետ դարձնելու գործուներից մեկը հաշտարար դատարանի վերակառուցումն էր՝ այն ընտրովի դարձնելով: «Այդ ձևի դատարանը ունի մի շարք առավելություններ այժմ գոյություն ունեցող դատարանի առաջ: Հաշտարար դատավորը, ընտրվելով ժողովրդի կողմից և վայելելով ժողովրդի վստահությունը, բարձրացնում է ժողովրդի աշխուժ հավատը դեպի արդարադատությունը: Եթե դատավորը, ընտրվելով, չի արդարացնի իր վրա դրված վստահությունը, նա այլևս չի ընտրվի»<sup>4</sup>: Հանձնաժողովի բանաձևում օգտագործված ժողովուրդ հասկացության կապակցությամբ նշենք, որ այդ դատավորները ընտրվելու էին տեղական ինքնավարությունների մարմինների, այլ ոչ թե անմիջապես բնակչության կողմից:

Իհարկե, բնակչությունը հանրապետության գավառներում և քաղաքներում դրա միջոցով որոշ հնարավորություն էր ստանալու մասնակցել դատավորների ընտրության գործին և ընտրել ժողովրդի վարք ու բարքի հետ ծանոթ, ժողովրդին մոտ կանգնած անձանց, բայց մտածել, որ միայն դրանով, առանց լրացուցիչ իրավական, կազմակերպական, նյութական երաշխիքների հնարավոր էր լուծել հաշտարար արդարադատության բոլոր հիմնախնդիրները՝ իրական չէր և նույնիսկ՝ միամիտ: «Ընտրովի հաշտարար դատավորների ինստիտուտի մասին» օրինագիծը փաստորեն կողիքիկացիայի էր ենթալիում հաշտարար դատավորներին վերաբերող իրավական նորմերը, մասնավորապես՝ «Դատական հաստատությունների կանոնադրության» 1-66-րդ հոդվածները՝ հարմարեցնելով դրանք Առաջին հանրապետության իրականությանը, դուրս բռնելով մի շարք հնացած, ոչ ժողովրդավարական իրավանորմեր: Օրինագիծը բաղկացած էր 57 հոդվածից: Համաձայն օրինագիծի 12-14-րդ հոդվածների և ի տարբերություն 1918 թ. դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապե-

<sup>1</sup> Տես «Հայաստանի աշխատավոր», թերթ, Երևան, 1919, թիվ 121:

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԿ, ֆ. 206, գ. 1, գ. 104, թ. 10:

<sup>3</sup> Տես նոյյն տեղը, թ. 10:

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԿ, ֆ. 199, գ. 1, գ. 12, թ. 84:

տուրքում հաշտարար բաժանմունքների և քննչական մասերի վերակազմավորման և նորերի բացման մասին» օրենքի յուրաքանչյուր գավառ կազմելու էր միամական և առանձին հաշտարար շրջան (օկրուգ): Հաշտարար շրջանը իր հերթին բաժանվելու էր հաշտարար մասերի և յուրաքանչյուր հաշտարար մաս ունենալու էր իր հաշտարար դատավորը: Յուրաքանչյուր հաշտարար շրջան ունենալու էր նաև իր պատվավոր հաշտարար դատավորները, որոնց գործունեության տարածքը ամբողջ հաշտարար շրջանն էր: Պատվավոր հաշտարար դատավորները քննելու էին հաշտարար ընդդատության ամեն մի գործ, այն դեպքում, երբ երկու կողմերն էլ կդիմեին նրա միջնորդությանը:

«Ընտրովի հաշտարար դատավորների ինստիտուտի մասին» օրինագծի 17-33-րդ հոդվածները սահմանում էին հաշտարար դատավորների ընտրության և հաստատման կարգը, ներառյալ այն, թե ովքեր իրավունք պիտի ունենային ընտրվելու, ինչպիսի օրենսդրական արգելվներ կային հաշտարար դատավոր ընտրվելու համար: Հաշտարար դատավորները ընտրվելու էին երեք տարի ժամկետով: Քաղաքային հաշտարար դատավորների ընտրությունները կատարվելու էին քաղաքային ինքնավարության ժողովուներում: Ընտրված հաշտարար դատավորներին իրենց պաշտոնում հաստատելու էր Հայաստանի Սենատը: Եթե գավառական ինքնավարության ժողովը կամ քաղաքային խորհուրդը մասերի հաշտարար դատավորներ ընտրելու բավականաշափ թեկնածուներ չունենար, ապա պակասող հաշտարար դատավորներին մինչև հաջորդ ընտրությունները նշանակելու էր Հայաստանի Սենատը՝ արդարադատության նախարարի առաջարկությամբ: Հանրապետության այն վայրերում, որտեղ ինքնավարություններ չկային, հաշտարար դատավորներին նշանակելու էր Հայաստանի Սենատը՝ արդարադատության նախարարի առաջարկությամբ: Հաշտարար դատավորի պաշտոնը չէր կարող համատեղվել պետական կամ հասարակական այլ պաշտոնների հետ, բացառությամբ տեղական բարեգործական և կրթական հիմնարկություններում պատվավոր պաշտոններից կամ տեղական ինքնավարությունների պատգամավորությունից:

Զնայած «Ընտրովի հաշտարար դատավորների ինստիտուտի մասին» օրինագիծը խորհրդարանում ընթացք ստացավ, սակայն այն օրենսդրական հաստատում չգտավ: Զգձման պատճառը հավանաբար այն ըմբռնումն էր, որ միայն ընտրովիտյան սկզբունքը ներդնելով վիճակը շտկել հնարավոր չէր: Բացի այդ, երբ Մայիսյան ապատամբության

կապակցությամբ խորհրդարանն իր իրավասությունը վերապահեց «բյուրո կառավարությանը», իրավիճակն ամենախին էլ ժողովրդավարական վերափոխումների օգտին չեր խոսում, և պայմաններ էլ չկային դրամք իրագործելու համար:

## § 2. Ընդհանուր իրավասության դատարանների համակարգը Առաջին հանրապետությունում

### 2.1. Շրջանային դատարանները Առաջին հանրապետությունում:

1918 թ. դեկտեմբերյան օրենքների ուժով իր գոյությունն էր պահպանում Երևանի շրջանային դատարանը, որին ընդդատյա դատական շրջան էր համարվում հանրապետության ամբողջ տարածքը: Քաղաքացիական գործերը այս դատարանը քննում և լուծում էր երեք դատավորների կազմով: Քրեական գործերը ևս ներական էին շրջանային դատարանի քննությանը երեք դատավորների կազմով կամ այդ նույն կազմով՝ երդվյալ ատենակալների մասնակցությամբ, երդվյալ ատենակալների դատարանի գործունեությունը սկսելու պահից:

Երևանի շրջանային դատարանը մինչև Փետրվարյան հեղափոխությունը համարվում էր այսպես կոչված երրորդ կարգի շրջանային դատարան<sup>1</sup>, որն ուներ մեկական քրեական և քաղաքացիական բաժանումներ: Հայաստանի Հանրապետության անկախության հոչական պահին այն արդեն երկրորդ կարգի շրջանային դատարան էր, որովհետև Ժամանակավոր կառավարության ընդունած օրենքներին համապատասխան նրա կառուցվածքում ստեղծվել էին վարչական և ցուցակագրական բաժանումները<sup>2</sup>:

Շրջանային դատարանը պետական մարմին էր, որ կատարում էր ոչ միայն դատական, այլև դատախազական կողական, քննչական և նոտարական գործառույթներ, այդ իսկ պատճառով իր կազմի մեջ ուներ ոչ

<sup>1</sup> Կախված դատական շրջանում առկա գործերի քանակից՝ շրջանային դատարանը կարող էր ունենալ մի քանի բաժանմունքներ: Բաժանմունքները մասնագիտանում էին կամ քրեական կամ քաղաքացիական գործերի քննության վրա: Ուստական կայսրությունում գոյություն ունեին չորս կարգի շրջանային դատարաններ: Առաջին կարգի շրջանային դատարանն ուներ վեց և ավել բաժանմունքներ, երկրորդ կարգին՝ երեք, երրորդ կարգին՝ երկու, իսկ չորրորդ կարգի շրջանային դատարանը բաժանմունքներ չուներ (տե՛ս **Виленский Б.В.** Судебная реформа и контрреформа..., էջ 168, կամ **Розин Н.Н.** Уголовное судопроизводство. Пг., 1916, էջ 221):

<sup>2</sup>Տե՛ս **Ерошкин Н.П.** История государственных учреждений..., էջ 330:

միայն դատարանի դատավոր անդամներ, այլ նաև քննիչներ, դատախազներ, ճոտարներ:

Արդարադատության նախարարության մշակած նախնական հաստիքացուցակով նախատեսվում էր շրջանային դատարանի ութ դատավոր-անդամների հաստիքներ, ենելով պետական միջոցների խնայողության խիստ անհրաժեշտությունից<sup>1</sup>: Սակայն հայկական տարածքներից թուրքերի հեռանալուց հետո անհրաժեշտություն առաջացավ ավելացնելու նրանց թիվը ևս երկուով, հասցնելով տասի, քանի որ ութ անդամի դեպքում, եթե նույնիսկ մեկ դատական կազմ դուրս գար արտագնա նիստերի գավառներում, ապա տեղում չէր մնա ամեն մի բաժանմունքում մեկական դատական կազմ: Պարզ չէր նաև վարչական և ցուցակագրական բաժանմունքների դատական կազմերի հարցը: 1918 թ. օգոստոսյան նախագծերը առաջարկում էին վերացնել այդ բաժինները՝ դրանց գործառույթները հանձնելով քաղաքացիական բաժանմունքին: 1918 թ. դեկտեմբերի 6-ի օրենքներում այդ մասին ոչինչ չէր ասված, հետևաբար, այդ բաժանմունքները պահպանում էին իրենց գոյուրյունը: Չորս բաժանմունքներ երեքական դատավորներով՝ ստացվում էր, որ շրջանային դատարանը պետք է ունենար առնվազն տասներկու դատավոր-անդամներ: Այս հակասությունը լուծվեց 1919 թ. հունվարի 3-ին Նախարարների խորհրդի կողմից հավանություն ստացած արդարադատության նախարարության մշակած օրինագծով, որով առաջարկվում էր վերացնել շրջանային դատարանի ցուցակագրական բաժինը, իսկ նրա իրավասությանը ընդդատյա գործերը հանձնել նույն դատարանի վարչական բաժնին: Հայաստանի խորհրդը 1919 թ. հունվարի 13-ին հաստատել է այդ օրինագիծը<sup>2</sup>: Այդ օրենքով վերացվում էին «Դատական հաստատությունների կանոնադրության» 429<sup>6</sup>-429<sup>10</sup>-րդ հոդվածներ, որոնք վերաբերում էին շրջանային դատարանի ցուցակագրական բաժանմունքին: Օրենքի 1-ին հոդվ. սահմանում էր, որ կոռուպերատիվ ընկերությունների և միությունների, «ոչ շահափոխական նպատակ ունեցող ընկերությունների և միությունների» գրանցումը դրվում էր վարչական բաժանմունքի վրա, իսկ ցուցակագրականը՝ վերացվում էր: Գրանցումների մատյանը վարելու էր դատարանի վարչական բաժանմունքի անդամներից մեկը՝ դատարանի նախագահի հանձնարարությամբ:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 8, թ. 303:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1919, հոդվ. 74, էջ 42-43:

Շրջանային դատարանի վարչական բաժանմունքը գործեց մինչև 1920 թ. ապրիլ 26, երբ խորհրդարանը ընդունեց օրենք՝ «Շրջանային դատարանի վարչական բաժանմունքը վերացնելու մասին»<sup>1</sup>: Արդարադատության նախարարությունը վերլուծելով այդ բաժանմունքի գործունության տվյալները, ըստ որոնց ամբողջ 1919 թ. ընթացքում բաժանմունքը՝ կազմված երեք դատավորներից, ըննել էր ընդամենը հարյուր մեկ վարչական գործ և երեսունիննը ցուցակագրական գործ<sup>2</sup>, հանգել էր այն եզրակացության, որ այդ բաժինը նպատակահարմար էր վերացնել և նրան ընդդատյա վարչական ու ցուցակագրական գործերը հանձնել քաղաքացիական բաժանմունքի ընդդատությանը, ինչն և արվեց վերոհիշյալ օրենքով:

1919 թ. օգոստոսին Հայաստանի խորհրդարանի Օրենսդրական հանձնաժողովի՝ դատական համակարգում գործերի վիճակի քննարկմանը նվիրված խորհրդակցությունում շրջանային դատարանների վերաբերյալ արտահայտվել էր այն կարծիքը, որ անհրաժեշտ է հիմնել նոր շրջանային դատարաններ և դրանով ընդիանուր իրավասության առաջին ատյանի և միաժամանակ հաշտաբար ընդդատության վերաբնիշ ատյանի դատարանը մատչելի դարձնել բնակչությանը<sup>3</sup>: Խորհրդակցությունում բարձրացված այս հարցի կապակցությամբ արտահայտվեցին երկու տեսակետներ: Առաջին՝ բացի Երևանի շրջանային դատարանից հիմնել այդպիսի դատարաններ Կարսում և Ալեքսանդրապոլում: Երկրորդ՝ «առայժմ շրջանային դատարան հիմնել միայն Ալեքսանդրապոլում», որի դատական շրջանի մեջ մտնելու էր նաև Կարսի նահանգը:

Յափոք, այս խորհրդակցության մասին այլ տվյալներ չկան, եղածը այսպահան է, ամրագրված համառոտ արձանագրությունում և այդ քայլի հիմնական դրդապատճառներն ու խորհրդակցությունում արտահայտված կարծիքները՝ ընդիանության դատական համակարգի կազմակերպման և գործունեության մասին, մեզ հայտնի չեն: Բայց արխիվային փաստարդերի ուսումնափորտյունը ցույց է տալիս, որ այդ քայլի հիմնական դրդապատճառները նախ և առաջ Երևանի շրջանային դատարանի անարդյունավետ գործունեությունն էր, որի հետևանքով առաջանում էր, հատկապես, քրեական չլուծված գործերի կուտակում: Այդ են վկայում նաև հայտնաբերված վիճակագրական տեղեկությունները Երևանի

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. Պառլամենտի, 1920, թիվ 9, հոդվ. 84, էջ 71:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, գ. 1, գ. 56, թ. 5:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 104, թ. 10:

շրջանային դատարանի քրեական բաժանմունքում քննված գործերի մասին՝ 1919 թ. հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 20<sup>1</sup>: Ըստ այդ տեղեկությունների դատարանի քրեական բաժանմունքում 1918 թ. ժառանգություն էր մնացել երեք հարյուր ութունյոր շքննված և չլուծված քրեական գործեր, որոնք հարուցվել ու անցել էին նախաքննության փուլը հանրապետության տարրեր գավառներում: Հունվարի 1-ից մինչև ապրիլ 10-ը դատարանի քրեական բաժանմունք մուտք էին գործել հարյուր իննուն նոր քրեական գործեր, այսինքն՝ ընդամենը հինգ հարյուր յոթանասունյոր քրեական գործ ապրիլի 20-ի դրույթամբ առկա են եղել շրջանային դատարանի քրեական բաժանմունքում: Այդ գործերից առ 20 սեպտեմբերի «լուծվել են ըստ էության ընդամենը վարչունյոր գործ<sup>2</sup>, վերադարձված են լրացուցիչ քննության երեսուններ գործ: Դադարեցված են իսպառ՝ քասներեք, առկայված՝ հարյուր տաս գործ...»<sup>3</sup>: Փաստորեն մնացած երեք հարյուր քառասունկեց քրեական գործերը 7-8 ամիս մնացել էին և դեռ անորոշ ժամանակով մնալու էին դատական քննության փուլը շանցած, իսկ եթե դրան գումարենք նախաքննության ժամկետը, ապա պատկերը այնքան էլ գոհացուցիչ չի լինի: Այս պայմաններում խոսել պատասխանատվության անխուսափելիության և արդարադատության իրականացման մասին, կարծում ենք ավելորդ է: Երդվալների դատարանի գործունեության ծավալումով, ինչպես կտեսնենք ստորև, դրույթունը ավելի էր վատարանալու:

Իհարկե, արդարադատության նախարարությունում երևի գիտակցում էին այս փաստը, սակայն քայլեր այդ ուղղությամբ չէին ձեռնարկում: Միայն 1920 թ. փետրվարի 6-ին արդարադատության նախարարությունը գեկուցեց կառավարությանը Կարսում և Ալեքսանդրապոլում շրջանային դատարաններ հիմնադրելու անհրաժեշտության մասին և ստացավ կառավարության դրական արձագանքը: Սակայն այդ քայլով ընդհանուր ընդդատության առաջին ատյանի դատարանը էլի բավականին հեռու էր մնում ծայրանատերից: Կարսի Շրջանային դատարանի դատական շրջան էր հանդիսանալու Կարսի նահանգը, իսկ Ալեքսանդրապոլի դա-

տական շրջանի մեջ մտնելու էին Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Իջևանի և Լոռվա գավառները<sup>4</sup>:

Նոր շրջանային դատարաններ իմնելու մասին օրինագիծն իր օրենսդրական հաստատումը խորհրդարանում ստացավ 1920 թ. ապրիլի 5-ին<sup>5</sup>: Արդարադատության նախարարությունը դրանից անմիջապես հետո անցավ այդ դատարանների կազմակերպմանն ու գործունեության ծավալմանը՝ կառավարությունից ստանալով անհրաժեշտ գումարային հատկացումներ<sup>6</sup>: Այս դատարանների հիմնադրման կապակցությամբ անհրաժեշտություն առաջացավ կրծատելու Երևանի շրջանային դատարանի անձնական կազմը, որը մինչև կրծատումն ուներ հետևյալ ներքին կառուցվածքը՝ շրջանային դատարանի նախագահ, նախագահի երկու օգնականներ և տասներեք անդամներ (ընդամենը տասնվեց հոգի), երկու կարևորագույն գործերով դատական քննիչներ իրենց օժանդակ ապարատով (երեսուններեք հոգի), երկու դատական կատարածու, ավագ նոտար, վեց վճարովի դատական պաշտոնի պալա թեկնածու, հինգ կրտսեր թեկնածու<sup>7</sup> և վերջապես՝ շրջանային դատարանի դատախազական հսկողության պաշտոնյաները<sup>8</sup>:

1920 թ. հունիսի 10-ին Նախարարների խորհրդը հաստատեց Երևանի շրջանային դատարանի և դատախազական հսկողության նոր հաստիքացուցակը, որով այս մարմնի անձնական կազմը հարյուրվեց պետական ծառայողներից իշեցվում էր յոթանասունվեցի:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 28, թ. 6:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, իրատ. Պառլամենտի, Երևան, 1920, թիվ 7, հոդ. 61, էջ 55:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, իրատ. Պառլամենտի, Երևան, 1920, թիվ 8, էջ 63-64:

<sup>4</sup> Դատական պաշտոնի թեկնածուների ինստիտուտը կոչված էր ապահովելու մշտական ռեզերվ ընդհանուր իրավասության դատարանների և դատախազության համար: Նրանց ներկայացվող օրենսդրական պահանջը բարձրագույն իրավաբանական կրտություն ունենալու էր: Թեկնածուները պարտավոր էին կատարել ընդհանուր դատարանների և դատախազության զանազան հանձնարարությունները: Ըստ «Դատական հաստատությունների կանոնադրության» սկզբնական խմբագրության նրանց աշխատանքը չէր վարձարկվում: 1891 թ. նշված կանոնադրության մեջ կատարված փոփոխություններին և լրացումներին համապատասխան դատարան պաշտոնի թեկնածուները բաժանվեցին ավագ և կրտսեր տարակարգերի: Ավագ թեկնածուները վարձատրվում էին և ունեին շրջանային դատարանի քարտուղարի օգնականի ծառայական կարգավիճակ: Ավագ թեկնածուի կոչումն ստանալու համար պահանջվում էր մեկուկես տարվա պետական ծառայություն «դատական գերատեսչության» համակարգում: Կրտսեր թեկնածուները չէին վարձատրվում:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 69, թ. 6-116:

<sup>1</sup> Տե՛ս «Յառաջ», թերթ, Երևան, 1919, թիվ 20:

<sup>2</sup> Այդ վարչունյոր գործերից համարյա կեսը սպանության դեպքերով հարուցված քրեական գործեր:

<sup>3</sup> «Դադարեցված» և «առկայված» հասկացությունները համապատասխանում են արդի «կարճված» և «կասեցված» քրեադատավարական իրավական եզրույթներին:

Արդարադատության նախարարության կենտրոնական և տեղական հիմնարկությունների 1920 թ. երկրորդ կիսամյակի համար 1920 թ. հուլիսի 30-ին «քյուր կառավարության» հաստատած նախահաշիվներով և հաստիքացուցակներով այս կազմը պահպանվեց: Այս փաստաթղթից երևում է, որ Երևանի շրջանային դատարանը մնում էր որպես երրորդ կարգի շրջանային դատարան երկու բաժանմունքներով: «Դատավորների քանակը և հասնում էր ուրի: Կրճատվել էր նաև դատախազական հսկողության պաշտոնյանների թիվը: Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանային դատարանները հանդիսանում էին չորրորդ կարգի շրջանային դատարաններ, որոնք առանձին բաժանմունքներ չունեին: Այս դատարանները կազմված էին նախագահից և չորս անդամներից: «Դատարաննին կից կար ավագ նոտար, դատախազը իր երկու օգնականներով: «Դատարանի ամբողջ անձնակազմի թիվը սրանցում հասնում էր երեսունչորսի՝ մոտ երկու անգամ թիվ, քան Երևանի շրջանային դատարանում:

Շրջանային դատարանի նախագահները, սրանց օգնականներն ու դատարանի անդամները նշանակվում էին օրենսդիր մարմնի կողմից՝ արդարադատության նախարարի ներկայացմամբ:

**2.2. Ընդհանուր իրավասության վերաբենիչ ատյանը՝ Հայաստանի Հանրապետության Դատական պալատը:** 1918 թ. դեկտեմբերի 6-ի դատարանակազմական օրենքներին և հատկապես «Սենատի և Դատաստանական ատյանի<sup>1</sup> ներմուծման մասին Հայաստանի տերիտորիայի սահմաններում» օրենքին համապատասխան Երևան քաղաքում հիմնվում էր դատական պալատ երկու բաժանմունքներով՝ քաղաքացիական և քրեական<sup>2</sup>: Այս դատական մարմնին համարվում էր երկրորդ ատյանի դատարան ընդհանուր ընդդատության գործերով, այսինքն՝ Երևանի շրջանային դատարանի, իսկ հետագայում նաև նաև Ալեքսանդրապոլի և Կարսի շրջանային դատարանների համար: «Հետևաբար՝ նրան ենթակա դատական տարածք էր համարվում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը: Դատական պալատը երկրորդ ատյանի դատարան էր միայն այն քրեական գործերի համար, որոնք քննվել էին առանց երդիյալ ատենակալների մասնակցության<sup>3</sup>: Մինչև 1920 թ. մարտի 15-ը, երբ իր գործունեությունը սկսեց Երվաշլների դատարանը, դատական պալա-

<sup>1</sup> Այս ատյանի դատարանը հանրապետության սկզբնական օրենսդրական ակտերում անվանվում էր «դատաստանական պալատ»: Սակայն հետագայում կիրառվեց, մեր կարձիքով, ավելի ճիշտ «դատական պալատ» ձևը:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1918, էջ 27:

<sup>3</sup> Տե՛ս Ստատ սահմանադրության կազմը և առաջարկությունը, հոդվ. 853: Վ հայ.: Հայաստանի Հանրապետության օրենքները, Երևան, 1918 թ., հոդվ. 52, էջ 30:

տը վերաքննիչ ատյան էր ընդհանուր ընդդատության, ինչպես բոլոր քաղաքացիական, այնպես էլ քրեական գործերի համար: Հայաստանի Դատական պալատը զրկվում էր նաև հաշտարար ենթակայության գործերի նկատմամբ վճռաբեկ ատյան լինելու իրավունքից, որով օժտված էր Թիֆլիսի Դատական պալատը:

Հայաստանի առաջին հանրապետության դատարանակազմական օրենսդրությունը անփոխիս էր բոլոնում Ժամանակավոր կառավարության դատական կանոնադրությունների մեջ մտցրած այն փոփոխությունը, որով դատական պալատը զրկվում էր որոշ պետական և պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ գործերը որպես առաջին ատյան քննելու և լուծելու իրավագործությունից<sup>1</sup>:

Դատական պալատը, ըստ հաստատված նախահաշիվների և հաստիքացուցակների, ուներ հետևյալ կառուցվածքը՝ քրեական և քաղաքացիական բաժանմունքներ դատական պալատի նախագահի գլխավորությամբ, յուրաքանչյուր բաժանմունքում երեքական անդամ-դատավորներ: Դատական պալատին կից գործում էր դատախազական հսկողություն<sup>2</sup>: 1920 թ. մայիսին դատական պալատին կից ստեղծվեցին երկու կարևորագույն գործերով քննիչների հաստիքներ:

Դատական պալատի նախագահը, դեպարտամենտների նախագահներն ու անդամները նշանակվում էին օրենսդիր կողմից, արդարադատության նախարարի ներկայացմամբ<sup>3</sup>: Հայաստանի խորհրդը 1919 թ. ապրիլի 4-ին ընդունած որոշումներով հաստատեց դատական պալատի նախագահին և մեկ անդամին<sup>4</sup>: Այնուհետև ձեռնարկվեցին դատական պալատի գործունեությունն սկսելու կազմակերպչական աշխատանքները: Դատական պալատի մնացած անդամները նշանակվեցին օրենսդրական լիազորություններով օժտված կառավարության կողմից: 1919 թ. մայիսի 15-ին դատական պալատը սկսեց իր վերաբենիչ գործունեությունը: Այդ օրվանից մինչև տարեվերջ պալատը վերաբնել է իննունմեկ քրեական և երեսունուր քաղաքացիական գործեր, այդ թվում և այն գործերը,

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 14, ինչպես նաև Ստատ սահմանադրության կազմը և առաջարկությունը, հոդվ. 204: Վ հայ.: Հայաստանի Հանրապետության օրենքները, Երևան, 1991. Տոմ 8, Սудեբնա թերթ, էջ 140:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 69, թ. 115:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1918 թ., հոդվ. 52, էջ 30:

<sup>4</sup> Տե՛ս նոյեմբերի առաջարկությունը, հոդվ. 853: Վ հայ.: Հայաստանի Հանրապետության օրենքները, Երևան, 1918 թ., հոդվ. 52, էջ 30:

որոնք նախկինում գանգատարկվել էին Թիֆլիսի Դատական պալատում և մինչ այդ մնացել առանց լուծման<sup>1</sup>:

Դատական պալատում վարույթը հարուցվում էր դատապարտյալների, մասնավոր մեղադրողների և քաղաքացիական հայցվորների գանգատների, ինչպես և դատախազական հսկողության բողոքների հիման վրա<sup>2</sup>: Դատական պալատ կարող էին ներկայացվել նաև «մասնավոր գանգատներ և բողոքներ» մինչև վճռի կամ դատավճռի կայացումը (Քր. դատ, կանոն, իռու. 839):

**2.3. Միասնական վճռաբեկ դատարանը՝ Հայաստանի Սենատը:**  
1918 թ. դեկտեմբերի 6-ի «Սենատի և դատաստանական ատյանի ներմուծման մասին Հայաստանի տերիտորիայի սահմաններում» օրենքին համապատասխան Երևան քաղաքում ստեղծվում էր հանրապետության միասնական քարձրագույն վճռաբեկ դատարան՝ սենատ։ Հայաստանի Սենատը բաղկացած էր երկու վճռաբեկ դեպարտամենտներից՝ քաղաքացիական և քրեական։ Ի տարրերություն երկրորդ, վերաբննիշ ատյանի, որը վերանայում էր ստորադաս դատարանների վճռութերը և դատավճրութերը լսու էության, ստուգելով ինչպես նախկինում եղած, այնպես էլ նոր ներկայացված ապացույցները, վճռաբեկ դատարանը ստուգում էր դատական որոշումները զուտ ձևականորեն, պարզելով, թե՝<sup>9</sup> արդյոք թույլ է տրվել գանգատում կամ բողոքում նշված օրենքի խախտումը (Քր. դատ. կանոն., հոդվ.հոդվ. 912, 916-933)։ Սենատի խնդիրն էր վերանայել գործերը միայն այն դեպքերում, եթե խախտվել էին դատավարության հական կանոնները կամ ոչ ճիշտ էին կիրառվել նյութական օրենքները։ Ահա այս տեսանկյունից վճռաբեկ դատարանը հսկում էր օրենքների ճիշտ և միատեսակ գործադրման վրա (Քր. դատ. կանոն., հոդվ.հոդվ. 934-936)։ Լսու դատավարական կանոնադրությունների սենատը հսկողական կարգով քննում էր այսպես կոչված «վերջնական» դատավճրութերն ու վճռութերը, ինչպես նաև՝ գործերը, որոնցով ի հայտ են եկել նոր հանգամանքներ։ Համաձայն հանրապետության դատավարական օրենսդրության վերջնական էին համարվում և ենթակա էին բարձրագույն վճռաբեկ դատարանի քննությանը հաշտարար դատարանների վերջնական վճռութերն ու դատավճռութերը, շրջանային դատարանների՝ որպես հաշտարար դատարանների երկրորդ ատյան, կայացրած դատավճռութերն ու վճռութերը, շրջանային դատարանում երդվյալ ատենակալների մասնակցությամբ

<sup>1</sup> Տե՛ս «Յառաջ», թերթ, Երևան, 1920, թիվ 6:

<sup>2</sup> Ст. Устав уголовного судопроизводства, №№ 853; В кн.: Российское законодательство X-XX веков. М., 1991. Том 8, Судебная реформа. № 202;

կայացված դատավճիռները, դատական պալատի ընդհանուր ընդդատության գործերով վճիռներն ու դատավճիռները (Ըր. դատ. կանոն., հոդվ.հոդվ. 854, 905, 934):

Ի տարբերություն Ուսական Կայության Կառավարիչ սենատի Հայաստանի Սենատը զրկված էր որպես առաջին ատյանի դատարան ուղղ քրեական գործեր քննելու և լուծելու իրավասությունից: «Հայաստանի տերիտորիայի սահմաններում սենատի և դատաստանական ատյանի ներմուծման մասին» դեկտեմբերի 6-ի օրենքի 3-րդ հոդվ. սահմանում էր, որ սենատի երկու դեպարտամենտների ընդհանուր նիստը քննելու էր այն բոլոր հարցերը, որոնք ենթակա էին ուսական Կառավարիչ սենատի մյուս դեպարտամենտների և սենատի դեպարտամենտների ընդհանուր (միացյալ) ժողովների իրավասությանը<sup>1</sup>: Հայաստանի Սենատի ընդհանուր ժողովները գումարվում էին օրենքով նախատեսված դեպքերում և քննարկում էին իրենց իրավասությանը հանձնված հարցեր: Օրինակ՝ համաձայն «Դատական հաստատությունների կանոնադրության» 117-րդ հոդվ. դատական և գործադիր իշխանությունների միջև գործերի ենթակայության հարցերով վեճերի վերջնական լուծման համար գումարվում էին առաջին և համապատասխան վճռաբեկ դեպարտամենտների միացյալ ժողովներ:

Ժամանակավոր կառավարության 1917 թ. մայիսի 30-ի օրենքը հիմնելով միանձնյա վարչական դատարանների ինստիտուտը, որպես դրանց վճռաբեկ ատյան ճանաչել էր սենատի առաջին դեպարտամենտը<sup>2</sup>: Սակայն այդպիսի դեպարտամենտ Հայաստանի Սենատը չուներ: Հետևաբար՝ օրենքը սահմանում էր, որ այդ դեպարտամենտի գործառույթը կատարելու էր երկու վճռաբեկ դեպարտամենտների համատեղ ժողովը: Սենատի վճռաբեկ դեպարտամենտներից յուրաքանչյուրը կազմված էր որոշակի թվով սենատոր-դատավորներից, որոնցից մեկը նշանակվում էր նախագահ: Համաձայն «Դատաստանական մասի պաշտոնատար անձանց նշանակման մասին» 1919 թ. հուլիսի 25-ի օրենքի սենատորները նշանակվում էին օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի կողմից, արդարա-

<sup>1</sup> Ω-πιαικανή Κωνσταντίνης Σεργκέιεβιτς πολύτερη γνωστή ως η βασικότερη αναφορά στην ιστορία της Ρωσίας. Το έργο της είναι ένα μεγάλο έργο της ιστορίας της Ρωσίας, που περιλαμβάνει την περίοδο από την Ανατολή της Ρωσίας μέχρι την Ανατολή της Ρωσίας. Το έργο της είναι ένα μεγάλο έργο της ιστορίας της Ρωσίας, που περιλαμβάνει την περίοδο από την Ανατολή της Ρωσίας μέχρι την Ανατολή της Ρωσίας.

<sup>2</sup> См. Ерошкин Н.П., История государственных учреждений..., т. 331:

դատության նախարարի ներկայացմամբ: Նրանցից մեկը նշանակվում էր սենատի ավագ նախագահ՝ սենատի աշխատանքները և ընդհանուր ժողովները ղեկավարելու համար:

Սենատի նախագահը և երկու անդամները նշանակվել են օրենսդրական լիազորություններով օժտված Նախարարների խորհրդի կողմից 1919 թ. հունիսի 3-ին, երբ կառավարությունը լընդունեց որոշում «Սենատի գործունեությունը սկսելու մասին»: Սակայն սենատն իր գործունեությունը իրականում սկսել է 1919 թ. սեպտեմբերից: Այդ պահին օրենսդրության սահմանված և գործող հաստիքացուցակով սենատը բաղկացած էր չորս սենատորներից: Սենատին կից գործում էր նաև դատախազական հսկողություն հանձինս սենատի ավագ դատախազի և նրա օգնականի<sup>1</sup>:

Օրենքով սենատի կազմը պետք է բաղկացած լիներ առնվազն վեց սենատորներից, յուրաքանչյուր դեպարտամենտում երեքական անդամ: Սակայն սենատի կազմը իր գործունեությունը սկսելու պահից մինչև 1920 թ. երկրորդ կիսամյակ այդպես էլ մնաց ոչ լրիվ՝ երեք անդամով: Դա հարցուցում էր որոշ բարդություններ վճռաբեկ դատարանի գործունեությունում: «Հայաստանի տերիտորիայի սահմաններում սենատի և դատաստանական ատյանի ներմուծման մասին» օրենքի 3-րդ հոդվ. համաձայն նշված միացյալ ասյանը փաստորեն գոյություն չուներ, որովհետև չկային առանձին քրեական և քաղաքացիական դեպարտամենտներն իրենց անդամ-դատավորներով: Այդ հանգամանքը ստիպել էր արդարադատության նախարարությանը 1919 թ. վերջերին մշակել օրինագիծ, որով առաջարկվում էր փոփոխության ենթարկել «Հայաստանի տերիտորիայի սահմաններում սենատի և դատաստանական ատյանի ներմուծման մասին» օրենքի 3-րդ հոդվ. և սահմանել «որ այն գործերը, որոնք ենթակա էին Կառավարչի սենատի մնացած դեպարտամենտներին և միացյալ ժողովին, ենթակա են Հայաստանի Հանրապետության սենատի քննությանը նրա այժմյան կազմով», մինչև որ սենատի կազմը նոր մշակվող հաստիքացուցակով չամրողանար և կձևավորվեին առանձին դեպարտամենտների: Օրինագիծը կառավարության կողմից 1920 թ. հունվարի 9-ին արժանացել է հավանության, սակայն խորհրդարանի կողմից օրենսդրական վավերացում չի ստացել: Խորհրդարանը 1920 թ. մարտի 3-ին ընդունել է սենատին վերաբերվող այլ օրենք՝ «Հայաստանի Հանրապետության Սենատին իր ատյանի կազմը լրացնելու համար ժամանակավոր ի-

րավունք տալու մասին»<sup>1</sup>, որի ընդունման նախաձեռնությունը ևս ելնում էր արդարադատության նախարարությունից:

Այս օրենքը սենատին հնարավորություն էր տալիս մինչև նրա կազմը օրենքով սահմանված կարգով նոր անդամներով լրացնելը, անհրաժշտության դեպքում իր դատական ատյանի կազմին մասնակցելու համար իրավիրել դատական պալատի նախագահին կամ անդամներից մեկին: Այդպիսի օրենսդրական լուծումը հնարավորություն էր տալիս սենատին խորագիր իր աշխատանքների ծախողումից այն դեպքերում, երբ նրա անդամներից մեկը՝ իրվանդանում էր, կամ նրան բացարկ էր հայտարարություն կամ աշխատանքների գործերով Արտակարգ քննիչ հանձնաժողովը և արտակարգ դատարանը, օրենքով Արտակարգ դատարանի նախագահն էր համարվում արդարադատության նախարարի նշանակած սենատի անդամը (Դորովլեանսկին): Այն դեպքերում, երբ սենատը վճռաբեկության կարգով քննում էր Արտակարգ դատարանի դատավիճռը, ապա նրա այդ անդամը լսու օրենքի իրավունք չուներ մասնակցելու դատական քննությանը, իսկ մնացած երկու անդամներով չէր կարելի դատական կազմ ապահովել: Այդպիսով գործի վճռաբեկ քննությունը հետաձգվում էր անորոշ ժամանակով: Իսկ սենատում 1920 թ. փետրվարի 4-ի դրույթյամբ կար տասնվեց մեղադրյալների վերաբերյալ այդպիսի գործեր, որոնցից տասնինը բանտարկված էին:

1920 թ. մայիսի 20-ին արդարադատության նախարարը կառավարությանն առաջարկեց ընդունել օրենք, որով սենատորների թիվը երեքից ավելացվելու էր հինգի, ավելացրած նաև ավագ նախագահին, այն հաշվով, որ քաղաքացիական և քրեական դեպարտամենտներում առկա լինեն երեքական սենատորներ: Սակայն այդ առաջարկությունը Նախարարների խորհուրդը չընդունեց: Հետևաբար անհրաժեշտություն առաջացավ վերադառնալ «սենատի երկու դեպարտամենտների միացման» օրինագիծին, որովհետև քրեական և քաղաքացիական դեպարտամենտները առանձին-առանձին փաստորեն գոյություն չունեին և ձևականորեն անհրաժեշտ էր փոփոխության ենթարկել 1918 թ. դեկտեմբերի 6-ի՝ «Սենատի և դատաստանական ատյանի ներմուծման մասին Հայաստանի տերիտորիայի սահմաններում» օրենքի 3-րդ հոդվ., ինչը և արվեց 1920 թ. հունիսի 15-ին՝ օրենսդրական լիազորություններով օժտված բյուրո կառավարության ընդունած օրենքով: Սենատի կազմը հաստիքացուցակով

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 69, թ. 115:

հասցվեց վեց սենատորների միայն 1920 թ. հուլիսի 30-ին հաստատված «Արդարադատության նախարարության 1920 թ. երկրորդ կիսամյակի նախահաշիվները հաստատելու մասին» օրենքով<sup>1</sup>:

Հայաստանի Սենատի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ այն համաձայն 1920 թ. հոկտեմբերի 26 օրենքի կատարում էր նաև Գլխավոր ռազմական դատարանի գործառույթները<sup>2</sup>: Հայաստանի առաջին հանրապետության ռազմական դատական համակարգը ավարտվում էր ռազմաշրջանային դատարանի մակարդակով, որը հանրապետությունում մեկն էր<sup>3</sup>: Փաստորեն ռազմաշրջանային (օկրուգային) դատարանի այն դատավճիռները, որոնց վերաբերմամբ կային վճռաբեկ բողոքներ և գանգատներ, ի կատար ածելը կատեցվում էր, որովհետև վճռաբեկ ատյան չկար: Այս պայմաններում ելնելով նաև ֆինանսական խնայողություն անելով նկատառումից՝ «ռազմական նախարարը» ընդառաջելով ռազմաշրջանային դատարանի ռազմական դատախազի մշակած նախագծին, որն համաձայնեցվել էր նաև սենատի ու արդարադատության նախարարության հետ, Նախարարների խորհրդում հանդիս եկավ օրենդրական նախաձեռնությամբ. ընդունել օրենք «Գլխավոր ռազմական դատարանի գործառույթները Հայաստանի Սենատին հանձնելու մասին»: Օրենքով սենատի անդամների թիվը ավելացվում էր ևս մեկ սենատորով, որին նշանակելու էր օրենտիրը ռազմական և արդարադատության նախարարների համատեղ առաջարկության հիման վրա (հոդվ. 5): Սենատին կից հիմնվում էր նաև սենատի ռազմական ավագ դատախազի պաշտոն (գլխավոր ռազմական դատախազ), որը ենթարկվելու էր ռազմական նախարարին: Ռազմական ավագ դատախազը օժտված էր «Ռազմադատական կանոնադրությամբ» սահմանված գլխավոր ռազմա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, փ. 206, գ. 1, գ. 119, թ. 1, թ. 197:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, փ. 199, գ. 1, գ. 190, թ. 131:

<sup>3</sup> Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգում մեծ տեղ էր հատկացված ռազմական դատարաններին: Դրանք ընտառ էին զինօնառայողների հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը, իսկ նրանց նշանակալի դերը ընդհանուր դատական համակարգում պայմանավորված էր ընդհանուր դատարանների ընդհանուր պատկանող քրեական և քաղաքացիական գործերը ընդելու իրավունքով այն վայրերում, որտեղ հայտարարվում էր ռազմական դրույթը սենատի կավունքով այն վայրերում, որտեղ հայտարարված էր ռազմական դրույթը գնդային և դրան հավասար դատարաններ, ռազմաշրջանային դատարան, որ ուներ նաև հասուլ ատյան, գլխավոր ռազմական դատարան, այսինքն՝ ռազմական վճռաբեկ ատյան, որի գործառույթները կատարում էր Հայաստանի Սենատը: Բացի այդ մշտական գործող ռազմական դատարաններից գոյություն ուներ նաև ռազմադատային արդարադատության ինստիտուտը:

կան դատախազի բոլոր իրավունքներով և պարտականություններով (հոդվ. 4): Ռազմական ավագ դատախազին նշանակելու էր խորհրդարանը ռազմական նախարարի առաջարկությամբ:

Ինչպես տեսնում ենք սենատին վերաբերվող ընթացիկ այս օրենքներից ու նորամուծություններից շատերը առաջարկվում էին դեռևս 1918 թ. օգոստոսյան օրինագծերով, մասնավորապես «Վճռաբեկ դատարանի կանոնադրությամբ», սակայն դրանք չկենսագործվեցին 1918 թ. դեկտեմբերի 6-ի դատարանակազմական օրենքներով: Միայն հետագայում իրականության ստիպողական պահանջներից դրդված՝ արդարադատության նախարարությունը և օրենսդիրը վերադարձան այդ առաջարկություններին՝ նաև սենատին կենսագործելով դրանք:

### § 3. Երդվյալ ագենսակալների դատարանը Առաջին հանրապետությունում

Ալեքսանդր Երկրորդի դատական կանոնադրությունները, որոնք հիմք հանդիսացան Հայաստանում դատական համակարգը կառուցելիս և դատարանակազմության վերաբերյալ օրենքները ընդունելիս, նախատեսում էին նաև երդվյալ ատենակալների դատարանի հիմնադրում: Երդվյալների դատարանը գործելու էր շրջանային դատարանում իրականացնելով օրենքով սահմանված քրեական գործերի քննությունը:

Երդվյալների դատարանի ինստիտուտի ներմուծումը Հայաստան ունի իր նախապատմությունը: Կայսերության օրոք երդվյալների դատարանը Անդրկովկասի տարածքում չէր գործում: Երդվյալ ատենակալների դատարանի հիմնադրումը որպես խնդիր հանրապետության արդարադատության նախարարության առջև դրվել էր կառավարության 1918 թ. օգոստոսի 3-ի «Հայտարարագրով», որը պարտավորեցնում էր «մասնակից դարձնել քրեական դատավարությանը ժողովրդի ներկայացնելությին»<sup>1</sup>: Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգի հիմունքների մշակման և բարենրոգումների հեղինակները նախապատրաստելով օրինագծերը հաշվի էին նսուում կառավարության «Հայտարարագրի» այս դրույթի, ինչպես նաև հասարակայնության վաղեմի պահանջի հետ՝ Հայաստանում հիմնել երդվյալ ատենակալների դատարան:

Խնդիրի եռույթունը լավագույնս մատուցելու համար անհրաժեշտ ենք համարում, **առաջին**, ներկայացնել երդվյալների դատարանի դատարա-

<sup>1</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, 1918, թիվ 43:

ნაკავნალიან և ექვემდებარებულია იტენიურალიან კარგავიორმან ესთეტიკურ ცნობებით, **ხელორიფ**՝ ჯავასთანი ესთეტიკური ხელორიფი, რომელიც განვითარებს უძრავი და უძლიერი გარემონტური მუშაობების მიზანით. ხელორიფი განვითარებს უძრავი და უძლიერი გარემონტური მუშაობების მიზანით.

**3.1. Երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարության ընդհանուր բնութագիրը:** Երդվյալների մասնակցությամբ դատական քննությունից առաջ շրջանային դատարանը կատարում էր որոշ նախապատրաստական միջոցառումներ. ձևավորում երդվյալ ատենակալների կազմը, նշանակում պաշտպան (եթե մեղադրյալը ինքը չէր ընտրել), որոշում էր դատական նիստի տեղը և ժամանակը: Որդի դատական քննությունը սկսվում էր նիստի պաշտոնական բացումով: Օրենք պահանջում էր, որ դատական նիստը բացելու պահին պետք է ներկա գտնվեր երեսունից ոչ պակաս ատենակալ<sup>1</sup>: Երդվյալ ատենակալների ցուցակը ներկայացվում էր դատախազին կամ մասնավոր մեղադրողին, իսկ այնուհետև՝ մեղադրյալին: Կողմերը կարող էին բացարկել վեցից ոչ ավել ատենակալ: Մնացած տասնոր ատենակալներից վիճակահանության միջոցով ընտրում էին տասերկու երդվյալներ և երկու պահեստային ատենակալներ: Այնուհետև՝ ատենակալները երդում էին տալիս, իրենց կազմից ընտրում էին ավագ՝ իրենց աշխատանքները դեկավարելու համար: Դատաքննությունը և կողմերի վիճարանությունը շրջանային դատարանում երդվյալների մասնակցությամբ նման էր գործերի քննությանը առանց երդվյալ ատենակալների: Էապես տարբեր էր միայն դատավճռի կայացման փուլը: Երդվյալ ատենակալների մասնակցությամբ գործերի քննության դեպքում դատարանի նախագահը կողմերի վիճարանությունից հետո ատենակալների ավագին էր տալիս հարցարերիկը և բացատրում նրանց՝ ա) քննվող գործի էական հանգամանքները և հանցագործությանը վերաբերող օրենքները, բ) ապացույցների գնահատման ընդիհանուր իրավական իմացքերը:

Երդյալ ատենակալներին հաճանված հարցաթերթիկը պարունակում էր հետևյալ հարցադրումները.

ա) արդյոք տեղի՞ է ունեցել ամբաստանյալն մեղադրելու առիթ հանդիսացած դեպքը,

բ) մեղավոր է՝, թե՞ անմեղ ամբաստանյալը ըստ մեղադրանքի առարկայի:

Խորհրդակցական սենյակում երդյվյալ ատենակալները կղեգիալ կարգով պետք է պատասխան տային այդ հարցերին ձայների մեջամասնությամբ։ Հավասար ձայների դեպքում ընդունվում էր այն կարծիքը, որը խոսում էր հօգուտ ամբաստանյալի։

Արդարացման վերջինի դեպքում դատարանը անմիջապես ազատում էր ամբաստանյալին, իսկ մեղադրականի դեպքում՝ լուրում էր դատախազի եզրակացությունը, այնուհետև՝ կայացնում դատավճիռ: Այդ դատավճիռը համարվում էր վերջնական և վերաքննիչ կարգով զանգատարկման կամ բողոքարկման ենթակա չէր: Վերջնական և օրինական ուժի մեջ մտած դատավճիռները՝ կայացված երդվյալների մասնակցությամբ, կարող էին վերանայավել միայն վճռաբեկության կարգով Հայատահանի Սենատի քրեական բաժանմունքում:

Հայաստանում որպես կայսերական ժամանակներից մնացած ժառանգություն, դատավարության պաշտոնական լեզուն ուսւերեն էր: Վկաները և գործին մասնակցող այլ անձինք, ովքեր չփոխեին ուսւերեն, դատարանում հաղորդակցվում էին բարզմանի օգնությամբ:

**3.2. Երդվյալ ատենակալների դատարանի հիմնադրման կողմ և դեմ տեսակետները:** 1918 թ. օգոստոս ամսին արդարադատության նախարարության կազմակերպած և դատական համակարգի շինարարության ու բարենորոգումների խնդիրներին նվիրված խորհրդակցություններում բարձրացվել է նաև Երդվյալ ատենակալների դատարանը Հայաստանում հիմնելու հարցը: Արդարադատության նախարար Գ. Տեր-Պետրոսյանը առաջարկում էր հաշտարար դատարանների ընդլատությունից դրւում մնացող բոլոր քրեական գործերով դատական քննությանը շրջանային դատարանում մասնակից դարձնել Երդվյալ ատենակալներին: Այդ քայլով ընդիհանուր քրեական դատարանների համակարգում դատական պալատը որպես վերաքննիչ ատյան ինքնարերաբար դառնում էր ավելորդ<sup>1</sup>: Այս առաջարկը՝ փոխարինել պետական քրեական դատարանը Երդվյալ ատենակալների դատարանով, դարձավ վիճակարույց:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, զ. 68, թ. 30:

սակայն կողմ էին շոֆենների դատարանի կազմակերպմանը<sup>1</sup>: Երևանի շրջանային դատարանի նախագահ՝ Դոբրովլյանսկին երդվալ ատենակալմերի դատարանի դեմ ուղղված իր առարկությունները հիմնավորում էր նրանով, որ «տեղական քնակչության զանգվածների անկուլտորականությունը ստեղծում է բարենպաստ հոդ արդարադատության առութանքի համար: Բացի այդ տեղական քնակչության անկուլտորականությունը մեծ դժվարություններ կհարուցի երդվալ ատենակալմերի ցուցակները կազմեիս, դժվար կլինի հավաքել անձանց խմբաքանակը, որ կարող են դառնալ երդվալ ատենակալ ... Հայաստանի Հանրապետության համար ավելի ընդունելի է խոդի դատարանի սկզբունքի հիմնան վրա կառուցված շոֆենների դատարանը, որոնք շնորհիվ իրենց կուլտորականության կկարողանային ավելի շատ օգուտ տալ արդարադատությանը քան երդվալ ատենակալմերը»: **Երրորդ տեսակետի** կողմնակիցները անվերապահորեն կողմ էին երդվալ ատենակալմերի դատարանի հիմնադրմանը և գտնում էին, որ ցանկացած արգելվ այդ ճանապարհին հնարավոր է հաղթահարել և հիմնել այդ դատարանը. «Քնակչության բազմազգ լինելը արգելվ չի հանդիսանա դատարանի ներմուծման համար, մեծամասամբ և երդվալ ատենակալմերը և վկաները կլինեն հայեր, խաղը կազմը՝ հայեր և բարարներ, ևս ընդհանուր լեզու կատնի, իսկ պետական դատավորների համար կլինեն քարզանիներ: Երդվալ ատենակալմերի կաշառման և նրանց վրա ճնշում գործադրելու հնարավորությունները ծայրահետորեն կասկածելի են, քանի որ երդվալ ատենակալմերի ընտրության եղանակից դժվար է կրահել, թե նրանցից ով կմտնի ատյանի կազմի մեջ, իսկ կաշառել երդվալմերի ամբողջ զանգվածը՝ պատկերացվում է անհնարին գործ»: **Երրորդ տեսակետը**, որը մեր կարծիքով ամենից հիմնավորն էր, սկզբունքորեն կողմ էր երդվալ ատենակալմերի դատարանին, սակայն ենթով հանրապետության կյանքի իրական պայ-

<sup>1</sup> «Schoffen»-ը գերմանական դատական իրավունքին հատուկ հնատիտուտ է: Նշանակում է դատական ատենակալ, որը կատարում է դատավորի պարտականություններ քրեական դատավարությունում (հասարակական հիմունքներով և չունի իրավաբանական բարձրագույն կրթություն) հանդիսանալով դատական կազմի լիրական անդամ, օժովակ դատավորի անկախությամբ, ծայնի նույն իրավունքներով ինչ որ մասնագետ դատավորները: Իր կարգավիճակով նման է խորհրդային դատական իրավունքին հասույ ժողովրդական ատենակալմերին: Շոփենների և երդվալ ատենակալմերի խափուտուների հիմնական տարրերությունը այն է, որ առաջինի դեպքում ատենակալմերը և դատավորները միավորված են մեկ միասնական կոլեգիայի մեջ, իսկ երկրորդ դեպքում՝ ատենակալմերը և դատավորները առանձնացված են (տե՛ս Carl Creifelds, Rechtsworterbuch, Munchen, 1995, էջ 1080):

մաններից գտնում էր այն կենսագործելով մի խնդիր, որը շատ դժվարություններ ու բարդություններ կառաջացներ: Պաշտպանելով իրենց դիրքությունը այս տեսակետի կողմնակիցները ապացուցում էին, որ «մեր հիմնարկությունների համակարգում բացակայում են ինքնավարությունները, որոնք անհրաժեշտ նախադրյալ են երդվալ ատենակալմերի դատարանի համար. ծագում են լորջ կասկածներ այդ միջոցառման անժամանակ լինելու մասին շարունակական հանցավորության, իրավագիտակցության խախտման պայմաններում...»: Որպես երդվալմերի դատարանի կենսագործման պայման վերջին տեսակետի կողմնակիցները առաջարկում էին դատարանների «ազգայնացման», այսինքն՝ գործափարության և դատավարության հայացման խնդիրը, որի լուծումը մեկ հարվածով անհնարին էր: Այնպիսի պայմաններում, եթե ատենակալմերի մեծ մասը չգիտեր ուստերեն, իսկ դատական և դատախազական պաշտոնյանները հիմնականում ուսւախու էին, նոյնիսկ թարգմանի ներկայությունը չեր շտկի դրույթումը, որպինեսու «այդպիսի դատավարությունը ոչ թե դատարան կլիներ, այլ բարելոնյան խառնամբոյն մեծ մասը կրացատրվի ուստերեն, վկանները ցուցմունք կտան հայերեն, երդվալ ատենակալմերը կրնկալեն վկաններին անմիջապես»: Այս պայմաններում դատարանի նախագահի եզրափակի խոսքը ու կողմերի դատական վիճարանությունները երդվալ ատենակալմերը պետք է ընկալեին թարգմանների միջոցով:

Ինչևէ, հաղթանակեց այն տեսակետը, որ երդվալ ատենակալմերի դատարանը Հայաստանում պետք է ստեղծվի և մամուլում իրապարակվեց այդ «Ժողովրդավարական» միջոցառման իրականացման մտադրության մասին<sup>1</sup>:

**3.3. Երդվալ ատենակալմերի դատարանի օրինադրական հիմնադրությունը:** Օգոստոսյան խորհրդակցությունների արդյունքում արդարադատության նախարարության մշակած դատարանակազմության վերաբերյալ օրինագծերի փաթեթում առանձին իրավական փաստարդի տեսքով հանդես էր գալիս նաև «Դատական հաստատությունների կանոնադրության մեջ մի քանի փոփոխությունների մասին» օրինագիծը,<sup>2</sup> որի հոդվածների մի մասը նվիրված էին Հայաստանի Հանրապետությունում երդվալ ատենակալմերի դատարանի հիմնադրմանը:

Որո՞նք էին այդ օրինագծի հիմնական դրույթները և նշված կանոնադրության մեջ նշոված սկզբունքային փոփոխությունները: Նախ և ա-

<sup>1</sup> Տե՛ս «ՀՀ Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, 1918, թիվ 1:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 15:

ոաջ օրինագծով առաջարկվում էր վերացնել «Ղատական հաստատությունների կանոնադրության» այն հոդվածները, որոնց ուժով մինչ այդ Անդրկովկասում չէր ստեղծվել երդվալ ատենակալների դատարանը<sup>1</sup>: Այնուհետև օրինագիծը նախատեսում էր, որ ընդիմանուր ընդդատու թյան բոլոր քրեական գործերը շրջանային դատարանում պետք է քննվեին երդվալ ատենակալների մասնակցությամբ: Օրինագիծը վերացնում էր կանոնադրության այն հոդվածները, որոնք սահմանում էին հակաժողովրդավարական, դասային արգելքներ երդվալ ատենակալների ընտրության համար: Մասնավորապես լրիվ վերացվում էր երդվալ ատենակալների թեկնածուների համար սահմանված գույքային ցենզը, երդվալ ատենակալ ընտրվելու իրավունք էին ստանում ժողովրդական դպրոցների ուսուցիչները, տնային ծառայողները<sup>2</sup>:

Երդվալ ատենակալների դատարանի հիմնադրումով որոշակի դժվարություններ էին առաջանում դատավարության լեզվի հարցում: Մինչ այդ դատավարությունը տարվում էր ոռուերեն լեզվով: Հայաստանի Հանրապետության հոչակնամբ անհրաժեշտություն էր առաջանում անբողջ վարույթը դատարաններում և դատական քննությունը ենթարկել «ազգայնացնան»: Սակայն արդարադատության նախարարությունը օրյեկտիվություն չէր կարող իրականացնել այդ հրամայական պահանջը, որովհետև չկար հայերեն լեզուն իմացող դատադատախազաքննչական «գործիչների» անհրաժեշտ խմբաքանակ: Արդարադատության նախարարությունը չէր կարող իրականացնել գոնե երևանի շրջանային դատարանի քրեական բաժանմունքի մասնակի հայացում, այն իմաստով, որ գոնե միայն դատական նիստը վարվեր հայերեն լեզվով, որովհետև չնայած նրան, որ փաստաբանների մեծ մասը, դատախազները հիմնականում և դատավորների մի մասը հայեր էին, այնուամենայնիվ «ինչքան էլ դա ցավակի է խոստվանել, ոչ մեկը ոչ էլ մյուսները և ոչ էլ երրորդները իրենց ընդունակ չեն համարում վարելու դատավարությունը մայրենի լեզվով»<sup>3</sup>:

«Ղատական հաստատությունների կանոնադրության» 22-րդ հոդվ. 6-րդ կետը սահմանում էր, որ երդվալ ատենակալները պետք է տիրապետեին ուսուերեն լեզվին, այդ թվում նաև կարդալուն<sup>4</sup>:

Հնարավորություն չունենալով իրականացնելու գոնե շրջանային դատարանի քրեական բաժանմունքի «ազգայնացում», արդարադատության նախարարությունը 1918 թ. օգոստոսյան օրինագծով առաջարկում էր փոխել վերոհիշյալ նորմը այն իմաստով, որ «Երդվալ ատենակալը լինի գրագետ և ոռուերեն լեզու հասկացող» Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ենթելով այն ենթադրությունից, որ «բավարար է, որ պեսզի երդվալ ատենակալը գրագետ լինի ինչ-որ լեզվով՝ լինի դա բարձրեն, ասորերեն և այն ու լրիվ բավարար է ոռուաց լեզվի որոշ իմացությունը՝ այն աստիճանի, որպեսզի մեղադրանքի և պաշտպանության թե-զիսները ընկալվեն երդվալ ատենակալների կողմից»:

Այս պայմանների իրականացման դեպքում միայն արդարադատության նախարարությունը հնարավոր էր համարում երդվալ ատենակալների դատարանի հիմնադրումը և գտնում էր, «որ ավելի լավ է դնել արդարադատության իրականացմանը ժողովրդի մասնակցության առաջին քայլը, քան թե իրաժարվել այդ շատ օգտավետ բարենորոգչությունից»<sup>5</sup>:

1918 թ. սեպտեմբերի 5-ին Նախարարների խորհրդություննարկելով արդարադատության նախարարի առաջարկած այս օրինագիծը, ուղղում մտցրեց նրա մեջ վերացնելով 81-րդ հոդվ. 3-րդ կետի առաջարկված նոր խմբագրությունը. «Պահանջը, որպեսզի Հայաստանի Հանրապետությունում երդվալ ատենակալն իմանա ոռուերեն լեզուն Նախարարների խորհրդի տեսակետից հանդիսանում է անբույլատրելի: Այդ իսկ պատճառով ճանաչելով հայոց լեզուն պետական, տեխնիկական բնույթի նկատառումներով ժամանակավոր միջոցառման տեսքով կարելի է թույլ տալ, որպեսզի դատավարությունը տարվի երեք լեզուներից մեկով՝ հայերեն, ոռուերեն, բարարերեն՝ կողմերի ընտրությամբ, ընդ որում այդ դեպքում մեծ դեր պետք է հատկացվի դատական բարգմանին»<sup>6</sup>:

1918 թ. օգոստոսին արդարադատության նախարարության նախապատրաստած երդվալ ատենակալների դատարանի օրինագիծը ամբողջովին ու հիմնավոր կերպով կողմիջկացիայի էր ենթարկում «Ղատական

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 15, ինչպես նաև Սահմանադրության կանոնադրության մասին այլ օրենքները:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 15, ինչպես նաև Սահմանադրության մասին այլ օրենքները:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 15, ինչպես նաև Սահմանադրության մասին այլ օրենքները:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, գ. 1, գ. 68, թ. 13:

հաստատությունների կանոնադրության» 81-109-րդ հոդվածները, որոնք կանոնակարգում էին այդ հարաբերությունները, որանցից յուրաքանչյուրը շարադրելով համբավետության իրականությամբ համապատասխանող խմբագրությամբ կամ վերացվելու դեպքում ուղղակիրեն նշում հոդվածի լրիվ կամ մասնակի վերացման մասին: Այս փաստը ուշազրավ է, որովհետև հետագայում այդ կապակցությամբ ծագելու էին օրենսդրական բարդություններ ու հակասություններ: Իսկ դրանք հետևանք էին այն բանի, որ 1918 թ. դեկտեմբերի 6-ի «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» օրենքը Հայաստանի խորհրդի կողմից ընդունվելիս, որպես նախնական հիմք վերցվել էր ոչ թե օգոստոսին մշակված օրինագիծը, այլ լրիվ ուրիշ նախազիծ և արդյունքում ընդունվել էր յոր հոդվածից բաղկացած մի օրենք, որի 1-ին հոդվածը հոչակում էր, որ Հայաստանի տարածքի սահմաններում մտցվում է դատարան երդվյալ ատենակալներով՝ «Քրեական դատավարության կանոնադրության» հիման վրա: Այդ կապակցությամբ նշյալ օրենքի 2-րդ հոդվածը վերացնում էր «Դատական հաստատությունների կանոնադրության» 437-րդ հոդվածը, որի ուժով երդվյալների դատարանը Անդրկովկասում չէր գործում<sup>1</sup>:

**3.4. «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» օրենքի թերությունները և դրանց հաղթահարման փորձերը:** «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» 1918 թ. դեկտեմբերի 6-ի օրենքում տեղ էին գտել նորմեր, որոնք ընդհանրապես որևէ առնչություն չունեին օրենքի կարգավորման առարկայի՝ երդվյալ ատենակալների դատարանի նեմուծման հետ: Օրինակ՝ 2-րդ հոդվածը ուժով վերացվում էին «Դատական հաստատությունների կանոնադրության» 113-րդ և 450-րդ հոդվածները, որոնցից առաջինն իր կարգավորման առարկայով վերաբերվում էր դատական պալատի բաժնանունների համատեղ նիստին նախագահող ավագ նախագահին, իսկ երկրորդը՝ հաշտարար դատավորների օգնականների ինստիտուտին: Քանի որ ո՞չ առաջինը, ո՞չ էլ երկրորդը երդվյալների դատարանի հետ ոչ մի առնչություն չունեին, ապա դրանց ընդգրկումը օրենքի տեքստի մեջ անհասկանալի է: Այդպիսի թյուրիմացություններ էր առաջացնում նաև օ-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի խորորդի հաստատած օրենքները, Երևան, 1918, էջ 30-31, ինչպես նաև Օсобенния учреждение судебных установлений, էջ 47, հոդվ. 437: В св.: Полный сводъ законов Российской Империи. 1904., Т. 16, часть I, книга II:

րենքի 7-րդ հոդվ., որը հետագայում օրենքը կիրառող իրավաբանների համար մեծ դժվարություններ էր ստեղծելու դրանք կիրառելիս և մեկնարամնելիս: Օրինակ՝ 7-րդ հոդվ. ուժով վերացվում էր «Քրեական դատավարության կանոնադրության» 202-րդ հոդվ., համաձայն որի բափառաշրջիկների նկատմամբ հարուցված քրեական գործերն ընդդատյա էին շրջանային դատարաններն առանց երդվյալ ատենակալների<sup>1</sup>: Ենթադրվում է, որ այդ հոդվածի վերացմամբ օրենսդիրը ցանկացել էր դրանք ևս ընդդատյա դարձնել երդվյալների դատարաններն: Սակայն առանց հասուն նշանամբ այդ մասին, միայն 202-րդ հոդվ. վերացմամբ այդ գործերը ինքնարերար անցնում էին հաշտարար դատարանների ընդդատությանը, որովհետև այդ հանցակազմները ոչ կացության իրավունքների գրկմամբ (ազատազրկմամբ) ոչ էլ դրանց սահմանափակումներով չէին պատճենում:

Հետագայում, եթե արդարադատության նախարարությունը փորձելու էր կենսագործել «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» 1918 թ. դեկտեմբերի 6-ի օրենքը, պարզվելու էին նաև նոր թերություններ:

Ինչիցեւ, Հայաստանում հիմնադրվեց երդվյալ ատենակալների դատարան: Սակայն «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» օրենքն ավելի շատ հոչակագիր էր, ձևական ձեռնարկ, քան թե հանրապետության կյանքի իրական կարիքներից ելնող իրավական ակտ, որովհետև նախ դժվար էր լինելու այն կենսագործել մի պետության մեջ, որի բնակչությունը գտնվում էր անընդհատ տեղաշարժերի մեջ՝ պատերազմի ու գաղրի հետևանքով: Պետության մեջ, որ ապրում էր սուր տնտեսական, քաղաքական ճգնաժամ, որ ավելի շատ զգացվում էր ոչ թե ժողովրդավարական ինստիտուտների, ընթացակարգերի, ձեռնարկների կարիք, այլ արագաշարժ դատարանի ու դատավարության, անիշխանության և ածող ու ահավոր հանցավորության դեմ գործուն պայքարի կարիք, պետության մեջ, որ չկային ամուր ժողովրդավարական ավանդույթներ և իրավագիտակցության բարձր մակարդակ, ըստ Էուրոպա այդ օրենքը տեղին չէր: Ի դեմս երդվյալ ատենակալների մի նոր խոչընդոտ էր ավելանում արդարադատության արագ և անկանգառ իրականացման ճանապարհին:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի խորորդի հաստատած օրենքները, 1918, Երևան, հոդվ. 53, էջ 31, ինչպես նաև՝ Ստավ уголовного судопроизводства, հոդվ. 202: В кн.: Российское законодательство X-XX веков. М. 1991. Том 8, Судебная реформа. էջ 139:

Երդվյալ ատենակալների դատարանի մասին օրենքը մնաց չիրագործված մինչև 1920 թ. գարունը: Արդարադատության նախարարությունը մինչ այդ 1919 թ. ընթացքուն փորձեր արել էր այն կենսագործելու, բայց անհաջող: 1919 թ. հունվարի 15-ին նախարարը Նախարարների խորհրդին գեկուցել է ժամանակավորապես, «երդից դուրս Երևան քաղաքում և նրա գավառում երդվյալների դատարան մտցնելու մասին», չպասելով այդ դատարանի գործողությունը հանրապետության ամբողջ տարածքի վրա տարածելուն: Միաժամանակ կառավարություն էր ներկայացվել նաև համապատասխան օրինագիծ: «Երդվյալ ատենակալների դատարանի մասին օրենքի որոշ հոդվածների ժամանակավոր փոփոխման և լրացման մասին»: Օրինագծով առաջարկվում էր փոփոխության ենթարկել 1918 թ. դեկտեմբերի 6-ի «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» օրենքի համապատասխան հոդվածները այն իմաստով, որ արագ, առանց պետական բյուջեն երդվյալ ատենակալների ցուցակները կազմելու հետ կապված ծախսերով ծանրաբեռնելու, ժամանակավորապես Երևան քաղաքում և նրա գավառում հիմնադրվի երդվյալների դատարան: Արդարադատության նախարարի առաջարկին հավանություն տալով Նախարարների խորհուրդը այդ օրինագիծը ներկայացրեց Հայաստանի խորհրդի հաստատմանը: Սակայն օրինագիծը Հայաստանի խորհրդում վերջնական օրենսդրական հաստատում չստացավ, որովհետև 1919 թ. ապրիլի 27-ին այն իր օրենսդրական լիազորությունները հանձնեց կառավարությանը: Վերջինն էլ ավելի շատ տարված լինելով խորհրդարանական ընտրությունների հիմնախնդիրներով՝ օրինագիծն չանդրադարձավ:

Արդարադատության նախարարությունում այս ուղղությամբ աշխատանքները շարունակեցին նոր նախարարի՝ Հ. Զմշկյանի օրոք: 1919 թ. հուլիսի 9-ին նախարարի նախաձեռնությամբ կազմակերպվեց խորհրդակցություն նվիրված «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» դեկտեմբերի 6-ի օրենքն իրականացնելու պայմանների մշակմանը<sup>1</sup>: Այդ խորհրդակցությունը ընտրեց հանձնաժողով, որը պետք է գրադպեր հարցի մանրամասնությունների մշակմանը: Աշխատանքը սկսելուց հետո հանձնաժողովի եգակացությունը միանշանակ էր՝ 1918 թ. դեկտեմբերի 6-ի օրենքն ուներ մի շարք թերություններ և անհարություններ՝ պայմանակարգած նախ և առաջ որոշակի օրենսդրատեսնիկական ոչ ճիշտ ձ-

ևակերպումներով: Մյուս կողմից Հայաստանի խորհուրդը օրենքը ընդունելիս հիմք էր վերցրել «Դատական հաստատությունների կանոնադրության» մինչեղափոխական խմբագրությունը, այնինչ երդվյալների ինստիտուտը օրենսդրական փոփոխությունների էր ենթարկվել Ժամանակավոր կառավարության կողմից՝ 1917 թ. սեպտեմբերի 21-ին<sup>2</sup>: Հանձնաժողովի համար անհասկանալի էր մնում, թե՞ իրագործելիս անհրաժեշտ է հաշվի առնել Ժամանակավոր կառավարության լրացումներն ու փոփոխությունները, թե՞ ոչ, որպիեսուն դրանց ուղղակի համեմատության դեպքում ծագում էին նաև հակասություններ:

1919 թ. սեպտեմբերի 8-ին արդարադատության նախարարը կառավարությանը ներկայացրել է նոր օրինագիծ երդվյալ ատենակալների դատարանի մասին: Այն կառավարության կողմից հավանության է արժանացել: Հավանաբար այս օրինագիծը մշակել էր վերոհիշյալ հանձնաժողովը՝ նպատակ ունենալով ազատվել նախկին օրենքի թերություններից և ստեղծել անհրաժեշտ իրավական նախադրյալներ ու պայմաններ երդվյալների ինստիտուտի կենսասագործման համար: Սակայն կառավարության կողմից խորհրդարան ուղարկված այդ օրինագիծը նորից ետ էր ուղարկվել կառավարություն, որին կցված էր Հայաստանի խորհրդարանի Օրենսդրական հանձնաժողովի հետևյալ բովանդակությամբ որոշումը: «Քննության առնելով Նախարարների խորհրդի սեպտեմբերի 8-ի նիստում հավանություն գտած օրինագիծը «Հայաստանի Հանրապետության սահմաններում երդվյալ ատենակալների դատարան մտցնելու մասին» և ի նկատի ունենալով, որ Հայաստանի խորհուրդը արդեն ընդունել է երդվյալ ատենակալների դատարան մտցնելու օրենքը և ներկայացված նախագիծը ոչ թե առաջարկում է լրացնել կամ փոփոխել արդեն գոյություն ունեցող օրենքը, այլ առաջարկում է ընդունել արդեն ընդունված օրենքը, ի նկատի ունենալով, որ օրինագիծը ներկայացված է ուստերեն լեզվով առանց ներկայացնելու իսկական գրված հայերեն լեզվով, հանձնաժողովը վերադարձնում է այն պայմանների դիմանին առանց քննության»:

Խորհրդարանի Օրենսդրական հանձնաժողովի դիտողություններն այնքան էլ հիմնավոր չէին և ավելի շատ երևի պատվախնդրությունն էր խոսում, քան կառուցողական դիրքորոշումը, որովհետև «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» օրենքը (1918 թ. դեկտեմբերի 6) ընդունել

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 33, թ. 119:

<sup>1</sup> Տես Երօսկին Հ.Պ., История государственных учреждений..., էջ 330:

էին նույն մարդիկ և հավանաբար դժվար էր առերևույթ խոստովանել ի-րենց քոյլ տված սխալները, թերությունները:

**3.5. Երդվյալ ատենակալների դատարանի նատաշրջամմերի գործարքություն:** «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա» օրենքի թերությունները հաղթահարելու անհաջող փորձերից հետո, այնուամենայնիվ, արդարադատության նախարարությունը անցավ գործի՝ կենսազործելու այդ օրենքը, չնայած թերություններին ու բացօղումներին: Ծրագրված էր 1920 թ. հունվարին սկսել Երդվյալների դատարանի գործունեությունը: Մշակվեցին անհրաժեշտ հրահանգներ և ուղարկվեցին տեղական ինքնավարություններին, որոնք օրենքի ուժով պարտավոր էին կազմել Երդվյալ ատենակալների ընդհանուր ցուցակները<sup>1</sup>:

Երդվյալ ատենակալների դատարանի առաջին նատաշրջանը Երևանի շրջանային դատարանում բացվել է 1920 թ. մարտի 15-ին<sup>2</sup>: Ահա թե ինչպես է նկարագրում այդ իրադարձությունը Ս. Վրացյանը տարիներ հետո: «Պակաս կարևոր դեաք չէր և Երդվյալ ատենակալների դատարանի բացումը, մարտի 15-ին դատական նիստի դասիինը զարդարված էր եռագույն ժապավեններով: Ներկա էին վարչապետ Ա. Խատիսյանը, արդարադատության նախարար Ա. Չիլինգարյանը, Խորհրդարանի անդամներ, դատաստանական ու հասարակական գործիչներ և խուռն բազմություն հետաքրքրվողների: Դատական նիստի սկզբին ողջույնի խոսք ասացին վարչապետը, արդարադատության նախարարը և դատարանի նախագահ Մակ. Մելիք-Միրզախանյանը: Ապա՝ թեմ բարձրացավ դատական կազմը. նախագահ՝ Ա. Մելիք-Միրզախանյան, անդամներ՝ Զ. Գեղամյան և Ա. Տեր-Հակոբյան. դատախազ Ա. Մալխասյան, դատախազի օգնական՝ Վ. Ահարոնյան, բարտուղարներ՝ Ն. Տեր-Հակոբյան և Ա. Շմավոնյան: Երդվյալ ատենակալներից ներկա էին 19 հոգի և 1 տեղակալ՝ բոլորն էլ տղամարդիկ: Նիստի բացումից և ընթացիկ ձևականությունները լրացնելու հետո, ատենակալները հայտարարեցին, թե իրենք հրաժարվում են կրոնական երդումից և ազնիվ խոսք են տալիս դատելու խնդի մտոր:

Կարճ ընդմիջումից հետո, վիճակահանությամբ կատարվեց 12 ատենակալների ընտրությունը: Հայաստանի անդրանիկ ատենակալների տասնյակի անդամ լինելու պատվին արժանացան Արշ. Տեր-Արքահանը, Սարգ. Հայսնազարյանը, Նշ. Ժամագործյանը, Վարդ. Մամաջան-

յանը, Գ. Տեր-Հակոբյանը, Սիր. Տեր-Մարտիրոսյանը, Գ. Վարդանյանը, Հմ. Սողոմոնյանը, Հովս. Ավետիսյանը, Զավ. Կորկոտյանը, Սիր. Արամեսյանը և Թար. Դրամիկյանը: Ընտրվածները մի քանի բոպեով հեռացան և ընտրեցին իրենց համար ավագ՝ Սիր. Տեր-Մարտիրոսյանին: Ատենակալները հասարակական տարրեր խավերի պատկանող մարդիկ էին: Առաջին գործը Դարալազյագի Ուլիհանորաշեն գյուղացի Ենովք Հովհաննիսյանի և Զանախչի գյուղացի Մանուկ Մովսիսյանի դեմ հարուցվող մեղադրանքն էր պարսկահպատակ Մամեդ Ասրյար Այի օղոլուն կողոպտելու փորձի դեմ: Ամբաստանյալներին պաշտպանում էր Երդվ. հավատարատար Գ. Տեր-Գրիգորյանը: Հարցաքննությունից, վկաներին և կողմերի ճառերը լսելուց հետո, Երդվյալ ատենակալները առանձնացան և 10 բոպեի խորհրդակցությունից հետո մեղադրյալներին հայտարարեցին անպարտը<sup>1</sup>:

Հետագայում Ալեքսանդրապոլի շրջանային դատարանում ևս գործել է Երդվյալ ատենակալների դատարան<sup>2</sup>, որի գործունեության վերաբերյալ փաստաբարային տվյալներ չեն պահպանվել:

Մինչ այդ, արդարադատության նախարարությունը մի քանի մասնակի օրենսդրական նախաձեռնություններով փորձում էր շտկել 1918 թ. դեկտեմբերի 6-ի օրենքի թերությունները: Այսպես՝ 1920 թ. փետրվարին մշակվել է «Դատական հաստատությունների հիմնարկի 109<sup>1</sup>-րդ հոդվ. փոխելու և լրացնելու մասին» օրինագիծը, որ մարտի 9-ին արժանացել է կառավարության հավանությանը և մարտի 22-ին ընդունվել է խորհրդարանի կողմից: Այս օրենքով սահմանվում էր, որ դատարանի նատավայրից դուրս ապրող Երդվյալ ատենակալներն իրավունք ունեն ստանալու օրապահիկ իրենց բնակության վայրից բացակայելու յուրաքանչյուր օրվա համար և ճանապարհածախս<sup>3</sup>: Օրենքի հիմնական նպատակն էր շահագրգուել ատենակալներին ներկայանալու շրջանային դատարանի նատաշրջամմերին և դրանով իսկ նպաստել արդարադատության իրականացման արագ ընթացքին, այլ ոչ թե խոչընդոտել:

Նախարարությունը փորձում էր ատենակալների համար այնպիսի կանոններ սահմանել, որ նրանք վկաների նման դատարանի նիստին իրենց չներկայանալու պատճառով խոչընդոտ չհանդիսանան արդարա-

<sup>1</sup> Տես «Վրացյան Ա.», Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 387-388:

<sup>2</sup> Տես «ՀՀ ՊԿՊԱ», ֆ. 199, գ. 1, գ. 33, թ. 71:

<sup>3</sup> Տես «Հայաստանի Հանրապետություն», Օրենքների հավաքածու, հրատ. Պառլամենտի, Երևան, 1920, թիվ 8, հոդվ. 73, էջ 61:

<sup>1</sup> Տես «ՀՀ ՊԿՊԱ», ֆ. 199, գ. 1, գ. 33, թ. 71:

<sup>2</sup> Տես «Յառաջ», թերթ, Երևան, 1920, թիվ 57:

դատության արագությանը և նպաստեն դատարանում քրեական գործերի կուտակմանը:

**3.6. Երդվյալ ատենակալների դատարանի հիմնախմբի բանագիրները և այդ դատարանի գործունեության կասեցման առաջարկությունը:** Երդվյալ ատենակալների դատարանի առաջին նստաշրջանը Երևանի շրջանային դատարանում տևեց 1920 թ. մարտի 15-ից մինչև ապրիլի 5-ը: Սակայն նստաշրջանը այնքան վատ էր կազմակերպված, որ հարուցեց նույնիսկ նստաշրջանին մասնակից երդվյալ ատենակալների բողոքը, որոնք նստաշրջանի ավարտին հասուկ հայտարարությանը դիմեցին դատարանի նախագահին: Հայտարարության մեջ ասված էր. «Երդվյալ ատենակալներս այսօր վերջացնելով առաջին նստաշրջանին ունեցած աշխատանքներս, նկատեցինք մի քանի հանգամանքներ, որոնք բացասական ազդեցություն են ունեցել երդվյալների աշխատանքների վրա և որոնց արիթրով հարկ ենք հանձնում անել հետևյալ դիտողությունները»

1. Երդվյալներից մի քանիսին ծանուցագրերը ժամանակին չէին հանձնվում, որի հետևանքով պարապմունքներին մասնակցում էին ոչ բոլորը, որը ծանրանում է հաճախող երդվյալների պարապմունքների վրա այն մտքով, որ ծանրաբեռնված են լինում քչերը: Ուստի երդվյալներս խնդրում ենք միջոցներ ձեռք առնել, որպեսզի ծանուցագրերը ճշշտ ու ժամանակին հանձննեն երդվյալներին:

2. Դատարանը մի քանի ատենակալներ ազատել է ներկա նստաշրջանի պարապմունքներին մասնակցելու պարտականությունից, որպեսզի արտոնությունները վատ են ազդում մասնակցող ատենակալների հաջող գործունեության վրա ... Խնդրում ենք քացի օրենքով նախատեսվածից ոչ որի չափատել այդ պարտականությունից:

3. Երդվյալներից ոմանք կամ բոլորովին չէին հաճախում դատարանի պարապմունքներին և կամ հաճախ բացակայում էին: Այդ այն պարզ պատճառով, որ այդպիսիների պատասխանատվության չափը շատ չնշին է: Ուստի խնդրում ենք միջոցներ ձեռք առնել սահմանել պատասխանատվության այնպիսի չափ, որից խուսափելով ոչ հարգելի պատճառներով, անհնարին լինի...»:

Շրջանային դատարանի նախագահը այս հայտարարությունը իր կից գրության հետ միասին ուղարկել է արդարադատության նախարարին 1920 թ. ապրիլի 27-ին գեկուցելով, «որ դատարանը քննելով վերոհիշյալ հայտարարությունը իր բաժանմունքների ընդհանուր ժողովով, գտնում է, որ ծանուցագրերը երդվյալ ատենակալներին ուշ հանձնելու, նրանց չներկայանալու պատճառով նշանակված տուգանքի սակավութ-

յան և դատապարտվածների բանտից փախուստի առաջն առնելու միջոցներ ձեռնարկելու մասին նոցա արած ցուցմունքը բոլորովին իրավացի է: Առաջին նստաշրջանի արդյունքը ցոյց է տալիս, որ երդվյալ ատենակալների ծանուցագրերը թեպետ ուղարկված են եղել քաղաքային միլիցիապետին վահորոր, բայց այդպիսիները հանձնվել են ըստ պատկանելույն շատ ուշ, որի հետևանքը եղել է այն, որ նիստին մասնակցել են նոցանից միայն մի քանիսը. եղել են դեպքեր, որ երդվյալ ատենակալներից ոմանք խուսափել են իրենց պարտականությունը կատարելուց և այդ հանգամանքը վերացնելու համար անհրաժեշտ է ավելացնել տուգանքի չափը համաձայն «Քրեական դատավարության կանոնադրության» 651-րդ հոդվ.՝ առնվազն մինչև 2000 ռ....»: Այս երկու փաստաթղթերն էլ ապացում են, որ չնայած երդվյալ ատենակալների դատարանի ժողովրդավարական էությանը, այսուամենայնիվ այն չէր համապատասխանում ժամանակի իրադրությանը և մքննորդությն: Սակայն զարմանալին ոչ թե սա է, այլ այն որ անմիջապես մայրաքաղաքում խորհրդարանի քիչ տակ գործող շրջանային դատարանը և նրա նախագահը լինի անտեղյակ էին խորհրդարանի օրենսդրական աշխատանքների ընթացքից և նոյնիսկ ընդունված ու հրապարակված օրենքներից: Խոսքը գնում է նախագահի գեկուցագրի այն առաջարկի մասին, որում հիմնավորվում է ավելացնելու երդվյալ ատենակալների դատական նստաշրջանին չներկայանալու կամ խուսափելու համար սահմանված տուգանքի գումարը: Այնինչ խորհրդարանը 1920 ապրիլի 3-ին արդեն ընդունել էր «Հայտարար և ընդիանուր դատական հաստատությունների մեջ քրեական գործերի համար առնելիք գումարները բարձրացնելու մասին» օրենքը, որն իրատարակված էր խորհրդարանի օրենքների հավաքածուի մեջ ապրիլի 20-ին<sup>1</sup>:

Համաձայն այդ օրենքի վերոհիշյալ 651-րդ հոդվ. արդեն ներքարկած էր փոփոխության և նոր խմբագրությամբ այն սահմանում էր. որ երե երդվյալ ատենակալն առանց օրինական պատճառների չներկայանա դատարան «նա կենքարկվի առաջին անգամ դրամական տույժի 500 ռ. մինչև 3000 ռ., իսկ երկրորդ անգամ բացի դրամական տույժից նաև պատասխանատվության համաձայն պատժական օրենսդրի»: Մինչ այս գործող կարգին համապատասխան քրեական պատասխանատվությունը վրա էր հասնում երրորդ անգամ չներկայանալուց հետո և արտահայտվում էր նրանով, որ դատարանը այդպիսի ատենակալին կարող էր գրկել հանրության վատահությունը պահանջող պաշտոնների ընտրությունները:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. Պառլամենտի, Երևան, 1920, թիվ 7, հոդվ. 58, էջ 49-52:

թին մասնակցելու և ընտրվելու իրավունքներից: Ուշագրավ է այն, որ ըստ «Օրենքն ուժի մեջ մտնելու մասին» օրենքի յուրաքանչյուր նոր ընդունված օրենսդրական փոփոխություն պեսք է գործողության մեջ մտնելու հրատարակումից հինգ օր հետո, այսինքն՝ ապրիլի 26-ից, իսկ զեկուցագիրը դատարանի նախագահը արդարադատության նախարարին էր ուղարկել ապրիլի 27-ին<sup>1</sup>:

Չնայած ձեռնարկվող միջոցառումներին երդվյալ ատենակալների դատարանի գործունեությունը այդպես էլ չհաջողվեց դարձնել բեղմնավոր և արյունավետ: Արդարադատության նախարարությունը ուսումնափրեկով երդվյալ ատենակալների դատարանի գործունեության առկա փորձը, 1920 սեպտեմբերի 10-ին Նախարարների խորհրդին ներկայացրեց օրինագիծ «Քրեական դատավարության կանոնադրության մի շարք հոդվածներ փոփոխության և լրացման ենթարկելու մասին», որի հիմնական նպատակն էր գործուն ատյանի վերածել երդվյալների դատարանը: Մինչ այս օրինագիծի բովանդակության քննարկմանն անցնելը նշենք, որ Երևանի շրջանային դատարանի նատաշրջանին նախակցող երդվյալ ատենակալների դժգոհությունը այնքան շատ էր, որ նրանք 1920 թ. հոկտեմբերի 18-ին զեկուցագրով ուղղակիրուն դիմեցին նախարարին վերջինիս ուշադրությունը հրավիրելով երդվյալ ատենակալների դատարանի գործունեության ընթացքում ի հայտ եկած թերությունների վրա: Այդ ատենակալները մասնակցում էին Երևանի շրջանային դատարանի տասշրու օր տևողությամբ նշանակված նատաշրջանին և ուր օրվա ընթացքում քննել և դատավճռի էին կայացրել ընդամենը երկու գործով: Մնացյալ գործերը հետաձգվել էին: Այդ փաստաթուղթը շատ հետաքրքիր է ու բովանդակալից: տալիս է երդվյալների դատարանի գլխավոր թերությունները և նրա բեղմնավոր գործունեության արգելվները, այդ իսկ պատճառով արժե այն մեջքերել համարյա ամբողջությամբ. «Երդվյալ ատենակալների թիվը օրենքով պիտի լինի երեսուն և տեղապահներին՝ երեք, ընդամենը՝ երեսուներեք: Այս նատաշրջանում դատարանը ատենակալներից երկուսին ազատեց, գտնելով նրանց ներկայացրած վկայականը օրինավոր: Չորս թե հինգ հոգի ծանուցագիրը չի ստացել քաղաքից բացակա լինելու հետևանքով: Երեքից-չորս հոգի հիվանդ են և չեն կարողանում հաճախել նիստերին: Այնպես որ երեսուներեք հոգուց մնացին քանի ներկայության մեջ:

<sup>1</sup> Այդ փաստը վկայում է, որ օրենքների հրավարակված ժողովածուները և կառավարության պաշտոնական տեղեկագրերը ժամանակին չեն հասցել տեղական մարմիններին և դատարաններին, որպեսզի վերջիններս կարողանային տեղեկանալ օրենսդրական և ներարենսդրական նորամուծություններին:

քսանչորս հոգի, որոնք շատ քիչ բացառությամբ ամենայն սիրով և ճշտապահությամբ ամեն օր հաճախում են նիստերին, բայց և այնպես շատ գործեր հետաձգվեցին, ահա թե ինչո՞ւ

Վկաները և մեղադրյալները բացակայում են միլիցիայի անշնորհքության և անփութության պատճառով: Միլիցիան ժամանակին չի հանձնում ծանուցագրերը ըստ պատկանելույն, ծանուցագրերի երկրորդ օրինակները չեն վերադարձվում ժամանակին ... վկաներից շատերը պատերազմի կամ այլ պատճառներով գործում են Երևանի շրջանային դատարանի սահմաններից դուրս, իսկ այլ հանգամանքը օրինավոր պատճառ է նիստին ներկա չգտնվելու համար ...

Օրենքը բույլ է տալիս պաշտամանին և մեղադրանքի ներկայացուցիչն հեռացնել ատենակալների կազմից երեքական հոգի առանց բացարության և քանի հոգի էլ ուղենան՝ պատճառաբանված: Միննույն ժամանակ օրենքը պահանջում է, որ նիստին մասնակցող ատենակալների թիվը լինի տասնութ, որպեսզի թվից տասներկու հոգի վիճակով ընտրվում են ատենակալ և երկու հոգի՝ տեղապահ: Եթե տասնութ հոգուց պակաս է՝ վիճակ չի գցվում, կազմը հայտարարվում է ոչ օրինավոր և գործը հետաձգվում է: Չնայած որ օրենքը կողմներին բույլ է տալիս մինչև երեք հոգի յուրաքանչյուրին հանել, բայց այս նատաշրջանում կողմերը ըստ կերպով օգտվեցին իրենց տրված իրավունքից և մի քանի գործ հետաձգեցին այդ պատճառով: Մի անգամ երդվյալ ատենակալների թիվը քանի հոգի էր, մեղադրանքի ներկայացուցիչը ոչ ոքի չհանեց, իսկ պաշտպանը հեռացրեց երեք հոգու՝ կազմը դարձավ տասնյոթ, գործը հետաձգվեց: Մինչդեռ եթե նա երկուսին հեռացներ կմնար տասնութ և գործը կշարունակվեր: Երկրորդ անգամ պաշտպանը չհեռացրեց, բայց մեղադրողի ներկայացուցիչը երեքին հեռացրեց, ելի մնաց տասնյոթ հոգի և գործը դարձավ հետաձգվեց, մեղադրյալը մնաց դամոլիշան սրի տակ ու ելի մի քանի ամիս տանընքներ պիտի կրեր՝ մնալով անորոշության մեջ:

Երրորդ անգամ երդվյալ ատենակալներ կային քանամեկ հոգի, պաշտպանը ոչ ոքի չհեռացրեց, իսկ մեղադրանքի ներկայացուցիչը հեռացրեց երեք հոգու առանց պատճառաբանության և մի հոգու էլ պատճառաբանությամբ ... այդպես հեռացնելով քանամեկ հոգուց չորսին մնացին տասնյոթ հոգի և գործը դարձավ հետաձգվեց: Եթե կար մեկ ատենակալ, որ կանխակալ կարծիք էր կազմել գործի մասին, մեղադրանքի ներկայացուցիչը կարող էր հեռացնել նրան առանց բացարության երեքին մեջ, այն ժամանակ կմնային տասնութ հոգի և գործը կլավեր: Ի նկատ ունենալով ներկայիս անբանական պայմանները, պատերազմի և այլ հանգամանքի հետաձգվեցին անբանական պայմաններին:

գամանքի պատճառով ատենակալների դժվար հավաքելը, մեր կարծիքով, կամ պետք է աշխատել ատենակալների օրինական կազմի թիվը պակասեցնել և փոխարեն տասներկուսի ընդունել վեց և մեկ հոգի էլ տեղապահ, ընդամենը՝ 7, կամ պետք է պաշտպանը ու մեղադրանքի ներկայացուցիչը չօգտվեն օրենքով իրենց տրված իրավունքից. նրանք պետք է աշխատեն, որ գործը չհետաձգվի, այլ լսվի...»:

Այս գեկուցագիրը շատ համահունչ էր արդարադատության նախարարության մինչ այդ մշակած սեպտեմբերի 10-ի՝ «Քրեական դատավարության կանոնադրության մի շարք հոդվածներ փոփոխության և լրացման ենթարկելու մասին» օրինագծի հետ, որին կից համառու բացատրագիրը այսպես էր հիմնավորում օրինագծի ընդունման անհրաժեշտությունը. «Նատաշրջան հրավիրվող և մասնակցող երդվյալ ատենակալների թիվն է երեսուն ու տասներկու: Այդ թվով ատենականալների չհավաքելու հանգամանքը հաճախ է պատճառ դառնում նիստերի հետաձգման: Նախարարությունը գտնում է, որ հարկավոր է կրծատել նատաշրջան հրավիրվող երդվյալ ատենակալների թիվը երեսունից մինչև տասնիննը, իսկ նիստին մասնակիցների թիվը՝ տասներկուսից մինչև վեց»: Սիամանակ այս քանակական փոփոխությանը համապատասխան, ինչպես նաև կողմերին դատավարությունը քաշշուկի վերածելու հնարավորությունից զրկելու մտադրությունից ելնելով առաջարկվում էր փոխել «Քրեական դատավարության կանոնադրության» 656-րդ հոդվ. այն իմաստով, որ դատախազը կամ մասնավոր մեղադրողը, մեղադրյալը (մեղադրյալները), պաշտպանը իրավունք ունենան առանց պատճառարանության բացարկելու միայն մեկ երդվյալ ատենակալի, նախկին երեքի փոխարեն:

Այս փաստարութը այդպես էլ մնաց օրենքի նախագիծ պատերազմի, իսկ այնուհետև հանրապետության անկման պատճառով: Հավանաբար նաև երդվյալ ատենակալների դատարանը ընդհանրապես կամ գոնե ժամանակավորապես վերացնելու մտադրության պատճառով: Դրա պացույցը 1920 թ. աշնանը Երևանի շրջանային դատարանի նախագահի գեկուցագիրն է ուղղված արդարադատության նախարարին. «Չքննված գործերի համեմատական մեծ քանակի առկայությունը պայմանավորված է նաև երդվյալ ատենակալների դատարանի ներմուծմանը, որը համարվում է չափից դուրս դժվարացար: Երդվյալ ատենակալների մասնակցությամբ նշանակված նատաշրջաններում երդվյալ ատենակալների կողմից լուծվել է գործերի 5-15 տոկոսը, իսկ եկող տարվա հունվարից երդվյալ ատենակալների դատարանի կիրառումը փաստորեն կդառնա անհնարին՝ ի նկատի ունենալով 1921 թ. համար երդվյալ ատենակալների

ընդհանուր ցուցակների բացակայությունը: Մինչ այդ ցուցակների նախապատրաստումը ենթադրում եմ մինչև առաջիկա տարվա մայիսի 1-ը կատեցնել այդ դատարանի գործունեությունը. այդ ժամանակաշրացքում հնարավորություն կտրվի ընդհանուր դատավարական կարգով լուծել գործերի մեծ մասը»<sup>1</sup>:

#### § 4. Դատարանը Զանգեզուրում

**4.1. Զանգեզուրի կառավարման առանձնահատկությունները:** Դատական շինարարությունն իրականացնելիս, կարծես թե, հանրապետության օրենսդրի մարմինների կողմից անուշադրության էր մատնված Զանգեզուրը: Ինչո՞վ էր դա պայմանավորված: Զանգեզուր-Ղարաբաղի տարածաշրջանը, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում էր որպես իր անքաղաքան մաս, Առաջին հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում գտնվել է «հնքնավար» վիճակում:

1919 թ. հունվարի 21-ի և նոյեմբերի 8-ի Նախարարների խորհրդի որոշումներին համաձայն այս տարածքները պետք է կառավարվեն Հայաստանի կենտրոնական իշխանությունների կողմից հաստատված պետական մարմինների միջոցով և Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքների հիման վրա<sup>2</sup>: Սակայն հաշվի առնելով հաղորդակցության դժվարությունները հանրապետական-կենտրոնական պետական մարմինների նստավայրի և Զանգեզուրի միջև՝ կառավարությունն իր վերոհիշյալ որոշմանք միաժամանակ այդ երկրամասի պետական կառավարումը հանձնում էր տեղում գործող Զանգեզուրի կառավարական կոմիսարին ու «Զանգեզուրի հայկական ազգային խորհրդին»՝ վերանականելով այն «Զանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհրդի»: Այդ խորհրդը կառավարելու էր մարզը Հայաստանի Հանրապետության անունից և նրանից ստացած լիազորություններով:

Համաձայն այդ որոշման 5-րդ կետի մարզում բոլոր պետական մարմինները հիմնադրվում և հաստատվում էին Մարզային խորհրդի որոշմանք, ենթակա և պատասխանատու էին նրան: Այս իրավական նորմի ուժով դատական համակարգի կազմակերպումը Զանգեզուրի տարածքում ևս ենթակա էր Ազգային խորհրդի իրավասությանը: 1919 թ. մայիսի 5-ին օրենսդրական լիազորություններով օժտված Նախարարների խորհրդը հաստատել է Զանգեզուրի մարզային խորհրդի և նրան ենթակա

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 107, թ. 354:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 14:

հիմնարկությունների նախահաշիվներն ու հաստիքացուցակները: Համաձայն այդ փաստաբղբի Զանգեզուրում դատական համակարգը մարմնավորում էին Զանգեզուրի մարզային դատական ատյանը<sup>1</sup> և ‘Նախանի հաշտարար դատարանը:

**4.2. Զանգեզուրի դատական համակարգը:** Զանգեզուրի մարզային դատարանը կազմավորվել էր դեռ 1918 թ. վերոհիշյալ Ազգային խորհրդի կողմից՝ նախագահի և երկու անդամների կազմով, որոնց նշանակում էր Ազգային խորհուրդը: «Գավառի տարածքում իրավակարգի հաստատման նպատակով այդ դատարանին իրավունք էր տրված բոլոր գործերը քննել առանց վերաբննության: Այդ դատարանը քրեական և քաղաքացիական գործեր քննելիս փոխարինում էր միաժամանակ և՛ հաշտարար դատական հիմնարկություններին, և՛ ընդհանուր դատական հիմնարկություններին, գործելով, ինչքանով դա հնարավոր էր, նախսկին Ռուսական կայսրությունում գոյություն ունեցած և մինչև այժմ գոյություն ունեցող օրենքների հիման վրա» - ասված է այդ դատարանի նախագահի 1919 թ. նոյեմբերի 20-ին Հայաստանի Դատական պալատի նախագահին հասցեազրկած գեկուցագրում: Դատարանը հաշտարար ընդդատության գործերը քննում էր միանձնյա, իսկ ընդհանուր ընդդատության գործերը կոլեգիալ՝ դատարանի ամբողջ կազմով: 1919 թ. սկզբին, երբ Զանգեզուրում նշանակվեց Հայաստանի Հանրապետության կառավարական կոմիսար, երբ անհշանությունը մարզի տարածքում հաղթահարվեց և որոշ չափով իրավակարգ հաստատվեց, անհրաժեշտություն առաջացավ մարզային դատարանը ենթարկել որոշ բարեփոխումների: Նախ դատարանի անդամների, որպես հաշտարար դատավոր, միանձնյա կայացրած վճիռների և դատավճիռների դեմ թույլ տրվեց վերաբննիշ գանգատներ բերել մարզային դատարանի կոլեգիային: Դատարանի կոլեգիալ կազմով կայացրած վճիռները և դատավճիռները մնում էին առանց վերաբննության, սակայն վճռաբեկության կարգով կարող էին գանգատարկել մարզային խորհրդում:

Ինչպես տեսնում ենք, արդարադատության մարմինների կազմակերպման այս վիճակը ևս գոհացուցիչ չէր, քանի որ նախ՝ չկային նախարաննության մասնագիտացված մարմիններ, և երկրորդ՝ վերաբննիշ ատյան ընդհանուր ընդդատության գործերով ու առանձնացված վճռաբեկ դատարան: Այս վիճակից դուրս գալու համար Զանգեզուրի մարզային դատարանը մշակել էր «Զանգեզուրի գավառի սահմաններում դա-

տարանը տեղական պայմաններին և ժամանակի հանգամանքներին համապատասխան վերակազմավորելու նախագիծ», որն հաստատվել է Մարզային խորհրդի կողմից: Այդ փաստաբղբի պատմեները ուղարկվել են նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին ու դատական պալատին ի տեղեկություն: Փաստաբղբի հիմնական դրույթները հետևյալներն են: Զանգեզուրի տարածքում հիմնադրվում էին չորս տեղամասային հաշտարար դատարաններ բուն Զանգեզուրի, Սիսիանի, Ղափանի և Սեղմի շրջանների համար: Վերջին երեք տեղամասային հաշտարար դատավորները միաժամանակ կատարելու էին նաև դատական քննիչների գործառույթ, իսկ Զանգեզուրի շրջանը ունենալու էր առանձին հաստիքային դատական քննիչ:

Հաշտարար ընդդատության գործերով երկրորդ ատյան էր համարվում վերոհիշյալ տեղամասային հաշտարար դատավորներից կազմված մարզային հաշտարար համագումարը: Այս համագումարը միաժամանակ հանդիսանում էր առաջին ատյան ընդդատության քրեական և քաղաքացիական գործերի համար և այս դեպքում կոչվում էր Զանգեզուրի մարզային դատարան, փաստորեն կատարելով շրջանային (օկրուգային) դատարանի գործառույթ: Այս դատարանին կից գործում էր դատախազ: Այդ իրավական ակտով Զանգեզուրում ներմուծվում էր նաև պատվավոր հաշտարար դատավորների ինստիտուտը: Զանգեզուրի մարզային դատարանի որպես երկրորդ ատյան, այսինքն՝ որպես հաշտարար դատավորների համագումար կայացրած վճիռները և դատավճիռները գանգատարկելու էին Հայաստանի Դատական պալատում: Դատական պալատում էին գանգատարկելու և բողոքարկելու նաև մարզային դատարանի, որպես առաջին ատյանի, կայացրած վճիռներն ու դատավճիռները: Բացի այն, որ այդ փաստաբղբը էր այս վերջին կարգը նախատեսում, այդպիսի խնդրանքով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին և դատական պալատին էր դիմել նաև մարզային դատարանի նախագահը: Արդարադատության նախարարը իր 1919 թ. դեկտեմբերի 18-ին թվագրված կարգադրությամբ սկզբունքորեն համաձայնվել է մարզային դատարանի նախագահի առաջարկության հետ, միայն մի տարբերությամբ, որ վճռաբեկ բողոքները ընդդատյա պետք է լինելին ոչ թե դատական պալատի, այլ Հայաստանի Սենատի քննությանը և կարգադրել դատական պալատին ընդունել իրենց վարույթ Զանգեզուրի մարզային դատարանից ստացած վերաբննիշ գործերը, իսկ վճռաբեկ գործերը ուղարկել Հայաստանի Սենատ: Հայաստանի Հանրապետության ՊԿՊԱ-ի Դատական պալատ 210 ֆոնդում

<sup>1</sup> Արխիվային փաստաբղբերում այդ դատարանը անվանվում է տարբեր կերպ՝ կամ «գավառական դատարան» կամ «մարզային դատարան»:

առկա են նաև մարզային դատարանից ստացված կոնկրետ քրեական գործեր, ուրեմն՝ վերաքննիչ գանգատներ և բողոքներ խսկապես ուղարկվել են<sup>1</sup>:

**4.3. Զանգեզուրի «զինվորական ժամանակավոր դատարանը»:** Բացի վերը նկարագրված համարադրացիական դատարաններից Զանգեզուրում 1918 թ. գոր. Անդրամիկի նախաձեռնությամբ ստեղծվել և գործել է զինվորական դատարան<sup>2</sup>: Զանգեզուրի Ազգային խորհուրդը Անդրամիկի առաջարկությամբ քննարկելով մարզի տարածքում զինվորական դատարաններ ստեղծելու հարցը, Անդրամիկի հաստատմանն է ներկայացրել «Զանգեզուրի Հայկական Զինվորական դատարանին ենթակա օրենքների և հանցանքների օրինագիծը»: 1918 թ. հոկտեմբերի 23-ին Զորավարը հաստատում է այդ զինվորական «դատաստանագիրը», բաղկացած տասնվեց հոդվածից<sup>3</sup>: Այս փաստաթուղթը սահմանում էր զինվորական հանցագործություն համարվող արարքները, դրանց հանցագործքի հատկանիշները և պատժատեսակները:

Դատաստանագիրը գրահրամանատարին իրավունք էր վերապահում ստեղծելու զինվորական դատարան, որը քննելու և լուծելու էր զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերը: Այդ իրավագործությանը համապատասխան 1918 թ. հոկտեմբերի 29-ին Զանգեզուրի գործերի գլխավոր հրամանատար գեներալ-մայոր Անդրամիկը հաստատել է տասներեք հոդվածից բաղկացած «Զինվորական ժամանակավոր դատարանի մասին» օրենքը, ըստ որի մարզում հիմնադրվում էր ժամանակավոր զինվորական դատարան «տիրող անիշխանությունը վերացնելու, գորքերի ու քաղաքացիների մեջ կարգ ու կանոն հաստատելու և ժողովրդական իրավագիտակցությունը» վերականգնելու նպատակով<sup>4</sup>: Ըստ օրենքի 2-րդ հոդվածի զինվորական դատարանի կազմն ուներ յուրօրինակ կառուցվածք: Մարզային դատարանի ամբողջ կազմը, Կենտրոնական ազգային խորհրդի մեկ անդամ, Գորիսի քաղաքագլուխը, մեկ սպա և այն գյուղի կոմիսարը, որին ենթակա տարածքում կատարվել է քննվող հանցանքը՝ հանդիսանում էին զինվորական դատարանի անդամներ: Դատարանին առընթեր գործում էին զինվորական քննիչը և մեղադ-

րողը: Վերջինս օժտված էր ոուսական օրենսդրությամբ զինվորական դատախազների համար սահմանված բոլոր իրավունքներով և պարտականություններով:

## § 5. Նախական քննության և դադախազական հակողության մարմինների կազմակերպական կառույցը և գործունեությունը

Վաղոր ձևավորված անդույքը դատական համակարգերի պատմությանը, դատական բարենորոգումներին նվիրված ուսումնասիրություններում ընդունված է պարզաբանելով միայն բուն դատարանների, այլ նաև դատախազական հակողության, հետաքննության և նախաքննության մարմինների կազմակերպման և գործունեության հարցերը, որովհետև դրանք հանդիսանալով միասնական համակարգի առանձին տարրեր սերտորեն փոխկապակցված են: Սենք ևս շարունակում ենք այդ ավանդույքը, որովհետև վերոհիշյալ իրավապահպան մարմինները Առաջին հանրապետությունում իրենց կազմակերպական-օրենսդրական և դատավարական առանձնահատկություններով սերտորեն կապված են դատարանների հետ: Այս տեսակետից հետազոտությունը չէր լինի ամբողջական, եթե դրանում չշոշափվեն այս հարցերը:

**5.1. Հետաքննության՝ միլիցիայի և «դատական իշխանության» մարմինների փոխհարաբերությունները Առաջին հանրապետությունում:** Քրեական դատավարության իրավանորմերին համաձայն քրեական դատավարությունը բաժանվում էր մի քանի փուլերի: Նախական քննությունը բաղկացած էր հետաքննությունից և նախաքննությունից: Հետաքննությունն իրականացնում էր միլիցիան կամ հանցագործության կատարման մեջ կասկածվող անձի անմիջական վերադարձ (վարչական, ոպագմական և այլն): Հետաքննության գլխավոր նպատակն էր հաստատել հանցագործության փաստի իրականում կատարված լինելը և անմիջապես հաղորդել այդ մասին դատական քննիչին կամ դատախազին (Ըր. դատ. կանոն., հոդվ.հոդվ. 250-254):

Համաձայն «Հայաստանի Հանրապետության միլիցիայի մասին ժամանակավոր օրենքի» միլիցիայի պարտականությունները «դատական իշխանության նկատմամբ հանգում էին՝

ա) քրեական դատավարության օրենքներին համաձայն քրեական գործերով նախական հարցում ու փորձին ու նախաքննությանը մասնակցելը.

<sup>1</sup> Զանգեզուրի դատական մարմինների փաստական գործունեության վերաբերյալ, որոշ կցուուր տվյալներից բացի, արխիվային փաստաթղթեր մեզ չի հաջողվել հայտնաբերել:

<sup>2</sup> Տես «Միտոնյան Հ.», Անդրամիկի ժամանակը, Երևան, 1996, գիրք Բ, էջ էջ 526-538:

<sup>3</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, գ. 1, զ. 37, թ.թ. 1-4:

<sup>4</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, գ. 1, զ. 37, թ.թ. 5-7:

բ) օրենքի մատնանշած դեպքերում հանրային բնույթ ունեցող գործերում իրքն մեղադրող հանդիս գալը.

զ) դատարանի պահանջով կանչված մեղադրյալներին և այլ անձանց դատարանին ներկայացնելը և նրանց կալանավորելը, եթե համապատասխան կարգադրություն կա.

դ) պատասխաններ տալու, որոշումներ լսելու և այլ պահանջների համար դատարանին ներկայանալու հրավիրելը, դատական վճիռներն ու որոշումները ի կատար ածելուն, ինչպես և դատավարության օրենքներում նախատեսված ուրիշ գործողություններին նաև ակցելը.

ե) բանտարկյալներին տեղափոխելու վերահսկողությանը վերաբերող պարտականություններ, որոնք հիշատակված են կալանավորներին վերաբերող կանոնադրության մեջ.

զ) իրեղեն ապացույցների պահպանությունը»:

Ինչպես այս օրենքից, այնպես էլ «Քրեական դատավարության կանոնադրության» 377-386-րդ հոդվածներից բխում էր, որ դատական մարմինների արդյունավետ գործունեության, արդարադատության արագ և հաջող իրականացման հիմնական պայմաններից մեկն էլ միլիցիայի կողմից օրենքով սահմանված այս պարտականությունների ժամանակին, ճիշտ և բարեխիդ կատարումն էր: Ավելին իրավական այդ նորմերի ուժով միլիցիան վերածվել էր «դատական իշխանության գործադիր մարմնի», առանց որի դատարանները, քննիչները, դատախազությունը անդամալուծվում, չեղոքացվում, անգործության էին մատնվում:

Ծանր քաղաքական, տնտեսական պայմանները, անընդհատ պատերազմական գործողությունները և դրա հետևանք հանդիսացող բնակչության անընդհատ տեղաշարժերը, փոխադրամիջոցների բացակայությունը կամ դրանց քանակությունը բացասաբար էին ազդրում Հայաստանում արդարադատության մարմինների գործունեության վրա: Դրա հետևանքը գործերի նախարարներյան և դատական քննության ժամկետների ձգձգումն էր, դրանց կոտակումը քննիչների մոտ, դատարաններում: Անշուշտ, այս քննույթի օբյեկտիվ պայմանները, որոնք խանգարում էին արդարադատության գործընթացին և ընդհանրապես պետական բոլոր մարմինների գործունեության արդյունավետությանը, առկա էին և դրանց դեմ հարկավոր էր երկարատև, համար պայքար:

Սակայն կային նաև սուրյեկտիվ պատճառներ, խոշընդուներ, որոնք ունեին գուտ կազմակերպական, տեխնիկական բնույթ, և որոնց վերացումը հնարավոր էր պետական իշխանության մարմինների, դեկավարքադատական ուժերի ցանկության և ձեռնահաս մոտեցման դեպքում:

Այդպիսի պատճառներից մեկն էլ Հայաստանի առաջին հանրապետության ներքին գործերի նախարարության կառուցվածքային օղակների և հատկապես վարչության ու միլիցիայի անպատճառատվածությունն ու անբարեխիդ վերաբերմունքն էր իր պարտականություններին արդարադատության ոլորտում: Ներքին գործերի նախարարությունը, հատկապես՝ միլիցիան, որպես իրավապահպան համակարգի կարևոր օղակներից մեկը, այն գործադիր հենարանն էր, որի վրա իրենց առօրյա գործունեության մեջ հենվում էին ոչ միայն արդարադատության մարմինները, այլև պետական կառուցվակարգի մյուս օղակները: Այդ մարմինների դերը ընդհանուր համակարգում այնքան էական էր, որ դրանց, նույնական, չնչին անգործության դեպքում ամբողջ պետական կառույցը գրկվում էր արդյունավետ գործելու հնարավորությունից:

Արխիվային սկզբնաղբյուրների ուսումնակրությունները ցույց են տալիս, որ միլիցիան իր այս և մյուս պարտականությունները շատ անբարեխիդ է կատարել, որի պատճառով թե՛ քրեական դատավարությունը, թե՛ քաղաքացիական դատավարությունը, և թե՛ ընդիանուապես հանցավորության դեմ պայքարը կրախի է մատնվել: Փաստաթղթերը փայլուն կերպով նկարագրում են այդ իրավիճակը, որը ննացել է անվոփոխ ամբողջ երկու և կես տարվա ընթացքում: Արդարադատության նախարարությունը անընդհատ ահազանգում էր այդ մասին կառավարությանը, ներքին գործերի նախարարին, պահպանում միջոցառումներ ձեռնարկել իրավաճակը բարելավելու համար:

1919 թ. մարտի 26-ով թվագրված՝ արդարադատության նախարար «Ժողովրդական» Ս. Հարությունյանի նախարարների խորհրդին ուղղված գեկուցագրում, որով նախարարը պահպանում էր կառավարությունից անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել ցանկալի վարչություն և միլիցիա ստեղծելու համար՝ ելմելով պետական իշխանության հեղինակության պահպանման ու պետական կառույցների արդյունավետ գործունեության համար պայմաններ ստեղծելու շահերից, ասված էր. «Ինձ հանձնարարված արդարադատության նախարարության հիմնարկությունները և պաշտոնատար անձինք շատ հաճախ դիմում են ինձ՝ դիմուներով ու գանգատներով, որ իրենց գործունեությունը անդամալուծվում է աղիմինստրացիայի և միլիցիայի շնորհների կողմից, որոնք լրիվ անտարբեր են ծանուցագրերը, դիմունները, փաստաթղթերի պատճենները հանձնելու, իրենց արված հանձնարարությունների կատարման, մեղադրյալներին բերման ենթարկելու նկատմամբ, որի հետևանքով սկսված քննչական գործերը չեն շարժվում առաջ, իսկ դատական քննության նշանակված գործերը հետաձգվում են: Վարչության և միլիցիայի կազմում

թիշ են մտավորական ուժերը, թիշ են ծառայությամբ փորձված անձինք, թիշ են պետական ծառայության համար պատրաստված գործիչները, վերջապես չկա ստորին մարմինների՝ վերադասների առջև փաստական պատասխանատվության օրգանական կապ. չկա մեզ մոտ նաև մեկ կետը մյուսի հետ կապող ճիշտ կառուցված հաղորդակցություն, չկան փոխադրամիջոցներ, որի հետևանքով տեղաշարժվելու ծառայական անհրաժեշտություն ունեցող պաշտոնյանները զրկված են այդ հնարավորությունից, մինչդեռ այդ բոլոր հարցերը և դրանց լուծումը մտնում են ՆԳՆ-ի ուղղակի պարտականությունների մեջ նրան ենթակա մարմինների հետ ... Ընորհիվ այն բանի, որ մեզ մոտ չկա լավ վարչություն և միլիցիա, գավառամասերում, և նույնիսկ բուն Հայաստանի մայրաքաղաքում՝ Երևան քաղաքում չկա լյանքի և գույքի անվտանգություն, թագավորում է անարխիան բոլոր տեսակի բռնություններով, որից ուժեղ տառապում է ժողովրդը և քայլայվում է նրա տնտեսությունը»:

Մեկ ուրիշ փաստաթղթում, որ կազմել էր արդարադատության նախարարը 1920 թ. փետրվարին և որով նա դիմում է արդեն անմիջականութեան ներքին գործերի նախարարին ասված է. «Քննիչները և դատարանները, որոնցից ես բացատրություն էի պահանջել, թե ինչու դատավարությունը այնքան դանագաղ է կատարվում, տեղեկացնում են ինձ, որ միլիցիան մեծապես թերանում է իր պարտականությունները ըմբռնելու և կատարելու մեջ՝ հանդեպ դատաստանական գործունեության: Բազմաթիվ գործեր ուշ են ավարտվում, որովհետև միլիցիան ուշ է հայտնում քննիչներին տեղի ունեցած հանցանքների մասին: Իսկ ժամանակին սկսված գործերը չեն կարող արագ և նորմալ ընթացք ստանալ, որովհետև միլիցիան հաճախ չգիտե կանոնավոր հետաքննություն կատարել, ցույց չի տալիս անհրաժեշտ աջակցություն քննիչներին հանցանքների հետքերը պահպանելու, հանցագործներին հետապնդելու, ձերբակալելու և վկաներին ծանուցագիր հանձնելու ու հանձնման մասին հաղորդելու քննիչներին: Նույնային գանգատներ են անում դատարանները: Բազմաթիվ գործեր, որոնք նշանակված են լինում ունկնդրության համար, դատարանները ստիպված են լինում հետաձգել, որովհետև ծանուցագրերը հանձնված չեն լինում վկաներին և դատարան կանչված այլ անձերին, կամ եթե հանձնված են լինում, հանձնման մասին ոչ մի տեղեկություն չեն տրվում դատարաններին:

Այս մասին հաղորդելով Ձեզ ի գիտություն խնդրում եմ ամենալուրջ ուշադրություն դարձնել, որպեսզի այսուհետև միլիցիան ավելի բարեխից կատարի իր պարտականությունները...»:

Չնայած այս ամենին՝ դիմումներին, գանգատներին, բողոքներին, ձեռնարկված կիսամիջոցներին, ինչպես երևում է 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանի շրջանային դատարանի նախագահի արդարադատության նախարարին ներկայացրած զեկուցագրից վիճակը այնուամենայնիվ մնաց անփոփոխ<sup>1</sup>:

Միլիցիայի ընդհանուր վիճակից և գործունեությունից դժգոհ էին ոչ միայն արդարադատության նախարարությունում, այլ նաև բուն ներքին գործերի նախարարության աշխատակիցները. «Այն չի համապատասխանում իր կոչմանը և ներկա դրույթյամբ չի կարող քաղաքում ոչ կարգուածնուն հաստատել, ոչ պայքարել հանցավոր տարրերի դեմ և ոչ էլ հաստատել տարրական իրավակարգ» (Երևան քաղաքի պետ կապիտան Շահիսարունու զեկուցագրիր ուղղված նախարարին):

Ներքին գործերի նախարարության տեղական մարմինները ոչ միայն ակտիվորեն չեն օժանդակում քննիչներին և դատարաններին, այլև բանը հասել էր նրան, որ տեղերում նրանք դուրս եին եկել միջանց դեմ, իսկական հականարտության վերածելով օրինական հաճագործակցությունը պետական կառուցակարգի ամբողջական համակարգի շրջանակներում: Իսկ վերին ասյանների մակարդակում այդպիսի դիրքորոշումը հանճեցնում էր անընդհատ փոխադարձ մեղադրանքների, որում, իհարկե, գերազացում էին արդարադատության նախարարության բողոքներին գործերի նախարարության գործունեությունից աշխատանքներից: Ահա թե ինչ է գրում դատական պալատի դատախազը արդարադատության նախարարին 1920 թ. հունիսի 26-ին թվագրված զեկուցագրերից մեկում. «Ինքնավարությունները և աղմինհատրացիան խառնվում են դատական գործերին: Օրինակ՝ Էջմիածնի ինքնավարության նախագահը իր ստորադրյալ աղմինհատրացիայի միջոցով առաջին զավառամասի քննիչի որոշումը փոխում է: Քննիչը 2 եղ օրինավոր կերպով հանձնելու է մեկին: Բոլորովին անհասկանալի կերպով այդ եզները հիշված նախագահի կարգադրությամբ առնվում են այլ մարդուց և հանձնվում են որիշին: Նախագահի դեմ սկսված է քրեական հետապնդում 330-րդ հոդվ. համաձայն... Կարելի է ավելի շատ օրինակներ բերել, բայց այդքանը բավական է բնորոշելու համար այն մթնոլորտը, որի մեջ գործում են մեր քննիչները»: Արդարադատության նախարարության ձեռնարկած միջոցառումները, դիմումներն ու խնդրանքները ներքին գործերի նախարարություն, կառավարություն արդյունք չտվեցին և գործը տեղից չշարժվեց:

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 107, թ. 354:

Արդարադատության նախարարությունը ստիպված գնաց ավելի կոնկրետ քայլերի՝ այս անգամ արդին օգտագործելով իր օրենսդրական նախաձեռնության իրավունքը կառավարությունում: 1920 թ. ամռանը նախարարությունը կառավարության առաջարկում էր հիմնել «Դատաստիկանական կուրսեր» միլիցիայի աշխատակիցների պատրաստման և վերապատրաստման համար<sup>1</sup>: Այդ միջոցառման նախաձեռնությունը 1919 թ. վերջին ելնում էր դատական պալատի դատախազղից, որը մշակել էր նաև այդ «կուրսերի» կանոնադրությունը և հիմնադրման նախագիծը<sup>2</sup>: Նախարարության ջանքերով հրատարակվել էր նաև հատուկ գործնական ձեռնարկ «Քրեական գործեր քննելիս միլիցիայի գործողությունները» վերտառությամբ: Արդարադատության նախարարությունը կենսագործել կամ նախաձեռնել է բազմաթիվ այլ միջոցառումներ, այդ թվում նաև առաջարկը՝ միլիցիան տեղական ինքնավարությունների տնօրինությունից հանել և հանձնել ներքին գործերի նախարարությանը<sup>3</sup>:

Տեսնելով, որ ձեռնարկված միջոցառումներ արդյունք չեն տախս, արդարադատության նախարարությունը «այդ չարիքը գեր մասսամբ վերացնելու համար անհրաժեշտ է գտնում ծանուցագրերի հանձնումը քաղաքներում ժամանակավորապես դնել դատական կատարածուների և ցրիչների վրա»: Այս առաջարկով՝ համապատասխան օրինագծով հանդերձ արդարադատության նախարարությունը մտավ օրենսդիր լիազորություններով օժտված Նախարարների խորհուրդ, որն 1920 թ. հոկտեմբերի 26-ին ընդունեց օրենք «Քրեական գործերով ծանուցագրերի հանձնման մասին»: Իհարկե, սա կիսամիջոց էր և արդեն ուշացած, որովհետև հանրապետության գոյությանը մնացել էր ընդամենը մեկ ամիս ժամանակ: Պարզ է, որ այդ քայլն իսկապես անհրաժեշտ էր և այն պետք է իրականացվեր ավելի վաղ: Սակայն անհասկանալի է թվում այն, թե ինչու հենց միայն քաղաքներում և միայն քրեական գործերով: Պատճառը երևի գերատեսչական շահերն էին և մտածողությունը՝ գերատեսչականությունը: Հեշտ էր անընհատ ներքին գործերի նախարարությանը և միլիցիային մեղադել բայց նրա վիճակն էլ կարելի էր հասկանալ, իհարկե, որոշ վերապահումներով: Ահա թե ինչ է պատասխանում ներքին գործերի նախարարության վարչության և միլիցիայի տեսուչը արդարադատության նախարարությանը, վերջինիս «դիմում-բողոքներից» մեկին՝ 1920 թ. մարտի 20-ին. «Էջմիածնի գավառական կոմիսարը իր տրամադրության տակ

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 16, թթ. 369-371:

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 134, թթ. 94-96:

<sup>3</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 134, թ. 99:

ամբողջ այդ շրջանի համար ունի միայն 243 միլիցոններ՝ ցրված և այդպիսի չնչին ուժով գավառական կոմիսարը հնարավորությունից զորկ է քացարձակ կոմիսարը հայտնելու նույն գավառում ապրող ամբողջ նոլիսեցի, արեցի և ուրիշ գաղթականներին, որոնք ավելի լավ են զինված, ավելի լավ կազմակերպված և ավելի ուժեղ, քան գավառական միլիցիան: Այդ շրջանի ըմբռոստ գաղթականությունը մի շարք չարագործություններ կատարելով և անպատճեմ մնալով՝ ավելի է լստիացել, չի ճանաչում տեղի իշխանությանը և, ինչպես վերևու հիշեցի, աղմինիստրացիան անկարող լինելով, իր տրամադրության տակ ունեցած ուժով կովել 2000 լավ զինված գաղթականության դեմ, դիմել է կառավարությանը, խնդրելով կամ զինաքափ անել այդ շրջանի գաղթականությանը, կամ ընդունել աղմինիստրացիայի ամբողջ կազմի հրաժարականը»:

Այդպիսի պայմաններում՝ անկախ նրանից, ով էլ որ լիներ, օրինակ, ծանուցագրերի հանձնողը, կամ մեղադրյալին ձերակալողը՝ իհարկե կղմվարանար: Արդարադատության նախարարությունում այդ փաստը լավ էին հասկանում և ամենայն հավանականությանը հենց դա էլ պայմանավորել է առաջարկությունը ծանուցագրերի հանձնումը տալ դատական կատարածուներին և ցրիչներին միայն քաղաքում, որովհետև այստեղ, իհարկե, Հայաստանի Հանրապետության Կառավարությունը վերահսկում էր իհավիճակը: Հակառակ դեպքում արդարադատության նախարարություն ևս հայտնվելու էր ներքին գործերի նախարարության վիճակում և այդ ժամանակ չեր լինի քավության նոխազ:

Օկար անկողննակալ, մտածված ու համակարգված մոտեցում հիմնահարցերի նկատմամբ, այլ միայն կաղապարված, բյուրոկրատական վերաբերմունք, օրինակ՝ անընդհատ դիմում էին ներքին գործերի նախարարություն, որ շրջաբերական ուղարկի տեղերին, որպեսզի կատարեն իրենց պարտականությունները: Բայց միայն շրջաբերակններով հարցը չեր լուծվի: Անհրաժեշտ էր ստեղծել, ինչու չե, նաև հատուկ հետախուզական և գործադիր միլիցիա, ներքին գործերի նախարարության միլիցիայի հաստիքների կրծատման հաշվին, և արդարադատության մարմինները դուրս կային իրենց չեզոքացված ու անդամալուծված վիճակից, կդառնային գործուն պետական մարմիններ:

**5.2. Նախարարներության մարմինները Առաջին հանրապետությունում:** Ընդհանուր ընդդատության գործերով նախարարներությունը կատարում էին դատական քննիչները: Հաշտարար ընդդատության գործերով նախարարներությունը չեր կատարվում: Նախարարներությունը հանգում էր կոնկրետ անձին կամ անձանց մեղադրանք առաջարկելու համար անհրաժեշտ նյու-

թեր հավաքելուն: Հայաստանի Հանրապետության առաջին օրենսդիր մարմնի ծևափորմամբ ձեռնամուխ լինելով արդարադատության մարմնների համակարգի կազմավորմանը և կառուցմանը, արդարադատության նախարարությունը որոշակի փոփոխություններ մտցրեց նաև նախարնության մարմնների համակարգում, ներմուծելով դատական քննիչների «մաքուր» ինստիտուտը: Մինչև հանրապետության հոչակումը Անդրկովկասում դատական մարմնների ու համակարգի կառուցման առանձնահատկությունն այն էր, որ ֆինանսական խնայողության նկատառությունով դատական քննիչների պարտականությունները դրված էին հիմնականում հաշտարար դատավորների, կամ էլ նրանց օգնականների վրա, չնայած Երևանի շրջանային դատարանի դատական շրջանում կային նաև առանձին քննչական տեղամասեր: Դատարանակազմության վերաբերյալ օրգանագծերի մշակման ընթացքում՝ 1918 թ. առաջարկվում էր հաշտարար դատավորից և նրանց օգնականներից վերցնել նախարնության գործառությը և համաձայն «Դատական հաստատությունների կանոնադրության» ու «Քրեական դատավարության կանոնադրության» ներմուծել շրջանային դատարանին կից գործող դատական քննիչների ինստիտուտը: Այդ իրավական փաստարդերով նախատեսվում էր, որ շրջանային դատարանին ընդդատյա հանցագործությունների և զանցանքների նախարնությունը կատարելու էին դատական քննիչները միլիցիայի օժանդակությամբ՝ դատախազների ու նրանց օգնականների հսկողության տակ: Այդ դրույթներին համապատասխան 1918 թ. դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության մեջ հաշտարար բաժանմունքների և քննչական մասերի վերակազմության և նորերի բացման մասին» օրենքը հանրապետության ողջ տարածքը որպես Երևանի շրջանային դատարանի դատական շրջան բաժանել էր 24 քննչական և մեկ՝ Քառարդեցարի հաշտարար-քննչական տեղամասերի միջև (Թր. դատ. կանոն., հոդվ. 79): Քննչական տեղամասերի տարածքային սահմանագատումը կատարված էր նոյն իհմունքներով ինչ հաշտարար դատարաններին: Հետագայում այս ցանկը ավելացավ: 1920 թ. երկրորդ կիսամյակի համար հաստատված նախահաշվներով ու հաստիքացուցակով հանրապետության տարածքը բաժանված էր արդեն երեք շրջանային դատարանների դատական շրջանների՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, իսկ քննչական տեղամասերի բանակը հասնում էր 27-ի, դրանց ավելացրած ևս չորս հաշտարար-քննչական բաժինների<sup>1</sup>:

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 119, թթ. 1-8:

Համաձայն «Քրեական դատավարության կանոնադրության» դատական քննիչները մտնում էին շրջանային դատարանի կազմի մեջ, սակայն յուրաքանչյուր քննիչ ուներ իր տեղամասը: Նրանք կարող էին ընդգրկվել շրջանային դատարանի կազմը լրացնելու համար, եթե միայն իրենք չեն վարել նախարնությունը տվյալ գործով (Դատ. հաստ. կանոն., հոդվ. 79): Դատական քննիչը օրենքով իրավունք ուներ դիմելու միլիցիայի և նույնիսկ ռազմական հրամանատարության օգնությանը, սակայն չփոխանցելով սրանց և այլ անձանց նախարնություն կատարելու իր պարտականությունները:

1918 թ. Երևանի շրջանային դատարանին կից կար մեկ կարևորագույն գործերի քննիչի հաստիք<sup>1</sup>, որի գործառույթը աճող հանցավորության և չքննված քրեական գործերի կուտակման պայմաններում «քարտ և խճանկած, մեծ վործ և հմտություն պահանջող քրեական գործերի նախարնությունն էր»<sup>2</sup>: 1919 թ. ապրիլի 3-ի օրենքով Երևանի շրջանային դատարանին կից հաստատվեց ևս մեկ կարևորագույն գործերով քննիչի հաստիք: Պատճառը Հայաստանի Հանրապետության տարածքի ընդարձակումն էր: Մյուս կողմից զգացնել էր տալիս դատական քննիչների մոտ քրեական գործերի կուտակումը և բարդ քրեական գործերին արագ ընթացք տալու անհրաժեշտությունը: Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանային դատարանների հիմնադրումից հետո՝ Նախարարների խորհրդի 1920 թ. սեպտեմբերի 29-ի օրենքով դրանցից յուրաքանչյուրին կից ևս հաստատվեցին մեկական կարևորագույն գործերի քննիչի հաստիքները:

Օրենսդրական լիազորություններով օժնված «բյուրո կառավարության» 1920 թ. մայիսի 17-ի օրենքով դատական պալատին կից հիմնադրում էր երկու կարևորագույն գործերով քննիչների հաստիքների<sup>3</sup>: Ահա թե ինչ էր գրում արդարադատության նախարարը հիմնադրելով այդ օրինագծի ընդունման և պալատին կից երկու կարևորագույն գործերով դատական քննիչների պաշտոնի հիմնադրման անհրաժեշտությունը. «Ներկա անհանգիստ ժամանակներում, եթե մեր պետությունը նոր է կազմա-

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 29, թ. 55:

<sup>2</sup> Տես Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1919, Երևան, հոդվ. 98, էջ 56:

<sup>3</sup> Այդ օրենքի նախագիծը արդարադատության նախարարությունը մշակել էր դեռ 1920 թ. մարտին: Այն հավանություն էր ստացել Նախարարների խորհրդի կողմից և ուղարկվել էր խորհրդարան օրենսդրական կարգով հաստատում ստանալու համար: Բայց քանի որ 1920 թ. մայիսի 5-ին խորհրդարանի օրենսդրական լիազորությունները փոխանցվեցին Նախարարների խորհրդին, ապա օրինագիծը ևս վերադարձվեց:

կերպվում, երբ պատերազմի և հեղափոխության բովից անցած ժողովրդի բարքերը ենթակա են իշխանական վիզիտությունների, և երբ սովի ու ամեն տեսակ աննպաստ պայմանների հետևանքով հանցագործությունը ստացել է հսկայական չափեր, օր չի անցնում, որ նախարարությունը պետության զանազան կողմերից հեռազրական խնդիրներ չստանա արտակարգ քննիչներ ուղարկելու այս կամ այս խոչը հանցանքները քննելու համար: Այդ հանցանքները հաճախ մասսայական քննություն են կրում, լինում են բարդ և առեղծվածային: Այդպիսի դեպքերի համար անհրաժեշտ է ունենալ հատուկ արտակարգ քննիչներ: Երևանի շրջանային դատարանը ունի երկու այդպիսի քննիչներ, որոնք ծայրաստիճան ծանրաբանված են: Իսկ մեր դատաստանական պալատը, դժբախտաբար, չունի այդպիսի քննիչներ. մինչդեռ ամեն մի կանոնավոր կազմակերպված դատաստանական պալատ պիտի ունենա արտակարգ քննիչներ: Եթե անցյալ տարի այդ կարիքը սուր կերպով չի զգացվել, այժմ, երբ տեղական քննիչների մոտ ահազին քանակությամբ գործեր են կուտակված, և նրանք ոչ մի հնարավորություն չունեն արագ ընթացք տալու կարևորագույն գործերին կամ մեկնելու իրենց շրջանից դուրս այդպիսի գործերով գրադելու համար, նախարարությունն գտնում է, որ հրամայական անհրաժեշտություն է անձիշապես հիմնել երկու արտակարգ քննիչների պաշտոն դատաստանական պալատին կից»<sup>1</sup>:

Դատական քննիչներին, այդ թվում նաև կարևորագույն գործերի քննիչներին նշանակում էր Նախարարների խորհուրդը՝ արդարադատության նախարարի ներկայացմամբ:

Նախաքննության նյութերը դատական քննիչը ուղարկում էր դատախազին, որը կամ կարծում էր գործը ապացույցների բացակայության պատճառով, կամ հարուցում այն, եթե նյութերը դրա համար հիմք էին տալիս: Վերջին դեպքում դատախազը կազմում էր մեղադրական ակտ, որը գործի նյութերի հետ միասին ուղարկում էր դատարան:

**5.3. Դատախազական հսկողությունը Առաջին հանրապետությունում:** Դատախազական հսկողությունը կազմակերպվել և գործել է համապատասխան դատական կանոնադրությունների: Այդ իսկ պատճառով նրա վրա մեծ ազդեցություն են թողել դատարանակազմության և դատավարության սկզբունքները՝ մրցակցության, մեղադրյալի պաշտպանության, անմեղության կանխավարկածի և այլն: Դատախազությունը կառուցված էր ոչ թե վարչատարածքային, այլ դատատարածքային սկզբունքով ու ընդգրկված էր «դատական գերատեսչության» մեջ, սա-

կայն ուներ իրեն հատուկ կառուցվածք և իրավասություն: Դատախազական հսկողության գլուխ՝ որպես գլխավոր դատախազ կանգնած էր արդարադատության նախարարը<sup>1</sup>: Արդարադատության նախարարի իրավունքներն ու պարտականությունները, որպես գլխավոր դատախազ, և նրա իշխանության սահմանները դատախազական հսկողության գծով սահմանված էին օրենսդրությամբ<sup>2</sup>: Արդարադատության նախարարը, որպես գլխավոր դատախազ, իրականացնում էր հսկողություն դատախազության գործունեության վրա, իսկ դատախազների միջոցով՝ ընդհանուր դատական մարմինների վրա (Դատ. հաստ. կանոն., հոդվ. 253): Հսկողության իրավունքը բուն դատարանների և դատավորների վրա պատկանում էր միայն վերադաս դատարաններին (Դատ. հաստ. կանոն., հոդվ. 249):

Դատախազների վրա դրված էր քրեական հետապնդում հարուցելու պարտականությունը, հանցագործության նախնական քննության կատարման, ինչպես և դատական գործերի վարույթի ընթացքում օրենքների ճիշտ կատարման վրա դիտարկման պարտականությունը: Դրա հետևանքով արդարադատության նախարարությունը հնարավորություն էր ստանում դեկավարել դատախազական հսկողության գործունեությունը քրեական գործի հարուցման պահից մինչև նրա վերջնական լուծումը դատարանում, շնորհիվ դատախազների գեկուցուների ու հաշվետվությունների, որ ներկայացվում էին արդարադատության նախարարին:

<sup>1</sup> Արդարադատության նախարարության կազմակերպման հիմքում ընկած էր միանձնյա կառավարման սկզբունքը և նրա գլուխ կանգնած էր նախարարը: Արդարադատության նախարարության կենտրոնական ապարատն իր «տեղական մարմիններով»՝ դատարաններով, դատախազական հսկողությամբ, նախարարության մարմիններով, նոտարիատով, բանտային տեսչությամբ, արևմտահայ իրավագիտական բանուով, որբական խորհրդով և սահմանազատիչ ատյանով կազմում էր միասնական գերատեսչություն, որի գլուխ կանգնած էր նախարարը: Այդ գերատեսչությունը օժնված էր իրեն հատուկ վարչական կարգերով, բյուջեով, պաշտոնային կազմով: Իր կառավարմանը հանձնաված գերատեսչության մեջ նախարարին էր պատկանում ամբողջ իշխանությունը, որն իր բնույթով միայն ներքարենսդրական, գործադրի-կարգադրիչ էր, և կառուցված էր արդարադատության այնպիսի հիմնարար սկզբունքների հիման վրա, ինչպես դատավորների անկախությունը և անվտանգությունը: Նախարարը նշանակվում էր օրենսդիր մարմնի կողմից ընտրված նախարար-նախավահի կամ վարչապետի կողմից, այդ մասին հայտնելով օրենսդիր մարմնին ի գիտություն: Նա կառավարության Նախարարների խորհրդի անդամ էր:

<sup>2</sup> Արդարադատության նախարարության իրավական կազմակերպման ամրագրող կայսերական հիմնական իրավական ակտերն էին Սահմանադրությունը, այլ մասին հայտնելով օրենսդիր մարմնին ի գիտություն: Նա կառավարության Նախարարների խորհրդի անդամ էր:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 28, թ. 107:

Օրենքն արդարադատության նախարարին, որպես գլխավոր դատախազի, իրավունք էր տալիս իրականացնել ընդհանուր հսկողություն (ոչ թե հսկողություն, այլ ընդհանուր հսկողություն) դատարանների և դրանց պաշտոնատար անձանց գործունեության վրա (Դատ. հաստ. կանոն., հոդվ. 254): Այդ հսկողությունն իրականացնելու համար «Դատական հաստատությունների կանոնադրությունը» նախարարությանը դատական գործերի անկանգառ ընթացքի, դատական մարմինների ներքին կառուցվածքի և նրանցում գործավարության կանոնների պահպանության վրա դիտարկման իրավունք էին տալիս (Դատ. հաստ. կանոն., հոդվ. 255, 258, 259):

Դատախազական հսկողության մարմինները ստեղծված էին հանրապետության ընդհանուր դատական մարմիններին կից: 1920 թ. երկրորդ կիսամյակի համար հաստատված նախահաշվմերով և հաստիքացուցակով դատախազական հսկողության համակարգը, հետևյալ տեսքն ու ներքին կառուցվածքն ուներ՝

1. Հայաստանի Սենատին կից դատախազական հսկողություն՝ ի դեմս ավագ դատախազի և նրա օգնականի: 1920 թ. հոկտեմբերի 26-ի օրենքով սահմանավեց նաև սենատի ռազմական ավագ դատախազի պաշտոնը, որը ենթարկվելու էր ռազմական նախարարին և կատարելու էր գլխավոր ռազմական դատախազի գործառույթները:

2. Դատական պալատին կից դատախազական հսկողություն՝ ի դեմս դատախազի և նրա երկու օգնականների:

3. Երևանի շրջանային դատարանի դատախազական հսկողություն՝ ի դեմս դատախազի և նրա հինգ օգնականների:

4. Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանային դատարանների դատախազական հսկողություն՝ ի դեմս դատախազի և նրա երկու օգնականների<sup>1</sup>:

Դատախազությունը կառուցված էր միանձնյա դեկավարության, ստորադաս դատախազների բացարձակ ենթակայությունը վերադաս դատախազների առջև սկզբունքներով: Դատախազությունը համարվում էր բացառապես դատական հսկողության մարմին, չուներ ընդհանուր հսկողության գործառույթներ:

Դատախազական հսկողության իմմանական ճյուղերն էին՝ հսկողությունը հետաքննության և նախաքննության վրա. հսկողությունը դատարանում գործերը քննելիս օրենքների կատարման վրա, այդ թվում նաև՝ քրեական գործերով մերադրամիքի պաշտպանության գործառույթը. հսկո-

ղությունը դատարանների դատավճիռների և վճիռների կատարման վրա, այդ թվում նաև՝ հսկողությունը ազատազրկման վայրերի վրա:

Դատախազական հսկողության բոլոր պաշտոնատար անձանցից սենատի ավագ դատախազը նշանակվում էր օրենսդրի կողմից՝ արդարադատության նախարարի ներկայացմամբ, իսկ մնացածները՝ սենատի ավագ դատախազի օգնականները, դատական պալատի ու շրջանային դատարանների դատախազներն ու սրանց օգնականները նշանակվում էին Նախարարների խորհրդի կողմից՝ արդարադատության նախարարի ներկայացմամբ:

**5.4. Դատական քննիչների և դատախազության գործունեության անարդյունավետությունը:** Պետական իշխանության նպատակառության և արդյունավետ իրականացման համար ոչ նպաստավոր օբյեկտիվ պայմանները, ինչպես նաև սուբյեկտիվ գործունեություն իրենց ազդեցությունն էին թղթուում ոչ միայն բուն դատարանների, այլ նաև դատախազական հսկողության և դատական քննիչների գործունեության վրա, իհարկե, քաշասական իմաստով: Դատական քննիչների գործունեության մեջ գլխավոր թերությունը գործերի մեջ քանակի կուտակումն էր քննչական տեղամասերում «և զիսավորապես այս գործերի, որոնք ունեն պետական բնույթը և առաջ են թերությ հասարակական հետաքրքրություն: Այսպես համարյա բոլոր պաշտոնեական հանցագործությունների և այսպես կոչված «լիազորական գործերը» մնացել են անշարժ, իսկ մեղավորները՝ ազատ... Ամենից բացիքող տեղամասերն են Երևանի քաղաքային, Էջմիածնի գավառի, որոնցում գործերի թիվը հասնում էր մինչև 350»: Այս տողերը քաղված են Երևանի շրջանային դատարանի նախազահի 1920 թ. կազմված գեկուցագրից: Գործերի դրությունը այդպիսին էր նաև 1918-1919 թթ. ընթացքում: Դատական պալատի դատախազը արդարադատության նախարարին գեկուցում էր, որ տեղերից ստացված գործերի շարժման տեղեկագրերի ուսումնասիրությունից երևում է, որ «1919 թ. նոյեմբեր ամսվա սկզբին Բասարգչարի հաշտարար-քննչական բաժնի վարույթում եղած 367 գործերից մեկ ամսվա ընթացքում չի ուղարկվել (դատարան) ոչ մի գործ»: Իհարկե, այս դեպքում դա պայմանավորված էր նաև հաշտարար դատավորի և դատական քննիչի պաշտոնները մեկ անձից կողմից համատեղումնով: Այսպիսի իրավիճակում արդարադատության նախարարը 1920 թ. մարտի 25-ին իր շրջաբերականով դիմելով դատական և քննչական մարմիններին քննիչներից պահանջում էր ամսեկան քննել և ավարտել հայրու քրեական գործ: Սակայն միայն շրջաբերական ուղարկելով խնդիրը լուծելն անհնար էր: Բացի այդ Երևանի

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 119, թթ. 1-8:

շրջանային դատարանը իր ընդհանուր ժողովում, քննարկելով այդ շրջաբերականը, ահա թե ինչ էր պատասխանում արդարադատության նախարարին. «յուրաքանչյուր ամիս քննիչներից հարյուր քննչական գործ ներկայացնելը վեր է ամենայն ֆիզիկական կարողությունից. քննության կատարումը պահանջում է շատ լուրջ և ուշադիր վերաբերմունք, մյուս կողմից թեպետ և արագությունը անհրաժեշտ է, քայլ միայն կարելիության սահմաններում»: Այս կապակցությամբ շրջանային դատարանը գտնում էր, որ դատական քննիչների համար բավական է ներկայացվող գործերի քանակը, յուրաքանչյուր ամսվա համար սահմանել քսանիինգ գործ:

Նախաքննության դասնակուտության, քրեական գործերի այդպիսի կուտակնան պատճառներից մեկն էլ հաղորդակցության միջոցների բացակայությունն էր տեղերում, կամ դրանց բանկությունը և մյուս կողմից դատական քննիչների նյութական անապահով վիճակն ու ցածր աշխատավարձը, որ հնարավորություն չէր տալիս նրանց գտնվել անընդհատ տեղաշարժի մեջ, արագացնել գործերի նախաքննության ընթացքը, այսինքն՝ բարեխաղործն կատարել իրենց պարտականությունները և, իհարկե, դրդում էր նրանց գահավիժել կաշառակերության ու ապօրինությունների անդրունքը: Ըստ արդարադատության նախարարի 1920 թ. դեկտեմբերին կազմած զեկուցագրի «Հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում դատական քննիչներից չորսը դատի են տրվել պաշտոնական հանցագործությունների համար»:

Հետևանքը, իհարկե, արդարադատության պետական մարմինների հեղինակության անկումն էր և պատժի անխուսափելիության սկզբունքի շիրացումը, որն էլ իր հերթին պայմանավորում էր հանցագորության նոր ալիք և աճ:

Էջմիածին և Սուրմալու ուղարկված խորհրդարանական հանձնաժողովի նախագահը՝ Ս. Թորոսյանը 1919 թ. դեկտեմբերի 29-ին խորհրդարանում գեկուցել է. «Գավառում ամենքը նկատում են և մեզ էլ հայտնում, որ հանցագործը, մանական աշքի ընկնդերը, չեն պատժվում: Սարդարապատի շրջանի նախկին կոմիսար Արդությանը մեղադրվում է կողուպութի, կաշառքի, հարկերը յուրացնելու, գենք ժողովելու ու յուրացնելու և այլ հանցանքների մեջ: Զի բանտարկվել, այլ ազատ է թողնվել և նա թարնվել է: Էջմիածին շրջանի նախկին կոմիսար Մնացական Առուժանանը, որ մեղադրվում է Սարդարապատի շրջանի թալանի մեջ, մասուցերը վրան կախած ազատ շրջում է Երևանում ու Աշտարակում: Այդ նախկին աղքատ գրագիրը այժմ հաստատության տեր է, փուռ է բացել Աշտարակում և ոչ ոք չի հարցնում, թե ցորենը որտեղից է: Կաշառակեր Գարոն Աղամալյանը ազատորեն շրջում է Երևանում և գուցե նոր պաշտոն է ստա-

ցել: Այդպես էլ Խոսրովյանը, որին ավելի բարձր պաշտոն են տվել: Զի պատժվել Կարպու հասարակության կոմիսար Հարություն Կենասյանը, որը թալաններ է կազմակերպել: Հաճախ գանգատվում են դասալորժյան պատճառով, բայց գավառական իշխանությունը ինքն է հանցավոր: Խեղենին հավաքում են, իսկ ուժեղներին ազատում նույնիսկ «օրինավոր» միջոցներով: «Մաուգերիզմի» դեմ պայքարում մեծերին բողնում, նորելուկներին, երիտասարդներին պատժում ենք, իսկ արմատները հանձինս երևելիների մնում են և դրանք պեսը է սուր դանակով կտրել»:

Այսուղից կարելի է հետևություն անել, որ դատական քննիչները չեն գտնվում իրենց կոչման բարձրության վրա, չունեն պատշաճ հեղինակություն դեմ դուրս գալու գործադիր մարմիններին և միլիցիային, ինչ հետևանքով ընկնում էին նրանց ազդեցության տակ, դառնում անուժ ոչ միայն հանցավորության, այլև պետական կառավարման մարմինների և դրանց պաշտոնատարների ազօրինությունների դեմ: Մեղադրել դրա համար միայն նրանց, իհարկե, չենք կարող: Դրանում իրենց մեղքի բաժինը ունենի նաև արդարադատության նախարարությունը, կառավարությունը, օրենսդիրը:

«Սրանով պատիվ ունեմ Ձեզ զեկուցելու, որ տեղական ինքնավարության վարչության նախագահ Ներսես Զաղեթյանը միջամտում է քննչական գործերին և սպառնալիքներով «ազատել ինձ ծառայությունից» ցանկանում է, որպեսզի ես առանց որևէ իհմքի կալանավորեմ նրանց ում ինքը կնշի և ազատեմ կալանքից նրանց ում նա կցանկանա: Ընդ որում, նա ինձ ասում էր. «Ձեր օրենքները հնացել են և չափից դուրս քույլ են» և այդ իսկ պատճառով ինձ առաջարկում է ղեկավարվել ոչ թե օրենքներով, այլ իր ցուցումներով: Նրա այդպիսի վերաբերմունքը իմ նկատմամբ ինձ հնարավորություն չի տալիս աշխատել այնպես, ինչպես պատշաճ է դատական քննիչին, այլ իսկ պատճառով խնդրում եմ Ձեզ, եթե հնարավոր է, ինձ ազատել նշված անձի միջամտությունից...»: Սա Քարքանսարայի տեղամասային քննիչի զեկուցագրին է ուղղված շրջանային դատարանի նախագահին 1920 թ. նայիսին, որն էլ այն Վերադարձը է արդարադատության նախարարին: Այս մեկը դեռ ոչինչ: Սեկ այլ տեղամասում՝ Ղարաբիլսայում դատական քննիչը իրեն լրիվ անուժ է համարում և իր վիճակը անտանելի, խնդրելով իրեն տեղափոխել. «Օրեցօր իմ վիճակն այստեղ դառնում է անտանելի: Մաուգերիզմը, որը նախկինում հետապնդվում էր, ստացել է լայն տարածում, համարյա օրինական չկա մի օր, որ չկատարվի սպանություն, կողոպուտ, գորություն»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 117, թ. 140:

Նախաքննության բացիքող, դանդաղաշարժ վիճակը պայմանավորված էր նաև պատրաստի և փորձառու կադրերի բացակայությամբ, դատախազական հսկողության ոչ արդյունավետ կազմակերպմանք: Համաձայն օրենքի շրջանային դատարանի դատախազի օգնականներից մեկը պետք է գործեր անմիջապես դատարանին կից, իսկ մնացածները դատական շրջանի տարրեր տեղամասերում (Դատ. հաստ. կանոն., հոդվ. 126): Երևանի շրջանային դատարանի դատախազական հսկողությունը մինչև հանրապետության հրչակումը կազմված էր դատախազից և նրա իննը օգնականներից: Ամբողջ դատական շրջանը համապատասխանաբար բաժննված էր իննը տեղամասերի: «Այդ կազմը դժվարությամբ էր կատարում իր վրա դրված պարտականությունները, որի պատճառով 1911 թ. դատախազական հսկողությունն ուժեղացնելու համար գործուղփում էին դատական պաշտոնի ավագ թեկնածուներ: Բացի այդ 1913 թ. Թիֆլիսի Դատական պալատի դատախազը միջնորդել էր արդարադատության նախարարին դատախազի օգնականների քանակը ավելացնելու ևս երկու հաստիքով»<sup>1</sup>:

Այս կապակցությամբ բավականին լավ ու անկողմնակալ է նկարագրում իրավիճակը դատական պալատի դատախազը 1920 թ. հուլիսի 26-ին արդարադատության նախարարին ուղղված իր մի գեկոցագրում, որից, կարծում ենք, տեղին կլինի մի քիչ ավելի ընդարձակ մեջքերում կատարել. «Համաձայն Ձեր բանավոր առաջարկի պատիվ ունեմ գեկոցելու հետևյալը՝ Երևանի շրջանային դատարանը, նրան կից դատախազական հսկողությունը և քննչական մասերը գտնվում են անբավարար վիճակում: Հանրապետությունը ծննդյան առաջին օրից ևեր, չունենալով նախկին Երևանի նահանգում բավականին պատրաստի ուժեր, շատ տեղերում քննիչներ նշանակվեցին բարձրագույն կրթություն չունեցող մարդիկ, որոնք չունենալով փորձություն և դատավորին հասուն կողմեր, իշարը գործադրեցին դատավորի մեծ կոչումը և այսպիսով չկարողացան գրավել ժողովրդի համակրանքը ու վատահությունը: Վերջին ժամանակներու, կարծես, հայ մտավորականությունը սկսել է վերադառնալ հայրենիք և գործի անցնել. շատերը ստանձնել էին քննիչի և որիշ դատական պաշտոններ: Բայց նյութական անապահովածությունը, քննակարանային հարցը, կրկին ստիպեցին նրանց բողնել մեր երկիրը և վերադառնալ հին վայրերը: Ներկայումս շատ զավառներում չկան քննիչներ (Նոր Բայազետ, Էջմիածին, Նորդուղալի և որիշ շատ տեղեր), դատախազի օգնականներ և այդ պակասությունները լրացնելու համար մոտիկ ապագայում

չկա ոչ մի հնարավորություն: Երևանի շրջանային դատարանի դատախազական հսկողության մեջ կա միայն երկու դատախազի օգնական նրանցից մեկն էլ գործուղված է արտակարգ դատարան, չնայած որ օրենքով հինգ դատախազի օգնական պետք է լինի: Ծիշտ է, մի քանի ամսի առաջ դատախազի օգնականները ավելի շատ էին, բայց նրանցից մի քանիսը նշանակվեցին Կարսի ու Ալեքսանդրապոլի դատարաններում զանազան պաշտոններով: Ներկա պայմաններում ոչ ոք չի համաձայնում ծառայության նտնել. եղածներն էլ բողնում են իրենց պաշտոնները: Մի դատախազի օգնականով և քննիչների անբավարար կազմով հազիվ թե կարելի լինի դատական գործը և նախնական քննությունը առողջ հողի վրա դնել:

Չնայած այդ բոլոր աննպաստ պայմաններին՝ գործը կարելի կլիներ մի փոքր բարեկավել, եթե դատախազական հսկողությունը միջջոններ ունենար իր խնամքին հանձնված գավառական քննչական մասերը շրջել ու տեղում ծանրանալ գործի դրույթան հետ, քննիչներին բացատրել նրանց համար անհավանալի գործերը և ցույց տալ, թե ինչ պետք է անեն նրանք այս կամ այն գործի վերաբերմամբ և առհասարակ արագացներ գործերի ընթացքը:

Քննիչներն էլ նոյն դրույթյան մեջ են: Օրենքին համաձայն նրանք պարտական են շատ դեպքերում շրջել իրենց քննչական մասերը և տեղում կատարեն քննություն: Բայց դժբախտաբար դատախազական հսկողությունը, նույնպես և քննիչները ոչ մի հնարավորություն չունեն շարժվելու իրենց տեղից: Դիմումներն այդ ուղղությամբ մնացել են առանց բավարձումներ: Օրապահիկի աննշան քանակը, ուղևորման միջոցների բացակայությունը և ուղևորության համար բաց բողնված ավանը ոչ ավելի քան 3000 ռ. բույլ չեն տալիս տեղից շարժվել: Գտնվելով Երևանում, գրավոր դիմումներ անելով քննիչներին՝ գործը չի կարելի արագացնել: Դատախազական հսկողության հաճախակի այցելությունները քննչական մասեր ստիպում են քննիչներ լինել ավելի գգույշ և պարտաճանաչ իր գործում...

Չնայած այդ բոլոր աննպաստ պայմաններին, հոյս եմ տածում, որ հենված մեր և կառավարության օժանդակության վրա մոտ ապագայում կարելի կլինի մաքրել դատարանը անհարազատ տարրերից և կապել դատարանը ժողովրդական լայն խավերի հետ՝ դնելով նրան իր կոչման բարձրության վրա:

Նախաքննության, դատախազական հսկողության արդյունավետ գործունեությանը նպաստող իրավական, կազմակերպական, նյութական

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՄԱ, ֆ. 206, գ. 1, գ. 6, թ. 342:

երաշխիքների ապահովումը, իհարկե, դժվար, մեծ հմտություն և համբերատար աշխատանք պահանջող գործ էր: Սիայն համալիր, համակարգված միջոցառումների մշակմանը և կենսագործմամբ կարելի էր խնդիրը բարեհաջող կերպով լուծել: Հակառակ դեպքում այն կմնար անիրազործելի: Այսպիսի պայմաններում արդարադատության նախարարությունը ևս, կարծես թե, իրեն անում էր տեսնում և միակ ելքը իրավիճակի համարում կտրուկ, իրամայական, արտակարգ միջոցառումները, որոնք հանրապետության գոյությանը զուգընթաց քանի գնում շատանում, ահազնանում էին՝ սպառնալով վերջ տալու հենց իրեն՝ արդարադատությանը իր սկզբունքների և երաշխիքների հետ միահայն:

1920 թ. հոկտեմբերի 22-ին դատական պալատի նախագահը և դատախազը «հույժ շտապ» մակագործությամբ շրջաբերական հրահանգ են ուղարկել շրջանային դատարանների նախագահներին, որում խնդիր էր դրվում 1921 թ. վերջ տալու քրեական գործերի կուտակմանը՝ քննչական տեղամասում կենսագործելով մի շարք արտակարգ միջոցառումներ.

#### «1. Քննչական մասերում զատել գործերը.

ա) կալանավորական, բ) զեղծարար պաշտոնյաների, գ) մնացած գործերը, որոնք ծագել են մինչև սույն տարվա ապրիլը և բողնել քննիչների մոտ<sup>1</sup>:

2. Մնացած գործերը մասնագրել դատախազներին, դատարանի անդամներին, դատախազների օգնականներին և հաշտարար դատավորներին (որոնք ծանոթ են նախաքննության հետ) քննելու և գրելու գործերի շապէի վրա գործի դրության մասին.

ա) ինչ է մնում գործը լրացնելու համար, բ) կարելի է արդյոք քննությունը շարունակելով գտնել հանցավորներին և չի կարելի արդյոք այժմ իսկ գործը ներկայացնել կարծելու համար, եթե քննությունը շարունակելը աննպատակահարմար կդիտվի...

3. Այն բոլոր գործերը, որոնք կլրեն քննողների կողմից վերնագիր կարծելու մասին անհապաղ... դատախազական հսկողության կարճման եղրակացության հետ ներկայացնել շրջանային դատարաններին, որոնք պետք է սույն գործերը կարծեն ըստ կարելույն անարգել, անտես անելով գործի ձևական կողմը: Գործերը վերադարձնել քննությանը՝ լրացնելու համար, միայն ծայրահեղ դեպքերում...»: Իհարկե, սա ևս լուծում էր, սակայն որն էր երաշխիքը, որ հետագայում ևս չէր տեղի ունենա չքննված քրեական գործերի կուտակում նախաքննության մարմիններում:

<sup>1</sup> Կարծում ենք, որ այստեղ պետք է լինի «ապրիլ 1-ից հետո», այլ ոչ թե «մինչև ապրիլ» ժամկետային սահմանումը: Սխալը, հավանաբար, հետևանք է փաստարդի ուստերեն նախագծի ոչ ճշշտ թարգմանության:

\* \* \*

Ամփոփելով Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգի կառուցվածքի և գործունեության ուսումնափրկյունը կարող ենք ասել, որ ոչ դրական միտում ունեցող նախադրյալներն իրենց ավերիչ ազդեցությունն էին թողնում ամբողջ հասարակության բարյահոգերանական մինուլորտի, իրավագիտակցության վրա: Անցման շրջանի գործուները, պատերազմները և հեղափոխությունները, սովոր պայմանավորել էին իրավագիտակցության մակարդակի անկումը հասարակության լայն զանգվածների մեջ: Թարար բնակչության կարգախոսն էր դարձել «Թագավոր չկա՝ օրենք չկա» ասացվածքը: Իշխանությունները լուրջ բարդությունների էին հանդիպում տարագիր, անտեղ ու անտուն, վրեմինդիր արևմտահայության հետ հարաբերություններում և կառավարությունը ստիպված հայտարարություններ էր անում, որ Հայաստանի Հանրապետության օրենքները պարտադիր են և՛ ուսահայերի, և՛ անխատիր բոլոր տաճկահայերի համար: Իրավագիտակցության մակարդակի ընդհանուր անկումը, ինչ ու նոր արժեքների շփորն ու բարյական հասկացությունների աղավաղումը մուտք էին գործում նաև պետական մարմիններ, դատարաններ, ինչն էլ հանդիսանում էր իրավունքի նորմերի պահանջների շիրացնան գործուներից մեկը: Սանձարձակության և անշխանության մինուլորտը պայմանավորված էր նաև պատասխանատվության անխոսափելիության սկզբունքի շիրացնամբ: Բարյահոգերանական այս գործուների ուժով կտրուկ անկում էր ապրում իշխանությունների հեղինակությունը՝ առաջ քերելով նրանց սուր քննադատություն հասարակության կողմից, որ կառավարող կուսակցության պաշտոնաքերի որակմամբ վերածվել էր «քննամական» դիրքորոշման հանդիպ կառավարության<sup>1</sup>:

Այդ ընթացքում կարևորվում էր պետական կամքի և մտածողության, իմաստուն քաղաքականության և կառավարման դերը՝ ուղղված օրինականության և իրավակարգի ապահովմանը, դրանց հաստատման համար անիրամեշտ նախադրյալների երաշխավորմանը: Այսինքն կարևորվում էր հաստուկ իրավաբանական-կազմակերպական, նորմատիվ երաշխիքը՝ իրավապահպան և դատական համակարգերի կազմակերպական և գործառության առանձնահատկությունները, որ ընդունակ էին ազդելու մյուս երաշխիքների փոփոխման վրա դրական միտունով և անիրամեշտ էին օրինականության պահպանամ, արդարադատության ճշշտ, արագ և արդյունավետ իրականացման համար: Այս առումով, ի-

<sup>1</sup> Տես «Յառաջ», թերթ, Երևան, 1919, թիվ 27:

հարկե, պատասխանատվության մեծ մասը ընկնում էր քաղաքական դեկապարության և օրենսդիր ճարմինների վրա, որովհետև օրենսդիրը ավելի լայն տցիալական և պետական նոտահորիզոն պետք է ունենար, օրենքներ ընդունելու գործընթացում զգալիորեն ավելի մեծ քանակով գործոններ պետք է հաշվի առներ, ուսումնասիրեր և համեմատեր խնդիրների նկատմամբ բազմատարբերակ լուծումները, այդ ընթացքում պահովելով նաև օրինաստեղծ աշխատանքի որակական հատկանիշները:

Աղյուրների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ուսական դատական բարենորոգման դրույթները Հայաստանի Հանրապետությունը ընկալեց ոչ հաջողակ կազմակերպական ձևերով, ինչն էլ հանդիսացավ արդարադատության ճարմինների անարդյունավետ գործունեության պատճառներից մեկը: Հանրապետության իշխանությունները չկարողացան «ստեղծել պայմաններ, որոնցում դատարանները կկարողանային անցնել արդարադատության իրականացմանը»: Անհաջողության գիտավոր պատճառը ռազմավարական խնդրի սխալ ընտրությունն էր, այսինքն՝ ոչ թե իրականությունը պետք է հարմարեցվեր դատական համակարգին, այլ դատական համակարգը պետք է կառուցվեր իրականությանը, հասարակական հարաբերություններին համապատասխան:

Ուսումնասիրված ձևուր մեզ հնարավորություն է տալիս պնդելու, որ և՛ հաշտարար բաժինների, և՛ քննչական տեղամասերի տեղարաշխումը կատարվեց նախահեղափոխական, նախապատերազմական, խաղաղ պայմանների չափանիշներից ելնելով: Արդարադատության նախարարությունում նոյնիսկ մտահոգված էին, որ նման քանակով հաշտարար դատարանները և դատական քննիչները չեն ունենալու բավարար ծանրաբենվածություն: Սակայն կյանքի նոր պայմանները և հանգամանքները սնանկ էին դարձնելու այդ հաշիվները: Պատերազմի, հեղափոխության, ազգամիջյան բախումների, գաղրականների կուտակման, տնտեսական զգնաժամի և զանազան այլ պատճառներով բավականին աճել և աճելու էր հանցանությունը և սոցիալ-իրավական վեճերի ու «բախումների» քանակը: Սովորական չափանիշներն այսուղև արդեմ անպետք էին: Նման հաշվարկները հետագայում դժվարությունների առաջ կանգնեցրին հաշտարար արդարադատությունը հիմնականում ծանրաբենվածության և չքննված մեծ թվով գործերի կուտակման պատճառով: 1920 թ. աշնան տվյալներով երեք հաշտարար բաժիններում առկա էր մինչև հարյուր գործ, իսկ մնացածում՝ մինչև երեք հարյուր: Երևանյան հաշտարար բաժիններից մեկում կար վեց հարյուր, իսկ մյուսում մինչեւ իննը հարյուր գործ:<sup>1</sup>

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 107, թ. 355:

Նոյն Բասարգեարի հաշտարար-քննչական տեղամասի համար կատարված հաշվարկները գորչ իրականությունը դարձրեց լրիվ սնանիկ: Այսպես՝ 1920 թ. Նոր Բայազետի դատական քննիչը արդարադատության նախարարին ուղղված զեկուցագրում գրում էր. «Կատարելով Ձեր անձնական հանձնարարությունը զեկուցում եմ. Բայազետի գավառում (Բասարգեարի և Նոր Բայազետի քննչական տեղամասեր) սովորական կյանքի խախտումը դարձավ ակնհայտ դեռ անցած տարվա մարտին, եթե իմ նախորդը՝ Մահմոնվը հաղորդեց դատախազին, անդրշյան տեղամասում դիակների զննություն կատարելու անհնարինության մասին, սկսված երկապաւակության պատճառով: Թշնամանքը արագ աճեց և ընդունեց զանգվածային ինքնառշնչացման ընույթ: Գավառի բնակչությունը դադարեց ճանաչել ինչ-որ իրավունք և սկսեց հաշվի նատել միայն հրացանի հետ: 99 տոկոսով նորացված վարչությունը չուներ ու չունի ոչ մի հեղինակություն և իշխանություն: Հեղինակություն չկա և ուժ չկա: Դրա հետևանքով մուտքման բնակչությունը հայտարարեց մարտական կարգախոս. բազավոր չկա՝ ուրեմն և օրենք չկա, և այդ կարգախոսի ազդեցության տակ սկսվեց ինքնառշնչացմանը: Վարչությունը անուժ էր դադարեցնելու իրավախախտումները և կանխելու դրանք, քանի որ այդ հիշխանությանը ոչ ոք չի լսում: Դրան գործահետո վերացան հաղորդակցության միջոցները, և բնակչությունը ավելի շատ համոզվեց այն դրույթում, որ չկա օրենք, քանի որ չեն երևում չինովնիկները, և այդ հողի վրա (օրենքի բացակայության) սկսվեց լրիվ անարխիա: Դատական իշխանության դրույթունը այսպիսին է. դեպքերի մասին հաղորդագրությունները հասնում են միայն պատահականորեն. այցելել դեպքի վայր հնարավոր չե. Եկակոչի ծանուցագրերը ոչ ոք չի հանձնում հասցեատերերին, իսկ եթե հանձնվում էլ է, ապա վերջիններս, համարյա բոլորը, իրենց պարտավոր չեն համարում ներկայանալ կամչով, քանի որ նրանք արդին իրենց հաշիվները մաքրել են իրացաններով, իսկ դատական հիմնարկություններում հարուցված գործերը ընկած են ինչպես արխիվներում...»:

Հաշտարար դատարանները Ուսումնասում քննում և լուծում էին միայն հաշտարար իրավասության քենական և քաղաքացիական գործերը, իսկ Հայաստանում դրանց իրավասությանն էր հանձնված նաև վարչական գործերը: Հաշտարար դատարանները կատարում էին նաև նոտարական գործառություններ: Այս հանգամանքների ուժով աճում էր հաշտարար դատավորների ծանրաբենվածությունը, որի բնական հետևանքը չքննված գործերի կուտակումն էր: Հաշտարար դատարանների համակարգի կառուցման թերություններից մեկն էլ հաշտարար և վարչական իրավասության վերաբենիչ ատյանի բավական մեծ հեռավորությունն էր առաջին ատյանից՝ բնակչությունից:

Այս պայմաններում և արդարադատության նախարարությունը, և կառավարությունը, և խորհրդարանը, փոխանակ միջոցառումներ մշակելու և իրականացնելու, որոնք պատշաճ բարձրության վրա կրնեին հաշտարար արդարադատությունը, կազմահովեին դատարանի անկախության սկզբունքը, պայմաններ կստեղծեին դատարանի համար՝ դեմ դուրս գալու վարչության և միլիշիայի ապօրինի քայլերին, փոխանակ ապահովեին դատական քննության արագության սկզբունքը, վերացնեին գործերի կուտակումը, նախատեսում էին ներմուծել ընտրովի հաշտարար դատարան, ընդ որում, այնպիսի ձևով, որն համարյա ոնչնով չեր տարբերվում եղածից, և որն այդպիսի պայմաններում էական արդյունքներ չեր տա: Մեզ համար անհասկանալի է քվում Հայաստանում պատվավոր հաշտարար դատավորների ինստիտուտի չկիրառման պատճառները: Հաշտարար դատավորների գործունեության վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այդ ինստիտուտի կիրառումը՝ մանր քրեական և քաղաքացիական գործերով, հնարավորություն կտար հաշտարար դատարանը էլ ավելի մոտեցնելու ազգաբնակչությանը, որոշ չափով բեռնաբարի հաշտարար դատավորների ծանրաբեռնվածությունը: Ուրեմն այս ինստիտուտի կիրառումն ավելի շատ դրական հետևանքներ կունենար և արդյունավետ կլիներ, քան հաշտարար դատավորների ընտրովին վարպետ սկզբունքի հաստատումը:

Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգի ամենաթույլ և անարդյունավետ գործող օդակներից մեկն էլ Երևանի շրջանային դատարանն էր: Դրա հիմնական պատճառը, մեր կարծիքով, նրա համրապետության ծայրամասային գավառներից ու ազգաբնակչությունից հեռու գտնվելն էր: Գործին չեր օգնում նաև արտագնա նիստերի կազմակերպումը, քանի որ այդ դեպքում ևս գործերի մի ստվար մաս տեղանասային դատական քննիչների և միլիշիայի վատ աշխատանքի շնորհիվ մնում էր չլուծված: Դեռևս կայսրության օրոր դատական մարմինների բնակչությունից հեռու գտնվելը առաջ էր բերում արդարացի քննադատություն հասարակայնության և մամուլի կողմից: Հայաստանի իրավիճակում այդ փաստը անվիճելի էր: Ստեղծելով ընդիհանուր ընդդատության գործերով որպես առաջին ատյան մեկ շրջանային դատարան և նրա դատական շրջան համարելով հանրապետության ամբողջ տարածքը՝ արդարադատության նախարարությունը և օրենսդիրը թույլ տվեցին ճակատագրական սխալ: Ինչո՞ւ: Որովհետև՝ հանրապետության սոցիալական-քաղաքական կացությունը բարյահոգեկրանական մքնուրութը, հանցավորության մեծ այիքը այնպիսին էին, որ շարունակել արդարադատության իրականացումը մինչհեղափոխական ժամանակաշրջանի չափանիշներով անհնարին էր, որովհետև ոչ մի վկա, ինչ էլ որ լիներ, այդ-

պիսի պայմաններում չեր կտրի հարյուրավոր կիլոմետրեր՝ ներկայանալու Երևան և նապատելու «արդարադատության հաղթանակին», իմանալով, որ չեն հասուցվի իր ծախսերը և վախենալով ճանապահներին սպառնացող փոանգներից: Խսկ որ այդ սպառնալիքը հնարովի չէ, այլ իրական, ակնհայտորեն ապացուցում են սկզբնադրյուրները: 1918 թ. սեպտեմբերի 27-ին ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը շրջաբերական հրահանգ է ուղարկել բոլոր գավառային և գավառամասային կոմիսարներին, որում ասված է: «Ամեն օր տեղեկություններ են ստացվում կողպուտների և զողությունների մասին, այն էլ մեծ մասամբ Երևան-Էջմիածին-Աշտարակ-Ապարան, Երևան-Ախտա-Եղնովկա-Դիլիջան-Ջարվան-սարա գլխավոր խճուղիների վրա: Եթե այդպես է դրույթունը հաղորդակցության այդ գլխավոր գծերի վրա, ուրեմն պարզ է, թե ինչ կացություն է տիրում ավելի հեռավոր և խոլ վայրերում»<sup>1</sup>:

Իրավիճակը այդպիսին էր հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում: 1920 թ. հովհանն ներքին գործերի նախարարի օգնական Ս. Թորոսյանը Նախարարների խորհրդին գեկուցել է: «Երկրի կյանքը վրդովդ երկրորդ հանգամանքը գաղտնի ավազակախմբերի գոյությունն է: Արանք կազմված են գլխավորապես բնիկ տարրերից, որոնք դարանամուտ են լինում գլխավորապես ճանապարհների վրա և զուտ կողոպուտի նպատակով սպանում են ճանփորհներին և թալանում: Հայաստանի բոլոր մասերում այդ երևույթը նկատվում է: Հասուկ ուշադրության է արժանի Էջմիածնից-Կարիսուն խճուղիների շրջանը: Հունվարից մինչև այսօր այդտեղ եղած սպանությունների ու թալանների դեպքերն արդեն 100-ի մոտ են ...»<sup>2</sup>:

Այս պայմաններում, իհարկե, ոչ թե «ազգաբնակչությանը պետք է մոտեցնելու դատարաննին», այլ ընդհակառակը, դատարան՝ ազգաբնակչությանը: Դրա ելքը մի քանի շորոր կարգի շրջանային դատարանների կազմակերպումն էր և հանրապետության տարածքի բաժանումը մի քանի ընդհանուր ընդդատության դատական շրջանների: Միայն Երևանի շրջանային դատարանի անճնական կազմի հիման վրա կարելի էր հանրապետության տարրեր գավառներում հիմնել չորսից-հինգ չորրորդ կարգի շրջանային դատարաններ: Այսինքն՝ շրջանային դատարաններ, որոնք չունեն առանձին քրեական, քաղաքացիական, վարչական բաժանումներ, այլ մեկ ընդիհանուր բաժանմունք, և հետևաբար՝ ավելի պակաս քանակով հաստիքային դատավորներ:

Այդ քայլով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը և հաշտարար ու վարչական իրավասության երկրորդ ատյանը հան-

<sup>1</sup> Տես «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, 1918, թիվ 8:

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, գ. 1, գ. 287, թ. 5:

ձինս այս դատարանների կմերձենային ազգարնակշուրջանը և վերը նկարագրված պատկերը այդքան էլ տխուր չէր լինի: Այդպիսի կազմակերպական-օրենսդրական քայլը կտար իր դրական արդյունքները բոլոր առումներով, նախ և առաջ՝ խուսափելու շքննված գործերի ահուելի կուտակումից: Այն միաժամանակ հնարավորություն կտար արդյունավետ կերպով կազմակերպելու դատախազական հսկողությունը, նպաստելու նաև նախաքանության արագացմանը, դատական քննիչների գործունեության վրա արդյունավետ հսկողության իրականացմանը:

Կաղղերի հարցն, այսինքն՝ որակյալ դատավորների խիստ պահանջարկը կարելի կլիներ լուծել նախ շրջանային դատարանների քրեական և քաղաքացիական բաժանմունքների միացման միջոցով, իսկ այնուհետև երդվալ ատենակալների դատարանի փոխարեն շոֆենների դատարանի ներմուծմամբ: Ζ իրավաբան, երկու ատենակալների ընդդիկումը դատական կազմի մեջ հնարավորություն կտար նաև բավականին կաղղեր ազատել և դրանց հաշվին կազմակերպել մի քանի շրջանային դատարաններ, մոտեցնել դատարանը ժողովրդին: Ինարկե, երդվալ ատենակալների դատարանում ժողովրդավարությունը ավելի լրիվ է արտահայտված, քան շոֆենների դատարանում: «Նրանում արդարադատության իրականացման պետական գործառույթը պատկանում է ժողովրդին ... Երդվալների դատարանում ժողովոյի կամքը ինքնիշխան է»<sup>1</sup>: Երդվալների դատարանը ուժեղացնում է դատավարության մրցակցությունը, բարձրացնում փաստաբանության դերը: Սակայն այդ դատարանը իր բարդությամբ, դանադաշտարժությամբ, բանկությամբ չէր համապատասխանում Առաջին հանրապետության լյանքի իրական պայմաններին և կարիքներին, որին ավելի շատ անհրաժեշտ էր արագաշարժ դատավարություն, քան «ժողովրդի ինքնիշխան կամքը» արտահայտող դատարան: Այս իմաստով շոֆենների դատարանը ավելի արագաշարժ էր և ավելի գործուն: Երդվալների ինստիտուտը, որ սովորական պայմաններում գործում էր բավականին արդյունավետ, հանրապետության ծանր տնտեսական, քաղաքական, սոցիալ-հոգեբանական իրականության մեջ ի վհճակի չէր արդյունավետ գործելու, իրացնելու արդարադատության խնդիրները և ապահովելու արդարադատության արագության սկզբունքը: Առաջին հանրապետության «գորշ» իրականությունը դատական կանոնադրությունների շատ դրույթներ, մասնավորապես նաև երդվալ ատենակալների դատարանը, վերածեցին իդեալիզմի:

<sup>1</sup> Տե՛ս Իстина... Ի տույն истина! Пять беседъ о судебно-правовой реформе. М., 1990. էջ 219:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ԱՐՏԱԿԱՐԳ ԴԱՏԱՎԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՎԱՅՐՈՒՄԸ

#### § 1. Արդակարգ դատավարանները Հայասպանի առաջին հանրապետությունում

Առաջին հանրապետությանը հայտնի են եղել երկու տարրեր արտակարգ դատարաններ, որոնք իրավաբանորեն և կազմակերպորեն առանձնանում էին հաշտարար քրեական և ընդհանուր քրեական դատական ենթահամակարգերից, ունեին իրենց ուրույն խնդիրները, քննչական ենթակայությունն ու ընդրասուրյունը:

**1.1. Պաշտոնեական հանցագործություններով արտակարգ քննիչ հանձնաժողովը և արտակարգ դատարանը:** Նորաստեղծ ազգային պետականության ամրապնդումն ու զարգացումը մեծապես պայմանավորված էր պետական կառուցակարգի բոլոր օղակներում ձեռնահաս, գիտակ, պետականորեն մտածող ու գործող, ազնիվ ու փորձառու պաշտոնյաների առկայությունից: Սակայն Հայաստանի Հանրապետությունը մի շարք օրյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հետևանքով զորկ էր ամուր և ուժեղ պետականության այդ անհրաժեշտ նախապայմանից: Այդ պատճառներից էին պետության նորակազմ ու նորաստեղծ լինելը, բուն Հայաստանում անհրաժեշտ կադրային կիմքի բացակայությունը, ազգային մտավորականության հիմնական զանգվածի կենտրոնացվածությունը Հայաստանից դուրս և այլն: Այդ խնդիրը Հայաստանի Հանրապետությունում ձեռք էր բերել քաղաքական մեծ նշանակություն, սպառնում էր անկախ ազգային պետականության գոյությանը, վարկարեկում էր պետական իշխանությունը: «Մենք չունենք ոչ միայն լավ պաշտոնեություն, այլ անգամ տանելի պաշտոնեություն ... մեր պաշտոնեությունը, շատ շնչին բացառություններով հարազատ չէ մեր հայենիքին և նվիրված չէ մեր պետությանը: Անձնական շահի ամենագրեհիկ մտահոգությունն է իշխում նրա մեջ և դարձնում նրան ընդունակ և՝ կաշառակերության, և՝ կեղծումների, և՝ անբարեխից հանցավոր վերաբերմունքի դեպի իր հասարակական ու պետական պարտականությունները, և նույնիսկ, դավաճանության»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Յառաջ», թերթ, Երևան, 1920, թիվ 216:

Չնայած գործադրվող բոլոր ջանքերին պաշտոնեական հանցագործությունները համաճարակի պես տարածվել էին ամբողջ Երկրում, պետական կառավարման բոլոր մարմիններում ամխատիր, և գոյության ամբողջ ժամանակաշրջանում՝ հոչակման օրից մինչև խորհրդայնացումը, խական չարիք էին դարձել հանրապետության համար: Այսպես, պարենավորման նախարարության վերասուլիչ բաժինը, քննելով այդ նախարարության կենտրոնական և տեղական մարմինների գործունեությունը, վեց ամսվա ընթացքում վեր էր հանել «անպատասխանատվորթյան և զեղարարության» բազմաթիվ դեպքեր: Միայն նախարարության համակարգից չարաշահումների, հափշտակությունների համար պաշտոնից հեռացվել էին բազմաթիվ պաշտոնյաներ: Տասնինգ հոգու նկատմամբ հարուցվել էին քրեական գործեր, որոնց բվում կային նաև պատասխանատու պաշտոնական անձինք<sup>1</sup>:

Ըստ արդարադատության նախարարության տվյալների հանցագործությունների գրեթե հիսուն տոկոսը վերաբերում էին պաշտոնյաներին: Երևանի շրջանային դատարանի դատախազի կողմից 1919 թ. դեկտեմբերի դրությամբ կազմված մի տեղեկագրում, որը նա ուղարկել է դատական պալատի դատախազին, իսկ սա էլ իր հերթին արդարադատության նախարարին, ըստ նախարարությունների և հանցակազմերի, բերված են այն պաշտոնյաների ցուցակներ՝ որոնց նկատմամբ հարուցված էր քրեական հետապնդում<sup>2</sup>: Պարենավորման նախարարությունում նրանց քանակը հասնում էր տասնինգի, խնամատարության նախարարությունում՝ հինգի, ինժեներական վարչությունում՝ երեքի, ֆինանսների նախարարությունում՝ ութի, ժողովրդական կրթության նախարարությունում՝ մեկի, արդարադատության նախարարությունում՝ չորսի, (մեկ բանտապետ, երկու դատական քննիչ, շրջանային դատարանի մեկ ծառայող), փոստային և երկարուղյան գործակալություններում՝ մեկական հոգի, Հայաստանի խորհրդարանում՝ երկուսի (խորհրդարանի մեկ պատգամավոր և խորհրդարանի դիվանի վարիչը), ռազմական գերատեսչությունում՝ տասնի: Ներքին գործերի նախարարության համակարգը, իհարկե, առաջատարն էր և 1920 թ. մարտի տվյալներով քրեական մեղադրանքներով քննության տակ էին գտնվում վարչուն գավառային կոմիսարներ, կոմիսարների օգնականներ, տեղամասային կոմիսարներ, միլիցիապետեր<sup>3</sup>:

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 205, գ. 1, գ. 750, թ. 82:

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 105, թ. 111:

<sup>3</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 117, թ. թ. 217-229:

<sup>4</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, գ. 2, գ. 636, թ. թ. 3 և 13:

Եթե հաշվի առնենք նաև լատենտային պաշտոնեական հանցագորությունը և, հատկապես, հանցավոր պաշտոնյաների ստվար մասի անպատիժ մնալը, ապա պատկերն իսկապես ահավոր կդառնա:

Պաշտոնեական հանցագործությունների տարածման այդպիսի բարձր մակարդակի պատճառը հիմնականում ծանր քաղաքական, տնտեսական ու ֆինանսական ճգնաժամն էր, որ անմիտքար կացության էր հասցրել պաշտոնյաներին: Բացի տնտեսական անապահով վիճակից պաշտոնեական և ընդհանուր հանցագորությանը մեծապես նպաստում էին նաև ժողովրդի ընդիհանուր բարոյալումը և իրավագիտակցության անկումը, ալան-թալանի հոգեբանության արմատավորումը, որոնք պայմանավորված էին հինգ տարվա անընդհատ պատերազմներով, հեղափոխություններով, անպատճեինությամբ: Նշանակած պատճառների շարքում իր որույն տեղի ուներ իրավական կայացած համակարգի, ինստիտուցիոնալ մանրամասն իրավական կարգավորման, պատշաճ ընթացակարգերի բացահայտությունը:

Կարսի նահանգապետը ներքին գործերի նախարարին ուղղված գեկուցագրում ցանկով արձանագրում է «Ավելի քան մեկ տարվա ընթացքում ես ստիպված էի հեռացնել, դատի տալ և նույնիսկ բանտարկել ավելի քան յոթանատու այլևսայլ աստիճանների պաշտոնյաների, բայց և այդ արշավը շրաբելավեց դրույթունը: Մարդիկ վարակված էին թալանելու, ապահովելու և ապա հեռանալու տեսչով: Պաշտոնը կորցրել է իր վաղեմի նշանակությունը և հմայքը, մարդկանց մեջ բբացել է երկյուղը դեպի քրեական պատիժը, և այդ մքնոյրատում ոճիրը ստացել է տարերային կերպարանք... բայան այդ օրերին առասպելական էր, պաշտոնեական դիմակի տակ մարդիկ գալիս էին կենեցելու և հարստանալու, և պետք է ասել, որ այդ արանքում խախտվում էին պետականության հիմներները, իրավակարգն արմատորեն կազմալուծվում էր: Պաշտոնեական թալանի տեսչը մի տարերային բռնկում էր, որի առաջ անզոր էին մարդիկ իրենց սկզբունքներով ու դատաստանական պատգամներով»<sup>4</sup>:

Հանրապետության բարձրագույն իշխանությունները գործնական քայլեր էին անում զննե մասսա վերացնելու այդ պատճառները՝ ձեռնարկելով տնտեսական ու սոցիալական զանազան միջոցառումներ պետական պաշտոնյաների տնտեսական վիճակը բարելավելու համար: Հատուկ ուշադրություն էր դարձվում պաշտոնեական հանցագորության դեմ տարվող պայքարին: Սակայն ծանր քաղաքական և տնտեսական իրադրությունը, որում ապրում էր Հայաստանի Հանրապետությունն իր կազ-

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 105, թ. 111:

մավորման պահից, ազդում էին նաև արդարադատության պետական մարմինների գործունեության վրա, բոլոր չին տախս նրանց կենսագործել արդարադատության իրականացման կարևորագույն սկզբումքներից մեկը՝ արագույրունը, սովորական միջոցներով պայքարել հանցավորության դեմ ընդհանրապես և պաշտոնեականի դեմ՝ մասնավորապես:

Դիտակցելով այն մեծ վտանգը, որ ներկայացնում էին պաշտոնեական հանցագործությունները նորակազմ պետության համար և արձագանքելով մամուլի կոչերին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը 1919 թ. հուլիսի 3-ին Նախարարների խորհրդի քննությանը ներկայացրեց օրինագիծ «Պաշտոնավարության հետ կապված հանցագործությունների դեպքում պետական պաշտոնյաներին դատելու համար արտակարգ քննիչ հանձնաժողով և արտակարգ դատարան հիմնելու մասին»: Նախարարների խորհրդը, որին այդ ժամանակ տրված էր օրենսդրական լիազորություններ, որոշեց պաշտոնեական հանցագործությունների դեմ պայքարն ուժեղացնելու և այդ բնույթի քրեական գործերին շուտափույթ լուծում տալու համար արդարադատության նախարարությանը կից հիմնել արտակարգ քննիչ հանձնաժողովը ու արտակարգ դատարան, հանձնարարելով արդարադատության նախարարին մշակելու այդ հանձնաժողովի և դատարանի կանոնադրությունը, որը ներկայացվել և հաստատվել է նոյն թվի հուլիսի 7-ին: Այս օրենքի ընդունման հիմնական նպատակն էր արագացնել պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նախարանությունը ու դատական քննությունը: Այդ նպատակի նվաճման միջոցը նշված քրեական գործերը քննչական մասերի ենթակայությունից ու ընդհանուր դատարանների ընդդատությունից վերցնելն էր, այդ գործառությունների կատարումը կենտրոնացնելով համապատասխանաբար արտակարգ քննիչ հանձնաժողովում ու արտակարգ դատարանում: Բացի այդ, ենթադրվում էր վերջիններիս հիմնադրումով տեղական պետական կառավարման մարմիններին զրկել արդարադատության իրականացման գործընթացին միջամտելու հնարավորությունից:

Այսպիսով, «Պաշտոնավարության հետ կապված հանցագործությունների դեպքում պետական պաշտոնյաներին դատելու համար արտակարգ քննիչ հանձնաժողով և արտակարգ դատարան հիմնելու մասին» օրենքով հիմնվում էր կոլեգիալ քննչական մարմին՝ արտակարգ քննիչ հանձնաժողով պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախարանությունը վարելու համար: Արտակարգ քննիչ հանձնաժողովը կազմված էր նախագահից, որն ի պաշտոնե

Երևանի շրջանային դատարանի նախագահն էր, և երկու անդամներից՝ Երևանի շրջանային դատարանի անդամներից մեկը և նոյն դատարանի դատախազի օգնականներից մեկը: Քննիչ հանձնաժողովի վերջին երկու անդամներին շրջանային դատարանի կազմից նշանակում էր արդարադատության նախարարը: Արտակարգ քննիչ հանձնաժողովի նախագահի միջնորդության դեպքում արդարադատության նախարարն իրավունք ուներ ըստ իր հայեցողության հանձնաժողովի կազմը լրացնել որիշ անդամներով: Հանձնաժողովի կազմի լրացումը հետագայում կատարվել է տարօրինակ ձևով: Ինչպես երևում է արխիվային փաստարդերից 1919 թ. հոկտեմբերի 23-ին արտակարգ քննիչ հանձնաժողովի անդամ է նշանակվել Ալեքսանդրապոլի գավառային հաշտարար դատավոր Ֆ. Մալյուշենկոն, ընդ որում ոչ թե՝ տեղամասային քննիչներից մեկը, և ոչ թե՝ նախարարի, այլ հենց արտակարգ քննիչ հանձնաժողովի կողմից: «Հայստանի Հանրապետության արտակարգ քննիչ հանձնաժողովը Ձեզ առաջարկում է ձեր վարույթն ընդունել և սեփական նախաձեռնությամբ հարուցել պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ գործեր համաձայն սույն թվի հուլիսի 7-ի օրենքի, միայն յուրաքանչյուր գործի մասին հաղորդելով արտակարգ քննիչ հանձնաժողովին»<sup>1</sup>:

«Հայստանի Հանրապետության արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի կանոնադրությունը» սահմանում էր քննիչ հանձնաժողովի քննությանը ենթակա քաղաքացիական և գինվորական պաշտոնատար անձանց կատարած հանցագործությունների շրջանակները (հոդ. 2): Արտակարգ քննիչ հանձնաժողովն՝ օրենքով սահմանված այդ ենթակայության շրջանակներում իրավունք ուներ անմիջապես հարուցել և քննել քրեական գործ: Բացի այդ արտակարգ քննիչ հանձնաժողովին էին հանձնվում քննիչների մոտ գտնվող բոլոր պաշտոնեական հանցագործություններով քրեական գործերը, որոնց նախաքննությունը դեռ չէր ավարտված: Արտակարգ քննիչ հանձնաժողովին արդարադատության նախարարի հրամանով կարող էին հանձնվել այլ քրեական գործերով նախաքննության կատարումը:

Արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի կանոնադրությունը սահմանում էր, որ արտակարգ քննիչ հանձնաժողովն իր գործունեության ընթացքում պետք է դեկավարվեր «Ծրեական դատավարության կանոնադրությամբ»: Դա նշանակում էր, որ արտակարգ քննիչ հանձնաժողովը գործելու էր դատական քննիչների հանար սահմանված ընդհանուր դատավարական, այսինքն՝ նախաքննության վարման կա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ.213, գ. 1, գ. 358, թ.թ. 52, 57:

նոններին համապատասխան: Քննիչ հանձնաժողովի համար վերացված էին և չին գործում միայն «Քրեական դատավարության կանոնաժողովության» 433-445-րդ հոդվածները: Այդ հոդվածները վերաբերում էին վկաների հարցաքննության վայրին և քրեական գործերով նախաքննության ընթացքում վկաներից երդում վերցնելու կարգին: Համաձայն «Քրեական դատավարության կանոնադրության» 433-րդ հոդվ. վկաները հարցաքննություն էին ընթացքում վայրին կատարման վայրում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք հարգելի պատճառներով չին կարող ներկայանալ քննիչի մոտ: Իսկ 442-րդ և 443-րդ հոդվածների ուժով վկաները քրեական գործերով նախաքննության ընթացքում պետք է երդում տային միայն օրենքով նշված կոնկրետ դեպքերում: Օրինակ, երբ վկան հեռու ճանապարհ էր գնալու և նրա վերադարձը կարող էր ձգձգվել, երբ վկան հիվանդ վիճակում էր, որն սպառնում էր նրա կյանքին, երբ վկան ապրում էր տվյալ դատական շրջանի (օկրուզի) սահմաններից դուրս և նրա համար ևս մեկ անգամ դատարան ներկայանալը դժվարություն էր ներկայացնում: Այլ դեպքերում դատական քննիչն իրավունք չուներ երդում վերցնել վկաներից<sup>1</sup>:

Հաշվի առնելով այն, որ արտակարգ քննիչ հանձնաժողովը և արտակարգ դատարանը գործում էին հանրապետության ամբողջ տարածքում և միաժամանակ հաղորդակցության միջոցները լավ չեն աշխատում կամ շատ թանկ էին, որ ճանապարհ գնալն անվտանգ չէր, որ վկաներին հանչելու համար ըստ գործող օրենքների նրանց պետք է դրամ վճարվեր, իսկ մյուս կողմից վկաները մեծամասամբ գերադասում էին չներկայանալ դատարան և մուծել տուգանքը, քան թե կտրել երկար ճանապարհն ու կրել թանկ նստող ճանապարհածախը, օրենսդիրը վերացրեց վերոհիշյալ դատավարական կանոնները: Դա նշանակում էր, որ արտակարգ քննիչ հանձնաժողովն իրեն ներկայանալը գործերը քննելու ընթացքում ինքն էր որոշելու գործով վկաների հարցաքննության վայրը, այսինքն՝ կամ գործի քննության վայրում կամ դեպքի կատարման վայրում: Արտակարգ քննիչ հանձնաժողովն ըստ իր հայեցողության նրանցից կարող էր երդում վերցնել հավաստի ցուցմունքների համար, որպեսզի հետաքայում նրանք արտակարգ դատարան չկանչվեին: Արտակարգ քննիչ հանձնաժողովը, լինելով կողեզիալ մարմին, կարող էր հարցաքննության կատարումը հանձնարարել նաև իր առանձին անդամնե-

րից որևէ մեկին: Փաստորեն արտակարգ դատարանի համար վերացվում էր քրեական դատավարության անմիջականության սկզբունքը:

Վկաների հարցաքննության այդպիսի կարգերի վրա հսկողությունն իրականացնում էր դատական պալատի դատախազը: «Արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի կանոնադրությունը» սահմանում էր, որ բոլոր իշխանություններն ու վարչական մարմինները պետք է ամեն կերպ աջակցեին արտակարգ քննիչ հանձնաժողովին՝ անհապաղ և հերթից դուրս կատարեին նրա իրավասության էությունից բխող բոլոր հանձնարարությունները, կարգադրությունները և այլն: Եթե դրանց կատարման ընթացքում այդ իշխանությունները և մարմինները քոյլ տային քերացումներ, ապա հանձնաժողովն իրավունք ուներ այդպիսի պաշտոնատար անձանց ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ մինչև երեք ամիս ժամանակով բանտարկության:

Ստեղծված արտակարգ դատարանը ըստ էության քննելով էր արտակարգ քննիչ հանձնաժողովից ստացված քրեական գործերը, ինչպես նաև՝ իրեն ընդունած այն բոլոր գործերը, որոնք հարուցվել էին այդ օրենքն ընդունելուց առաջ, անցել նախաքննության փուլը, սակայն դիւնում չեն ստացել դատարանում:

Արտակարգ դատարանի կազմն էր՝ նախագահ, որին նշանակում էր արդարադատության նախարար՝ Հայաստանի Հանրապետության Սենատի անդամներից որևէ մեկին և երկու անդամներ, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետության Դատական պալատի նախագահն էր, իսկ մյուսը՝ Երևանի շրջանային դատարանի նախագահը: Արտակարգ դատարանում մեղադրանք ներկայացնողը հանդիսանում էր «դատական պալատի դատախազական հսկողության անձանցից մեկը», որին ևս նշանակում էր արդարադատության նախարարը: Արտակարգ դատարանի այդ դատախազն արտակարգ քննիչ հանձնաժողովի քննած քրեական գործը մեղադրական ակտով և եղրակացությամբ ներկայացնում էր արտակարգ դատարանին:

Արտակարգ դատարանն իր դատավարական գործունեության ընթացքում պետք է դեկավարվեր «Քրեական դատավարության կանոնադրությամբ» ամրա-բարձր դատավարական կանոններով, բացառությամբ նրա, որ բոլոր դատավարական ժամկետները, բացառությամբ դատավճիռը վերջնական ծևով պատրաստելու ժամկետի, կրծատվում էին մինչև երեք օր: Արտակարգ դատարանի դատավճիռները համարվում էին վերջնական, կարող էին բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով՝ Հայաստանի Սենատ:

<sup>1</sup> Ст. о Российском законодательстве X-XX веков, Том 8, Судебная реформа. М., 1991. № 163-164:

Ինչպես արդեն նշել ենք, արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի հիմնադրման հիմնական նպատակը պաշտոնեական հանցագործություններով քրեական գործերի նախաքննության և դատական քննության արագացումն էր: Սակայն ինչպես ցույց են տալիս այդ մարմինների գործունեության վերաբերյալ ձեռք քերփած տվյալները, դա չիրազործվեց, իսկ նրանց քննած քրեական գործերի քանակը՝ հիմնադրման օրից մինչև վերացում, շատ չնշին էր: Հիմնադրվելով հուլիսի 7-ին արտակարգ դատարանն առաջին քրեական գործը քննել է ավելի քան մեկ ամիս անց՝ օգոստոսի 14-ին: Անդրանիկի դատական նիշտում քննվել է Երևանի երրորդ գավառամասի կոմիսար Մանուկյանի կողմից 9600 ռուբլի պետական գումար յուրացնելու վերաբերյալ քրեական գործը<sup>1</sup>:

Անհաջողության հիմնական պատճառն արտակարգ քննիչ հանձնաժողովին և արտակարգ դատարանին բնորոշ կազմակերպական բնույթի թերություններն էին: Արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի կազմակերպման և գործունեության խնդիրների ուսումնափրության համար արդարադատության նախարարությունը գումարել էր երկու խորհրդակցություններ, որոնք քննելով հարցը, գտել էին արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի գոյությունը ոչ նպատակահարմար<sup>2</sup>: Այդ ուսումնափրությունների արդյունքները ցույց տվեցին, որ քննիչ հանձնաժողովը, լինելով կոլեգիալ մարմին և քննություն կատարելով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, դանդաղեցնում էր դատավարությունը և ոչ թե արագացնում:

Հանցավորության կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նախարձնությունը մինչև արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի ստեղծումը կատարում էին քննչական մասերի քննիչները, յուրաքանչյուր գավառում երեքից-չորս հոգի և Երևանի շրջանային դատարանին կից կարևորագույն գործերով քննիչները: Հանրապետությունում այդ պահին կար մինչև երեսուն քննչական տեղամաս, որոնցում, ըստ դատական պալատի դատախազի կողմից արդարադատության նախարարին ուղղված գեկուցագրի կուտակված էին «միջին հաշվով 5-20 պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ իին և նոր չափարտված գործեր»: Պարզ է, որ երեք հոգուց բաղկացած արտակարգ քննիչ հանձնաժողովը չէր կարող արագ ու օպերատիվ կատարել այդ հսկայական ծավալի աշխատանքը՝ ծանրաբեռնվածության պատճառով,

<sup>1</sup> Տես «Հայաստանի աշխատավոր», թերթ, Երևան, 1919, թիվ 126:

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 91, թ. 106 և ֆ. 206, գ. 1, գ. 29, թ. 102:

մանավանդ, որ դատավարական հիմնական կանոններն ու ժամկետները մնում էին նույնը: Օրինակ՝ ապօրինի կալանքի և խուզարկության համար Երևանի գավառի երկրորդ տեղամասի կոմիսար Կարապետյանցի նկատմամբ հարուցված քրեական գործի քննությունը սկսվել էր 1919 թ. մարտի 7-ին, Երևանի գավառի երկրորդ տեղամասի քննիչի մոտ<sup>1</sup>: Այդ գործը տեղամասային քննիչի 1919 թ. հուլիսի 29-ին թվագրված որոշմանը ուղարկվել է արտակարգ քննիչ հանձնաժողով, համաձայն քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի կանոնադրության 2-րդ հոդվածի<sup>2</sup>: Սակայն քրեական գործի նյութերից երևում է, որ գործի նախարձնությունը տեղից չի շարժվել նաև արտակարգ քննիչ հանձնաժողովում: 1920 թ. հունվարի 17-ին գործը քննիչ հանձնաժողովով վերացման կապակցությամբ նորից հանձնվել է տեղամասային քննիչին<sup>3</sup>: Վերջինիս մոտ ևս նախարձնությունը դրվել է տեղում:

Նույն քննույթի թերություններն ուներ նաև արտակարգ դատարանը: Օրենքը սահմանելով արտակարգ դատարանի կազմը, չէր նախատեսել այն դեպքերը, երբ մեղադրյալը բացարկ էր հայտնում դատական կազմի դատավորներից մեկին: Այդպիսի դեպքերում դատական քննությունը չէր կարող տեղի ունենալ, քանի որ բացարկված դատավորին ոչ ոք չէր կարող փոխարինել:

1919 թ. հուլիսի 7-ի ժամանակավոր օրենքի 14-րդ հոդվածը սահմանում էր, որ արտակարգ դատարանի դատավճիռները կարող էին բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ Հայաստանի Սենատ: Սակայն Հայաստանի Սենատի կազմն ամբողջ 1919 թ. ընթացքում բաղկացած էր ընդամենը երեք հոգուց, սենատորների մյուս հաստիքները բափուր էին մնում: Եվ քանի որ սենատի անդամներից մեկն արտակարգ դատարանի նախագահն էր, ապա նա չէր կարող մասնակցել վճռաբեկ բողոքարկման կարգով սենատ մտցված գործի քննությանը՝ իրը սենատի անդամ: Ստացվում էր, որ գործը չէր կարող վերջնական լուծում ստանալ մինչև սենատի կազմը շրացվեր նոր անդամներով, իսկ Հայաստանի Սենատի կազմը ոչ լրիվ էր նաև 1920 թ. ընթացքում<sup>4</sup>: Այս մասին դեռ 1919 թ. օգոստոսին արդարադատության նախարարը գեկուցել էր Նախարարների խորհրդին: Վերջինս այդ ուղղությամբ ոչինչ չձեռնարկեց և իրադրությունը մնաց անփոփոխ:

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 88, գ. 1, գ. 5, թ. 1-2:

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 88, գ. 1, գ. 5, թ. 1-2:

<sup>3</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 88, գ. 1, գ. 5, թ. 49:

<sup>4</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 91, թ. 106 և ֆ. 206, գ. 1, գ. 28, թ. 51:

Արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի գործունեության անարդյունավետությունը, դանդաղ կոտորությունը պայմանափորված էր նաև այս համբամանքով, որ այդ երկու մարմնների անձնական կազմը, բացի դրանցում պաշտոնավարելուց, ունեին նաև հիմնական պաշտոններ ընդհանուր դատական ատյաններում, որոնցում առանց այդ էլ կուտակված էին մեծ քանակությամբ քրեական գործեր:

Այսպիսով, արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի կազմավորման և գործունեության թվարկված օրենսդրական կազմակերպական-կառուցվածքային թերությունները հնարավորություն չտվեցին այդ մարմիններին իրական, գործուն, արագ պայքար մղել պաշտոնական հանցագործության դեմ և հանգեցրին միանգամայն հակառակ հետևանքի: Այդ մարմինների հիմնադրումը, ըստ Էության, իրավաբանուն անարդյունավետ օրենսդրական քայլ էր:

Արդարադատության նախարարն այդ իրողությունից ենթելով՝ 1919 թ. սեպտեմբերի 1-ին Նախարարների խորհրդի նիստում գեկուցեց արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի վերացման անհրաժեշտության մասին: Սակայն կառավարությունը մերժեց այդ առաջարկը և կայացրեց հետևյալ որոշումը, որ մեզ ենք թերում բառացիութեն, ցույց տալու համար, որ այն ավելի շատ հոչակագիր էր, քան իրավական նորմ. «Խնդիրը մերժել և առաջարկել արդարադատության նախարարին վերացնել հանձնաժողովի և դատարանի պակասությունները. բացատրել, որ կառավարության նպատակն է շուտափությ դատ ու քննություն կազմակերպել և այդ պատճառով արտակարգ դատարանի և քննիչ հանձնաժողովի գործիչները հրավիրվում են ճեռք առնել բոլոր միջոցներն իրենց հանձնված խնդիրներն անհապաղ վերջացնելու համար»:

Արտակարգ քննիչ հանձնաժողովն ու արտակարգ դատարանն այս ձևով շարունակեցին իրենց խղճուկ գոյությունը: Հիրավի խղճուկ, քանզի վեց ամսվա ընթացքում արտակարգ դատարանն ըստ Էության, վերջնականութեն, քննել էր չնշին քանակությամբ քրեական գործեր:

Ավելի ուշ՝ 1919 թ. նոյեմբերի 3-ին արդարադատության նախարարը կառավարությունում ևս մեկ անգամ բարձրացրեց այս հարցը՝ առաջարկելով նոր օրինագիծ՝ «Կանոնադրություն Երևանի դատական պալատի հատուկ ատյանի մասին»: Օրինագծով նախարարությունը նորից առաջարկում էր վերացնել արտակարգ քննիչ հանձնաժողովն ու արտակարգ դատարանը և դրանց փոխարեն սահմանել պաշտոնական հանցագործություններին նախական քննության և դատական քննության նոր կարգ, հիմնել նոր մարմիններ այդ խնդիրն իրագործելու համար (դատական

պալատին կից հատուկ ատյան): Այս օրինագիծը ևս հավանություն չստացավ կառավարության կողմից և չուղարկվեց խորհրդարան:

Հետագայում, Հայաստանի խորհրդարանի Վարչական հանձնաժողովը, որ լավատեղյակ էր խնդրի Էությանը, բազմակողմանիորեն քննարկելով արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի հարցը՝ հանգեց նոյն եղանակացության, ինչ արդարադատության նախարարությունը, ուստի նախապատրաստեց և 1919 թ. նոյեմբերի 12-ին խորհրդարանի օրակարգ մտցրեց օրինագիծ «Արտակարգ քննիչ հանձնաժողովն ու արտակարգ դատարանը վերացնելու մասին»: Պաղամենուրը քննելով այդ հարցը՝ գտավ ոչ նպատակահարմար այդ մարմինների գոյությունը և 1920 թ. հունվարի 2-ին ընդունեց օրենք «Արտակարգ քննիչ հանձնաժողովի ու Արտակարգ դատարանի վերացման մասին»<sup>1</sup>:

Առաջին հանրապետությունում 1919 թ. գոյություն է ունեցել նաև մի ժամանակավոր դատարան՝ Արդարանի շրջանում: Այդ դատարանը հիմնվել էր Նախարարների խորհրդի կողմից 1919 թ. հունիսի 25-ին հաստատված օրենքի հիման վրա: Այդ դատարանի առջև խնդիր էր դրվել քննել ու լուծել Արդարանի տարածաշրջանում հոյսների և քրիստոնյաց առլա գոյրքային վեճերը<sup>2</sup>: Դատարանի նատավայրը Սերդենեկն էր: Նշված դատարանը հիմնվել էր մեկ ամիս ժամկետով՝ 1919 թ. հուլիսի 1-ից մինչև հուլիսի 31-ը: Դատարանն ուներ հետևյալ կազմը՝ նախագահ, ի դեմս Կարս քաղաքի հաշտարար դատավորի և երկուական ներկայացուցիչներ յուրաքանչյուր վիճող կողմից՝ այսինքն տեղի հունական և քրդական համայնքներից: Սակայն վճից կժզի կողմն իր շահերի պաշտպանության համար կարող էր ընդիհանուր կարգով, ըստ հայցագմի, դիմել հաշտարար դատարան կամ ընդիհանուր դատական մարմիններ:

**1.2. 1920 թ. Մայիսյան ապստամբության կապակցությամբ ստեղծված արտակարգ դատարանները:** Հայաստանի Հանրապետությունում գոյություն են ունեցել նաև այլ արտակարգ դատարաններ, որոնք ստեղծվել ու գործել են 1920 թ.: Սրանք սկզբունքորեն տարբերվում էին 1919 թ. արտակարգ քննիչ հանձնաժողովից ու արտակարգ դատարանից և՝ իրենց կազմավորման ձևով, և՝ իրենց կառուցվածքով, և՝ իրենց դատավա-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, իրատ. Պաղամենուր, Երևան, 1920, թիվ 1, հոդվ. 1, էջ 1:

<sup>2</sup> «Գույքային վեճեր» ձևակերպումն իրենով քողարկում էր հիմնականում անսպասների հափշտակության վերաբերյալ գործերը և այդ կապակցությամբ ծագող կողմերի անվերջ փոխադարձ մեղադրանքերը:

րական ձևերով, և՝ իրենց խնդիրներով: Ընորհիվ այդ տարբերությունների այս արտակարգ դատարանները ավելի գործուն էին:

Անորոշ արտաքին-քաղաքական իրադրությունը, հաճախակի ռազմական բախումները դրսի ուժերի և ներքին քշնամաքար տրամադրված, ըմբռստ տարբերի հետ, հեղափոխությունները և հեղափոխական տրամադրությունները զանգվածների մեջ իրենց բացասական ազդեցությունն էին թողնում իրավապահպան համակարգի և դատարանների արդյունավետ գործունեության վրա: Իրենց բացասական ազդեցությունն էին թողնում նաև ոչ կառուցղական կուսակցական պայքարն Առաջին հանրապետությունում, ինչպես կառավարող կուսակցության մենատիրական ձգուունները, նրա կողմից իրավունքի հիմնարար սկզբունքների, օրենքի անտեսումները, այնպես էլ ընդդիմադիր որոշ ուժերի զինված ապստամբության կոչերն ու խոռվությունները, ազգամիջյան բախումները: Ժամանակաշրջանը քաղաքական կուսակցությունների հակամարտության, փոխադարձ անհանդուրժողականության ժամանակաշրջան էր: Արտաօրնադրության, կուսակցական պայքարի այդ բույնը, իհարկե, փոխանցվում էր պետական մարմիններին և բացասական ազդեցությունն թողնում ամրող պետական կառուցակարգի, այդ բույն նաև արդարադատության մարմինների գործունեության վրա: Այդ գործընթացում ամենից շատ տուժում էին պետական շահերը և ժողովուրդը: Քաղաքական պայքարի այդ մթնոլորտը և ընդհանուր դատարանների ոչ արդյունավետ ու դանդաղացարծ գործունեությունը դրդեցին իշխանություններին հիմնելու այս արտակարգ դատարանները:

1920 թ. գարնանը Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին կացությունը դարձել էր սպառնալից: Աղբեջանի գորքերն ու հրոսակախմբերը շարունակում էին իրենց ոտնձգությունները Ղարաբաղում և Հայաստանի սահմաններում: Ապստամբել էին Շարուրի և Նախիջևանի թուրքերը: Այդ տագնապալից պահին հայ մեծամասնականներն ու զանազան անպատճախանառու խմբավորումներ, օգտագործելով ժողովրդական զանգվածների խոլ տրտունջը և դժգոհությունը, բարձրացրեցին հակապետական խոռվություն՝ պառակտում առաջ բերելով ժողովրդի մեջ «առանց հաշվի առնելու, որ ամեն մի խլոտում առաջ կրերի անիշխանություն, պարենի պակասություն՝ զրկելով ժողովրդին ապրուտի միջոցներից», խոցելի կրաքանի հայրենիքը թշնամինների համար, կշատի նրա բանակի մարտունակությունը:

Օրենսդրական լիազորություններով օժտված «բյուրո կառավարության» ձեռնարկած մի շարք միջոցառումների շնորհիվ հաջողվեց ճնշել

ապստամբությունը: Կառավարության ձեռնարկած միջոցառումներից մեկն էլ արտակարգ դատարանների հիմնումն էր, որոնց հանձնվեց մայիսյան դեպքերի կապակցությամբ ձերբակալվածների գործերի քննությունը:

1920 թ. մայիսի 5-ին Նախարարների խորհրդի նիստում ներքին գործերի և ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանը առաջարկեց հիմնել արտակարգ դատարաններ: Կառավարությունը սկզբունքորեն անհրաժշտ հանարեց արտակարգ դատարանների հիմնումը և հանձնարարեց արդարադատության նախարարին մայիսի 7-ին ներկայացնել օրինագիծ արտակարգ դատարանների վերաբերյալ: Բացի այդ կառավարությունը որոշեց սահմանել մահապատիժ պետական դավաճանության և շարամիտ սպեկուլացիայի համար, որ «պետք է իրականացվեր արտակարգ դատարանների միջոցով»: Մայիսի 7-ին և 8-ին քննարկելով ու լրացնելով արդարադատության նախարարի ներկայացրած հասուկ օրինագիծն արտակարգ դատարանների վերաբերյալ՝ Նախարարների խորհուրդն ընդունեց «Արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին» ժամանակավոր օրենքը: Համաձայն այդ օրենքի Հայաստանի Հանրապետությունում հիմնադրվում էին չորս արտակարգ դատարաններ, որոնց նատակավայրը որոշելու էր կառավարությունը:

Արտակարգ դատական ատյանի կազմը բաղկացած էր նախագահից և երկու անդամներից, որոնց նշանակելու էր Նախարարների խորհուրդը: Յուրաքանչյուր արտակարգ դատարանին կից պաշտոնավարելու էր մեկական պետական մեղադրող և նրա օգնականը, ինչպես նաև՝ երկու քննիչներ, որոնց ևս նշանակելու էր Նախարարների խորհուրդը: Օրենքը սահմանում էր արտակարգ դատարանների քննության ենթակա և ընդդատյա հանցագործությունների շրջանակը, տալիս էր այդ հանցավոր արարքների հանցագործների հատկանիշները, նախատեսում պատժամիջոցները: «Արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին» ժամանակավոր օրենքով սահմանված և արտակարգ դատարանին ընդդատյա հանցագործություններն իրենց օրյեկտիվ հատկանիշներով հիմնականում պետական հանցագործություններ էին, բացառությամբ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված հանցագործների, որոնք տնտեսական բնույթի հանցագործություններ էին:

Պատժական քաղաքականության տեսակետից նորամուծություն էր այն, որ որոշակի քրեափակական արարքներ կատարելու համար որպես պատիժ նախատեսվում էր միայն մահապատիժը (ժամանակավոր օրեն-

ի 2-րդ և 3-րդ հոդվածներ): Այդ արարքներն էին՝ Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված պետական դավաճանությունը, գոյություն ունեցող իշխանությունների դեմ ուղղված ակնհայտ ապստամբությանը, գոյություն ունեցող իշխանությունները զկատարելուն դրդելը, հեռագրաբելը կամ երկարուղին դիտավորյալ ոչնչացնելը կամ փշացնելը, եթե նույնիսկ այդ գրծոդուրթյունը կատարված է գնացքի ուղևորներին կամ տեղափոխվող գույքին վնաս հասցնելու ոչ ուղղակի մտադրությամբ<sup>1</sup>:

Արտակարգ դատարաններին ընդդատյա պետական հանցագործություններից էին նաև՝ Հայաստանի Հանրապետության անկախության դեմ քարոզություն (ազիտացիա) մղելը, կամ գոյություն ունեցող պետական իշխանության նկատմամբ հանդուգն անհարգանք ցույց տալը, կամ գոյություն ունեցող կառավարման եղանակը հրապարակային ճառ ասելով կամ որևէ շարադրություն կարդալով կամ տարածելով պարսավելը (հոդված 4), ինչպես նաև հրապարակային որևէ ճառ ասելը կամ կարդալը կամ որևէ շարադրություն տարածելը, որոնք դրդում էին ապստամբության կամ դավաճանության արարքներ կատարելու, կամ պետության մեջ գոյություն ունեցող հասարական կարգը հեղաշրջելու կամ օրենքին, պարտադիր որոշումներին, իշխանության ռազմական կարգադրություններին չհնազանդվելու կամ դրանց հակառակ գործելու. նաքսանենգությամբ ապրանքները հանրապետությունից արտահանելը. գրգրիչ գործոդուրթյունները գործելու այնպիսի եղանակով, «որ վտանգավոր է շատերի կյանքի համար, եթե այդ գրգռումի հետևանքը եղել է ոճրագործություն»:

Արտակարգ դատարանների քննությանը ենթակա և ընդդատյա տնտեսական քննությի հանցագործություններից էին գները արհեստականորեն բարձրացնելու համար ապրանքները բարձրացնելը կամ ապրանքները շափազանց բարձր գներով վաճառելը (օրենքի 7-րդ հոդվածի ծանոթությունը սահմանում էր նաև այս հանցակազմերի որակյալ հատկանիշները՝ որպես «հանցանքը սաստկացնող հանգամանքներ»):

1920 թ. մայիսի 17-ին ընդունված՝ «Ժամանակավոր օրենքի փոփոխման և լրացման մասին» օրենքով արտակարգ դատարանների ընդդատությանը հանձնվեցին նաև խառնակություններից կամ անկարգություն-

<sup>1</sup> Շարադրանքում պահպանվել են «Արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին» ժամանակավոր օրենքի տեքստի եզրույթները և ձևակերպումները:

ներից օգտվելով՝ ջարդեր կամ թալան կատարելու, կամ այդ գործողություններին մասնակցելու վերաբերյալ քրեական գործերը<sup>1</sup>:

«Արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին ժամանակավոր օրենքը» սահմանում էր նաև դատավարական կանոնները, ըստ որոնց ընթանալու էր քրեական գործերի նախաքննությունն ու դատական քննությունն արտակարգ դատարաններում: Այդ դատավարական կարգը խստորեն տարբերվում էր ընդհանուր դատավարական կարգից: Արտակարգ դատարանի քննիչը միլիցիայի պատշաճ մարմիններից հետաքննության նյութերը ստանալուց հետո կատարում էր անհրաժեշտ քննչական գործողություններ, կազմում էր մեղադրական ակտ՝ դրան կցելով այն անձանց ցուցակը, որոնք պետք է իբրև վկաներ կանչվեին արտակարգ դատարանի նիստերին: Այնուհետև գործը ուղարկվում էր արտակարգ դատարան և այդ ամենը պետք է կատարվեր գործը քննիչի մոտ ստանալու պահից հաշված չորս ժամվա ընթացքում: Արտակարգ դատարանների քննիչների այն որոշումները, որոնցով կարծվել կամ դադարեցվել էին արտակարգ դատարանին ընդդատյա գործերը, վերջնականապես պետք է հաստատվեին արտակարգ դատարանների տնօրինչական նիստում: Համաձայն օրենքի 12-րդ հոդվ. գործն արտակարգ դատարան մտնելուց հետո դրան հետագա ընթացք էր տրվում ըստ «Ուազմադատական կանոնադրությամբ» պատերազմական ժամանակի համար սահմանված կանոնների: Սակայն օրենքի այս հոդվածը վերացվեց 1920 թ. մայիսի 17-ի «Ժամանակավոր օրենքի փոփոխման և լրացման մասին» օրենքով: Դրանից հետո դատական քննությունն տարվում էր ընդհանուր դատավարական կանոններով՝ օրենքում նշված բացառություններով հանդերձ:

Արտակարգ դատարանն իր դատավճիռը պետք է կայացներ գործի քննության պահից սկսած քսանչորս ժամվա ընթացքում: Եթե քրեական գործի դատական քննության ընթացքում արտակարգ դատարանը կգտներ, որ գործը լրացման կարիք ունի, ապա կարող էր հետաձգել գործի դատական քննությունը երկու օր ժամկետով: Այդ ժամանակամիջոցում պետք է կանչվեին նոր վկաներ կամ գործն ուղարկվեր լրացուցչ նախաքննության: Իսկ այն դեպքում, եթե մեղադրյալը ձերբակալվում էր

<sup>1</sup> Նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 7-ին ընդունված օրենքին համաձայն պետական հաստատությունների ծառայողների և բանվորների գործադրություն (տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 165, թ. 1): Սակայն այդ օրենքի տեքստից պահպանվել է այսպիսի պահպանային դրանք՝ արտակարգ դատարաններին, թե ընդհանուր դատարաններին: Հավանաբար այդ քրեական արարքները ճանաչվում էին որպես պետական հանգամանքություն իրենց օրենքով:

հանցագործության վայրում, որն ակնհայտ էր, դատավարությունը կատարվում էր հետևյալ կարգով: Միիցիան անհապաղ կազմում էր մեղադրական ակտ և գործն ուղարկում էր արտակարգ դատարան, կամ հանձնվում էր քննիչին նախաքննություն կատարելու համար: Այս բնույթի քրեական գործերով արտակարգ դատարանը պարտավոր էր նույն օրն ևեր դատավճռ կայացնել: Արտակարգ դատարանի կայացրած դատավճռները չին պատճառաբանվելու, վերջնական էին ու բողոքարկման ենթակա չին, անհապաղ պետք է ընդհանուր կարգով ի կատար ածվեին:

Ժամանակավոր օրենքի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում ստեղծվեցին չորս արտակարգ դատարաններ՝ Երևանում, Կարսում, Ալեքսանդրապոլում, Դիլիջանում<sup>1</sup>: 1920 թ. մայիսի 21-ին Նախարարների խորհրդի նիստում առաջարկվեց արտակարգ դատարան հիմնել նաև Նոր-Բայազետում: Սակայն Նախարարների խորհուրդը որոշեց Նոր-Բայազետի շրջանի խոռվարաններին դատապարտել Երևանի արտակարգ դատարանի միջոցով<sup>2</sup>:

Այժմ փորձենք ներկայացնել, թե ինչպես ընթացավ արտակարգ դատարանների գործունեությունը: Այս հարցի ըստ ամենայնի ուսումնասիրման և պարզաբանման գործը դժվարանում է նաև նրանով, որ չեն պահպանվել արտակարգ դատարանների գործունեությանը վերաբերող փաստաթղթերը և կոնկրետ քրեական գործերը: Եղած կցկուր արխիվային նյութերը քաղվել են ՀՀ ՊԿՊԱ-ի Առաջին հանրապետությանը վերաբերող զանազան արխիվային ֆոնդերից:

Հայ մեծամասնականները, իսկ այնուհետև խորհրդահայ պատմագիտությունն անընդհատ թմբկահարում էին «հայ ժողովրդի ազատագրության համար պայքարող խիզախ մարտիկների նկատմամբ դաշնակների բարբարոսությունների» մասին<sup>3</sup>: Բայց մյուս կողմից, պետք է ասել, որ մայիսյան խոռվությունների կապակցությամբ ստեղծված արտակարգ դատարանները քննությունն ու դատավարությունը դնելով ճիշտ է արտակարգ, բայց գոնե որոշակի ու վերահսկողության ենթակա շրջանակի մեջ, ինչ-որ տեղ կանխեցին ինքնադատաստանն ու տեղորդ մեծամասնականների նկատմամբ՝ հասարակության որոշ խավերի և Սեպուհի ժողովրդական բանակի կողմից: Իսկ որ այդպիսի վտանգ կար իրականում, վկայում

է, հատկապես՝ Ղարսի ռազմաժողովրդական դատարանի ստեղծման և վերացնան պատմությունը: Ղարսում խոռվությունը ճնշելու ընթացքում ստեղծված Հայրենիքի փրկության կոմիտեն, մայիսի 8-ի ժամանակավոր օրենքին անտեղյակ, Կարսի արտակարգ կոմիսար Ն. Աղբալյանի առաջարկության համաձայն) մայիսի 14-ին ստեղծել էր ռազմաժողովրդական տրիբունա՝ կազմված երեք դատավորներից, որի խնդիրն էր «խոդի թելադրանքով դատել հայրենիքի և կառավարության թշնամիներին»: Ըստ դատարանի նախագահի գեկուցագրի դատարանը չուներ ոչ դատախազ, ոչ էլ պաշտպան, «որովհետև դրանց գոյությունը մեծապես կդանախղեցներ դատավարությունը և ապա նաև կմեղմացներ մեր վճիռները»<sup>4</sup>: Այդ դատարանն ավարտում էր Կարսի խոռվարանների գործերի քննությունը, երբ մայիսի 17-ին ստացվեց «Յառաջ» թերթի մայիսի 13-ի համարը, որում հրապարակված էր մայիսի 8-ի Ժամանակավոր օրենքը: Նոյն օրը Ղարսում ստացել էին կառավարության մայիսի 15-ի հեռագիրը, որով Ն. Աղբալյանը լիազորվում էր Կարսում հիմնել արտակարգ դատարան և ներկայացնել նրա կազմը կառավարության հաստատմանը<sup>5</sup>: Կարսից կառավարությանը գեկուցեցին ստեղծված ռազմաժողովրդական տրիբունայի մասին: Կառավարությունը հաշվի առնելով տեղական գործիչների խնդրանքը՝ մայիսի 18-ին որոշեց հաստատել այդ դատարանի կազմը՝ ռազմաժողովրդական անվան տակ, այսինքն՝ գիշելով միայն դատարանի անվանումը, իսկ մնացյալ հարցերում այն պետք է ենթարկվեր Ժամանակավոր օրենքին: Դեպքերի հետագա ընթացքից երևում է, որ Կարսի նահանգի դեկավար շրջանակներում, ինչպես և դատարանի անդամների միջև ծագել է տարածայնություն: Նրանցից ոմանք պահանջում էին «որ կամ մեր դատարանը պետք է մնա իր կազմով ու բնույթով խոնի դատարան, կամ էլ պետք է կառավարական դատարան հիմնվի համաձայն մայիսի 8-ի օրենքի»<sup>6</sup>:

Մայիսի 21-ին Նախարարների խորհուրդը, քննարկելով Կարսի ռազմաժողովրդական դատարանի հեռագիրն այդ դատարանի կազմի ու գործելակերպի մասին, պատասխան հեռագրով հրահանգեց, որ, առաջին, դատարանը շարունակի դատավարությունն իր սկսած ձևով, պայմանով, որ եթե մեղադրյալներն ուղենան ունենալ պաշտպաններ՝ չմերժեն, և երկրորդ, այս դատարանի կողմից նշանակված պատիմները հա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թթ. 90,92 և գ. 181, թ. 37:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 98:

<sup>3</sup> Տե՛ս Ղարիբջանյան Գ. Բ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Երևան, 1953, էջ 79:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1022, գ. 3, գ. 261, թ. 75:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 92:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1022, գ. 3, գ. 261, թ. 75:

մապատասխանեն ժամանակավոր օրենքով սահմանված կանոններին<sup>1</sup>: Չնայած դրան՝ դատարանը նույն ոճով շարունակեց քննությունը, միաժամանակ շարունակ հեռագրելով կառավարությանն այն հույսով, որ նա «կզիջի և չի խանգարի մեր գործը»: Արդեն մայիսի 17-ին դատարանն արձակել էր վեց մահվան, չորս տաժանակիր աշխատանքի և հինգ աքսորի դատապարտման դատավճիռները<sup>2</sup>:

Ուսումնաժողովրդական դատարանի դատավորներից մեկը՝ Բ. Սելքոնյանը, համաձայնվելով կառավարության պնդումների հետ, հրաժարական տվեց: Դատարանը նախագահի զիսավորությամբ նորից շարունակեց իր ինքնազործութեությունը, բայց այս անգամ արդեն իր աշխատանքը «համարելով նախնական քննություն»: Այս ամենի կապակցությամբ կառավարությունը Երևանում ստացել էր մի քանի կողմ և դեմ գրություններ, հեռագրեր: Մայիսի 24-ին քննարկելով դրանք՝ հեռագրեց Կարս, որ սպասեն Կարս ժամանող Ա. Չիլինգարյանին: Վերջինս տեղում պետք է քններ բարձրացված հիմնախնդիրները: Հետևանքն եղավ այն, որ մայիսի 29-ին «Արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին» ժամանակավոր օրենքի հիման վրա ստեղծվեց Կարսի նոր արտակարգ դատարանը<sup>3</sup>, որն իր ձեռքք վերցրեց խոռվարաք մեծամասնականների գործերով նախաքննության ու դատական քննության կատարումը:

«Հայաստանը բոլորիս տունն է, որի բովանդակության մասին կարելի է վիճել ու պայքարել: Բայց պայքեցնել այդ տունն օտար ուժերի աջակցությամբ դա դավաճանություն է, որ անխնա պիտի հալածվի մեր երկրամասից»<sup>4</sup>: Այսպիսին էր կառավարող կուսակցության, համարյա ողջ պաշտամենտի դիրքորոշումն այդ օրիսամական պահին: Այդպիսի իրավիճակում ժամանակավոր օրենքում նախատեսված և արտակարգ դատարաններին ընդդատյա թերե բոլոր հանցագործությունները, անշուշտ, տվյալ պահին հանրողեն մեծ վտանգավորություն էին ներկայացնում հանրապետության համար և արժանի էին ամենախստագույն պատժի: Սակայն, արտակարգ դատարանների հիմնադրումով «պատշաճնետի բոլոր իրավունքներով» օժտված կառավարությունը մի կողմ էր նետել արդարադատության հիմնարար իրավական սկզբունքները:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 95:

<sup>2</sup> Դեպքերի հետազս ընթացքը հանգեցրեց նրան, որ այդ դատավճիռներն ի կատար չածվեցին:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, զ. 118, 1-ին մաս, թ. 106:

<sup>4</sup> Տե՛ս «Հայաստանի կոպերացիա», ամսագիր, Երևան, 1920, թիվ 11:

Հետազայտմ կառավարությունը իրաժարվեց իր սկզբնական վճռական դիրքորոշումից՝ հակելով «մեղմության» բոլոր առումներով, որի հետևանքով արտակարգ դատարանները «որպես սովորական դատարան՝ երկար ամիսներ զբաղուեցան իրենց ներկայացուած դատերով, մինչդեռ որպես հեղափոխական դատարան, անոր կյանքը մեկ շաբաթեն ավելի պիտի չտևեր»<sup>1</sup>: Այդ շրջադարձի հիմնական պատճառն արտաքին քաղաքական հանգամանքներն էին<sup>2</sup>, որ ցցուն կերպով երևում է Ս. Մամիկոնյանի (Հայ-Վրացական կոնֆերանսի Հայաստանի կառավարության պատվիրակ) նախարար-նախագահին Թիֆլիսից 1920 թ. մայիսի 11-ին ուղարկված հետևյալ հեռագրից: «Կոմունիստների երկրամասային կոմիտեն դիմել է Չիերինին Մուսայելյանի և այլոց վերաբերմամբ: Մահապատմի դեպքում կարող են լինել նույնախիս քայլեր կոմունիստների կողմից: Զերբարկաված են Մահմասյանը, Համասփյուռը, Տեր-Ազարյանը և Չուրաբը: Անհրաժեշտ է ճգճգել դատը երկու շաբաթով, մինչև կրբերը կհանդարտվեն և սպասել տեղեկությունների Մոսկվայի պատվիրակությունից: Մահապատմի կարող է ազդել Մոսկվայում քանակցությունների ընթացքի վրա: Անհրաժեշտ է վերջ տալ մասնավոր էքսենտրիկին»<sup>3</sup>:

Սեղմուրյունն արտահայտվեց նախ և առաջ մայիսի 8-ի ժամանակավոր օրենքի մեջ հետագայում կատարված փոփոխություններում և լրացումներում: Օրինակ՝ 1920 թ. մայիսի 31-ին ընդունված օրենքով արտակարգ դատարաններին տրվում էր միջնորդության իրավունք՝ դիմելու կառավարությանը պատիճների մեջմացման համար: Օրենքի քրեակիրավական տեսակետից «ամենախախուսու» 4-րդ հոդվածը, որ չորսից մինչև վեց տարի բանտարկություն կամ տաժանակիր աշխատանքներ էր սահմանում Հայաստանի Հանրապետության անկախության դեմ «ազիտացիա» մղելու կամ գոյություն ունեցող պետական իշխանության նկատմամբ հանդուգն անհարգանք ցույց տալու, կամ գոյություն ունեցող կառավարման եղանակը պարսպելու համար, 1920 թ. հունիսի 24-ի օրեն-

<sup>1</sup> Տե՛ս **Սասունի Կ.**, Մայիսյան խոռվությունները և քաքարական ապստամաք շրջանները, Բնելուր, 1968, էջ 185:

<sup>2</sup> Զնայած Առաջին հանրապետության կառավարության գգուշությանը և մեղմությանը այդ հարցում, մեծամասնականների նկատմամբ ձեռնարկված ռեպրեսիվ քաղաքականությունն, այնուամենայինվ, հանգեցրին ՌԽՖՍՀ-ի Կառավարության նոտային՝ ոլորդիկան Հայաստանի Հանրապետության Կառավարությանը, որում հանրապետությունը մեղադրվում էր «կոմունիստների չլազարող զենականակարության» մեծամասնականների նկատմամբ «արյունու ռեպրեսիաների և ինքնախատասատանների» մեջ (տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, գ. 1, գ. 219, թ. 212):

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՔԿՓԿՊԱ, ֆ. 4033, գ. 3, զ. 31, թ. 2:

քով լրացվեց այլբնտրանքային ձևակերպմամբ պատժատեսակով. «կամ աքսորման Հայաստանի Հանրապետության սահմաններից»: Ընդ որում այդ պատժի կիրառմանը տրվեց նաև հետադարձ ուժ:

Մեղմությունն արտահայտվեց ոչ միայն քրեահրավական կարավորման, այլ նաև դատավարական կարգի հետագա փոփոխություններով: Մի կողմից, հիմքու արդեն նշել ենք, վերացվեց օրենքի 12-րդ հոդվածը և արտակարգ դատարաններում դատական քննությունը սկսեց տարվել ընդհանուր դատավարական կանոններով (օրենքում նշված բացառություններով հանդերձ): Բացի այդ մեղադրյալներին իրավունք տրվեց ունենալ պաշտպան: Այսպես՝ մայիսի 21-ին Նախարարների խորհրդի կողմից Կարսի ու ազգային պատարանին ուղարկված հեռագրում ասված էր. «Եթե մեղադրյալներն ուզենան պաշտպաններ նշանակել՝ շներժել»: Համեմատաբար ավելի ուշ հիմնադրված Դիլիջանի արտակարգ դատարանի կազմում նախատեսված էր նաև երեք պաշտպանների հաստիքներ<sup>1</sup>: Մյուս կողմից՝ ըստ ժամանակավոր օրենքի արտակարգ դատարաններն իրենց դատավճիռները պետք է կայացնեին գործի քննության օրից ակած 24 ժամվա ընթացքում: Սակայն իրականում այդ ժամկետները չպահպանվեցին: Նույնիսկ բանը հասավ նրան, որ Կարսում ձերքակալված հանցագործների մի մասին տեղափոխեցին Երևան, որովհետև Կարսի ու ազգային պատարան հասարակայնության ճնշման տակ տրամադրված էր վճռականությամբ և «կը կարծեր, որ փոխադրվածներն գոնե 10 պիտի գնդակահարվեին, մինչդեռ Երևանի դատարանն ոչ մեկը մահվան չդատապարտեց, միայն ոռուի մը գնդակահարության վճիռ արձակեց, անոր բացակայության»<sup>2</sup>: Ալեքսանդրապոլի արտակարգ դատարանը մահապատիժի դատավճիռ արձակեց ապստամբության դեկավար հինգ մեծամասնականների նկատմամբ: Սակայն «հաջորդ օրը ստացվեց ծածկագիր հեռագիր մը՝ որով կառավարությունը Մուսաելյանի և Ղարիբջանեանի մահապատիժը կը փոխ էր ցկեանս բանտարկության և մյուս երեքի գնդակահարութեան իրագործումը կը իրահանգէր ... այդ հրահանգը գործադրուեցավ<sup>3</sup>: Դիլիջանի արտակարգ դատարանը միայն երկու մահավճիռ ստորագրած էր»<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 181, թ. 31:

<sup>2</sup> Տե՛ս Սասունի Կ, Մայիսյան խոռվությունները ..., էջ 181:

<sup>3</sup> Կառավարական ծածկագիր հեռագիր փաստը վկայում է, որ Հայաստանի Հանրապետության Կառավարությունն իր հսկողության տակ էր պահում արտակարգ դատարանների գործունեությունը:

<sup>4</sup> Տե՛ս Սասունի Կ, Մայիսյան խոռվությունները ..., էջ 112:

Եթե նույնիսկ մենք կասկածենք դաշնակցական գործչի՝ Կ. Սասունիի անկենծությանն այս կապակցությամբ, ապա թիվ հավանական է, որ կեղծ լինեն նաև ստորև բերվող տվյալները, որ կազմվել են 1920 թ. հոկտեմբերին<sup>1</sup>: Երևանի արտակարգ դատարան՝ մայիսի 13-ից մինչև հոկտեմբերի 15-ը մուտք է գործել հարյուր չորս քրեական գործ, որոնցով մեղադրանք էր առաջադրվել հարյուր փարսուներեր անձանց նկատմամբ: Վերջնական լուծում էին ստացել ութունչորս գործեր, իսկ իննունինները դիւնս գտնվում էին քննության փուլում: Գործերի ընթանուր քանակից քառասունն էին քաղաքական, որոնցով մեղադրանք էին ներկայացվել փարսունիններ անձանց: Դրանցից տասնչորսը հոգի արդարացվել էին, իսկ քառասունները հոգին դատապարտվել էին զանազան պատիժների, ընդունում մահապատժի՝ միայն մեկ անձ<sup>2</sup>:

Արխիվային նյութերն ուսումնասիրելիս մենք պարզեցինք, որ Նախարարների խորհուրդը 1920 թ. հունիսի 9-ին քննարկել է Երևանի արտակարգ դատարանի որոշ հրաժարվող անդամների փոխարեն նորերին նշանակելու հարցը, ընդունել է նրանց հրաժարականը և նշանակել նոր անդամներ: Նախարարների խորհրդի նիստի արձանագրության մեջ հրաժարականի այտաձաների մասին ոչինչ նշված չէ, իսկ ուրիշ փաստաթրերի դրա վերաբերյալ մեզ չհաջողվեց հանդիպել: Սկզբում մենք կարծում էինք, թե այդ անդամները հրաժարվել են պաշտոնավարելու արտակարգ դատարանում, համարելով այն «քաղաքական վրեժինդրության գործիք» և իրականում կային նաև այդպիսի տրամադրություններ: Հրաժարականի բուն պատճառների վերաբերյալ տվյալների մենք հանդիպեցինք Կ. Սասունիի «Մայիսյան խոռվությունները և բարարական ապստամբ շրջանները» աշխատությունում: Փաստորեն, Երևանի արտակարգ դատարանի անդամների միջև տեղի է ունեցել ներքին զարգացման դեմքերի միջև կառավարական վերաբերյալ փոխարարության ընդհարության մեջ արագ կերպով վերջ տալ խոռվարաններուն և մնացյալները վկանել երկրեն դրւու, որովհետև զանոնք կնկատեին իբրև հակահեղափոխականներ, ոուսական և տաճկական գործականներ, կաշառվածներ և մեր երկրի ու ժողովրդի ազատության սպառնացողներ»<sup>3</sup>, այնինչ «անճռական ընկերներ կը հակառակեին այդ տեսակետին»: Համարելով տարվող մեղմ քաղաքականությունը «կիսամիջոցներ, որոնք բնավ քաղաքացիական կովի գենքեր չեն», դատարանի արևմտահայ անդամ-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 121, թ. 371:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 116:

<sup>3</sup> Տե՛ս Սասունի Կ, Մայիսյան խոռվությունները ..., էջ 183:

ները հրաժարական տվեցին: Չնայած դրան արտակարգ դատարանները նույն ոճով շարունակեցին իրենց գործունեությունը: Նրանց հետագա գոյությունն արդեն ամիմաս էր, մանավանդ, որ 1920 թ. ապրիլին Հայաստանի խորհրդարանի կողմից ընդունվել էր օրենք «Կարսում և Ալեքսանդրապում շրջանային (օկրուզային) դատարաններ հիմնելու մասին» որոնք երես նայակի սկզբին դեռևս լրիվ կազմակերպված չէին, բայց հույսին արդեն գործում էին: Արդարադատության նախարարությունում գիտակելով այդ փաստը՝ 1920 թ. հուլիսի 12-ին Նախարարների խորհրդի ըննությանը ներկայացրեցին օրինագիծ «Արտակարգ դատարանները վերացնելու մասին»: Օրինագծով նախատեսվում էր վերացնել 1920 թ. մայիսի 8-ի ժամանակավոր օրենքով հիմնված արտակարգ դատարանները, այդ դատարաններին ընդդատյան հանցագործությունները հանձնել շրջանային դատարանների ընդդատությանը, որոնք այդ կարգի քրեական գործերի նախարարնությունն ու դատական ըննությունը կատարելու էին հերթից դուրս և առանց երդվյալ ատենակալների նախակցության: Սակայն Նախարարների խորհուրդը գտավ ժամանակից շուտ արտակարգ դատարանների վերացումը և մերժեց օրինագիծը: Հուլիսի 30-ի օրենքով Նախարարների խորհուրդը երկարաձգեց արտակարգ դատարանների գործունեությունը: Գործունեություն, որը նաև բավականին թանկ էր նստում առանց այդ էլ ծանրաբեռնված պետական բյուջեի վրա: Օրինակ՝ արտակարգ դատարանների երեք և կես ամիսների (հուլիս, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր) ծախսերի համար բացված վարկի գումարը կազմում էր 3 028 705 ռ.<sup>1</sup>: Նշենք, որ մեկ զինվորի բավականին հարուստ օրապահիկի վրա նույն ժամանակաշրջանում կառավարությունը ծախսում էր 300 ռ.<sup>2</sup>:

Այդպիսով՝ արտակարգ դատարանները վերածվեցին ընդհանուր դատական մարմիններին զուգահեռ գործող «մշտական դատարանների», մինչև հանրապետության անկումը: Զկարողանալով հասնել արտակարգ դատարանների վերացմանը, և ամենայն հավանականությամբ այդ դատարանների պատշաճ ծանրաբեռնվածությունն ապահովելու նպատկով՝ արդարադատության նախարարությունը ստիպված էր քայլեր ձեռնարկելու, որպեսզի ընդդայնի արտակարգ դատարաններին ընդդատյան քրեական գործերի շրջանակը:

1920 թ. օգոստոսի 20-ին Նախարարների խորհուրդը ընդունեց օրենք «Պետական դրամանիշեր կեղծելու դեմ պատիժներ սահմանելու

մասին», որի նախագիծը մշակել էր արդարադատության նախարարությունը: Այդ օրենքով փոփոխության ենթարկվեց այս ոլորտում գործող քրեական օրենսդրությունը: Միաժամանակ օրենսդրը սահմանեց, որ այդ հանցագործություններով քրեական գործերի նախաքննությունն ու դատական քննությունը հանձնվում են արտակարգ դատարանների ենթակայության ու ընդդատությանը, իսկ դրանց վերացումից հետո՝ շրջանային դատարաններին: Միաժամանակ կառավարությանն իրավունք էր տրվում անհրաժեշտության դեպքում իմանել նոր արտակարգ դատարաններ այս ընույթի քրեական գործերը ըննելու համար:

Ավելի ուշ հաշվի առնելով այն իրողությունը, որ չնայած հանրապետության գոյության նախորդ ժամանակաշրջանում ձեռնարկված բոլոր միջոցառություններին ու ջանքերին պաշտոնեական հանցագործությունների, հատկապես, շահադիտական, դեմ պայքարն էական արդյունք չէր տվել, և գտնելով, որ «ծանր փորձությունների այս օրերում, երբ հայրենիքը կարիք ունի լարելու իր բոլոր ուժերն իր գոյությունը փրկելու և բազմաշարժար հայ ժողովրդի արյունով ծեռք բերած պետական իրավակարգը վերջնականացնելու հաստատելու համար, մի շարք չարամիտ պաշտոնավարության հանցանքներ և դրանով անուղղելի վնաս են հասցնում մեր մանուկ պետության և նույնիսկ ժողովրդի գոյությանը»<sup>1</sup>, արդարադատության նախարարությունն անհրաժեշտ համարեց այդ ահավոր չարիքի դեմ ևս կովել արնատական և արտակարգ միջոցներով: Այդ միջոցներից առաջինը նախարարությունը համարում էր պաշտոնեական հանցագործությունների համար պատիժների խստացումը և ժամանակավորապես մահապատժի կիրառումը, իսկ երկրորդը՝ այդ ընույթի գործերն արտակարգ դատարանների ենթակայությանն ու ընդդատությանը հանձնելը: Այդ նկատառություններն իրականացվեցին Նախարարների խորհրդի կողմից 1920 թ. հոկտեմբերի 2-ին հաստատված «Պաշտոնեական հանցագործությունների մասին ժամանակավոր օրենքով», որը փաստորեն լրացնում էր 1920 թ. մայիսի 8-ի ժամանակավոր օրենքը և արտակարգ դատարանների ընդդատությանն էր հանձնում տվյալ օրենքում նշված պաշտոնեական հանցագործություններով քրեական գործերի նախաքննությունն ու դատական քննությունը: Համաձայն այդ օրենքում տրված մեկնարարության պաշտոնյա էր համարվում «ամեն մի անձ, որ մշտական ծառայության մեջ է կամ որևէ ժամանակավոր հանձնարարություն է կատարում պետական կամ հասարակական իմանարկություններում, ինչ-

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 162, 2-րդ մաս, թ թ. 267, 268:

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 162, 2-րդ մաս, թ. 194:

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 105, թ. 111:

պես օրինակ քաղաքային ինքնավարություն կամ այնպիսի բարեգործական իիմնարկությունների մեջ, որոնք պահպում են Հայաստանի հպատակ մասնավոր անձանց կամ օտար հպատակների հաշվին, ինչպես նաև կոռագրատիվների և այլ հանրային բնույթ կրող հաստատությունների մեջ»: Նշված օրենքում թվարկվում էին նաև արտակարգ դատարաններին ընդդատյա պաշտոնեական հանցագործությունների հանցակազմերը, դրանց որակյալ տեսակները: Այդ հանցակազմերն էին կաշառակերությունը, կորզումը, իշխանության չարաշահումները տարբեր շահադիտական նկատառումներով, իշխանության սահմանազանցումները կատարված անփորությամբ, շահադիտական նպատակով, գոյություն ունեցող պետական կարգերը տապալելով ձգումով և այն, ինչպես նաև պաշտոնեական անգործությունն ու ինքնակամ կերպով պաշտոնից հեռանալը:

Նախարարների խորհրդի կողմից 1920 թ. նոյեմբերի 23-ին հաստատված օրենքով «Պաշտոնեական հանցագործությունների մասին ժամանակավոր օրենքի» գործողությունը քրեականական առումով տարածվեց նաև զինծառայողների վրա: Սակայն այդ գործերն ընդդատյա էին ռազմական դատարաններին<sup>1</sup>:

Եթե՛ շարադրված իմք է ծառայում պնդելու, որ Հայաստանում մեծամասնականների նկատմամբ զանգվածային բռնություններ չեն եղել ընդհանրապես<sup>2</sup>: Նույնիսկ Մննտեսքիոն գտնում էր, որ արտակարգ իրավիճակներում, հայրենիքին սպառնացող վտանգի պայմաններում գործադիր իշխանությունը պետք է ունենա արտակարգ լիազորություններ: Այդ կապակցությամբ նա գրել է. «Եթե օրնադրական իշխանությունը գործադիրին իրավունք տա բանտարկել քաղաքացիներին, ապա ազատությունը կոչնացվի, բացառությամբ այն դեպքերի, եթե մարդուն կալանավորում են, որպեսզի առանց որևէ հետաձգման ենթարկեն պատասխանատվության քրեական հանցագործության մեջ մերադրանքով: Այս վերջին դեպքում կալանվաճները իրականում ազատ են, քանի որ նրանք ենթարկվում են միայն օրենքի իշխանությանը: Սակայն եթե օրնադրական իշխանությունը վտանգի մեջ է պետության դեմ ինչ-որ գաղտնի դավադրության կամ էլ արտաքին թշնամու հետ ինչ-որ հարաբերությունների հետևանքով, ապա նա կարող է բոլյատրել գործադիր իշխանությանը կարճ և սահմանափակ ժամանակով կալանավորել կասկածելի քաղաքացիներին, որոնք

այդ դեպքում ժամանակավորապես կկորցնեն ազատությունը, որպեսզի պահպաննեն այս ընդմիշտը»<sup>1</sup>:

Սակայն միշտ չեր լինի այս կացության մեջ «իրեշտակի կերպարանքով» ներկայացնել «բյուրո կառավարությանը», քանի որ նա, որպես օրենսդիր, այս ընթացքում արել է նաև ոչ իրավական քայլեր, որոնք հետևանք էին իրավական մշակույթի ու իրավագիտակցության ցածր մակարդակի, պետական շինարարության մեջ տեղ գտած տարատեսակ թերությունների, այսպես կոչված «հեղափոխական վճռականության», առավել ևս, որ եղած օրենսդրական դաշտը, մեր կարծիքով, հնարավորություն էր տալիս կառավարությանը խուսափել այդպիսի քայլերից:

Ակնհայտ փաստ էր, որ հանրապետության իրավապահպան համակարգը ի սկզբանե լավ չեր գործում, որ այն ընդհանուր վերակառուցման կարիք էր զգում, և փոխարեն այս ուղղությամբ մտածելու ու գործելու հանրապետության քաղաքական դեկավարությունն անընդհատ դիմում էր արտակարգ դատական և դատավարական միջոցառումների, ընդ որում հաճախ անհաջող ու անհմաստ միջոցառումների: Կառավարության սխալներից էր նաև այն, որ մայիսի 8-ի ժամանակավոր օրենքին տրվեց հետադարձ ուժ: Ժամանակավոր օրենքի 19-րդ հոդվածը սահմանում էր, որ այդ օրները ուժի մեջ է մտնում ընդունման օրից, այսինքն՝ մայիսի 8-ից: Սակայն 1920 թ. մայիսի 17-ի օրնաքը այդ հոդվածը փոփոխության ենթարկվեց և սահմանվեց, որ «ներկա օրենքին ենթակա են սույն օրենքում նախատեսված գործողությունները, որոնք տեղի են ունեցել ապրիլի 15-ից հետո»: Օրենսդրի այս քայլը բացատրվում է նրանվ, որ մեծամասնականները նախապատրատվել էին մայիսյան իրադարձություններին և շատ դեպքերում հակառակության արարքներ էին կատարել և քարոզություն տարել մայիսյան դեպքերից առաջ, կամ դրանց ընթացքում մինչև ժամանակավոր օրենքի ընդունումը և որդողության մեջ մտնելը: Իրավական առումով մեծամասնականների ներքոհիշյալ փաստարկները իիմնավոր էին և կարող էին խոչընթացել դատավարությանը: Այսպես՝ մեծամասնական խոռվարարների մի մասը, որպես իրենց պաշտամության կովան, թերում էին այն փաստարկը, որ նախ և առաջ իրենք չեին կարող դատապարտվել մայիսի 8-ին ընդունված օրենքով դրանից առաջ կատարած արարքների համար, իսկ երկրորդ, որ օրենքը հրապարակվել է մայիսի 14-ին, այսինքն՝ Կարսում և Ալեքսանդրապոլում խոռվությունը

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 162, 2-րդ մաս, թ. 329:

<sup>2</sup> Ասվածը, իիարկե, չի նշանակում, որ խոռվությունների ճնշման և բախումների ընթացքում մեծամասնականներ չեն գրիվել:

<sup>1</sup> Տես Մոնտեսկի, Օ духе законов. Приложение в кн. Азаркин Н.М., Монтеескье, М., 1988, էջ 109:

ճնշելուց հետո միայն, հետևաբար այն չի տարածվում իրենց մինչ այդ կատարած հակապետական արարքների վրա<sup>1</sup>:

Այս ամենի հետևանքով ստեղծվել էր իսկական իրավական խառնաշփոթ, որի մանրամասներն ու կողմներից յուրաքանչյուրի (մեղադրող և պաշտպանվող) փաստարկներն ու այդ վիճակից դուրս գալու լուծումները հայտնի չեն մեզ, քանի որ չեն պահպանվել արտակարգ դատարանների գործունեության վերաբերյալ կոնկրետ փաստաթղթերն ու նրանց քննածքների վրա:

Հենվելով գուտ իրավական նյութի վրա կարելի է անել որոշ ենթադրություններ միայն: Համաձայն Հայաստանի խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 24-ի օրենքի յուրաքանչյուր օրենք գործադրության (այսինքն՝ ուժի մեջ) էր մտնում՝ Երևանում «Օրենքների հավաքածուի» մեջ հրապարակելու հիմքերորդ օրը, իսկ հանրապետության մնացած վայրերում տասնինգերորդ օրը: Բայց առանձին դեպքերում պառլամենտի հասուլ որոշմամբ օրենքը կարող էր գործադրության մեջ դրվել ընդունվող օրենքում սահմանված ժամանակից սկսած անկախ «օրենքների հավաքածուի մեջ հրապարակվելուց»: Սա նշանակում է, որ մեծամասականների երկրորդ պաշտպանական փաստարկն անհիմն էր: Օրենքները կարող էին ուժի մեջ մտնել և կիրավովել նաև առանց օրենքների հավաքածուի մեջ հրապարակման: Սակայն հիմնավորված էր մեծամասնականների առաջին փաստարկը, այսինքն՝ հակաբարպահական ու հակաօրինական էր մայիսի 8-ի ժամանակավոր օրենքի այն լրացումը, որով հետադարձ ուժ էր տրվում քրեական պատիժը խստացնող կամ նոր հանրորեն վտանգավոր արարքներ սահմանող այս օրենքին, առավել ևս, որ այդ իրավական սկզբունքը, այն է՝ օրենքը հետադարձ ուժ չունի, ամրագրված էր Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությամբ<sup>2</sup>:

1920 թ. նոյեմբերի 24-ին հանրապետության խորհրդարանն ընդունեց Հ. Օհանջանյանի կառավարության հրաժարականը և վարչապետ ընտրեց Ս. Վրացյանին: Նոր կառավարությունն իր «Հայտարարագրով» պարտավորել էր «առողջացնել վարչական ու դատական խանգարված մեքնան վերացնել ամեն տեսակի արտակարգ դրույթուն և երկիրը կառավարելու արտակարգ ձևերը: Օրենքի գիտակցությունը, որ նույնական թուլացել է մեզ մոտ պետք է ուժեղացվի և հանցավորները պետք է պատժվեն անխնա»<sup>3</sup>: Հիմք ընդունելով կառավարության «Հայտարա-

րագրի» այս դրույթներն՝ արդարադատության նախարարությունը նոր նախարարի գլխավորությամբ (Ա. Խոնդկարյան) նոյեմբերի 27-ին Նախարարների խորհրդի քննարկմանը ներկայացրեց օրինագիծ՝ «1920 թ. մայիսի 8-ի ժամանակավոր օրենքի վերացման և արտակարգ դատարանների լուծարման մասին», որին կից քացատրական գրությունում ասված էր. «Արտակարգ դատարանների գոյության փաստն իսկ անկախ նրանց հեղինակների բարի կամեցողությունից միանգամայն վարկարեկությունը է ընդհանուր դատական իշխանությունը», որ արտակարգ դատարաններն իրենց բնույթով «ոչ թե իրավակարգի ու արդարադատության աղբյուր, այլ քաղաքական վրեմինդրության ու պայքարի գործիք» են, որ «արտակարգ դատարանների գոյությունն ու գործունեությունը խախտում է միանական դատարանի սկզբունքը, որն անհրաժեշտ նախապայմաններից մեկն է դատարանի մատչելիության, պարզորշության և հավասարության»:

Նախարարների խորհրդի կողմից հաստատված «1920 թ. մայիսի 8-ի ժամանակավոր օրենքի վերացման և արտակարգ դատարանների լուծարման մասին» օրենքով վերացվեց «ժամանակավոր օրենքը», և լուծարվեցին արտակարգ դատարանները: Այն բոլոր քրեական գործերը, որոնց վերաբերմանը դատավճիռներ չեն կայացվել, արտակարգ դատարանների նախագահներն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից յոթ օրվա ընթացքում պարտավոր էին հանձնել դատախազական մարմիններին, որոնք պետք է այդ քրեական գործերին տային օրինական ընթացք: Սիամանակ արդարադատության նախարարությանը հանձնարարվեց մշակել մի հրահանգ ընդհանուր և հաշտարար դատարանների վերակազմության և դատավարության արագացման վերաբերյալ<sup>4</sup>: Սակայն Հայաստանի Հանրապետության գրությանը մնացել էր հաշված օրեր:

## § 2. Արդարադատության սկզբունքների վերանայումը

Առաջին հանրապետության ծանր քաղաքական, տնտեսական, սոցիալական կացությունը, պատերազմները, հակապետական խոռվություններն ու հանցավորության բարձր մակարդակը, «պատշաճ» դատական համակարգի անարդյունավետ գործունեությունը սահմում էին իշխանություններին դիմելու ոչ միայն արտակարգ դատարանների օգնությանը, այլև փոխելու իրենց սկզբանական ժողովրդավարական դիրքորոշումները, խախտելու, վերանայելու կամ վերացնելու արդարադատությունները, խախտելու, վերանայելու կամ վերացնելու արդարադատությանը:

<sup>1</sup> Տես ՀՀ ՔԿՊԱ, ֆ. 4009, գ. 2, գ. 5, թ. 27-28:

<sup>2</sup> Տես «Сводъ законовъ Российской империи. Кн. 1, Том 1. Издание 1910.

Էջ 7, հոդ. 89:

<sup>3</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 1, գ. 487, թ. 121:

յան հիմնարար սկզբունքները: Այդպիսի գործելակերպը հաճախ ուներ նաև քաղաքական պատճառներ, պայմանավորված էր կառավարող կուսակցության մենատիրական, բյուրոկրատական ձգտումներով, հետևանք էր նաև իրավագիտակցության, իրավական մշակույթի ցածր մակարդակի: Նման ուղղվածություն ունեցող օրենսդրական նախաձեռնություններ արվում էին հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում, սակայն Հայաստանի խորիրի և խորհրդարանի ողջամիտ դիրքորոշման հետևանքով հետագա ընթացք չին ստանում: Այլ էր վիճակը այն ժամանակաշրջաններում, երբ օրենսդրական լիազորությունները պատկանում էին կառավարությանը, հատկապես՝ «բյուր կառավարությանը», երբ նշված օրենսդրական նախաձեռնություններն անարգել իրազորդվում էին: Արդարադատության սկզբունքների բոլոր վերանայումները, արտակարգ դատարանների հիմնադրումը արվել են այս ժամանակահատվածներում: Այդպիսի օրենսդրական վերանայումների ընթացքում խախտվել են դատական համակարգի միասնականության, արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից, դատական մարմինների անկախության սկզբունքները, ինչպես նաև լիովին վերացվել են դատավորների անփոփոխելիության սկզբունքը, մասնակիրեն նաև՝ դատական ըննության անմիջականության սկզբունքը:

**2.1. Դատավորների անկախության նյութական երաշխիքների սահմանափակումը:** Ալեքսանդր Երկրորդի դատական կանոնադրությունները, որոնք Հայաստանի առաջին հանրապետության դատարանակազմության և դատավարության նորմատիվային հիմքն էին, հոչակում էին դատավորների անկախության և անփոփոխելիության հիմնարար սկզբունքները: Այդ սկզբունքներն ապահովված էին նաև նյութական երաշխիքներով: Առաջին, դատավորների համար սահմանված էին զանազան գույքային ցենզեր: Երկրորդ, նրանց առաքին և նյութապես բավարար ապովածության համար սահմանվում էին բարձր աշխատավարձեր:

Հայաստանի առաջին հանրապետությունում, որն իր կառավարման ձևով խորհրդարանական էր, և հոչական նաև ժողովրդավարական հանրապետություն, գույքային ցենզերը վերացված էին: Ինչ վերաբերում է բարձր աշխատավարձին, ապա հանրապետության համար այդ հարցը ձեռք էր բերում ևս մի նոր որակ՝ բավականին բարձր աշխատավարձի միջոցով իրավուրել իրավաբաններին գալու Հայաստան և աշխատանքի անցնելու դատական ու դատախազական մարմիններում: Ամբողջ Երկու և կես տարիների ընթացքում արդարադատության նախարարությունը անընդհատ բարձրացնում էր այս հարցը օրենսդիր մարմինների և կառավարության առջև:

Հայաստանի խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 24-ի «Դատավորի, դատախազի, դատական քննիչի և ավագ նոտարի պաշտոն վարողների ոռջիկի մասին» օրենքով թվարկված պաշտոնյամերը առանձնացվեցին պետական մյուս ծառայողներից, իրեն առաջին կատողորիխ, և նրանց համար սահմանվեց ավելի բարձր աշխատավարձեր<sup>1</sup>: Հետաքրքիրն այն է, որ որոշ պատգամավորներ՝ Հ. Օհանջանյանը և Վ. Խորենին ընդհանրապես դեմ էին այս օրենքի ընդունմանը: «Բոլոր աշխատավորները հավասար են ու պիտի ստանան հավասար գոյապրուստ: Այս պարզ հասկացողությունը ուժահարվեց առաջին օրինագծով: Երկրորդ օրինագիծը մեկ ավելի մեծ հարգած հասցնելու ստեղծելով աշխատավորության մեջ կաստայական դրույթունը»<sup>2</sup>:

Չնայած ձեռնարկվող միջոցառումներին, իհարկե, պետական բյուջեի պակասորդը և արժեգործումը ի շիր էին դարձնում դատավորների անկախության սկզբունքի նշված երաշխիքը: Խոկ 1920 թ. գարնանը, երբ Հ. Օհանջանյանը արդեն օրենսդրական լիազորություններով օժտված կառավարության վարչապեսն էր, իր վերորերյալ դիրքորոշմանը՝ 1920 թ. մայիսին կատարելով աշխատավարձերի նոր հավելումներ, վերացրեց աշխատավարձերի գումարային տարրերությունը մի կողմից դատական, դատախազական, բննշական և մյուս կողմից այլ պաշտոնյաների միջև: Այդ քայլը դժգոհություն առաջ բերեց համակարգի ծառայողների շրջանում, որոնք այդ առթիվ դիմեցին նախարարին: Արդարադատության նախարարը 1920 թ. հուլիսի 21-ին գեկուցեց այդ մասին կառավարությանը, սակայն Նախարարների խորիրի որոշումը անփոփոխ էր: «Գոհացնել ընդհանուր կարգով համաձայն ոռջիկների նոր հավելումների օրինագծի»: Ի պատասխան այդ քայլի արդարադատության նախարարը (Ա. Զիլինգգարյան) 1920 թ. օգոստոսի 9-ին նորից օրենսդրական նախաձեռնությամբ հանդիս եկավ Նախարարների խորհրդում այս անգամ արդեն ոչ թե խնդրանքով, այլ սպառնալիքով: «Եթե չինի փոփոխություն նրանց նյութական վիճակի մեջ դատական պաշտոնյաները կիեռանան ու դատարանը կրայքայի (մի բան, որ արդեն սկսվել է)»: Այս անգամ արդեն կառավարությունը ավելի խոհեմ գտնվեց և վերադարձավ Հայաստանի խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 24-ի վերը նշված օրենքների հիմունքներին:

1920 թ. սեպտեմբերի դրույթյամբ արդարադատության նախարարը Նախարարների խորիրի գեկուցում էր: «Դատախազությունը մեջա-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. Պառլամենտի, Երևան, 1919, թիվ 9, հոդվ. 93, էջ 68-69:

<sup>2</sup> Տե՛ս «Յառաջ», Երեք, Երևան, 1919, թիվ 77:

նում կաղում է իմիջիայլոց և այն պատճառով, որ շատ գավառներում մենք չունենք ոչ քննիչներ և ոչ էլ դատավորներ, իսկ մնացած գավառներում, որ կամ այդպիսիք, նրանց որակը բարձր չէ, որովհետև ամեն մի քիչ թե շատ փորձված իրավաբան ձգուում է լինել կենտրոններում. բողնելով մոտիկ ապագային ընդհանուր միջոցներ առաջարկելու գործը, որոնցով կարելի կիմի ընդհանրապես գրավել իրավաբաններին դեպի գավառ, նախարարությունն առայժմ անհրաժեշտ է գտնում, որպես անհետաձգելի պահանջ, բարելավել անմիջապես քննիչների վիճակը: Հայաստանի դատական քննիչները շատ չնշին բացառությամբ իրենց կոչման բարձրության վրա չեն, որի շնորհիվ քննությունները կատարվում են շատ թերի և որ գիշավորն է աշխատում են դանդաղ»<sup>1</sup>:

Այդպիսի անարդյունավետ աշխատանքի պատճառները բազմազան են, այդ թվում նաև նյութական ռոծոնը: Ըստ արդարադատության նախարարության դիտարկումների «քննիչները նյութապես գտնվում են շատ անապահով դրության մեջ: Ներկայում քննչական մասերից մի քանիսը քննիչներ չունեն, որովհետև այդ պաշտոնները վարելու ցանկացողներ չկան: Ամենքը ձգուում են ունենալ ավելի բարձր պաշտոններ, որոնք ավելի լավ ոռնիկ են տալիս: Բացի այդ քննիչները ցրված պետք է լինեն բոլոր գավառներում: Մինչեռ իրավաբանների մեծ մասը ձգուում է ապրել կենտրոններում: Նախարարությունն գտնում է, որ քննիչներին պետք է դնել նյութապես այնպիսի պայմանների մեջ, որ նրանք կարողանան իրենց վրա դրված այդ ժանր պարտականությունները կատարել բարեխղճորեն»:

Դատական համակարգի քայլայումը մասնագետների համակարգից, կամ էլ ընդհանրապես հանրապետությունից հեռանալու պատճառով սկսվել էր ավելի վաղ, իսկ «ազգայնացմանը»՝ այն ավելի սրբեց: Կարսի քաղաքացիական նահանգապետ Նորդանյանը իր 1919 թ. դեկտեմբերին Երևանի շրջանային դատարանի նախագահին ուղղված գրության մեջ գրում էր. «Աղողահանի քննիչը, որը նշանակվել էր երկար սպասումներից հետո, պատվելով ետ վերադարձավ»<sup>2</sup>: Փախուստի պատճառը նահանգում աշխատելու դժվարություններն էին՝ կապված քնակչության բազմազգ լիմելու հետ: Հեռացողներն այդ մասին տեղյակ չեն պահում նույնիսկ պատշաճ մարմիններին և վերադասին, իսկ մյուս մասը գրադպելով ալան-թալանով՝ դիմում էր փախուստի Նարարիլսայի դատական քննիչի օրինակով: Այս դատական քննիչը, որ պաշտոնավարել էր ընդհամենը

չորս ամիս, ըստ արդարադատության նախարարության Կոստանդնապոլսի Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությանը ուղղված հեռագիր<sup>1</sup> (18 մարտի 1920 թ.), մեղադրվում էր հետևյալ պաշտոններական հանցանքների կատարման մեջ. «Նա 1919 թ. հոկտեմբերի 20-ին ինքնազլուխ դադարեցրել է իր պաշտոնավարությունը և քաքնվել.

Նա իրու քննիչ իր քննության սենյակում ունեցած բազմաթիվ իրենց ապացույցներ անհետացրել է.

Նա մեղադրյալներին կալանավորույթունից ազատելու համար կաշարքներ է առել մեկից 10 000 ռ., մի ուրիշից 2 000 ռ., մի երրորդից 1000 ռ., չորրորդից 5 000 ռ., հինգերորդից 4 000 ռ., մի վեցերերդից 200 ռ., բացի դրանական կաշառքներից՝ զանազան մարդկանցից զանազան առարկաներ, իրեր ու նյութեղեններ է կաշառք առել, հանցավորների հանցանքներն ապացուցող փաստա-րեր է ոչնչացրել և բազմաթիվ նման զեզդումներ ու հանցա-ռոծություններ ռոծել: Այս բոլորից հետո ինչպես իմացվում է փախել է Կ.Պոլիս»<sup>2</sup>:

Իրավիճակը այնպիսի զար-ացում ստացավ, որ 1920 թ. հոկտեմբերին ընդունված «Պաշտոններական հանցանքների մասին ժամանակավոր օրենքը» սահմանում էր, որ «Պաշտոնյան, եթե ինքնավար կերպով, առանց պատշաճավոր իշխանության բոլոյսվության կիեռանա պաշտոնից նայելով ռոծի հան-ամանքներին կդատապարտվի 1 տարվա բանտարկությունից մինչև 4 տարի տաժանակիր աշխատանքների»:

**2.2 Դատավորների անփոփոխելիության սկզբունքի վերացումը:** Արդարադատության ոլորտում իրականացվող քաղաքականությունը և ռոծելակերպը ընութա-րող «քարեփիխումներից» մեկն էլ դատավորների անփոփոխելիության սկզբունքն էր և դրա վերացումը: Դատավորների անփոփոխելիության իրավունքը սահմանված էր «Դատական հաստատությունների կանոնադրության» 243-րդ հոդվ. և ենթադրում էր, որ նրանք, առանց իրենց հանձնայնության, չեն կարող արձակվել և ոչ էլ տեղափոխվել մեկ վայրից մյուսը: Նրանց ժամանակավոր հեռացումը պաշտոնից հնարավոր էր միայն դատի տրվելու դեպքում, իսկ վերջնական հեռացման նրանք ենթարկվում էին ոչ այլ կերպ քան քրեական դա-

<sup>1</sup> Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը Տաճկաստանի հետ չուներ համաձայնագիր հանցագործներին հանձնելու մասին, արդարադատության նախարարությունը Կ.Պոլիսի ներկայացուցչությանը խնդրում էր լրագրերի մեջ հրատարակել Նարարիլսայի դատական քննիչի կատարած հանցանքների մասին տվյալները:

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 127, թ. 127:

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 125, թ. 127:

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 1, գ. 82, թ. 1:

տարանի դատավճիռներով: Անփոփոխելիության սկզբունքը տարածվում էր սենատի վճռարեկ դեպարտամենտների անդամների և նախա-ահի, շրջանային դատարանի անդամների և նախա-ահի, դատական քննիչների վրա, ինչպես նաև հաշտարար դատավորների վրա այն ժամանակի ընթացքում, որի համար վերջիններս նշանակվել էին (երեք տարի): Դատական քննիչների նկատմամբ անփոփոխելիության սկզբունքը՝ ործում էր ոչ լրիվ, այսինքն նրանց կարող էին տեղափոխել մեկ վայրից մյուսը՝ առանց նրանց համաձայնության: Անփոփոխելիությունը չէր տարածվում դատախազների վրա:

Անփոփոխելիությունը դատավորին տալիս է իրական անկախություն գործադիր իշխանությունից և համարվում իշխանությունների տարանցատման սկզբունքի բաղկացուցիչ: Այդ սկզբունքը կապում էր օրենսդիր և գործադիր մարմինների ձեռքերն «անցանկալի» դատավորների դեմ պայքարում, գրկում է հնարավորությունից անմիջականորեն ազդել դատավորների վրա: Սակայն այդ ժողովրդավարական իրավական ինստիտուտը, որով սկզբնական շրջանում պարծենում էին Առաջին համրապետության պետական գործիչները, ժամանակի ընթացքում դարձավ անցանկալի իշխանությունների, կառավարող կուսակցության համար: Նման «մետամորֆոզի» իսկական պատճառներն ակնհայտորեն պարզել հնարավոր չեն: Այդ մասին առաջին անգամ ուղղակի խոսակցություններ և գործնական քայլեր արել է Հայ հեղափոխական դաշնակցության Կենտրոնական կոմիտեի բյուրոյի անդամ, Հայաստանի խորհրդարանի պատգամավոր Հ. Օհանջանյանը, որը 1919 թ. դեկտեմբերի 22-ին խորհրդարանին առաջարկեց օրինագիծ՝ «Դատաստանական պաշտոնյաների արձակման իրավունքի փոփոխման մասին»: Օրինագծով առաջարկվում էր 1920 թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը վերացնել «Դատական հաստատությունների կանոնադրության» 243 հոդվ. և արդարադատության նախարարին այդ ընթացքում իրավունք տալ արձակելու պաշտոնից բոլոր անձանց, ովքեր օժտված են անփոփոխելիության իրավունքով: Նման դիրքորոշման դրամագուման այնքան էլ պարզ չեն, իսկ օրինագծին կից համառոտ բացատրագիրը հետևյալ բովանդակությունն ունի. «Ի նկատի ունենալով այս երևոյթը, որ դատաստանական պաշտոնյաների մեջ մնացել են՝ որպես ժառանգություն ցարական ռեժիմից, մի շաբթ ոչ ցանկալի տարրեր մեր ուսմկավար հանրապետության օրենքները կիրառելու տեսակետից, որ ոռուական օրենքները իրավունք չեն տալիս նրանց արձակել պաշտոնից, առանց նրանց համաձայնության (բացի հանցագործության դեպքերից) առաջարկվում է այս օրինագիծը Հայաստանի

խորհրդարանին ի քննություն, որպես ժամանակավոր միջոց մեր դատարանները անցանկալի տարրերից ազատելու համար»: Եթե խոսքը միայն ցարական ռեժիմից մնացած պաշտոնյաների մասին էր, ապա դրանք կային հիմնականում միայն Երևանի շրջանային դատարանում և այնքան էլ շատ չին: Հաշտարար դատավորների և քննիչների բացարձակ մեծամասնությունը նշանակվել էին հանրապետության օրոք: Դատական պալատի և սենատի բոլոր անդամները և նախագահները ևս նշանակվել էին հանրապետության օրոք:

«Դատաստանական պաշտոնյաների արձակման իրավունքի փոփոխման մասին» օրինագիծը խորհրդարանում հաստատում չի ստացել: Սակայն 1920 թ. մայիսին, երբ ինքը՝ Հ. Օհանջանյանը վարչապետ էր, արդարադատության նախարար Ա. Գյուլիսանդարյանը մայիսի 13-ին Նախարարների խորհրդին է ներկայացրել նույն բովանդակության մի նոր օրինագիծ, որի բացատրագիրը ընդամենը մեկ նախադատություն է. «Ի նկատի ունենալով երկրի ներկա արտակարգ վիճակը, և այդ վիճակից բխող իրանայական պահանջները, նախարարությունս անհրաժեշտ է համարում մինչև Պառամենտի վերաբացումը, ժամանակավորապես դադարեցնել «Դատական հաստատությունների կանոնադրության» այն հոդվածների գործողությունը, որոնց գործույթը դատական պաշտոնյաներին արված է անխախտության իրավունք», այսինքն՝ անփոփոխելիության իրավունք: Մայիսի 30-ին Նախարարների խորհուրդն ընդունել է այդ օրենքը:

Ո՞րն էր այս օրենքի ընդունման իրական նպատակները: Եթե այդ «անցանկալի տարրերը» կաշառակերներ էին և այն, ապա իշխանությունները կարող էին նրանց նկատմամբ հարուցել քրեական հետապնդում և դրանով իսկ գրկել դատավորի կոչումից: Ուրեմն ամենայն հավանականությամբ օրենքը հետապնդում էր բաղարական ինչ-ինչ նպատակներ, այսինքն՝ պաշտոնից հեռացնելու իշխանությունների նկատմամբ ոչ բարեհաջող վերաբերմունք ունեցող անձանց, և եթե հաշվի առնենք, որ դատավորների մեծ մասը նշանակվել էին Հայ ժողովրդական կուսակցության անդամ Ս. Հարությունյանի արդարադատության նախարար լինելու ընթացքում և նրա ներկայացմանը, ապա կարծում ենք, ամեն ինչ պարզ կդառնա: Այսպիսի բաղարականություն ակնհայտորեն իրականացվում էր պետական կառավարման մնացած ոլորտներում և դրա դեմ իրենց բողոքն էին արտահայտում ընդդիմության ներկայացուցիչները. «Վարչական կազմը լցված է միմիայն դաշնակցականներով, նշանակված դաշնակցական նախարարություններից, որոնք գործում են կամայականո-

թեն, անհամապատասխան իրենց կոչմանը և վարում են իին ռեժիմի գործելակերպը»: Սա Ալեքսանդրապոլի ընդիմադիր կուսակցությունների համատեղ բողոքն է ուղղված Հայաստանի Հանրապետության Կառավարությանը<sup>1</sup>: Որ իրականում պետական ապարատը կազմվում էր կուսակցական պատկանելիությունից ելնելով, խոստանում էին նաև կառավարող կուսակցության անդամները: Ներքին գործերի նախարարի օգնական Ս. Թորոսյանը 1920 թ. հուլիսի 2-ին նախարարին և վարչապետին ուղղված գեկուցագրով Հայաստանի Հանրապետության Կառավարությունից պահանջում էր. «Ինքնավարությունների, աղմինիստրացիայի և միլիցիայի պաշտոնները հանձնել պետականորեն աշխատող մարդկանց, առանց կուսակցական խորության»<sup>2</sup>:

Այսպիսով, եթե պետական կառավարման մյուս ոլորտներում հեշտությամբ տարվում էր կուսակցականացված կադրային քաղաքականություն, ապա դատարաններում անփոփխելիության սկզբունքի ուժով դժվար էր դրա իրականացնել և կառավարությունը ոտնկոխ անելով իրավական հիմնարար, ժողովրդավարական սկզբունքները կանայականորեն կարող էր վերացնել դրանք և դրանով իսկ օրենքին տալ ապօրինության, ոչ իրավական բնույթը:

Այդ քայլին դիմում էր այն կուսակցության «բյուրո կառավարությունը», որը 1919 թ. իր «Զանգ» պաշտոնաթերքում Հայ ժողովրդական կուսակցության հետ մի դատավորի կապեր ունենալու առիթով աղմուկ էր բարձրացրել. «Երբ կուսակցությունը մտնում է դատարան, այդ նշանակում է, որ պետական հիմնարկությունների համակարգի մեջ առաջացել է այնպիսի ճեղքածք, որը սպասում է խորտակել ամրող իրավակարգը: Դատարանը պետք է քաղաքականությունից զերծ լինի, դատարանը պետք է դրս լինի քաղաքականությունից, հակառակ պարագային հարգանքը դեպի նա կնկնի, դրա հետ մեկտեղ կշքանա իրավակարգի սկզբունքը և կիառեանակի անձնական հայեցողությունն ու ինքնադատատարանը, որը իր հերքին կրերի քառա և անիշխանություն»<sup>3</sup>:

**2.3. Դատական քննության անմիջականության սկզբունքի օրենսդրական վերացման փորձերը:** Դատավարական իրավունքի գիտության մեջ անմիջականության սկզբունքը դիտարկվում է դատական քննության ընդիհանուր պայմաններից մեկը: Սկզբունքի էությունն այն է, որ առաջին ատյանի դատարանը պարտավոր է անձամբ ուսումնասիրել ապացույց-

ները՝ լսել վկաների, մեղադրյալի ցուցմունքները, գործին մասնակցող անձանց բացարությունները, գիտակ անձանց (փորձագետների) եզրակացությունները, ծանրանալ գրավոր փաստարթերի հետ, զննել իրենին ապացույցները: Որպես կանոն գործով նշանակություն ունեցող հանգանքների մասին տվյալներ դատարանը պետք է ստանա սկզբնաադրյութից: «Դատարանը հիմնավորում է դատավճիռը միայն այն ապացույցներով, որոնք քննարկվել են դատաքննության ընթացքում: Նախնական քննության նյութերը չեն կարող դրվել դատավճիռների հիմքում, եթե դրանք չեն ուսումնասիրվել դատաքննության փուլում<sup>1</sup>: Անմիջականության սկզբունքը ներկայությունը առաջին ատյանի դատարանում պարտավոր է, որոշ բացարություններով հանդերձ, ապացույցների հետազոտման բանավոր ձև, դատական կազմի անփոփխելիություն և դատական քննության անընդհատություն (Քր. դատ. կանոն., հոդվ.հոդվ. 596, 625, 658, 678-734, 846-852): Անմիջականության սկզբունքը երաշխավորում է դատավորի անկախությունը հետաքննության և նախաքննության նյութերից՝ դատավճիռներ կայացնելիս<sup>2</sup>:

Անմիջականության և բանավորության սկզբունքի վերացման փորձեր կատարվել են մի քանի անգամ, եթե Առաջին հանրապետության օրենսդրի մարմինները իրենց օրինաստեղծ գործունեության ընթացքում շոշափում էին վկաների, որպես դատավարության մասնակիցների, դատարան ներկայանալու և ցուցմունք տալու, նրանց կրոնական երդման խնդիրները:

Այդպիսի առաջին փորձը, որ հետազոտվել է սույն աշխատության առաջին գլխում, կատարվել է 1918 թ. սեպտեմբերին, եթե արդարադատության նախարարության մշակա «Քրեական դատավարության կանոնադրության մի քանի հոդվածների փոփոխման մասին» օրինագծով առաջարկվում էր դատարանին հնարավորություն տալ դատարան չներկայացած վկաների նախնական քննության ընթացքում տված գրավոր ցուցմունքները կարդալ դատարանում՝ համարելով դա լիարժեք ապացույցն միջոց և դրանով իսկ չխոչընդոտել դատավարության անկանգառ ընթացքին<sup>3</sup>: Հայաստանի խորհուրդը մերժեց այդ օրենսդրական նորամուծությունը<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 441, գ. 1, գ. 96, թ. 1:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, գ. 1, գ. 287, թ. 6:

<sup>3</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, 1918, թիվ 6:

<sup>4</sup> Տե՛ս «Զանգ» թերթ, 1918, թիվ 57:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 441, գ. 1, գ. 96, թ. 1:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, գ. 1, գ. 287, թ. 6:

«Պաշտոնավարության հետ կապված հանցագործությունների դեպքում պետական պաշտոնյաներին դատելու համար արտակարգ քննիչ հանձնաժողով և արտակարգ դատարան հիմնելու նախին» 1919 թ. հուլիսի 3-ի օրենքով վերացվում էր քրեական դատավարության անմիջականության սկզբունքը: Այս արտակարգ մարմինների ործունեության հիմնախնդիրները վերը ուսումնասիրելիս, նկատեցինք, որ արտակարգ քննիչ հանձնաժողովն իրավունք ուներ երդում վերցնելու վկայից, որպես ցուցմունքների հավաստիության երաշխիք, հետագայում նրան արտակարգ դատարան չկանչելու համար:

Չնայած դատավարական կարգերում կատարված օրենսդրական նորամուծություններին և փոփոխություններին վկաների դատարան չներկայանալու խնդիրը հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում մնաց անլուծելի:

1920 թ. կեսերին արդարադատության նախարարությունում մտածում էին դիմելու ավելի արմատական, արտակարգ դատավարական ձևերի, հատկապես վկաների հարցաքննության հարցում և նրանց դատական ատյաններ չներկայանալու խնդրում: Զկարողանալով լավագույն լուծում տալ այդ խնդիրին նախորդ ժամանակաշրջանում և փոխարեն դատարանը մոտեցնելու ժողովրդին և բնակչությանը, մատչելի դարձնելով այն բոլորի համար, նախատեսում էին «ժողովրդին մոտեցնելու դատարաններին» ավելի խիստ պատժական միջոցներով կամ էլ արդարադատություն իրականացնելու առանց վկաների և դատական ապացուցման միջոց հանդիսացող նրանց բանավոր ցուցմունքերի: Վկաների՝ մշտական բնակության վայրից բացակայելու հետ կապված անհարմարությունները դնել մասնավոր անձանց և քաղաքացիների վրա, այլ ոչ թե պետական մարմինների և պաշտոնատար անձանց վրա: Բյուրոկրատական այս մտածողությունն էլ հիմք հանդիսացավ արդարադատության նախարարությունում 1920 թ. աշնանը մշակելու վկաների վերաբերյալ նոր օրինագիծ, որով առաջարկվում էր փոփոխության ենթարկել, լրացնել կամ վերացնել «Քրեական դատավարության կանոնադրության» մի շարք իրավանորմեր<sup>1</sup>, և դրանվ իսկ փաստորեն վերացնել դատական քննության անմիջականության սկզբունքը քրեական դատավարությունում: Այդ օրինագիծը զեկուցվել է օրենսդրական լիազորություններով օժտված կառավարությանը 1920 թ. սեպտեմբերի 10-ին:

«Քրեական դատավարության կանոնադրության» համաձայն նախարանության ընթացքում վկաները հարցաքննում էին քննության կա-

տարման վայրում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք հարգելի պատճառներով չէին կարող ներկայանալ քննիչի մոտ: Սիամանանակ վկաները քրեական գործերով նախաքննության ընթացքում պետք է երդում տային միայն օրենքով նշված կոնկրետ դեպքերում: Օրինակ՝ երբ վկան հեռու ճանապարհ էր գնալու և նրա վերադարձը կարող էր ձգձգվել. երբ վկան տառապում էր կյանքին սպառնացող իիվանդությամբ. երբ վկան ապրում էր տվյալ դատական շրջանի սահմաններից դուրս և նրա համար ևս մեկ անգամ դատարան ներկայանալը դժվարություն էր ներկայացնել: Վերոբերյալ դեպքերից բացի դատական քննիչը իրավունք չուներ երդում վերցնելու վկաներից (Քր. դատ. կանոն., հոդվ.հոդվ. 441-443):

Օրինագծով առաջարկվում էր բոլոր վկաներին անխտիր հարցաքննել միայն կրոնական երդում վերցնելուց հետո: Եթե քննության կատարման վայրում չինի համապատասխան հոգևորական, ապա վկայից երդում էր վերցնում ինքը՝ դատական քննիչը: Այս օրենսդրական նորամուծությամբ օրինագիծը մշակողները նպատակ ունեին ապահովելու վկաների ցուցմունքների ճշմարտացիությունը ու հավաստիությունը, որպեսզի նրանց հետագայում չկանչեն դատարան՝ դատական քննությանը մասնակցելու համար: Նման օրենսդրական լուծմամբ իշխանությունները փորձում էին ազատվել վկաների դատարան չներկայանալու խնդրի գլխացավանքներից ու բարդություններից:

Քրեական դատավարության անմիջականության և բանավորության ապահովման միջոցներից մեկն էլ «Քրեական դատավարության կանոնադրության» 626-րդ հոդվ. էր, որն արգելում էր դատական նիստում կարդալ վկաների գրավոր ցուցմունքները և դրանք ընդունել որպես ապացուցման միջոց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վկան մահացել էր կամ կատարյալ զառամյալ էր կամ գտնվում էր հեռավոր բացակայության մեջ: Արդարադատության նախարարության կողմից առաջարկվող այդ հոդվածի նոր խմբագրությամբ դատարանին իրավունք էր տրվում դատական նիստում կարդալ նաև օրինական պատճառներով դատարան չներկայացած անձանց նախնական քննության ընթացքում տրված գրավոր ցուցմունքները, ինչպես նաև նախարարների, նահանգապետների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների գրավոր ցուցմունքները, եթե միայն այդ անձանց հարցաքննությունը կատարվել էր նրանց բնակության վայրում<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 107, թթ. 348-350:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 107, թթ. 348:

«Քրեական դատավարության կանոնադրությունը» վկայի չներկայանալու օրինական հիմք էր ճանաչում՝

1. Ազատազրկման վայրում գտնվելը.

2. Ծանապարհային հաղորդակցության դադարումը վարակիչ հիվանդությունների տարածման, թշնամու հարձակման, ջրհեղեղի և նմանատիպ այլ անհարժահարելի արգելվների հետևանքով.

3. Անսպասելի ավերումները դժբախտ պատահարից.

4. Հիվանդությունը, որ զրկել է անձին տնից հեռանալու հնարավորությունից.

5. Ծնողների, ամուսնու, կնոջ կամ զավակների մահը կամ նրանց ծանր, մահացու հիվանդությունը.

6. Ծանուցագիր չստանալը կամ ոչ ժամանակին ստանալը (հոդվ. 338):

Ըստ գործող դատավարական իրավանորմերի, եթե վկաները, անկախ պատճառից, չեն ներկայանում դատարան, ապա դատարանը կամ հետաձգում էր դատական նիստը՝ միջոցներ ձեռնարկելով վկաներին բերման ենթարկելու համար, կամ էլ եթե դա հնարավոր էր, շարունակում էր դատական նիստը առանց վկայի ներկայության, եթե, իհարկե, նրա ցուցմունքները էական նշանակություն չունեին գործի համար։ Առանց օրինական հիմքերի չներկայացած վկաները տուգանվում էին և բացի այդ հատուցում դատարան կանչված մյուս անձանց դատական նիստի հետաձգման հետևանքով կրած ծախսերը, եթե հետաձգման համար հիմք էր ծառայել այդ վկայի չներկայանալը (Քր. դատ. կանոն., հոդվ. հոդվ. 640, 643):

Այսպիսով՝ արդարադատության նախարարության առաջարկված նոր խմբագրությամբ դատարանին իրավունք էր տրվում դատարանում կարգելու «օրինական պատճառով»<sup>1</sup>, այսինքն՝ հարգելի հիմքերով դատարան չներկայացած վկաների գրավոր ցուցմունքները։ Անհայտ պատճառով դատարան չներկայացած վկաների գրավոր ցուցմունքները դատարանում կարդալը բողնվում էր դատարանի հայեցողությանը<sup>2</sup>:

«Քրեական դատավարության կանոնադրության» 642-րդ հոդվ. ուժով դատարան ներկայանալուց ազատվում էին իսկական զինվորական ժառայության մեջ գտնվող զինվորականները, երբ նրանց դեկավարությունը ուղղմական հանգամանքներով անհնարին կճանաչեր ծառայութ-

<sup>1</sup> «Օրինական պատճառ» հասկացությունը սահմանում էր «Քրեական դատավարության կանոնադրությունը»։ Այսուել ամրագրված էին նաև դրա հիմքերը։ Այս տեսակի վկաներն ազատվում էին տուգանքից՝ չներկայանալու դեպքում։

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 107, թ. 348։

յան վայրից հեռանալը, ինչպես նաև ընդհանրապես այն վկաները, որոնք ապրում էին այլ դատական շրջանում և ընդ որում այնպիսի հեռավորության վրա, որ նրանց ներկայանալը դատարան հասուն դժբախտությունների պատճառով անհնարին էր<sup>1</sup>։ Այսինքն՝ այս խմբին պատկանող վկաները ընդհանրապես ազատվում էին դատարան ներկայանալու պարտականություններից և նրանց գրավոր ցուցմունքները կարդացվելու էին դատարանում։ «Քրեական դատավարության կանոնադրության» 642 հոդվ. համար արդարադատության նախարարության առաջարկած փոփոխությամբ ազատականացվում էին դատարան ներկայանալու պարտականությունից ազատման վերոբերյալ երկու հիմքերը և հնարավորությունները, սահմանելով որպես դատարան ներկայանալուց պատվածներ ընդհանրապես «զինվորական ժառայության մեջ գտնվող» անձանց, առանց որևէ այլ պայմանի, նաև «դատական նիստերի տեղից 30 վերստից ավելի հեռավորության վրա ապրող» վկաներին։

Այս կարգի մյուս փոփոխությունը ուղղված էր «Քրեական դատավարության կանոնադրության» 879-րդ հոդվածին, համաձայն որի վերաբնիշ ատյանում՝ դատական պալատում մեղադրյալները և գործին մասնակցող այլ անձինք ինչպես նաև՝ վկաները կանչվում էին նախ այն դեպքում, եթե վերաբնիշ ատյանը դա անհրաժեշտ էր համարում, այսինքն՝ եթե կային ցուցմունքների հավաստիության կասկածելի հիմքեր, և երկրորդ, եթե կողմերն էին այդ խնդրում և այդ պահանջը կատարելու համար արգելվներ չկային։ Օրինագծով առաջարկվող նոր նորմով այդ անձանց կանչելու երկրորդ հիմքը՝ կողմերի պահանջը, վերացվում էր քողնելով միայն առաջինը՝ «դատական պալատի հայեցողությունը»։

Պատերազմը թեմալական թուրքիայի հետ հնարավորություն չտվեց Հ. Օհանջանյանի օրենսդրական լիազորություններով օժտված «բյուրո կառավարությանը» ընդունելու և իրագործելու այս օրինագիծը, ինչը ծայրահեղության կարող էր հասցնել արդարադատությունը, վերացնելով դատական քննության անմիջականության սկզբունքը քրեական դատավարությունում վկաների հարցաքննության հարցում։

**2.4. Դատարանների և դատավարության «ազգայնացումը»:** Հանրապետական, իրավական պետական կառավարման ձևը ենթարկում է ժողովրդավարության հաստատում, իրավագիտակցության բարձր մակարդակի արմատավորում նաև պետական մարմինների իրավարակա-

<sup>1</sup> Այս նորմը սահմանված էր կայսրության տարածքային չափանիշներից ելնելով և «այլ դատական շրջան» հասկացությունը նշանակում էր մի քանի հարյուր կիլոմետր հեռավորություն։

յին գործունեության, ժողովրդին հասկանալի լեզվով պաշտոնական գործավարությունը տանելու, ազգաբնակչությանը գործող օրենսդրությունը մատչելի դարձնելու միջոցով։ Կոմկրետ դեպքում կարևորվում էր դատավարության ազգային լեզվի սկզբունքը։ Սակայն պատմական հաճախանքների բերումով նորաստեղծ հայկական պետականությունը զրկված էր այդպիսի արժանիքներից, որովհետև լեզուական կառույցները ժառանգել էին գերազանցապես հայերեն շիմացող պաշտոնեություն, այսինքն՝ ոռուախոս պաշտոնյաներ, որոնց մի մասը ազգությամբ ոռուներ էին, մյուս մասը՝ հայեր, սակայն բավականին չէին տիրապետում հայերենին։ Հետևաբար դատավարության լեզուն ոռուներեն էր։ Յուրաքանչյուր ընդհանուր դատարանին կից գործում էին մի քանի հաստիքային թարգմաններ։

Գաղութատիրական կարգերի կանքը ունեցող պետական կառուցակարգի ժողովրդավարականացումն այս դեպքում ենթադրում էր նաև «ազգայնացում», այսինքն՝ պետական ողջ կառուցակարգը և իրավական համակարգը ազատագրված ժողովրդի լեզվով ու հոգենուավոր կարիքներին համաձայն վերակազմափորում, որը ենթադրում էր քրտնաշան, համբերատար, աստիճանական աշխատանք, առանց ծայրահեղությունների, ազգայնամոլության մեջ ընկնելու։ Հ. Քաջազնունու վարչապետության օրոք այս աշխատանքը տարիվում էր աստիճանաբար, առանց շտապողականության։ Հ. Քաջազնունին լինելով չափավոր և խելամիտ քաղաքական գործիչ հասկանում էր, որ անհնարին էր միանգամց ազատվել նման պաշտոնյաներից ու մասնագետներից, անմիջապես իրականացնել «տոտալ հայացում»։ Այդ ճանապարհով շարժվելու համար արգելք էին համարվում երկու իրմանական հանգամանքներ։ Առաջինը՝ պետական ապարատի և հատկապես արդարադատության նարմնների համակարգի կազմակերպման այնպիսի իրմանարար սկզբունքի առկայությունն էր, ինչպիսին է արիեստավարժության սկզբունքը։ Երկրորդ հանգամանքը, որ իր հերթին պահանջում էր դրսնորել զգուշություն և նրբանկատ վերաբերունք մատնանշված իրմանախնդրում, այլազգիների՝ թարարների, քրդերի և այլոց առկայությունն էր բնակչության կառուցվածքում։ Այս պարաւայում, մի-ուցե, ոռուներն լեզվով տարիվու պաշտոնական գործավարության և դատավարության հետ կարելի էր որոշ ժամանակ համակերպվել որպես, և՝ արիեստավարժության սկզբունքը պահպանելու, և՝ այլազգիներին լեզվական ճնշման չենթարկելու փոխազդումային լուծում։

Հանրապետության գոյության ընթացքում խնդիրը ծայրահեղ տարերի կողմից սրվում էր, հատկապես, մամուլում։ Արդարադատության նա-

խարարության զգուշավորությունը որակում էին «անգործություն», դրսնորելով չափից դուրս շտապողականություն, պահանջելով դատական մարմնների ու իրմանարկությունների «անմիջապես ազգայնացում»<sup>1</sup>, առանց նախադրյալների պատրաստման և հասունացման։ Ընդ որում, «Ազգայնացումը Հայաստանի ռամկավար հանրապետության մեջ հայացում է նշանակում»<sup>2</sup>, կարգախոսը, որ հրապարակ նետվեց ժամանակի գործիների կողմից, չեր հասկացվում այն իմաստով, որ Հայաստանում հայերենը դառնար պետական լեզու, իսկ ազգային փոքրամասնություններն ունենային իրական լեզվական իրավունքներ, ոչ միայն իրենց մշակութային-մասնավոր հարաբերություններում, այլև ամբողջ պետական կառուցակարգի գործունեության շրջանակներում։ Այսպիսի առողջ, աստիճանական և ազգային փոքրամասնությունների լեզվի իրավունքի հարգմանը ազգայնացման անհրաժեշտությունը ոչ ոք չեր կարող մերժել և այդ էին պահանջում իրական ժողովրդավարության ու ազգային պետականության հեղինակության բարձրացման, լեզվիմության շահերը։ Այս դեպքում խնդիրը միայն «ազգայնացման» իրականացման ձևերի, եղանակների, ժամկետների մեջ էր։

Հիմնախնդիրի քննարկման և լուծման միջոցառումների մշակման համար Նախարարների խորհուրդը կազմել էր Ազգայնացման միջավայրական կոմիտե կառավարության գործերի վարիչ՝ Գ. Խատիսյանի նախագահությամբ։ Կոմիտեի կազմի մեջ մտնում էին ներկայացուցիչներ առանձին նախարարություններից։ Կոմիտեն իր աշխատանքները սկսել է 1919 թ. մայիս ամսին։ Կոմիտեի հրավիրած նիստերի համառու արձանագրությունների ուսումնակրությունից երևում է, որ այն քննարկել է Գ. Խատիսյանի մշակած «Օրինագիծ լեզվի մասին» տասներեք հոդվածից բաղկացած փաստարուղը։ Այդ օրինագիծը պետական հիմնարկություններում և մարմններում գործածվող լեզվի վերաբերմանը ամրա-րում էր երկու տարբեր հասկացություններ։ Առաջինը, այսպես կոչված, «ներքին պաշտոնավարության լեզուն» էր «որը իշխանությունը գործ է ածում իր գործավարության մեջ», իսկ երկրորդը՝ «արտաքին պաշտոնավարության լեզուն», որը «իշխանությունը գործածում է ազգաբնակչության հետ հաղորդակցման համար»<sup>3</sup>։ Օրինագիծի 3-րդ հոդվ. սահմանում էր, որ ներքին պաշտոնավարության լեզուն աստիճանաբար չորս տարվա ընթացքում պետք է վերածվի հայերենի։ Փաստարկի 7-րդ հոդվ. նախատեսում էր,

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919, թիվ 45:

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919, թիվ 42:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 62, թ. 12:

որ պետական մարմիններում ու հիմնարկություններում պաշտոնյաների ընտրությունն ու ընդունելությունը պայմանավորված էր նրանց հայերենի (գրակոր և բանակոր) պարտադիր իմացությամբ, իսկ արդեն նշանակված և գործող պաշտոնատար անձններ պարտավոր էին մեկուկես տարվա ընթացքում տիրապետել հայերենին: Օրինազիծը դատարանների համար առաջարկում էր հայացում՝ մեկ տարվա ընթացքում: Չնայած որոշ թերություններին՝ օրինազիծը գոնե ժամկետների հարցում նաևամբ դրսւուրում էր որոշակի գգուշավորություն՝ չպարտադրելով անմիջապես «ազգայնացում»:

Ազգայնացման միջվարչական կոմիտեում քննարկումների ընթացքում առաջ եկան լուրջ տարակարձություններ: Մեծամասնությունը կոմիտակից էր «Լեզվի մասին օրինագիծ» հիմնական դրույթներին, իսկ փորձամասնությունը՝ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Տեր-Հակոբյանի գլխավորությամբ համարում էր «օրինազիծը հակածողովորական» փաստաթուղթ, որում չեն ներկայացված այլազգիների շահերը: Եվ իրոք, փաստորեն ստացվում էր ոչ թե ընդհանրապես ազգայնացման ժողովորական հիմունքներով կենսագործում, այլ միայն և զուտ հայացման անվերապահ օրենադրական պահանջ: Միշարք խորհրդակցությունների արդյունքում ձևավորվեցին երկու առաջարկներ (քանաձեր), որոնք և դրվեցին քվեարկության 1919 թ. մայիսի 20-ի նիստում: Առաջին բանաձևը առաջարկում էր «մշակել մի օրինագիծ, որի մեջ աշքի առաջ ունենալ Հայաստանում ապրող քողոք ժողովորդների լեզվի հրավորները»: Իսկ երկրորդը՝ «նախ մշակել հայերեն լեզվի մասին օրենքը (որպես այդպիսին ճանաչելով Վերոհիշյալ օրինազիծը), այնուհետև մյուս լեզուների և սրանց մշակումը հետաձգել մինչև առաջինը մշակելը, այդ նույն ազգությունների ներկայացուցիչների մասնակցությամբ»: Չնայած Տեր-Հակոբյանի և խնամատարության նախարարության ներկայացուցչի բողոքներին՝ անցավ Գ. Խատիսյանի և մյուսների առաջարկը, այսինքն՝ երկրորդ տեսակետը:

Այս հիմնախնդիրը քննարկվել էր նաև «Հայաստանի իրավաբանական ընկերակցության» («Հայ իրավագիտաց միություն») ընդիանուր ժողովում: Իրավաբան գործիչների մեծ մասը համաձայն չէին Գ. Խատիսյանի մշակած օրինագիծի դրույթների հետ, գտնելով դրանք անիրականանալի և մեքենայական, որովհետև հաշվի չեն առնում ազգայնացման նախադրյալները և իրական հնարավորությունները: Այդ հանգամանքը նկատի առնելով «Իրավագիտաց միությունը» առաջարկում էր Ազգայնացման միջվարչական կոմիտեին իր կազմի մեջ ընդգրկել իրենց ներկայացուցչին, սակայն կոմիտեն դրան չհամաձայնվեց:

«Լեզվի մասին օրինագիծը» քննարկման առարկա է դարձել նաև Նախարարների խորհրդին կից Իրավաբանական խորհրդակցությունում՝ 1919 թ. դեկտեմբերի 3-ին: Այստեղ արդեն նախագահում էր արդարադատության նախարարի պաշտոնակատար, նախարարի օգնական՝ Հ. Ամիրխանյանը: Խորհրդակցությունը լսելով վերջինիս գեկուցումը իրենց եղակացությանը ներկայացված օրինագիծի մասին որոշեց «որ նրա էական թերությունների պատճառով չի կարող իբրև հիմք ընդունվել պետական հաստատությունների առաջիկա ազգայնացման համար»: Միաժամանակ խորհրդակցությունը ընդունեց որոշում՝ առաջին հերթին արդարադատության նախարարությանը կից հիմնել «գիտակ անձանց հանձնաժողով՝ քարգմանելու համար հայերեն՝ անհրաժեշտ կանոնադրությունները»<sup>1</sup>, այսինքն՝ օրենքները: Ինչպես տեսնում ենք իրավաբանները, ի տարբերության քաղաքական ործիչների կողմ էին ոչ թե «կարգային գոտմանը», այլ իրավական համակարգի աստիճանական քարեփոխմանը, որի առաջին քայլը նրանք համարում էին օրենսդրության «ազգայնացում»:

Ինչպես տեսնում ենք, ազգայնացման հարցում ամենից գգուշավոր դիրքորոշում բռնել էին արդարադատության նախարարությունում և իրավաբանները, որ պայմանավորված էր նախարարության և իրավաբանական մասնագիտության յուրահատկությամբ: 1919 թ. սեպտեմբերին Նախարարների խորհրդին ուղղված մի քացատրագրում նախարարությունը գտնում էր, որ «ներկայումս դատական հիմնարկությունների մեջ հայերեն լեզվով գործադարձությունը մտցնելը մի շաք դժվարություններ է ներկայացնելում. նախ, որովհետև հայոց լեզուն բավարար գիտցող պաշտոնական համար հիմքությանը հայերեն գիտցող այնպիսի անձեր, որոնք կփոխարինեն նրանց, կարծում ե, որ դատական հիմնարկությունների կանոնավոր գործունեության համար առաջին անհրաժեշտ է նրանց բողնել իրենց պաշտոններում»<sup>2</sup>:

1919 թ. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը «ազգայնացման» հարցում դրսւուրում էր շրջահայացություն: Վարչապետ Խատիսյանի բռնած դիրքորոշումը նման էր իր նախորդին և կարելի է բնորոշել որպես աստիճանական, էվոլյուցիոն քաղաքականություն: Խա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, գ. 66, թ. 10:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 29, թ. 126:

տիսյանի կառավարության «Հայտարարագրում» (1919 թ. օգոստոս) այդ մասին ամրադրված էր միայն մեկ ընդհանուր դրույթ-բանաձև, առանց ժամկետների, կրնկրես ձևերի ու եղանակների նշման. «Գործավարությունը դատարանում պետք է կատարվի պետական լեզվով, իսկ դատավարությունը նայենի լեզվով»<sup>1</sup>: Այդպիսով կառավարությունը տարբերակում էր «պետական լեզու» և «մայրենի լեզու» հասկացությունները, իսկ դա նշանակում էր որ կառավարությունը դատավարական ոլորտում մտադրված էր ամրադրելու և կենսա-ործելու դատավարության ազգային լեզվի սկզբունքը:

Ծայրահեղական, ոչ համակարգված, մակերեսային մոտեցումը ազգայնացման խնդրում դժվարությամբ, սակայն, այնուամենայնիվ, հարթում էր իր ճանապարհը: 1919 թ. երկրորդ կեսին, երբ դաշնակցությունը գերիշխող մեծամասնությունն էր կազմում Հայաստանի խորհրդարանում, ընդունվեց օրենք «Պետական լեզվի մասին» (դեկտեմբերի 20-ին), բաղկացած ընդամենը երկու հոդվածից<sup>2</sup>: Օրենքի 1-ին հոդվածն ամրարում էր, որ Հայաստանի Հանրապետության «պետական լեզուն հայերենն է և պարտադիր գործի ու բոլոր պետական և հասարակական հաստատությունների մեջ», իսկ 2-րդ հոդվածը սահմանում էր, որ «պետական և հասարակական հաստատությունները պարտավոր են վեց ամսվա ընթացքում հայերենը դարձնել պետական գործավարության պաշտոնական լեզու»:

Այս օրենքում անընդունելի էր, նախ, հայացման վեց ամսվա ժամկետը, մյուս կոմիջ օրինագիծը չէր նախատեսում մանրամասնությունները, չկար համակարգված, օրգանական մոտեցում: Հստ էության ստացվում էր պետական մարմինների մասնակի մեքենայարար հայացում, այլ ոչ թե ամբողջ իրավական համակարգի հայացում, այդ թվում նաև՝ նրա այնպիսի բաղադրատարի, ինչպես պողիտիվ իրավունքի, օրենսդրության: Չեր որոշված այլազգինների իրավական վիճակը այս հարցում, բողնելով դրա լուծումը ապագային: Կարծում ենք, կարելի էր նաև հայացումը իրագործել աստիճանաբար, օրգանական կերպով, առանց վայրիվերումների ու պետական ապարատի նորմալ աշխատանքը խաթարող միջոցառումների:

Հարկ է իմանալ, որ խորհրդարանում բացի այս՝ օրենք դարձած օրինա-ծից շրջանառության մեջ էին նաև ավելի ծայրահեղ դիրքորոշում ու-

նեցող առաջարկություններ և օրինագծեր, ինչպես օրինակ պատգամավոր Հ. Մանուկյանի առաջարկած «Հայոց լեզվի պետականացման մասին օրինագիծը»<sup>1</sup>, որի դրույթները ավելի խիստ էին ու կտրուկ հայացման հարցում: Գ. Խատիսյանի մշակած օրինագիծն իր առաջարկվող պայմաններով «դրախտ» էր սրա համեմատ:

Ինչևիցեւ, օրենքն ընդունված էր և դրա որդողության վնասակար հետևանքները, մասնավորապես՝ արդարադատության կառավարման ոլորտում, անհերթելի են: Ազգայնացման նման տեմպերը հանգեցնելու էին որակյալ մասնագետների հեռացմանը աշխատանքից և ընդհանրապես Հայաստանից: Այնպիսի տպակորություն է ստեղծվում, կարծես թե, կառավարությունը (Հ. Օհանջանյանի վարչապետության օրոք) շահագրգության էր դրանում:

Կառավարող կուսակցության օրգան «Հայաստանի աշխատավոր» թերքը այսպիս էր բնութագրում այդ գործընթացը. «Եթերկայում Հայստանում մեծ տեմպով վարչական ու դատաստանական հաստատությունների համար պաշտոնակոչ է կատարվում: Եվ պատրաստի մարդկանց խմբաքանակի բացակայության պատճառով պաշտոնի են կոչվում մարդիկ, որոնք ոչ միայն մասնագիտորեն պատրաստ չեն, այլ մեծ մասը գործի են նոյնինիկ ընդհանուր գարգացումից»<sup>2</sup>:

Արդարադատության մարմինների անձնական կազմի կառավարման ոլորտում այսպիսի մոտեցում դրսորդելու դժվար էր, որովհետև կային դրա համար ձևական, օրենսդրական արգելվներ ու պահանջներ, որ ներկայացվում էին դատական, դատախազական, բննշական պաշտոնյաների թեկնածուներին: Սակայն այդ արգելվները օրենսդրական կարգով ստիպված մեղմացվեցին կամ վերացվեցին: Այսպես՝ խորհրդարանը 1919 թ. նոյեմբերի 24-ին ընդունեց երկու օրենք:

**Առաջին օրենքը** «Դատական հաստատությունների կանոնադրության» 407-րդ հոդվածին, որպես լրացում հոդվածի բուն բովանդակությանը, ավելացնում էր ծանոթագրություն: Համաձայն այդ հոդվածի դատական գերատեսչության գծով պաշտոնի թեկնածուները կցված էին դատական պալատին և շրջանային դատարաններին: Թեկնածուի կոչումը ստանում էին պալատի դատախազի համաձայնությամբ, անմիջապես դատական պալատի ավագ նախագահի կողմից կամ շրջանային դատարանի նախագահի ներկայացմանք՝ այն անձինք, ովքեր «ավարտել են իրավաբանական գիտությունների կուրսեր բարձրագույն իրավաբանա-

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919, թիվ 121:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, իրատ. Պառամենտի, Երևան, 1919, թիվ 10, հոդվ. 104, էջ 79:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 107, թ.թ. 17-18:

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919, թիվ 73:

կան ուսումնական հաստատություններում կամ ունեն կրթության վկայականներ դրանցում քննությունները հանձնելու մասին»: Ծանոթագրությունը առաջարկում էր, որ ժամանակավորապես «Դատական պաշտոնի թեկնածուների կարող են նշանակվել նաև այն անձինք, որոնք լսել են ոռուսական համալսարանների իրավաբանական բաժիններում 8 կիսամյակ և ունեն համապատասխան վկայականներ, ինչպես և ոչ ոռուսական համալսարաններում ուսած այն անձինք, որոնք կներկայացնեն վկայականներ, որ անցել են իրավաբանական գիտությունների լրիվ դասընթացը»<sup>1</sup>: Վերջին դեպքում, իհարկե, նկատի էր ունեցվում հիմնականում տաճկահայ իրավաբաններին:

**Երկրորդ օրենքը** կոչվում էր «Դատական պաշտոնի ավագ թեկնածուի կրելու մասին» և փոփոխության էր ենթարկում «Դատական հաստատությունների կանոնադրության» 409-րդ հոդվածը: Համաձայն այդ հոդվածի շփոփոխված խմբա-դրության դատական պաշտոնի ավագ թեկնածուի կոչում ստանալու էր այն կրտսեր թեկնածուն, որը տարի և կես ծառայել էր դատական հիմնարկություններուն, հանձնել էր քննություն և ստացել վկայագիր այն մասին, որ ունի բավարար գործնական պատրաստվածություն և կարող է ինքնուրույն փարել դատական գործեր: 409 հոդվ. նոր խմբագրությամբ սահմանվում էր, որ ավագ թեկնածուի կոչում տրվում է նրանց, ովքեր շրջանային դատարանից կամ դատական պալատից կտուանան վկայագիր այն մասին, որ ունեն համապատասխան պատրաստվածություն և փորձառություն ինքնուրույն կերպով դատական գործեր փարելու համար: Մեկ ու կես տարի ժամկետը վերացվում էր<sup>2</sup>:

Այս երկու օրենքների ընդունման հիմնական պատճառը պատրաստի մասնագետ-իրավաբանների պակասն էր, որը հետևանքն էր նաև ազգայնացման-հայացման խոսակցությունների և ոչ հայախոսների Հայաստանի հեռանալու:

Դատական թեկնածուների հարցը սկզբունքային նշանակություն էր ստանում նրանով, որ թեկնածուներն արդեն կարող էին նշանակվել հաստիքային պաշտոնների դատական ու դատախազական մարմիններում: Սիամամանակ «Դատական հաստատությունների կանոնադրության» 415-րդ հոդվածի ուժով շրջանային դատարանները նրանց կարող էին

<sup>1</sup> Տես՝ Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, իրատ. Պատլամենտի, Երևան, 1919, թիվ 6, հոդվ. 63, էջ 44:

<sup>2</sup> Տես՝ Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, իրատ. Պատլամենտի, Երևան, 1919, թիվ 6, հոդվ. 64, էջ 45:

հանձնարարել նախաքննություն կատարել քրեական գործերով և այդ դեպքում նրանք գործում էին դատական քննիչների իրավունքներով:

«Պետական լեզվի մասին» օրենքի ընդունումից հետո իրավիճակն ավելի էր վատանալու, հատկապես 1920 թ. մայիսի 30-ից, երբ Նախարարների խորհրդող ընդունեց օրենք «Պետական լեզուն չիմացող պաշտոնյանների լիկվիդացիայի մասին»: Համաձայն այդ օրենքի, պետական լեզուն չիմացող բոլոր պաշտոնատար անձինք Հայաստանի խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 26-ի օրենքի հիման վրա պաշտոնից հեռացվում էին:

Այդպիսի ծայրահետ դիրքորոշումը և մի շաբթ այլ հանգամանքներ դատավորների անփոփոխիլության իրավունքի վերացումը. անկայուն քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմանները և այլն) հանգեցրեցին նրան, որ 1920 թ. ամռանը դատա-դատախազա-քննչական պաշտոնյանների գերակշռող մասը ենթարկվեց նորացման՝ զանգվածային արձակումների և նշանակումների միջոցով: Սինէն հանրապետության անկումը օր չկար, որ օրենսդրական լիազորություններով օժնված «բյուր կառավարությունը» չկատարեր նրանց նշանակումներ և տեղափոխություններ, արձակումներ, որ շատ կողմերով նման էր խառնաշփորի, այդ ընթացքում կատարելով նաև նրանց զտում ըստ քաղաքական հատկանիշների:

Արդյունքը եղավ այն, որ արդեն 1920 թ. սեպտեմբերին արդարադատության նախարարությունը ստիպված էր նոր օրենսդրական առաջարկությամբ հանդես գալու Նախարարների խորհրդում առաջարկելով «Դատական հաստատությունների կանոնադրության» վերոհիշյալ 407-րդ հոդվածի ծանոթության նոր խմբագրություն, ըստ որի ժամանակավորապես դատական պաշտոնի թեկնածուներ կարող էին նշանակվել նաև այն անձինք «որոնք լսել են համալսարանների կամ ուրիշ բարձրագույն դպրոցների իրավաբանական բաժիններում 4-8 կիսամյակ, նույնական և այն անձինք, որոնք արդարադատության նախարարի հայեցողությամբ համապատասխան են այդ կոչմանը»<sup>1</sup>:

Փաստորեն արդարադատության նախարարի հայեցողությամբ այդպիսի թեկնածուներ կարող էին ճանաչվել նաև ընդհանրապես իրավաբանական կրթություն չունեցող անձինք: Շրջանային դատարանը, դատական պալատը և Հայաստանի Սենատը լուրում էին հանրապետության քաղաքական դեկանակության ճնշիչ ազդեցությունից վախճանալով: Սիամ 1920 թ. նոյեմբերին կանխազգալով արդեն դաշնակցության ապագա հեռացումը իշխանությունից, սկսեցին երևալ պաշտոնատար անձանց թույլ

<sup>1</sup> Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 105, թ. 109:

բողոքներ ընդդեմ ազգայնացման և նրա հետևանքների: Իսկ հետևանքները 1920 թ. նոյեմբերի 1-ի դրույթամբ, ըստ շրջանային դատարանի նախագահի գեկուցագրի, այսպիսին էր. «Գործող 23 հաշտարար բաժիններից և քննչական տեղամասերից 7 հաշտարար դատավոր և 3 դատական քննիչ չունեն իրավաբանական կրթություն»,<sup>1</sup> իսկ երկու քննչական տեղամասերի համար ընդիանուագես չկային թեկնածուներ, որ նշանակեին:

Իրավիճակն այդպիսին էր դարձել միայն և միայն հանրապետության քաղաքական դեկավարության «ձախ» և ոչ ճիշտ դիրքորոշման պատճառով: Արդարադատության նախարարությունը դրանում ոչ մի մեղք չուներ: Նախարարությունում միշտ էլ գտնում էին, որ ազգայնացման-հայացման հարցում պետք չէ շտապել: 1919 թ. ընթացքում արդարադատության նախարարության և Նախարարների խորհրդին ուղղված գեկուցագրերից, և՝ մամուլում իրապարակված պաշտոնական հաղորդագրություններից երևում է, որ նախարարությունը հնարավորություն ուներ և անհրաժեշտ էր համարում միայն ժողովրդին մոտ կանգնած դատարանների՝ հաշտարար դատարանների ազգայնացումը, որը կարող էր իրականացվել առանց հիվանդագին դրսնորումների<sup>2</sup>:

Անհրաժեշտ էր նախ և առաջ նախապատրաստել ազգայնացման իրականացման նախադրյաները, մասնավորապես, գործող նյութական և դատավարական օրենքների հայացումը, այդ ընթացքում ստեղծել նաև անհրաժեշտ կադրային հիմքը: Արդարադատության նախարարությունը դեռ 1919 թ. սեպտեմբերին առաջարկեց Նախարարների խորհրդին գրադրել այդ հարցով և դատարանները հանել քառային վիճակից՝ կատարելով գործող օրենքների հայացում-քարգմանություն: Սակայն Նախարարների խորհրդը համարեց այն վաղաժամ: Հետաքրքիր է, որ այդ կարևոր աշխատանքը, որն առաջին նախադրյան էր դատարանների ազգայնացման համար, համարվում էր վաղաժամ, իսկ խիստ և արագ տեմպերով իրականացված ազգայնացում-հայացումը ոչ վաղաժամ: Բազմազգ ազգաբնակչություն ունեցող պետության մեջ դատավարության լեզվի սկզբունքի ժողովրդավարական, պարտադիր պահանջներից մեկն էլ այն է, որ դատավարությունը պետք է տարվի պետական լեզվով կամ տվյալ վայրի բնակչության մեծամասնության լեզվով: Այսինքն՝ այդպիսի պայմաններում պետք է սահմանվեր և գործեր դատավարության ազգային լեզվի սկզբունքը, ոչ թե դատավարության պետական լեզվի

սկզբունքը, որը կենսագործվեց Հայաստանի առաջին հանրապետությունում:

**2.5. Արդարադատության իրավանացումը միայն դատարանի կողմից սկզբունքի խախտումները:** Հայաստանի առաջին հանրապետությունում սկզբնապես հաստատվեց դատական համակարգ, որը և՝ իր կառուցվածքի, և՝ իր գործառության սկզբունքների, և՝ տվյալ ժամանակաշրջանում այլ երկրներում գոյություն ունեցող դատական համակարգերի, և՝ հատկապես, դրանից հետո եկող խորհրդային դատական համակարգի համեմատության հիման վրա անվերապահորեն կարելի է համարել առաջդիմական, ժողովրդավարական:

Դատական կանոնադրությունները սահմանում էին, որ «ոչ ոք չի կարող պատժել դատական գերատեսչությանը ենթակա հանցագործության կամ զանցանքի համար այլ կերպ, քան պատշաճ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով և դատական կանոնադրություններով սահմանված պատշաճ ընթացակարգով»:<sup>1</sup>

Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 6-ի դատարանակազմական և դատավարական օրենքների ուժով արդարադատությունը որպես պետական գործունեության հատուկ տեսակ առանձնանում էր գործադիր և օրենսդիր մարմիններից:

«Դատական հաստատությունների կանոնադրության» 1-ին հոդվածի՝ «Դատական իշխանությունը պատկանում է հաշտարար դատավորներին, շրջանային դատարաններին, դատական պալատին և սենատին», դատավարական կանոնադրությունների «պատշաճ դատարաններ», «պատշաճ ընթացակարգ» իրավական ծևակերպումներն ու դրույթները վկայում էին նաև, որ արտակարգ դատարանների ստեղծումը օրենքով արգելված էր, որ դատավարության իրականացման կարգը չէր կարող կանայականորեն փոփոխվել օրենսդիր մարմինների կողմից, որ արդարադատությունը Հայաստանում պետք է իրականացվեր միայն օրենքով նշված պատշաճ դատարանների կողմից, որոնք հոչավագ էին անկախ, իսկ դատավորները օժտված էին անփոփոխիթիւթյան իրավունքով:

Ուստական դատական բարենորդման հետազոտությունը արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից սկզբունքի օրենսդրական կենսագործումը գնահատում են ոչ լիարժեք և մասամբ

<sup>1</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, գ. 1, գ. 107, թ. 355:

<sup>2</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, գ. 1, գ. 33, թ. 138:

խախտված այն բանի հետևանքով, որ «Քրեական դատավարության կանոնադրության» 1-ին հոդվածի ծանոթագրությունը սահմանում էր հետևյալ դրույթը՝ «Դատական հետապնդում չեն համարվում այն միջոցառումները, որ օրենքով նախատեսված կարգով ձեռնարկում են ոստիկանական և այլ վարչական իշխանությունները հանցագործությունների և զանցաների կանխման համար»<sup>1</sup>: Այս դրույթը էապես նպաստում էր «վարչական իշխանության ներխուժմանը դատարանների գործունեության մեջ»<sup>2</sup>, հնարավորություն տալով նրանց վարչական կարգով կիրառելու արտաքսում և արտոր:

Սակայն ցարական վարչածի օրոք նոյնիսկ վարչական հարկադրանքը կիրառվում էր օրենքի հիման վրա և առանց օրինական հիմքերի վարչական մարմիններն այդպիսի հարկադրանք կիրառելու իրավունք չունեին: Առաջին հանրապետությունում արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից սկզբունքը էլ ավելի խեղաքյուրվեց այն բանի հետևանքով, որ արտակարգ լիազորություններով օժտված գործադրի զանազան մարմիններ իրենց արտակարգ լիազորություններով դատ ու դատաստան էին իրականացնում հանրապետության ամբողջ տարածում: Հաճախ այդ մարմինները գործում էին իրավական հիմք ունենալով ոչ թե օրենքները, այլ այսպես կոչված «իշխանությունների պարտադիր որոշումները», այսինքն՝ պետական կառավարման կենտրոնական ործադիր մարմինների կողմից ընդունված նորմատիվ-իրավական ակտերը<sup>3</sup>: Իրավական տեսակետից այդ որոշումները «չպետք է հակասեին գործող օրենքներին»<sup>4</sup>: Բայց իրականում այդ կանոնը չէր պահպանվում: «Բյուրո կառավարության» Ներքին գործերի նախարար Ա. Զամայյանը 1920 թ. մայիսի 13-ին արձակել և նախարարության ստորին օրակներին է ուղարկել հետևյալ հրամանը. «ստանձնելով ժամանակափորապես ներքին գործերի նախարարի պաշտոնը սրանով հայտնում են ի գիտություն ներքին գործերի վարչության բոլոր մարմիններին ու պաշտոնյաներին».

Այն պաշտոնյան, որ կմերկացվի գեղծում կատարելու, կաշառք վերցնելու, խուզարկության ժամանակ իրեր սեփականացնելու, քաղաքա-

<sup>1</sup> Ст. Устав уголовного судопроизводства. Гл. 1: В кн.: Российской законодательство X-XX веков. Том 8, Судебная реформа. М., 1991:

<sup>2</sup> Ст. 6 Виленский Б.В., Судебная реформа и контрреформа..., с. 337:

<sup>3</sup> Հաշտարար դատարանները հեղեղված էին այսպես կոչված լիազորական գործերով, այսինքն՝ զանգատներով ընդեմ կարավարական և տեղական կոմիսարների, միիցիապետերի և այլոց:

<sup>4</sup> Ст. 22 ТКПУ, ф. 199, գ. 1, գ. 221, թ. 57:

ցիների վրա բռնություն գործի դնելու և շանտաժի մեջ, 48 ժամվա ընթացքում բանտարկությունից մինչև մահվան պատիժ կստանա համաձայն արտակարգ դատարանի համար սահմանված օրենքների:

Այն պաշտոնյան, որ կմերկայանա կատարելու իր պարտականությունները կամ կանցնի իր իրավունքների սահմաններից կենքարկի բանտարկությունից մինչև տաժանակիր աշխատամքների համաձայն նույն օրենքների տրամարանության»<sup>1</sup>:

Հրամանում խոսքը գնում է 1920 թ. մայիսի 8-ի «Արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին ժամանակավոր օրենքի» հիման վրա ստեղծված արտակարգ դատարանների և նրանց ընդդատյա հանցագործությունների մասին: Բայց օրենքով պաշտոնեական հանցագործությունները հրամանը ընդունելու պահին ընդդատյա էին ընդհանուր իրավասության դատարաններին, այլ ոչ թե արտակարգ դատարաններին: Փաստորեն նախարարն իրեն իրավունք էր վերապահում փոխել արտակարգ դատարանների ընդդատությունը և մահապատիժ սահմանել հանցավոր արարքների համար, որոնք օրենքով մահապատժով չին պատժվում:

Օրենսդիր և գործադիր մարմինները ներխուժում էին արդարադատության իրականացման ոլորտ նաև արտակարգ դատարանների հիմնադրմամբ, հատկապես՝ 1920 թ. մայիսյան դատարանների, որոնք աչքի էին ընկենում ոչ միայն իրենց արտակարգությամբ, դրանցում դատավարական երաշխիքների բացակայությամբ, նաև նրանով, որ անմիջապես և ուղղակիրեն դեկավարվում էին կառավարության կողմից ստանալով իրահանգներ՝ դատելու կամ շղատելու, մահապատիժ նշանակելու կամ չնշանակելու հարցերով: Այդ դատարանները նոյնիսկ ձևականութեան չին մտնում արդարադատության նախարարության համակարգի մեջ, նրանցում չէր գործում դատավորի անկախության երաշխիք հանդիսացող անփոխելիության սկզբունքը:

\* \* \*

Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր և գործադիր պետական մարմինները հանրապետության հոչակման պահից իրենց առաջնակարգ խնդիրներից մեկը համարեցին հիմնել հանրապետական կառավարման ձև և հաստատել ժողովրդավարական վարչածն: Հանրապետության օրենսդիր մարմինները, կառավարությունը սկզբնական շրջանում, ինչպես ամբողջ պետական կառավարման, այնպես էլ արդա-

<sup>1</sup> Ст. 22 ТКПУ, ф. 201, գ. 1, գ. 98, թ. 47:

րադատության ոլորտում կենսագործում էին այդ խնդիրը՝ ամեն կերպ խուսափելով արտակարգ դատական մարմիններից և դատավարական ձևերից՝ ջանալով նորաստեղծ հանրավետությունում դատական համակարգը դնել իրավական, ժողովրդավարական հիմքերի վրա, չխախտել «միասնական դատարանի» սկզբունքը, որպես օրինականության և արդարադատության անհրաժեշտ նախադրյալ: Հիմնելով հանրապետությունում ժողովրդավարական դատական համակարգ և՝ կառուցվածքի, և՝ դատավարական առումով՝ արդարադատության նախարարությունն իր խնդիրը համարեց «պայմանների ստեղծումը, որոնցում դատարանները կկարողանային անցնել արդարադատության իրականացմանը»: Սակայն հանրապետության ծանր քաղաքական, տնտեսական, սոցիալական կացույցունք, պատերազմները, հակապետական խռովություններն ու հանցանորդությունների մեջ քանակը, ազգամիջյան թշնամանքը, ներքին քաղաքականության, պետական և դատական շինարարության մեջ թույլ տրված սխալներն ու մոլորությունները նրա գոյության ողջ ժամանակաշրջանում իրադրությունը դարձնում էին անկառավարելի, վտանգավոր ու սպառնալից, որն էլ ստիպում էր իշխանություններին դիմելու արտակարգ դատարանների ու դատավարական ձևերի օգնությանը՝ խախտելով դատարանների միասնականության սկզբունքը, յուրաքանչյուր քրեական գործի արդարացի և օրյեկտիվ քննության քաղաքացիների իրավունքը: Արտակարգ այդ քայլերը, բացի հակաժողովրդավարական լինելուց, հաճախ անարդյունավետ, իրավական-կազմակերպական տեսակետից լավագույն կերպով շմտածված փորձեր էին, որովհետև դրանք ևս չէին հանգեցնում հանրապետությունում օրինականության և իրավակարգի հաստատման, արդարադատության նպատակների արագ, պատշաճ և իրավական իրացման:

Առաջին հանրապետության դատական համակարգի պատմահրավական ուսումնասիրությունը մեզ հիմք են տալիս պնդելու, որ արդարադատության, որպես պետական գործունեության հստակ տեսակի, և օրենսդիր ու գործադիր մարմինների առանձնացվածությունը Հայաստանի Հանրապետությունում կատարված էր ոչ լիարժեք կերպով, հանրապետության գոյությանը գուցներաց անընդհատ խախտվում էր օրենսդիր, գործադիր և կուսակցական մարմինների կողմից: Չնայած այն բանին, որ օրենսդիրը օգտագործում էր «դատական իշխանություն» հասկացությունը, այնուամենայնիվ, իշխանությունների տարանցատման դասական սկզբունքը, որի մեխր ոչ թե միայն ամբողջական պետական իշխանության, սովորական գործառութային, մերենայական բաժանումն է, այլ այն-

պիսի կազմակերպական-իրավական կառուցակարգերը, որոնք ապահովում են ինչպես իշխանությունների համագործակցությունը, հավասարակշռությը, այնպես էլ հակակշռությը<sup>1</sup>, Հայաստանի Հանրապետության պետական համակարգում չեր կենսագործված:

Դատական իշխանությունը որպես պետական իշխանության լիարժեք տարրերից մեկը չի հանգում միայն քրեական և քաղաքացիական գործերով արդարադատությանը: Հայաստանի առաջին հանրապետությունը չուներ սահմանադրական արդարադատության ինստիտուտը, չկար կանոնավոր վերահսկողություն գործադիր մարմինների ընդունած որոշումների օրինականության և հիմնավորվածության վրա: Այս իմաստով օրենսդիր մարմիններն ունեին անսահմանափակ պողիտիվիստական հնարավորություններ իրենց իրավաստեղծագործության ընթացքում և կարող էին կամայականորեն փոխել քրեական դատավարության իրականացման կարգը, հիմնել դատավորների անկախությունը և անկողմնակալությունը շապահովող իրավական ընթացակարգ ունեցող արտակարգ դատարաններ առանձին գործերի և անձանց համար, կրնկրես իրադրության համար: Օրենքն ու իրավունքը «պարտադիր էին միայն ենթականների համար, բայց ոչ այն ստեղծող իշխանության համար»,<sup>2</sup> ինչն էլ հիմք է տալիս մեզ պնդելու, որ Հայաստանի Հանրապետությունն իր կառավարման ձևով հանրապետություն էր, սակայն ոչ իրավական պետություն: Այդպիսի պողիտիվիստական իրավահասկացողությունը և գործելակերպը հայրենասիրական բռնապետության նպատակահարմարության տեսանկյունից էլ արդարացնելու հիմքեր չկան, որովհետև ուժեղ ազգային պետական իշխանություն չի նշանակում կամայականություն:

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Ազարկին Հ.Մ.**, Մոնտեսկье. Մ. 1988. էջ 69-70, ինչպես նաև՝ **Reinhold Zippelius**, Allgemeine Staatslehre, Rechtsstaat - Gevaltentteilung, Munchen, 1994, էջ 286-313:

<sup>2</sup> Տե՛ս **Ներսեսյան Վ.С.** Պути развития советского государства и права. В книге: Пульс реформ. М., 1989. էջ 38:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգի կազմակերպման և գործունեության պատմահրավական վերլուծությունը հաստատում է, որ օրինականության և իրավակարգի ապահովումը տարերային գործընթաց չէ: Այն պահանջում է համակարգված, նպատակաուղղված, իրավիճակին համապատասխանող ներգործություն հասարակական հարաբերությունների սուբյեկտների վարքագծի և գործունեության վրա: Ցանկացած պետություն, և հատկապես, նորաստեղծ պետությունը պետք է ունենա և ստեղծի անհրաժեշտ նյութական, քաղաքական, սոցիալական, իրավաբանական նախադրյալներ և երաշխիքներ ամբողջ պետական կառուցակարգի, այդ թվում նաև դատական համակարգի արդյունավետ գործունեության համար: Միայն դրանց համայիր առկայության, միմյանց միջև փոխգործակցության ու փոխլրացման պայմաններում էր հնարավիր օրինականության և իրավակարգի իրական ապահովում, հաջող պայքար հանցավորության դեմ, արդարադատության խնդիրների իրական, իրավական կենսագործում, դատական համակարգի արդյունավետ գործունեության ապահովում: Խնդրին նայելով այս տեսանկյունից կարող ենք ասել, որ Առաջին հանրապետության դատական համակարգի կառուցման և գործունեության մեջ կային լուրջ թերություններ և անհաջողություններ պայմանավորված մի շարք պատճառներով: Դրանց մի մասը ունեին օբյեկտիվ բնույթ ու ընկած էին օրենսդիր, գործադիր և դատական մարմինների հասանելիության ոլորտից դուրս, իսկ մյուս մասն էլ պայմանավորված էին պետական մարմինների կողմից արդարադատության և ընդհանրապես իրավապահպան համակարգում իրականացվող քաղաքականության մեջ թույլ տրված վրիպումներով, սխալներով:

Ոչ բավարար տնտեսական, անկայուն քաղաքական նախադրյալները, բացասական միտում ունեցող բարյահոգերանական գործուները պայմանավորում էին պետական կառուցակարգի ոչ լավագույն, անարդյունավետ գործունեությունը: Այդ երաշխիքների բացասական ազդեցության պայմաններում կարևորվում էր հատուկ իրավաբանական-կազմակերպական, նորմատիվային երաշխիքը, որ երկրորդական տեղ չէր զբաղեցնում մնացած երաշխիքների շարքում, այլ հանդես էր գալիս որպես ակտիվ գործուն: Պետության կողմից ընդունված հատուկ իրավաբանական միջոցառումները (դատական համակարգի կազմակերպական և գործառության առանձնահատկությունները) ընդունակ էին ազդելու մյուս երաշխիքների փոփոխման վրա դրական միտումով և շատ կարևոր

էին օրինականության ապահովման, արդարադատության ճշշտ, արագ, արդյունավետ իրականացման համար:

Հայստանի առաջին հանրապետության քաղաքական դեկանարությունը անցնելով իշխանության գրուստում ձգտում հաստատել հանրապետական-ժողովրդավարական կառավարման ձև Հայաստանի Հանրապետությունում: Դատական քաղաքականության սկիզբը դրվեց 1918 թ.: որպես հիմք վերցնելով 19-րդ դարի երկրորդ կեսի ոռուսական դատական բարեփոխումների հիմնադրույթները և օրենսդրական-նորմատիվ աղյուրները, վերացնելով դրանցում առկա սկզբնական և հետագայում սահմանված հակաժողովրդավարական ինստիտուտները և նորմները: Այդ կապակցությամբ վերացվեցին հանրապետությունում գործող արտակարգ դատարանները՝ ուսամշակութական տրիբունալները:

Արդարադատության նախարարության կազմակերպական և Հայաստանի խորհրդի օրինաստեղծ ջանքերի շնորհիվ հանրապետությունում հաստատվեց դատական համակարգ, որը և իր կառուցվածքի, և իր գործունեության սկզբունքների առումով ժողովրդավարական ինստիտուտ էր: Տվյալ ժամանակաշրջանում այլ երկրներում գոյություն ունեցող դատական համակարգերի և հատկապես դրանցից հետո եկող խորհրդային դատական համակարգի համեմատության հիման վրա հանրապետության դատական համակարգը, անվերապահորեն կարելի է համարել առաջադիմական:

Սակայն աղյուրների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում նաև մեկ այլ ծշմարտություն: Դատական համակարգը ինչպես և ամբողջ պետական կառուցակարգը սոցիալական պայմանավորված է, այսինքն՝ այն պետության կամայական հայեցողության արդյունքը չէ, այլ հասարակական հարաբերություններին, իրավիճակին համապատասխան ստեղծվող ու գործող համակարգ: Դատական համակարգը, որը սովորական պայմաններում գործում էր բավականին արդյունավետ, հանրապետության ծանր տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգեբանական իրականության մեջ ի վիճակի չէր ապահովելու իր առջև դրված խնդիրների նվաճումը: Անիշխանությունը և քառար, Առաջին հանրապետության գործ իրականությունը ուսուական դատական կանոնադրությունների շատ դրույթներ վերածեցին «իդեալիզմի»: Եթե հնարավոր չէր ապահովել եղած համակարգի գործունեության համար անհրաժեշտ պայմաններ, ապա համակարգը պետք է վերափոխվեր, հարմարեցվեր իրականության պայմաններին: Առաջնակարգ խնդիրը ոչ թե «ներդաշնակ և ամբողջական» դատական համակարգի հաստատումն էր, այլ իրավա-

կան հիմքերի վրա դրված արդարադատության իրականացումը: Այլ կերպ ասած գերխնդիրը, նպատակը արդյունքն է՝ իրավակարգի հաստատումը, արդարադատության խնդիրների իրական նվաճումը, այլ ոչ թե դատական մարմինների համակարգը, որը միայն միշոց է հասնելու իրական և իրավական հիմքերի վրա դրված արդարադատության կենսագործմանը:

Հենց ռուսական դատական բարենորոգման դրույթների ոչ հաջողակ ձևով ընկալումը Հայաստանի Հանրապետությունում հանդիսացավ արդարադատության մարմինների անարդյունավետ գործունեության պատճառներից մեկը: Իսկ հնարավոր բազմատարերակ լուծումներ այսպիսի պայմաններում կային, հենց թեկուզ սկզբում կառուցված դատական համակարգի հիմունքները չխախտելով անհրաժեշտ կառուցվածքային և դատավարական վերափոխումներ իրականացնելով միշոցով, սակայն պայմանով, որ դրանք կապահովվեն անհրաժեշտ կազմակերպական-տեխնիկական և կաղըային հարաբերություններով: Վերջինը, այսինքն՝ բարեփոխումների կարգային ապահովումը ենթադրում էր դատական, դատախազական, քննչական պաշտոնյաների աշխատանքի և կյանքի նվազագույն պայմանների (սովորական, գիտականորեն մշակված ծանրաբեռնվածություն, աշխատանքի խրանում, իրավաբանական գրականությամբ և նոր օրենքներով ապահովված լինելը, կենցաղային ապահովածություն) բանական սահմաններում երաշխավորումը, ինչը հնարավորություն կտար նրանց լինել անկախ և ինքնուրույն, գործուն: Նման մոտեցման կենսագործումը նախադրյալներ կստեղծեր համակարգի դուրս գտնվող անձանց և մասնագետներին ներգրավել ոլորտում աշխատելու համար:

Արդարադատության մարմինների համակարգի կառուցման թերություններն ակնհայտ էին նաև ժամանակակիցների համար: Հատկապես մամուլը և հասարակայնությունը պահանջում էին վերափոխումներ, պայքար հանցագործության դեմ, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն և ապահովում: Իշխանություններն էլ այդ ճնշման տակ փոխարեն միշոցներ ձեռնարկելու արդեն կառուցված համակարգը արդյունավետ դարձնելու, դիմում էին արտակարգ դատարանների և դատավարական ծերի օգնությանը, խախտելով դատարանի միասնականության սկզբունքը, քաղաքացու շահերը շոշափող յուրաքանչյուր գործի արդարացի և օբյեկտիվ քննության իրավունքը: Սակայն նույնիսկ արտակարգ միշոցառումներն իրենց օրենսդրական, կազմակերպական-տեխնիկական առանձնահատկություններով այնքան վատ էին

կառուցվում, որ սրանք ևս չեին կարողանում իրականացնել իրենց առջև դրված խնդիրները, հաստատել օրինականություն և իրավակարգ հանրապետությունում, ինչպես օրինակ, 1919 թ. արտակարգ քննիչ հանձնաժողովը և արտակարգ դատարանը: Իսկ 1920 թ. մայիսյան արտակարգ դատարանների հիմնադրումը արդեն լրիվ անհմաստ քայլ էր և հետապնդում էր գուտ քաղաքական վրեժմներության նպատակներ: Մայիսյան խոռվությունների ճնշման ընթացքում գլխավորը, իհարկե, հանցավորների ծերբակալումն էր, հանցագործությունների դեմ խափանիչ և կանխիչ միշոցառումների ձեռնարկումն էր, ինչը դատարանների գործունեությունը չէր, այլ մյուս իրավապահպան մարմինների: Եվ եթե խոռվությունները ճնշելուց հետո հանցագործները ծերբակալված էին ու նրանց արարքներում իսկապես առկա էին քրեորեն պատմելի իրավախախումներ, ապա նրանց կարելի էր դատի տալ նաև ընդիհանուր դատական մարմինների միշոցով, այլ ոչ թե ստեղծել «քաղաքական վրեժմներության գործիք» հանդիսացող արտակարգ դատարաններ: Մայիսյան արտակարգ դատարանների հիմնադրման հարցադրման, նրանց վերաբերյալ օրենքների մշակման ու ընդունման, դրանք կենսագործելու և հետագայում դրանցում փոփոխություններ կատարելու մեջ, ինչպես ջրի կարիքի մեջ, արտացոլվել է ժամանակի իրականության, քաղաքականության հակասականությունը, ազգային բռնապետության և ժողովրդավարության հակասությունը, քաղաքական դեկապարների անորոշ դեգերումներն ու խարիսափումները:

Սուաջին հանրապետության ծանր քաղաքական, տնտեսական, սոցիալական կացությունը, պատերազմները, հակապետական խոռվություններն ու հանցավորությունը, միասնական «պատշաճ» դատարանների անարդյունավետ գործունեությունն ստիպում էին իշխանություններին դիմելու ոչ միայն արտակարգ դատարանների օգնությանը, այլև փոխելու իրենց սկզբանական, ժողովրդավարական դիրքորոշումները, խախտելու, վերանայելու կամ վերացնելու նաև արդարադատության հիմնարար սկզբունքները, ինչպես օրինակ, արդարադատության իրականացումը միայն պատշաճ դատարանների կողմից և դատավորների անկախության սկզբունքների խախտումները, դատավորների անփոփոխելության սկզբունքի վերացումը, դատական քննության անմիջականության սկզբունքի մասնակի վերացումները: Այդպիսի գործելակերպը հաճախ ուներ նաև քաղաքական, կուսակցական դրվագատառներ, պայմանագործական պարագաներու առանձնահատկություններով:

հետևանք էր իրավական մշակույթի և իրավագիտակցության ցածր մակարդակի:

Արդարադատության ոլորտում այդպիսի քաղաքանության հետևանքով պետական ամբողջական կառուցակարգի մեջ դատական մարմինները վերածվել էին պետական կառավարման արտակարգ լիազորություններով օժտված մարմինների, ներքին գործերի նախարարության քմահանույթներից կախված, կառավարչական ապարատի հետևից քարշ եկող կառուցակարգի:

Այս առումով, իհարկե, պատասխանատվության մեծ մասը ընկնում էր քաղաքական դեկավարության և օրենսդիր մարմինների վրա, որոնց գործելակերպը ավելի շատ նման էր «հին շալվարը կարկատելուն», որովհետև չին որոշված պահի իրամայական գիրխնդիրներն ու կողմնորոշիչները, չկար համակարգված մոտեցում, որոնք էլ պիտի պայմանավորեին իրավաստեղծ աշխատանքի ռազմավարական ու մարտավարական ուղղությունները, և որոնց համապատասխան պետք է կազմվեին կյանքի պահանջնունքներից ու կարիքներից բխող օրենսդրական ծրագրեր ու իրագործվեին:

Հանրապետությունում իրավակարգի բացակայությունը, քառոր, հանցավորությունը, դատական համակարգի ոչ հաջողակ կազմակերպումը և անարդյունավետ գործունեությունը հետևանք էին նաև օրենսդիր մարմինների «փոփոխամուտության», որի պատճառը օրինաստեղծ լիազորությունների անընդհատ փոխանցումներն էին՝ Հայաստանի խորհուրդ, Նախարարների խորհուրդ, Հայաստանի խորհրդարան, Նախարարների խորհուրդ: Այս երևույթը խախտում էր օրինաստեղծ գործունեության տրամադրանությունը, հանգեցնում էր օրենքների իրավաբանական անարդյունավետության, հեղինակազրկում օրենսդիր մարմիններին:

Թերություններն իրավաստեղծ գործունեության մեջ հետևանք էին ոչ միայն որոշակի օբյեկտիվ պատճառների, այլ նաև սուրբեկտիվ, այսինքն՝ օրենսդիր մարմինների անձեռնահաստիքան: Կյանքի իրական պահանջներին ու կարիքներին համապատասխանող օրենքներ ստեղծելու համար իրավաստեղծները պետք է ունենային նախ և առաջ որոշակի պատրաստվածություն, փորձառություն և մասնագիտական ունակություններ: Այսինքն՝ կարևորվում էր արիեստավալարժ-իրավաբանների մասնակցությունն իրավաստեղծ աշխատանքին, նրա բոլոր փուլերում: Սակայն Հայաստանը գրկված էր նման հնարավորությունից:

Էր բացասական ազդեցությունը բողեց նաև այն հանգամանքը, որ Առաջին հանրապետության արդարադատության նախարարությունը

զիսավորել են տաս նախարարներ կամ պաշտոնակատարներ: Հերթականորեն փոխարինելով միմյանց՝ ամեն մեկը միջին հաշվով պաշտոնավարել է երեքից-չորս ամիս: Նախարարական այդպիսի խառնաշփորչ և ամեն անգամ կառավարական կուրսի փոփոխությունը չին կարող լավագույն ազդեցություն բողնել դատական համակարգի գործունեության վրա:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհաջողությունների պատճառներից մեկն էլ բարդություններն էին կաղըային քաղաքականության մեջ: Ազգային մտավորականության հիմնական զանգվածը օրյեկտիվ պայմանների ուժով մնացել էր պետության սահմաններից դուրս: Հանրապետության հոչակնամբ և պայմաններից վատացմանը գուգընթաց լավագույն իրավաբան մասնագետները հեռանում էին հանրապետությունից: Եղածների մեծագույն մասը որակապես բարձր մակարդակ չուներ: Կադրային հարցն ավելի սրբեց «ազգայնացման» իրականացմամբ և դատավորների անփոփոխելիության սկզբունքից վերացմամբ: Ազգայնացման հետ սկսեց փորձված կարգերի զանգվածային հեռացումը, որոնց փոխարինեցին անպատրաստի, անփորձ, և նույնիսկ իրավաբանական կրթություն չունեցող անձինք. «Գ-ավառական դատաստանական գործիչների շարքերը լցվեցին միայն թերուսներով, նախկին գրագիրներով, քարգմաններով»:

Սոցիալական, տնտեսական, քաղաքական, բարոյահոգերանական բացասական միտում ունեցող գործուները, ազգաբնակչության, ներառյալ նաև քաղաքական ուժերի իրավական մշակույթի և իրավագիտակցության ցածր մակարդակը, ամքող իրավական համակարգի և հատկապես օրենսդրության անմիտքար վիճակը, իրավունքի իրացման ոչ բավարար իրավաբանական երաշխիքները (իրավապահպան մարմինների և արդարադատության մարմինների համակարգերի կազմակերպումը, դրանց միջև խնդիրների և գործառույթների տեղաբաշխումը, կազմակերպական-հյուրական միջոցառումները), իրավագիտության ոչ բավարար զարգացած լինելը և նրա ազդեցությունը օրենսդիր և իրավակիրար մարմինների վրա՝ այս ամենը Հայաստանի առաջին հանրապետության պետական կառուցակարգի գործունեության էական պայմաններն էին: Այդ պայմաններն ու գործուները իրենց բացասական, քայլայիշ ներգործությամբ պայմանավորեցին նորանկախ հանրապետության իրավապահպան և դատական համակարգերի ոչ հաջողակ կազմակերպումը, ինքնուրույն, գործուն դատական համակարգի բացակայությունը, իրավապահպան և դատական համակարգերի անարդյունավետ գործունեությունը,

ինչն էլ Առաջին հանրապետության կործանման նախադրյալներից մեկն էր:

Հավանաբար տարիների հեռվից թերություններն ու վրիպումները ավելի լավ են երևում և այդ կապակցությամբ երևի խիստ են տրված գնահատականները, բայց պետք է հիշել, որ դրված էր ազգային անկախ պետականության լինել թե չլինելու հարցը: Այս իմաստով անցյալի նկատմամբ ներողամտությունն ավելորդ ենք համարում, բայց նաև ներկայի: Այսօր էլ մենք շարժվում ենք նույն խնդիրները լուծելու ճանապարհով, բայց մի տարրերությամբ, արդի հայոց պետականության մեկնարկային վիճակն անհամեմատ բարվոք էր Առաջին հանրապետության հետ համեմատած: Քանի որ, անխուսափելիորեն, մենք էլ քավարան պիտ անցնենք ապագա սերունդների առջև, ապա մեր գործունեությունը կգնահատվի ավելի խիստ կերպով:

## Ա. Գ. ՎԱՂԱՐՃՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

(1918-1920 թթ.)

Ա.Գ. ՎԱՂԱՐՃՅԱՆ

СУДЕБНАЯ СИСТЕМА  
ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

(1918-1920 гг.)

Հրատ. Խմբագիր՝  
Էջաղբումը՝ Ա. Պետրոսյան

Հանձնվել է տպագրության 24.11.2005:  
Չափսը՝ 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>: Ծավալը՝ 13 տպ. մամուլ:  
Քանակը՝ 300 օրինակ:  
Գինը՝ պայմանագրային: